



Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

### **Правила пользования**

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

### **О программе**

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу <http://books.google.com>.



Bibliothèque de la Faculté  
- de Théologie

Les Fontaines - CHANTILLY

D 347/23

Orbelian (Stephanos)

Histoire de la famille et de  
de province des Sunit

Paris 1859





ՇԱՐ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐԱՑ :

ՍՏԵՓԱՆՆՈՍ

ՕՐԲԷԼԵԱՆ

ՄԵՏՐԱՊՕԼԻՏ ՍԻՒՆԵԱՑ :

Հատոր Ա :

1859 ՓԱՐԻԶ ՌՅԸ :

## AVIS

Après la publication de Ghévoud Vardabède et de Stéphanos Açogik, nous venons de mettre sous presse une histoire d'une haute importance, celle de Stéphanos Orbélian, archevêque de Sunik.

Issu de l'illustre famille d'Orbélian, fils de Tarsaischt, prince de Sunik, et métropolitain de cette même province de la grande Arménie, il traite en particulier les généalogies des princes régnants de Haïcasounis et d'Orbélians, et en général l'histoire de l'Arménie, de la Perse et de la Tatarie. Contemporain des invasions des Mongols et des Tatares, qui subjuguèrent sa patrie comme tant d'autres pays, il donne une description complète de cette race féroce qui, partie des bords du lac d'Aral et du mont Altai, envahit et ravagea l'Asie et l'Europe.

Stéphanos Orbélian, en sa double qualité de fils du prince régnant, et d'archevêque de Sunik, et ayant par conséquent vécu dans les hautes sphères politiques de son temps, nous présente une fidèle description des mœurs, des conquêtes, de l'administration de ces féroces enfants de Tatarie jusqu'alors inconnus.

C'est lui probablement qui parle le premier de l'invention du papier-monnaie par les Tatares, dont l'usage se répandit, quelques siècles après, chez tous les Européens.

Cet intéressant ouvrage du XIII<sup>e</sup> siècle non-seulement ne se trouvait dans aucune bibliothèque européenne, mais il n'existait pas davantage dans celles des Arméniens : le célèbre couvent des Mechitharistes de Venise lui-même n'en possède que des exemplaires incomplets. J'en ai découvert un pourtant dans le siège même de Stéphanos Orbélian et un autre dans la bibliothèque d'Eschtmiadzine, d'après lesquels je publie cette première édition.

J'y ai ajouté également la généalogie de la famille des Orbélians, qui s'illustra pendant de longues années en Arménie et en Géorgie, et qui, selon une tradition fort douteuse, descendait des empereurs de la Chine.

Rue de l'Ouest, 86.

G. V. CHAHNAZARIAN.

---

Paris. — Imprimé par E. ТРУНОТ ET C<sup>e</sup>, rue Racine, 26.







ГРЕГОРИЙ КОНСТАНТИНОВИЧ  
ГРЕГОИРЕ КОНСТАНТ

*Paris Imp Bréhier fr r. St Andre des arts. 37.*

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆԱՀԱՆԳԻՆ ՍԻՍԱԿԱՆ

ԱՐԱՐԵԱԼ

ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՕՐԲԷԼԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ  
ՍԻՒՆԵԱՑ

*Ի յոյս ընժայեաց հանդերձ ծանօթութեամբք*

Կարապետ Վարդապետ Շահնազարեանց՝ միաբան  
սրբոյ Էջմիածնի :

Ի կաթողիկոսութեան ամենայն Հայոց Տեառն եւ  
Տեառն ՄԱՏԹԷՈՍԻ Ա.



Ի ԳՈՐԾԱՏԱՆ Կ. Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ :



## Ս Ի Ի Ն Ի Ք :

—

Սիւնիք է իններորդն ըստ կարգի և մի յընգարձակ, բազմամարդ, բարերեր եւ երևելի նահանգաց Հայաստանի : Սահմանք այնորիկ ի հինգերորդ դարու Քրիստոնէութեան՝ առ ժամանակօք մեծի պատմագրին մերոյ Մովսիսի Խորենացոյ էին յարեմտից կուէ Արարատ եւ Վասպուրական, ի հիւսիսոյ՝ Գուգարք և Ուտիք, յարևելից՝ Արծախ, ի հարաւոյ՝ Երասխ եղեմարտոյի որ բաժանէ զՀայս Ատրպատականէ և ի Մեղացոյ :

Հազարաւոր ամօք նախքան զՔրիստոս, այն ինչ նախնին մեր Հայկ թօթափեալ զլուծ բռնաւորին Բէլայ՝ գայր յերկիրն Աւքանազեան, յերկիրն ուր Յաւիտենականն կնքէր երբեմն ուխտ անանցանելի « վասն ոչ եւս տնիժաներց զերկիր վասն գործոց մարդկան » (Մննդ. Բ. 2), յերկիրն ուր աղանին ողջախոհ մատուցանէր նախահօրն մերում՝ Նոյի՛



զշիւղն ձիթեճնւոյ ի նշանակ խաղաղութեան, եւ ուր  
արդ տիրեն քստմնելի արհաւիրք յերեսաց ասիական  
խուժից եւ դուժից . այն ինչ արկանէր յայս երկիր  
հիմն ազգայնութեան մերոյ անմահն Հայկ' Պեղամ'  
մի ի թոռանց նորա, գրաւէր զարեւելեան մասն այ  
նորիկ, ուր ծնանէր զՄիսակ, յորոյ անուն, ասէ Խորե  
նացին, աշխարհն բովանդակ կոչեցաւ Միսական կամ  
Սիւնիք (Պշ. Ա. 11) : Սակաւ մի զկնի յաւելլու հայրն  
պատմութեան մերոյ թէ՛ Պարսք յստակագոյն եւս  
քան Հայք հնչեն զանուն նահանգիս : Եթէ առ Մով  
սիսիւ Պարսք Միսական կոչէին զայն՝ յայտ է այս ի  
նորին վկայութենէ . այլ յայլ մատենագրաց մերոց  
գրեթէ միշտ ի կիր արկաւ Սիւնիք, որպէս նա եւ ի  
կոնդակս, յարձանագիրս, ի կտակս, ի վճիռս և այլն :

Ի տասներորդ դարէ անտի Փրկչական թուին,  
մանաւանդ զկնի յարձակման Թաթարաց բազում  
փոփոխութիւնս կրեաց Սիւնիք ընդ բազմաց ան  
կեալ աշխարհակալաց իշխանութեամբ . եւ յան  
կարկատելի պատառեալ ծուէնս՝ կորոյս վերջապէս  
ե՛ զազգային իշխանութիւնն և՛ զսեպհական անուն  
իւր : Բազումք ի գաւառաց նորուն հատան ի նմանէ  
սառ ի կազմել նոր իշխանութիւնս . այլք ևս մկրտեցան  
յայլ անուանս, մինչև ի մոռացօնս անկանիլ առ բնա  
կիչս անգամ բնիկ անուան երկրին, կամ թէ թլպա  
տիլ Միսականին ի Սիսեան, յոր անուն կոչի առ մեզք

մեծագոյն մասն այնորիկ, մանաւանդ գաւառն  
Ծղուկ :

Ահշտասան ամօք յառաջագոյն կարգեալ մեր յա-  
ռաջնորդութիւն Սիւնեաց՝ բազում խնամօք հոգա-  
ցայ հեղինակել զճիշտ ստորագրութիւն այնորիկ՝ բա-  
ժանեալ ի զանազան գլուխս ըստ զանազանութեան  
նիւթոցն. շնչագրութիւն, տեղագրութիւն, հանքա-  
բանութիւն, երկրաբանութիւն, բուսաբանութիւն,  
պատմութիւն, արձանագրութիւնք, աւանդութիւնք  
աշխարհին այլովք հանդերձ պարտնակէին ինմա :  
Որ Հայ է որոյ ոչ իցէ լուեալ զգովանի գործս հայրե-  
նասիրութեան Գաւիթ բէկի Սիւնեցոյ, որոյ վառեալ  
նուիրական սիրով ազատութեան ազգին՝ փորձ փոր-  
ձեաց իսկզբան ութ և տասներորդ դարուն առ ի ազա-  
տել աջակցութեամբ քաջաց ոմանց զերկիր մեր յօ-  
տար լծոյ : Ես ևս հէգ պանդուխտս որ ի ժամանակին  
յայնմիկ կոխէի զերկիրն ոռոգեալ արեամբ քաջ ա-  
րանց և յանդիման աչացս ունէի զաւերակս Հալիձո-  
րոյ, Կապանի, Բաղաբերդի իբրև ցաւագին յիշատա-  
կարանս աշխարհաշէն փութոյ մերոց նախնեաց և և  
չիջեալ փառաց նոցա, սիրէի նստել բազում անգամ  
ընդ հովանեճու ալևոր բեւեկնեաց Պեխ գեղջ և լսել  
զվէպս հարիւրամեայ Ստեփաննոս աւագ քահանային՝  
Թոռին գովելոյն Պալայ՝ միոյ յընկերացն Գաւթի :  
Առ ի ինմանէ նակ զստոյգ պատմութիւն քաջագոր-

ծութեանց Գաւթի, և եղի ի մատենադարանի սրբոյ  
Էջմիածնի ընդ ձեռն Շահխաթունեան Յովհաննէս  
եպիսկոպոսի :

Երկս այս որ (եթէ մուծեալէր ի տիպ) կարէր  
սփռել ըյս մեծ ի վերայ նահանգին Սիւնեաց ըստ  
բազում գլխոց, եւ ուղղել զվրիպակս բազմաց ի մա-  
տենագրաց՝ ողորմելի իմն հանդիպեցաւ օրհասի :  
Ահադին զերոյ մի եկուլ զայն եւ անհետ արար առ  
յաւիտեան... Սմին իրի զոր ինչ գրեմ այժմ զՍիսա-  
կան աշխարհէ՝ ի յիշողութենէ և եթ գրեմ և ի խե-  
շերանաց թղթոց որ յանգէտս պահեցան ի Հայաստան  
թղթարանիս՝ չունելով այլ ևս ի ձեռին զչորեքամեայ  
երկանցս պտուղ :

Այլ մեք ցօղեալ սակաւիկ մի ջերմ արոտաօւօք  
զտխուր յիշատակաբանս անցեալ փառաց մերոց  
նախնեաց՝ դարձցուք ի կարգ բանիս : Սիսական է  
երկիր լեռնային. զերեք հինգերորդ մասն աշխարհին  
գրաւեն լերինք բարձրաբերձք՝ ոմանք անմատչելիք  
և անրերք, այլք զարդարեալ մշտադալար անտաօք :  
Ահեղ խոխոմք և ծմակք լերանց յիջեցուցանեն տեսու-  
ղաց զանդունդս երկրի մինչգեռ, ըստ Սուրբ գրոց,  
տակաւին աներևոյթ էր և անպատրաստ : Զոր և ճորակ  
իւրաքան չիւր ունի զիւր հեղեղատ որ գամ քան զգամ  
յառաջեալ և յաղթացեալ վտակօք, աղբերքք և հա-  
լեալ ձեամբք հօսեցելովք ի շրջակայ լերանց փրփրա-

կէղ գողմամբ, զարհուրելի յորձանօք զայրացեալ բարավազս եւ ջրվէժս բազումս գործելով այսր անդր՝ Թափին՝ ոմանք յՆրասխ, այլք՝ ի ծովակն Գեղամայ :

Ի կատարէ Գագրոյլի (Գագրէլ) որ բարձրագոյնն է ի լերինս Սիւնեայ, տեսանի գրեթէ մեծագոյն մասն աշխարհին : Ըստ տարբեր դրից երկրին յոյժ տարբեր է և օդն : Չիք գրեթէ ամենևին դաշտագետին ի Սիսական, և որք ենն ի Սիսեան և այլուր՝ ի լեռնագաշտից համարի են : Ի Գեղամ, ի Սիսեան, ի Բաղարբերդ, ի Զանկազոր եւ ի Ղափան յոյժ առողջարար է օդն. իսկ ի լեռնագաշտակս Ճահկայ, Գողթան, ի Մեզրի, ի Բարկուշատ և ըստ մասին ի Վայոց ձոր յամարայնի յոյժ ջերմ է և տենդաբեր : Յայս սակս մեծագոյն մասն բնակչաց գաղթեն ի լերինս : Առ եզերքք Երասխայ և ի բազում ձորակս երկիրն նման է Եգիպտոսի, որպէս ասէ ինքնին Ստեփաննոս Օրբէլեան : Մշտագուարճ դալարի Թանձր խաւիւք վերարուսեալ եւ զմրխտագոյն կանաչասաղարթ ծառք մատակարարեն աչաց մարդկան երևոյթս հաճոցական եւ սնուցանեն հօտս անասնոց բիրաւորաց յամարայնի և ի ձմերայնի :

Զորք Նահանգիս :

Հիւսիսային սահման Սիսականի է ծովակն Գեղամայ :  
Հատ. Ա : 1.



ղամայ՝ ի Պարսից Աիրին Գարիա կոչեալ և ի Թուրքաց՝ Գեօկչայ ոչ ի պատճառս կապտագոյն գոլոյ ջրոյն, որպէս կարծեցին ոմանք, այլ ի սակս խորութեան ընկին որոյ ջուրն այնպէս է անանակիտ՝ մինչև տեսանել նաւորդաց ի բազում տեղիս զթափս ընին : Երկայնութիւն նորա է 1½ լիեօ, (յարևմտից յարևելս), լայնութիւնն՝ 5. և սնուցանէ առատարար զանուշահամ և բազմատեսակ ձկոնս : Յորս նշանաւոր են գեղաքունի, կողակ, բախտակ, իշխանաձուկն, կարճբախայտ, սուար, բօճակ, ծուար, բնդու, կռակտուց, աղերան, յալի : Չուր ծովակիս է համեղ և մարսողական : Քսան եւ չորս գետք եւ գետակք թափին ի ծովակս. և մի միայն ելանէ անտի, որ է մին ի գետազլխոց Հրազդանի : Գրեթէ յամենայն կողմանց չրջապատեալէ բարձրաբերձ եւ մերկ լեռամբք, եւ դիրք իւր գոլով բարձրագոյն՝ ընծայեցուցանէ տեսարան վսեմ եւ ահեղ : Առ մեօք Զաքարիա Եպիսկոպոս Գիւլասպեան որ յանապատին Սևանայ եկաց յաքսորս՝ արար զգեղեցիկ ստորագրութիւն այնորիկապա Եահիաթունեան Յովհաննէս եպիսկոպոսն : Թովակն Սևանայ իբրև երևոյթ բնական է շիջեալ և խորասուզեալ հրաբուխս, զոր յայտ առնեն մերկ եւ այրեցեալ գօտիք լեռանց բակածև շուրջ պատեալ, եւ բաղմութիւն չէ չաքարից կամ սօսնից (ponce) որ է կղզղանք հրաբղխաց, և գայլախաղից կամ օբսիդիէ,

նաց որ և կոչի յերկրաբանից ապակի հրաբղխային : Յայսմ պայմանի է նաեւ ծովակն որ իգագաթան Արագած լերին, որ և էր անտարակոյս առ նախնեօք մի յահաւոր հրաբղխայ Հայաստանի, որ բաց ի վերոյգրեալ նշանայ արտադրէ ցարդ եւս ծծումք հրաբղխային (soufre volcanique) :

Ի Գեղաքունայ ցԵրասխ երկայնին Գեղոյ, Վալոյ ձորոյ, Բամբակեան և Գարուայ ողնաչարք լերանց որ բաժանեն ընդ Արարատ եւ ընդ Սիսական . յաքեկից և ի հարաւոյ՝ Երասխ գետ և Արձախ . իսկ ի հիւսիսոյ՝ Աժաղիր, Էյվախան, Դամցիրվան ոստք լերանց բաժանեն զՈւտի և զԳուգարս ի Սիւնեաց : Ընդ մէջ սորա և Արձախայ չգտի սահման ինչ յայտնի . նազի եւ որ առ մեօք կոչի Խաչէն՝ ի հնումն կոչէր փոքր Սիւնիք եւ Հաբանդ՝ լցեալ գաղթակաւնօք Սիսականի . բայց եւ այնպէս Ծար եւ Աղահէճ գաւառք և խոռն Ըւմբի, գէթ ըստ մասին, համարեցան սահման ընդ մէջ Սիսականին և Արձախայ :

Արփայ է մեծագոյնն ի գետս Վայոց ձորոյ որ հոսի յԵրասխ : Անունս Արփայ զոր այլք թարգմանութիւն գարույ կարծեցին, ըստ իս նշանակէ ի պարսիկ լեզու սահման . գոյ աստ և գետակն Ձկնարած : Գետքն Նախիջևանայ և Երնջակայ իջանեն ի լերանց Ծղկայ : Գետքն Օրդուպատայ, Գիլեան .

(կամ Գինեան), Ուտուկու, Անանդայե Ագուլիսի իջեալ ի Գօտեայն Գարուայ՝ հոսին ամենեքին յԵրասխ . գետն Արոտնայ նոյնպէս բղխեալ ի Մզկաց՝ ընթանայ ընդ Մղուկս գաւառ, և քերեալ զՏաթևու թափի ի Հագարի : Ծովակն Շաղատոյ, զորմէ յիշատակեն Ստեփաննոս Օրբէլեան և Հ. Ղ. Ինճի . ցամաքեալ է այժմ : Թուի ինճ թէ նախնական անուն Հագարի գետոյն էր Աղաւնի (Ստեփ. Օրբ. ԻԱ.) որ յետոյ փոխեցաւ ի Հագարի ի Հագարայ . ոյ, կամ ի Թաթարայ, առ որս գտանի մինչև այժմ Անգարայ կամ Ագարայ անուամբ գետ բղխեալ ի Բայկալ ծովակէ Թաթարիոյ (այժմ Սիբերիա) : Հագարի է հզօրագոյնն ի գետս Սիսականի որ բղխեալ ի ստորերկրեայ քամուածոց ծովակին Գեղամայ՝ ընթանայ յարեւմտից հիւսիսոյ յարեւելս հարաւոյ, եւ թափի յԵրասխ ի Բարկուշատ գաւառի : Գինական կոչի գետակն որ ի սահմանս Շնէր գեղջ վազի յԱրոտնայ գետ . որպէս եւ գետակն Յուրայ որ թափի ի նոյն գետ ի սահմանս Տաթևայ : Ի Բաղարբերդէ իջանէ դետն Բաղարբերդի որ քերեալ զԿապանաւ եւ զՀալիճորով վազէ ի Հագարի : Ի լերանց Գեղամայ բլիսի Գեօքչայն կոչեցեալ որ յԱռնեղէ սկսեալ հոսի ի ծովակն Գեղամայ . անդ հոսի նաև Իշխանագետն ոչ հեռի ի Կոթոյ : Իսկ Ազատ կամ Գառնուոյ գետն հոսի յԵրասխ : Աստ դնէ Հ. Մ. Զ. յաշխարհացոյցին

յաւարտ պատմութեան Հայոց Մեծամօր անուն  
գետ . ուր չիք այնպիսի ինչ :

Հանքք :

Նահանգն Սիսական յոյժ ճոխագոյն երևի այլ և  
այլ հանքք, որոց բազմաց ի նոցանէ անուանք պա-  
կասին առ մեզ : Արժանագով Հ. Ղ. Ինճիճեան որ  
բազմաբիրտն երկամբ ի լոյս ընծայեաց զիւր պանծալի  
եռահաստոր հնախօսութիւն Հայաստանի՝ չյիչէ ինչ  
ամեւին զհանքաց Սիսականի, և որք գտանինն ի հա-  
տորն Ա. եր. 178-190. համարելի են դոյզն ինչ հա-  
մառօտութիւն այնր ամենայնի, զորս ամբարեալ ունի  
իժոցի իւրում երկիր մեր : Նախնիք մեր անհմուտ գո-  
լով քիմիական գիտութեանց՝ ոչ հետազօտեցին և ոչ  
ի ձեռն տարրալուծութեան և վերլուծութեան հասու-  
լինել կարացին պեղական բերոց աշխարհի մերոյ :  
Սակաւապէտ կեանք նոցա եւ պարապումն յառ եւ ի  
տուրս անտես պահեցին ի մտադրութենէ նոցա զան-  
համեմատ մթերս զսցստսիկ զոր իւրաքանչիւր ոք  
առանց պանդխտելոյ յերկիր օտար՝ քաղել կարէր  
ի սահմանս բնակութեան իւրոյ . ո՛ւր թողցուք եւ  
զհանքային ջրոցն աղբիւրս որ բազմաց անբուժելի  
ախտից արդ սարգեւէ բժշկութիւն ընձեռելով  
միանգամայն եւ երկրացւոցն օգուտս մեծամեծս :



Պարոն Ղիւբօա քննեաց զհիւսիսային Հայաստան .  
պարոն Տեքսիէ՝ զհարաւայինն . երկրքին ևս միսրան  
խօսին զճոխութենէ հանքաց այնորիկ :

Սակաւք ինչ յայտնի էին ի հանքաց Հայաստանի  
մինչդեռ Արարատեան, Գուգարաց, Սիւնեաց, Ու-  
տեաց և Արձախայ նահանգք գտանէին ընդ կիսամեռ  
բռնակալութեամբ Պարսից : Այլ յորմէ հետէ անցին  
նոքին ընդ կառավարութեամբ Ռուսաց՝ հանքագէտ  
պաշտօնեայք տէրութեանն շրջել սկսան և զննել  
զտեղիս որք ըստ ինչ ինչ նշանաց կամ աւանդու-  
թեանց ընծայեցուցանէին երևոյթս հանքաց : Եւ  
ահա ի 1828 ամաց հետէ բացան քաղում հանքք . և  
քնակիչքն սկսան հարստանալ : Թողեալ զամենայն  
այլում ժամանակի՝ խօսեսցուք զոր ինչ Սիսականին  
է յատուկ : Ի գաւառին Նոր Բայազիտոյ (Գեղա-  
քունի) գտաւ հանք որ մատուցանէ ի տարին զ1000  
(40,000 լիվր Գաղղիոյ) պուղ պղնձոյ . յԱգարակ  
գեղջ մերձ Մեղրոյ (յԱրևիք գաւառի) բացաւ  
հանք ճոխագոյն որ մատակարարէ ի տարին զ2500  
պուղ (100,000 լիվր Գաղղիոյ) կարմիր պղնձոյ :  
Սոյնպէս ի Բուհակիր, ի Փիրղաուղան եւ ի Կա-  
վարտ : Ի Վայոց ձոր, մերձ ի գիւղն Գիւմիւշխանէ,  
զոյ հանք արծաթոյ եւ կապարի որ թուի լինել նոյն  
ընդ յիշատակելոյն յՕրբէլեանէ . Գլուխ 7. փողահանք  
անուամբ, եւ ի Ղևոնդեայ . եր. 188 ըստ այսմ

« քանզի և լէրինք արծաթոյ յայտնեցան յաշխարհին  
Հայոց հատանել ի նոցունց զխանութս արծաթոյ  
զտոյ առ ի պէտս մարդկան » : Այլ հանք այս տա-  
կաւին անգործ մնայ առ պակասութեան ածխոյ կամ  
վայտի : Հանք պոքփիւրի եւ սպարի ընդ մէջ գեղօ-  
բէիցն Կօտորայ և Ողջի . դիօրիտի և իօկրագի ընդ  
մէջ գեղջն Ագարակայ եւ քաղաքին Օրդուպատայ .  
քաղկեդանիի եւ սերդուիքի յանթս Երասխայ . հանք  
ծծմբոյ՝ սպիտակ սօրայի եւ ժիպսի կամ բոյ մերձ ի  
Նախիջևան : Աղահանք (sel gemme) 15 . վերստիւք  
հեռի ի Նախիջևանայ յարևմտից հիւսիսոյ, ևս և կա-  
աղախառն և քարն պոքիկգ . հանք պաղլէղի կամ շա-  
պի (alun) եւ արջասպայ (vitriol կամ couperose).  
նոյնպէս ի Վայոց ձոր առ Դարալակեազ գետով :  
Աստի ելանէ և ոխը կամ դեղին ներկն որով բնակիչք  
երկրին ներկեն զբուրդ . Առ Ղարաբաբայ գեղջ  
բղիի աղբիւր ածխային թթու ջրոյ, եւ ի բազում  
տեղիս երկաթի թթու ջրոյ : Անդ առ ճանապարհան  
Արփայի որ հանէ ի Թանգիկ է ձոխ ստորերկրեայ  
ջրամբար ծծմբաջրոյ . այլ մի եւս ջերմուկ հռչակա-  
ւոր ի հիւսիսոյ ի Ծղկաց գաւառին, և երրորդ իմն՝ ի  
սահմանս Տաթեւոյ առ սատանայի կամրջաւ, ուր  
գոն և բաղանիք շինեալ ի նախնեայ . է այլ մի եւս  
աղբիւր ածխային թթու ջրոյ հանդէպ Ախլաթեան  
գեղջ ի Ծղկաց գաւառի : Բնակիչք Այնաղիւրայ եւ

Քէշիչրեանդի հատանեն զկայծաբար . եւ յԵրնջակ՝  
զերկանաբար : Գոյ և իւզ հանբային (որ թուի լինել  
նաւթ) ի վանս Անիւնոյ և Նորավանհոյ ի Վայոց ձոր  
յիշատակեալ ի Ստեփաննոսէ Օրբէլեան ի Գլուխան  
62 և 64 : Յանդիման Շնկէր գեղջ առ Որոտնայ գե-  
տով է միւս այլ հանք արջասպոյ : Հանք զառեկի  
կամ մկնդեղոյ (arsenic) մերձ ի գիւղն Եայճայ ի  
գաւառին Օրդուբատայ զոր եգիտ Պարոն Վօսկոբոյ,  
նիկով յամին 1828 : Ի Վայոց ձոր, մերձ ի գիւղն ստո-  
բին Նորաշէն գտաւ յամի Տեառն 1829 հանք ար-  
ծաթախառն կապարի : Անդ մերձ ի գիւղն Եայճի՝  
յամի Տեառն 1829 Աստուածատուր Յովակիմեան  
եգիտ զայլ իմն հանք արծաթախառն կապարի :

Ի վայրի կենդանեաց Սիւնիք ունի զառիւծ (ըստ  
Օրբէլեանի), վագր, արջ, գայլ, ինձ, աղուէս, չախալ,  
կուղ, աամաթ, վայրի այծ, նապաստակ, վարազ եւ  
եղջերու . ի թռչնոց՝ թուրաճ, փասիան, կաբաւ,  
արծուի, ցին . և յընտանի կենդանեաց և ի հաւուց՝ ձի,  
ջորի, էջ, գոմէշ, եզն, ուղտ, այծ, ոչխար, հնդկահաւ,  
սագ, բադ, հաւ : Գո՛ն լերինք կոյս եւ թաւաթուփ  
անտառօք լի . ընդ որս գնան ուղևորք ժամս բազումս  
առանց տեսանելոյ զարև : Ի փայտս անտառի նշա-  
նաւոր են սոսախ, գի, մուրտ, բւեկնի, թեղի, կաղ-  
նի : Ի մրգաբերաց նշանաւոր են ընկզենի, դեղ-  
ձի, տանձի, փշատի, խնձորի, դամոնի, սերկլլի,

թթենի, կեռասենի, նոնենի, հաղարջենի, նշենի, զրկեռենի, հոնի, սեաւ սաղորի կամ դամբուլի ծառք : Ի գլուխն 49, ասէ Ստեփաննոս տնկեալ երբեմն հուպ Տաթևոյ դրախտ ձիթենեաց և թզենեաց, զոր չեղև մեզ տեսանել :

Իսկ ի պարտիզաբեր, իւղաբեր և ընդաբեր բուսոյ եւ ի ծաղկանց՝ ծխախոտ, լուբիա, մաշ, կաղամբ, մեկոն, ձմերուկ, սեխ, վարունգ, պղպեղ, դդում, սոխ, կապար, խաւարծիլ կամ իշխուն, բակլայ, քընձիթ, կանեփ, կտաւատ, քրքում, նա և խաղող, ցորեան, գարի, բամբակ, բրինձ, կորեակ, վայրի վարդ կարճաբուն անուշահոտ, մեխակ, լոզուս կամ նուտուֆար հակայ ի Բաղաբերդ, ծնեբեկ և կոմզան : Ի ձորալիոր դաւառս պատրաստեն բնակիչք մետաքս առատ և մեղր անուշահամ : Զեռունք Մեղրոյ ձանձրացուցիչ են և երբեմն՝ մահաբեր . Այնպիսի է անդ օձից, կարճաց եւ մորմոց (tarentule) բազմութիւն, մինչև անհաւատաղի թուիլ լսողաց, որպէս ինձ ևս դէպ եղև զփորձ առնուլ . ամին իրի մեծաւ զգուշութեամբ կենցաղավարին բնակիչք երկրին . տունք նոցա այնպէս խնամօք բռեալեն ինեբքուստ՝ մինչ իբր միապաղաղ իմն ընծայիլ տեսութեան . և ցուոյն, որմոցն և յատակին կարեալ երևել ի միջէ պաստառէ . եւ ծայրագոյն մաքրութիւն նոցա յառակս է առ բնակիչս աշխարհին : Եւ հաւատար են Մեղրեցիւր

յայսմ մասին Հողանդացոց : Երկրագործութիւն  
և այգեգործութիւն Մեղրեցեացն գերազանցէ յոյժ  
քան դրագումն յԵւրոպացոց : Ամենեքին նոքա աչ-  
խատասէր են, խնայող, յառաջատես, միաբան եւ  
հարուստ : Ի Մեղրի չիք ամենեւին աղքատ :

### Բնակիչք Սիւնեաց :

Նախահարք բնակչաց նահանգիս եղեն, ըստ Մով-  
սիսի Խորենացոց . Ա. 11. ըստ Յովհաննէս կաթո-  
ղիկոսի . եր. 10. ըստ Ստեփաննոսի Ասողկայ . եր. 38  
և 40 և ըստ այլոց, Գեղամ և որդի իւր Սիսակ՝ 1900  
ամօք յառաջ քան զՔրիստոս : Արոց որդիք եւ թո-  
սունք անեալ սակաւ առ սակաւ՝ լցին գաղթակա-  
նութեամբ զերկիրս Արձախայ, Աղվանից, Գողթան,  
Յշտունեաց և այլն : Յայս սակս բնակիչք Սիսականի  
համարին ի զուտ արենէ Հայկայ և որդւոց իւրոց սե-  
րեալ : Յետ այսպէս միանգամ յիշելոյ նոցա զծագումն  
Սիւնեաց ի Սիսակայ և ի Արզմեայ ի մոռացօնս ար-  
կանեն զնահանգս զայս յընթացս հազարաւոր ամաց .  
և եթէ դոյզն ինչ յիշատակութիւն առնեն զայնմանէ  
ընդ ժամանակս ժամանակս . այլայն ևս յոյժ հարւանցի  
և թերակատար իմն ձևով՝ ա՛յնպէս զի քաղաքական  
տեսչութիւն, անցք, կենցաղ և այլ և այլ հանգամանք  
բնակչացն անծանօթ միան ի մէնջ բողոչուիլն : Մնա՞ց

արդեօք միշտ նահանգս ընդ իշխանութեամբ թա-  
գաւորաց մերոց, ա՞նց արդեօք առ Ատրպատականս,  
առ Մեղացիս, առ Պարսիկս, եղե՞ն արդեօք յայս  
նահանգ գաղթականութիւնք Սկիւթաց, Մեղաց,  
Բաղտրիացւոց, Գոթաց, Սակաց, (Հնդիկ-Գերմա-  
նացւոց), Գօլաց (Գաղղիացւոց), Անգլաց (Անգղիա-  
ցւոց), Կեղտաց : Ահա խնդիրք կարևոր, որոց լուծումն  
փարատեացէ անշուշտ զթանձր մնայն որ չըջապա-  
տեալ ունի զայս և զբազումս ի նահանգաց Հայոց, և  
բարձցէ զտարակոյսս յորով : Թէ և համոզեալեմ ամե-  
նայնիւ ընդ սքանչելի հաւատարմութիւն և ընդ ան-  
կեղծութիւն Մովսիսի Խորենացւոց և բազմաց իմե-  
րոց սլաւամբանից . սակայն սղաբանութիւն առաջ-  
նոյն եւ անհետազօտութիւն միւսոցն թուղուն զտա-  
տամնութիւն ոչ սակաւ ի միտս քննատէր : Առաջնոցն  
պակասեաց թերևս ժամանակ առ ի բոլորել զիւր գիր-  
պատմութեան, միւսոցն՝ ոգի հետաքրքրութեան եւ  
կրիտիս առ ի կատարելագործել զմերոյ աշխարհի վէպա-  
անցից : Եղեն ևս որք բառ առ բառ օրինակեցին զա-  
ռաջիննս իւրեանց . և կոչեցան պատմիչք : Բայց և  
այնպէս եթէ Նախախնամութիւնն շնորհէր ինձ գալ  
յաշխարհ ի դարուն յորում եկաց ծերունին երջանիկ՝  
ի մտի եղեալ էի հարցմունս յորովս առնել նմին որպէս-  
դի ուսայց թէ՛ զի՞նչ էր արդեօք պատճառն զի մին ի-  
նահանգաց մեծին Հայոց կոչեցաւ Տայք, և մին ի հօրք

բերդից այնորիկ՝ Թուլսարք, այն ինչ բուն աշխարհ  
Տայոցն էր ի սահմանակցութեան Բազտրիոյ ըստ  
Ամիւսիանոսի. Գ. 4. և ըստ Մալտերրեօնի. Թէ զինչ  
էր պատճառն զի մին ի գաւառացն Ուտեաց կոչեցաւ  
Սակաչէն, բնակիչքն՝ Սակք. և սուր նոցա՝ ասկը, մինչ  
բուն աշխարհ Սակացն էր Սագաստան ըստ Ստրաբո-  
նի, Ռիոդորոսի Սիկիլիացւոյ, Պլինիոսի և Պտղոմէո-  
սի, որք և ըստ Հերոդոտայ (ըստ տպագրութեան  
Բիւշօնի) եր. 245. էին Սկիւթացի յազգէ և գաղթեալ  
ի Հայաստան. Թէ զինչ էր պատճառն զի գտանին ի  
բարձր Հայս և ի մերձակայս Կար-ին, Կար-ույ, Կար-  
բի, Կար-կառ, Կար-բին, յորժամ կար բառն ի լեզու  
Կեղտաց նշանակէ քար, և կար-իերն՝ (carrière) քա-  
րահանք: Այսպէս հարցանել ունէի Թէ՛ է՞ր աղազաւ  
ընդ անուանս բազմաց յաւանից Սիւնեաց լծորդեցաւ  
առ նախնեօք բառս կոր, և կոչին ցարդ ևս Բունա-կոր,  
Անգեղա-կոր, Կոր-աձոր վերին, Կոր-աձոր, Կոր,  
Կուքն, Կուտ-ակք, Կոր-եվանք, Ճակ-կոր. Մառա-  
կոր, Գեղ-եվանք, Նախ-կոտան. այլք՝ Շաք-է, Շիկ-  
ակարբն, Շէք-քս, Շաք-ուայ, Շիկ-ահողք. ոմանք՝  
Ատո, Արք-իկ, Աք-խոյք, Մոգք, Մոգոյք, Աք-  
խիք, Աո-չար, Ատր-մեղենաբակ, Արտ-ակերտ,  
Արտ-աչէնք, Զատ-ագարակ, Զեր-իչատ, Տերն-  
դոտ, Տնոն-ատեան, Տաշո-ուն. Անգ-եղի, Անգ-  
եղակոթ, Գեղ-աձոր, Գեղ-ոյ վանք. Գադատ-այ,

Գոթ-ձոր, Գոթ-ոյ ագարակ, Փրակ-այ. Շտառ-ուխ  
եւ այլն : Երկրտասան անուանքն առաջին կարգի  
յորս մասնաւոր աստաղարձութեամբ զտանի կոթ,  
կոթ, կոտ եւ կոտ բառն, եթէ այլոց թուիցին պա-  
տահական. այլ ինձ ոչ այնպէս : Յայտնի է՝ զի մին ի  
հզօր ցեղից Գերմանացոց կոչէր ի հնումն Գոթ կամ  
Կոթ (Goths), եւ բաժանեալէր յարևելեան Գոթս  
(Ostrogoths) և յարևմտեան Գոթս (Visigoths) : Ազգս  
այս ելեալ ի Հնդկաստանէ եւ զկայ առեալ ժամա-  
նակս ինչ ի Գերման՝ նահանգի Պարսից, անց ընդ  
Հայս և ընդ Արևիկաս յԵւրոպիա վեց կամ եօթն հա-  
րիւր ամօք նախքան զՔրիստոս : Հետագօտեալ մեր  
խնամօք զընթացս զաղթականութեան, զբարս եւ  
ղկրօն ազգիս այսորիկ՝ տեսի տակաւ ին զհետս այնո-  
րիկ յետ ի վերայ անցանելոյ 2500 ամաց տպաւորեալ  
ամենայն ուրեք ի Սիւնիս : Նախ՝ զի գոթ կամ կոթ  
բառն շարայարեալ ի սկզբն կամ ի վերջ աւանտոց  
Սիսականի՝ ակնարկէ յայտնապէս յազգն Գոթաց,  
որք եթէ ոչ բնակեցան անդ բոլորովին եւ խառ-  
նեցան յազգ մեր՝ զոնէ կացին անդէն ժամանակս  
բազումս : Երկրորդ՝ զի մին ի ցեղից Գոթաց կո-  
չէր *sauones* (սիւօն), զոր համարիմ կոչեցեալ ի  
մերոց Սիւնի փոխելով այսպէս զբուն անուն երկրին,  
որ էր Սիսական. սոյնպէս զանուն միւս ցեղին *sitones*  
նշմարեմ ի Մոթք : Դէզօրրի եւ Բաշլե (*Désobry et*



*Bachelet*) ի պատմական եւ յաշխարհագրական երկ-  
հատոր բառարանին իւրեանց՝ ի բառն *Գերմանիա*  
*յիշեն զայլ եւ այլ ցեղս այսր ազգի, եւ զանուանս*  
*Թաղաւորաց նոցա եւ աշխարհաց, յորոց ոմանք*  
*տեսանին ակն յանգիման ի Սիւնիա . զորոս դիցուք*  
*աստէն յերիս էջս . յառաջնումն՝ զազգիերէն . յերկ-*  
*րորդումն՝ զհայերէն Թարգմանութիւն անոցիկ . եւ*  
*յերրորդումն զհոնանուանս նոցին ի Սիւնիա ըստ*  
*աւանդելոյ Ստեփաննոսի Օրբէլեան . որոց ընդունե-*  
*լութիւն կամ անընդունելութիւն ի կամս անձնիւր է*  
*ապաստան :*

*Istévons* — իստեվոն *Ալստու :*

*Vandali* — վանտալի, *Վաղատին, Վաղաթու :*

*Bastarnæ* — բաստարնէ, *Բաստ կամ Բուստ :*

*Marsi* — մարսի, *Մարգէն :*

*Éraric* — երարիկ, *Երերունք, Երեր, Երերք :*

*Norique* — նորիք, *Նորիք :*

*Pannonique* — պանոնիկ, *Բնունիք :*

*Bal-amir* — բաղ-ամիր, *Բաղ, ուստի Թերեւս*

*Բաղք զաւարու եւ Բաղ-արերդ :*

*Widi-mir* — վիտի-միր, *Վէտի՝ գիւղ ի Վայոց*

*ձոր :*

*Hermions* — երմիոն, *Լերմենիցէ :*

*Peucini* — պեուսինի, *Պիսսակ :*

*Chamavi* — շամավի, *Շամին :*

- Tencteri — տենկտրրի, Տրէտուք, Տեխք :
- Mattiaci — մատիասի, (կի) Մատախոնի :
- Amissia — ամիսիա, Ամասրիա, Ամա-
- րաս (ի փոքր Աիւնիա) :
- Albis — ալբիս, Ալբակ (ի սահմա-
- նակցութեան Աիւնեաց) :
- Francs — Ֆրանկ, Փրակայ :
- Chauci — ըօսի, Կովսական, Քա-
- շունիք, Խօզաւոս, Քօչագեղ :
- Cimbri — սիմբրի (կիմբրի), Կամբրիւն :
- Teutones — տեուոն, Տատան, Տատայ,
- Տաթիւ :
- Catti — կատի, Կութն, Խոտ :
- Turoni — տիւրոնի, Տարօնք, Դրունք :
- Առ Կեղտս օր (օն) նշանակէ բնակութիւն . գոն ի մեզ Տար-օն, Յր-օն, Լամբր-օն :
- Narisci — նարիսի, (կի) Նորաշինիկ :
- Marco-manni — մարկօ-մաննի, մինի : Միննի կցի երբեմն ընդ անուանս har կամ herminni, յոր անուն կոչեցաւ Հայաստան յԵրեմիա մարգարէէ . տե՛ս զհնախօսութիւն Հայաստանեայց . հատ. Բ. եր. 5 :
- Quadi — քադի, Կոթ :
- Lango-bardi — լանգօ-բարդի, Բերդիկ :
- Angli — անգլի, Անգլի :
- Arii — արիի, Արենի, Այրք :

Dudini — դիւդինի, Տատն-եղիշէն :

Lemovii — Լմովի, Լիմ, Լիմ վերին, Լիմ ներքին :

Saxons — սաքսոն, Սագ, Շաքէ, Շէքքս :

Երկրորդ՝ զի առ նախնի Գերմանացիս ոչ էր սովորութիւն բնակելոյ ի պարսպապիակ քաղաքս . այլ ի իկուզս գետնաւոր, յայրս, յանտառի եւ ի խրճիթս : Խրճիթք նոցա ցրուեալ այսր անդր յանդի կամ յայրս՝ կոչէին բուրգ, զոր գտանեմք ի բուրդ բառն մեր : Զայս մարթ է տեսանել արդ ևս ի Սիւնիս ուր բնակին տակաւին ի քարայրս, որպէս ի Խնձորեակ և այլուր : Համախմբութիւն խրճիթաց կոչէր առ Գերմանացիս բակ (pagus), որդարձեալ տեսանի շարայարեալ յանուանս բազում շինից Սիւնեաց, զորօրինակ Նորա-բակք, Վարդանա-բակք, Բակ-աւոր, Վաչէ-բակք, Խոնթակա-բակք, Սահակա-բակք, Ղաչու-բակք, Դարա-բակք, Տկոլա-բակք, Ատրմեղենա-բակ, Բակ-երտ, Տետա-բակ : Բակ բառն որ ըստ այժմեան առման նշանակէ առ մեզ չրջապատ տեղի՝ առ նախնի Սիւնիս ցուցանէր գիւղ կամ շէն որպէս եւ առ Գերմանացիս :

Ըստ յառաջ բերելոյ վերոյիշեալ և այլոց մատենագրաց՝ առ Գերմանացիս ի պատուի էր հիւրասիրութիւն . աղջկուներ նոցա յամուսնանալն ոչ տանէին օժիտ ի հայրենի տանէ բայց եթէ լուծ մի եզանց . ա-

մուսնական զոհախոհութիւն ի սրատու ի էր առ նոսա :  
Սիրէին նոքա զարիւնըռուշտ կոխա, ռխակալութիւն  
նոցա և ծարաւ վրէժխնդրութեան աւանդէին որդւոց  
յորդիս և ազգէ յազգ : Աւր և կանայք ունէին զմազ  
շէկ, հերս երկայն, աչկունս կապոյտ . և կանայք բա-  
զում անգամ մարտակից լինէին արանց իւրեանց ի  
պատերազմի : Վերոյգրեալ առաքինութիւնք և մո-  
լութիւնք տեսանին ցայժմ ևս առ Սիւնիս : Կոռա-  
սիրութիւն նոցա յառակս է առ շրջարնակ ազգս .  
Ոխակալութիւն նոցա եւ ոգին վրէժխնդրութեան  
բազում անգամ լուացին արեամբ ոչ միայն զՍիւնիս-  
այլ և զՀայաստան բոլոր . (զորմէ տե՛ս և ի Ստորա-  
գրութեան հին Հացաստանի. եր. 231-232 : Բազմաց  
ի նոցանէ շէկ են հերք, (առ Հայս և առ Անգղիացիս  
մազն կոչի հեր) և երկայն մօրուք . գոն և գիւղօրայք  
որ սկսանին շէկ բառիւ, որպէս շիկակարբն, շիկահող և  
այլն : Աւր և կանայք նոցա սիրեն զոզխոհութիւն .  
իսկ քաջասրտութիւն բաշխ է երկոցուն ցեղիցն հա-  
սասարապէս . յոլով են առ նոսա կապուտակնեայք :  
Երգն մարտի կոչէր առ Քերմանացիս barrit. գոյ և  
առ մեզ ձայն սաստիկ երգոյ վառ կոչեցեալ : Teutsch  
(տեօտշ) էր առ նոսա չաստուածն համարեալ որդի  
երկրի . գոյ եւ ի Սիւնիս տաշտուն, դաշտ և տաւտու-  
տուն : Odin (օդին) էր առ Քերմանացիս անուն չաս-  
տուծոյ մարտի և յաղթութեան. գտանի և ի սահմա-  
Հսոռ. Ա :

նակցութեան անդ Սիւնեաց Ուտի, յորում էր թեր-  
ևս ի նախնումն տաճար ինչ նուիրեալ չաստուծոյ :  
Dag կոչէր առ Գերմանացիս օրն, և շտաա՝ շէնն. գոն  
Սիւնիս Տախն գիւղ և Ետատուխ գիւղաքաղաք : Եր  
և thor (եր, թօռ.) կոչէին Գերմանացիք շաստուածն  
որոտման, քօռ կոչի ցարդ ևս ի Սիւնեաց անձրեն  
ծնեալ յորոտմանց : Herttha, erde (երթա, երդ) կոչէր  
առ Գերմանացիս երկիրն համարեալ կին Աստուծոյ,  
ունիմք մեք ևս երդ, երդք որ նշանակէ ընտանիք :  
Ախաստուածն հողմոյ կոչէր առ նոսա kari (կարի).  
առ մեզ ևս գոն կարի-ն, կարս, որպէս եւ առ Սիւ-  
նիս կերեմ :

Արօն նախնի Գերմանացւոցն էր կրակապաշտու-  
թիւն, որպիսի էր եւ Պարսիցն՝ նոցուն ազգակցաց :  
Արակատունն զոր մերայինքն ատրուչան անուանե-  
ցին՝ Պայքսիկք արեղդահ ասացին . եւ զկրակապաշտ-  
ւորն՝ արեղիերեստ : Թէև Հայք ևս ուսեալ ի Պարսից  
պաշտեցին երբեմն զկրակ . այլ ոչ այնպիսի մոլու-  
թեամբ որպէս նախնի Սիւնիք, որոյ ապացոյց է ատր  
(հուր) բառն, զոր բազմաթիւ աւանք երկրին կրէին  
նաեւ յաւուրս Ստեփաննոսի Օրբէլեան հանդերձ  
այլովք կոչմամբ, որք յիշեցուցանեն անդադար զյի-  
չատակա վարդապետութեան Զրադեշտի : Զորօրի-  
նակ ատր, արք-իք, արտ-ին, ար-խոյք, ար-խիք, ատ-  
չար, ատր-մեղենաբակ, արտ-ակերտ, արտ-աշէնք,

զեր-իշատ, զառ-սազարակ, մոգք, մոգոյք. տաշտուն կամ տաշտեր (աստղ անձրևոյ), վանանդ՝ աստղ առողջութեան, դուգակ կամ դիզագ (անդունդ), յոր անուն կոչի ցարդ մին ի գաւառաց Արձախայ : Գտանին ի Սիւնիս նաև հետք Գօլ-աց կամ Գոդ-աց (Գաղղիացոց) ըստ մեր լեզուի կանոնաց, և Անգլաց կամ Անգղաց (Անգղիացոց), որպէս է տեսանել յանուանս գող-ատայ, գեղ-աճոր, գեղ-ոյ վանք, գող-ձոր, գող-ոց ազարակ, գող-թն, փրակ-այ, գող-ոց աղբիւր, գող-որեայ վանք, գոլ-ոչտի, անգեղի, անգեղ-ակոթ . անկ-լոն, անկղ, անգղ, անգեղ-տուն (այլուր) :

Թէպէտ կամէի այլ նա հարկանել ի գրի դիտողութիւնս առ ի ցուցանել զընդերկար բնականալն Գերմանացոց ի Սիսական . այլ երկուցեալ ի ձանձրացուցանելոյ զընթերցողս, մանաւանդ թէ պահեալ զամենայնն այլում ժամանակի և տեղոյ՝ բաւական վարկայ զոր ինչ յառաջ բերի ի վեր անդր : Յորմէ հետեւի թէ՛ կամ Գերմանացիք ժամանակ մի կացեալ յերկրի անդ 2500 ամօք յառաջագոյն՝ անցին ապա յԵւրոպիա . կամ թէ՛ խառնեալ ընդ բուն բնակս երկրին՝ հայացան : Ապա թէ ոչ՝ եթէ ամենայն Աիւնիք յանխառն արենէ Սիսակայ էին իջեալ՝ զիարդ ուրեմն Կորիւն կոչէր զնոսա գազանաձիտս, վայրենագոյնս, ճիւղաբարոյս, զոր անհնարին է բացատրել այլով պատճառսբանութեամբ, բայց եթէ հա-

մարեղով զնոսա խառնեալ յազգ այլ և ստայեալ բարս  
գազանականս, որով ծանուցեալէին արդարև նախնի  
Գերմանայիք :

Կառավարութիւն Սիսականի և բարձ և պատիւ  
նահապետացն անժանօթ մնացին մինչեւ ցՎաղար-  
շակ, որ ըստ աւանդելոյ Մ. Խորենաց. Բ. 8. կար-  
գեաց « զեզերբ հայկական խօսից կողմնակալս երկուց  
ցեղից տանց նահապետութեանց Սիսակեան և Կադ-  
մեան » : Զոր վերահաստատեաց իբր 450 ամօք զկնի  
սուրբն Տրդատ յորժամ վերստին կանգնեաց զպե-  
տութիւնն հայկական՝ կարգելով զՍիսականն ըստ  
Ագաթանգեղոսի ի մետասաներորդում բարձի : Ի  
Զորրորդ դարուն չարաչար աւերեցաւ եւ ամայա-  
ցաւ Սիւնիք ի պաճառս անխոհեմ զնացից Անդոկայ  
որ յաւարի էառ զՏիգրոն՝ մայրաքաղաք Պարսից . այլ  
Բաբիկ՝ որդի իւր, վերստին նորոգեաց զայն և ծաղ-  
կեցոյց : Յիններորդ եւ ի տասներորդ դարս ծաղ-  
կեցաւ Սիւնիք վաճառականութեամբ, բազմամար-  
դութեամբ, երկրագործութեամբ, ճարտարապետու-  
թեամբ եւ աստուածպաշտութեամբ : Հարիւրաւոր  
մենաստանք կանգնեցան իծմակս, ի խոխոմս, իծեր-  
պըս, ի ձորակս եւ ի պտուկս լերանց Սիւնեաց, եւ  
բիւրաւոր քրիստոնեայք լքեալ զվայելչութիւնս աշ-  
խարհի՝ ետուն զանձինս ի ճղունս խաչընդուս կրօ-  
նաւորութեան :

Նահապետութիւն Սիւնեայ ի բազմայ հետէ քաժանեալէր յերկուս ճիւղս, յորոց աւագագոյնն նստէր ի Աից վտակայ տեղուջ. և կոչիւր գահերէց իշխան Սիւնեայ. երկրորդն՝ ի Քեղաքունի. և կոչիւր հայկազուն իշխան. սակայն ի տասներորդ դարուն յերևան ելին այլ ևս երկոքին իշխանութիւնք անկախք ի միմեանց: Յորոց Սմբատ կալաւ զԱյոց ճոր եւ նստաւ յԵղեգիս քաղաքի. Ջագիկ՝ ի Բաղայ գաւառի, ի Ասպան քաղաքի. Սահակ՝ ի Հարանդի զՀազարի գետով. Բարգէն՝ այլուր: Սմբատ Սահակեան եղև առաջինն յիշխանս Սիւնի, որ ապստամբեալ յօրինաւոր թագաւորէ իւրմէ՝ թագ կապեաց անձին յամի իբր 970 ի Սիւնիս որում յաջորդեցին այլքոմանք մինչև ցամն 1166 յորում բոլորովին նուաճեցաւ երկիրս այս յայլագգեաց. իսկ միւս հայկազուն ցեղն դարձաւ ի կրօնս Մահմետի, և կայ ցարդ հէյկնագրու անուամբ ի Քաշաթաղի, առ որում ինձ ևս դէպ եղև երբեմն ագանիլ: Թէպէտեւ զկնի Օրբէլեանք ջանային վերանորոգել զՍիւնիս. այլ անդադար յարձակմունք Սալջուկեանց, Պարսից, Թաթարաց եւ այլոց միշտ խոչընդոտն եղեն խորհրդոց նոցա. ուստի եւ նահանգս այս օր քան զօր անջբացաւ, եւ յամայութիւն դարձաւ:

Դաւիթ Սիւնի ի սկզբան ութևատասներորդ դարուն փորձ փորձեաց ազատել զՍիւնիս ի լծոյ սլաւաւ. Ա:



լազգեաց . այլ տարածամ մահն անագորոյն խափա-  
նեաց զձեռնարկութիւն իւր : Ի կէսն տասն եւ ութ-  
երորդ դարուն ահագին մարտք պատերազմաց Թուր-  
քաց և Պարսից և անլուրհարստահարութիւնք Նագիր  
չահին իսպառ ապականեցին զայս գեղեցիկ նահանգ-  
որոյ բնակիչք յոգիս ապաստան եղեալ լին զարարս  
իւրեանց եւ զերկիր ծննդեան . եւ անցեալ գնացին՝  
ոմանք ի Թուրքաստան՝ զտեղի կալեալ ի Զմիւռնիա,  
ի Կոստանդնուպօլիս, ի Պերզամ, յԷօտէմիչ, յԱղ-  
հասար . այլք՝ ի Շուշի, ի Տիւղիս և մինչև ի Հաժտէր-  
խան : Յետ 1828 ամին իբրև դադարեցաւ գոռն  
Պարսից եւ Ռուսաց . եւ Սիւնիք բոլորովին անկաւ  
ընդ իշխանութեամբ վերջնոյս՝ սկսաւ սակաւ առ սա-  
կաւ ոգի առնուլ և վերստին շինիլ : Սակաւ մի զկնի  
հազարաւոր գերդաստանք Հայոց գաղթեալ ի Պարս-  
կաստանէ՝ սփռեցան ի Սիւնիս, որով և բազմամար-  
դացաւ երկիրն : Այժմեան բնակիչք երկրին են Հայք,  
Քիւրտք, Պարսիկք, Թաթարք և Թուրք . արեւմտեան  
մասն Սիւնեաց այսինքն Գեզաբունի, Սոթք, Վա-  
յոյ ձոր, Ճահուկ, Երնջակ և Գողթն անկեալեն ընդ  
իշխանութեամբ նահանգապետին Երեւանայ, մնա-  
ցելոցն իշխէ նահանգապետն Շամախույ :

Մնայ խօսիլ ինձ հուակ ապա սակաւիկ մի զՏա-  
թևոյ վանից եւ զմետրապօլտացն Սիւնեաց : Յետ  
մուտ գործելոյ Քրիստոնէութեանն յայս նահանգ

եկեղեցին Շաղատոյ եղև մայր եկեղեցի եւ եպիսկոպոսարան երկրին ամն բազումս, որպէս ինքնին Ստեփաննոս Օրբէլեան բազում անգամ կրկնէ և վերակրկնէ ի Գլուխն Ժ, ԺԲ, և այլուր յասելն « յամենայն տարւոջ ժողով արարեալ Սիւնեաց Տեսուն հանդերձ եպիսկոպոսին՝ զոր երևման սուրբ եկեղեցւոյն սոնախմբէին իբրև զմայր եկեղեցեացն աշխարհին ամենայն Սիւնեաց... Եւ քաջամարտիկն Քաղանայ հասանէ վիճակաւ գիւղաքաղաքն Շաղատոյ հանդերձ սուրբ եկեղեցեաւն որ յայնմ ժամանակի մայր եկեղեցեաց անուանէին » : Ոչ ի գիրս Ստեփաննոսի Օրբէլեան, որ յստեանայնի պանծացուցանել զիտէ զիւր հայրենիս եւ աթոռ, ոչ Մովսիսի Խորենացւոյ, ոչ Ստեփաննոսի Ասողկայ, ոչ Յովհաննու կաթողիկոսի և ոչ այլոյ ուրուք ի բանիրուն և խորաքննին պատմագրաց մերոց ասացեալ եղև երբէք թէ սուրբն Ստաթէ եկեալ իցէ յայն աշխարհ, քարոզեալ, նահատակեալ եւ թաղեալ ի Տաթև : Ստեփաննոս Օրբէլեան պատմէ ի Գլուխն ԼԹ. թէ՛ անուն Տաթևոյ անծանօթ էր առ բնակիչս երկրին . և թէ՛ ոչ գոյր անդէն երևելի շինուած ինչ ցղարն իններորդ, ուր եւ յաւելու թէ՛ Դաւիթ եղև առաջին յեպիսկոպոսս Սիւնեաց որ գնեաց զայն գիւղ շրջակայ ագարակօքն հանդերձ յիշխանէն Փիլիպպէէ . եւ եղ անդ զաթոռ իւր : Ի վաճառագրին Փիլիպպեայ իշխանին, ևս և ի Գլուխն

Խ. յիշատակի հրաշագործ խաչ մի որ թուի լինել Անդոկայն : Սակաւ մի զկնի, ի Գլուխն ԽԱ. պատմէ Ստեփաննոս Օրբէլեան զերեւմանէ հրեշտակին Աստուծոյ Յովհաննիսի՝ եպիսկոպոսին Սիւնեաց, եւ զպատուիրելոյն շինել եկեղեցի ի Տաթև յանուն երկուց գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, որև հիմնարկեալ կատարեցաւ և փառաւորապէս օծաւ ի թուին Հայոց 344 (յամի Տեառն 896) : Ի ժամանակէ անտի մինչ ցելս երեքտասաներորդ դարուն եպիսկոպոսարանն Տաթևոյ յիշատակի միշտ և յամենայնի յանուն սրբոյ խաչին, յանուն գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. այլ ոչ բնաւ յանցն սրբոյն Ստաթէի : Ապաքէն եթէ այս անուն անծանօթ էր ամենեւին ի Սիւնիս յընթացս 1300 ամաց, զիա՞րդ սուպ ի յետնոց և յաննչանից ոմանց հռչակաւոր վանքն այն Տաթևոյ, որ կառուցաւ ի սկզբան անդ յանուն սրբոյ Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի՝ փոխեցաւ յանուն Ստաթէի : Այլ թող բացատրեսցեն որպէս և կամին . իսկ իմ՝ պատասխանի այս է թէ՛ կամ ոմանք ի մերոց հակառակասիրաց ի ժամանակի՝ զայրանալոյ Ունիթոութեանն ի Ճահուկ եւ յԵրնջակ՝ փոփոխմամբս այսուիկ անհետ առնել կամեցան զանուանս երկուց առաքելոցն Հռոմէական եկեղեցւոյ, կամ թէ՛ սղէտք ոմանք խաբեալք ի մերձաւորութենէ

Տաթև եւ Ստաթէ հնչմանց՝ զՏաթևն փոխեցին ի Ստաթէ . եւ այնպէս մնաց մինչեւ ցայսօր : Ի սոցա կարգէ է նաև Վարդան աշխարհագիր, որ զՏաթևն հանէ ի Ստաթէէ, և տարեալ զնէ զայն ի փոքր Սիւնիս . որում հետևեցան եւ այլք ոմանք նմանք նմին և զուրկք ի բանագատութենէ :

Կ. Վ. Շահագարեանց՝  
միաբան սրբոյ Էջմիածնի :





## ՅԱՆԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ :



- Ա. Նախադրութիւն գրոցս . եւ պատճառ առանձինն առանձին :
- Բ. Սակս ազգարանութեան եւ նախնական նախակարգութեան եթէ ուստի սերեցան նահապետութիւնք Միսական ազգին յԱղամայ հետէ :
- Գ. Յուցմունք սահմանաց աշխարհիս Սիւնեաց . եւ թէ զինչ ունի պարարտութիւն ի պէտս մարդկան . եւ որքանութիւն զաւառաց եւ անատիկ բերդից :
- Դ. Սակս Միսական տոհմին նախակարգութեան թէ որպէս կարգեցաւ ի Վաղարշակայ՝ թագաւորէ Հայոց :
- Ե. Սակս լուսաւորութեան աշխարհիս Սիւնեաց Աստուածգիտութեամբ և հաւատալոյ իշխանացն ընդ Տրդատաց ի ձեռն սրբոյն Քրիզորի՝ լուսաւորչին մերոյ, ի Քրիստոս Աստուած . և աւերելոյ զմեհեանս եւ շինելոյ զեկեղեցիս . եւ ձեռնադրելոյ եպիսկոպոսին Սիւնեաց . եւ այլ զրոյցք պիտանիք :
- Զ. Զրոյցք հին ժամանակաց որ վասն գալց սուրբ

առաքելոցն Բարդուղիմէի յաշխարհս Սիւնեաց, եւ վասն շինելոյ եկեղեցի ի գաւառին Գողթն . և դարձուցանելոյ իհաւատս զմանս, եւ հաստատելոյ սեզան եւ ձեռնադրելոյ եպիսկոպոսս :

Է. Յաղագս եպիսկոպոսաց եւ իշխանաց Հայոց . եւ եթէ ո՛յք են գահերէցք եւ գահազուխք կարգեալ ի մեծէն Տրդատայ և ի սրբոյն Գրիգորէ և յորդուց եւ ի Թոռանց իւրոց . եւ վասն առանձին պատուոյ և ատորձանի եպիսկոպոսին Սիւնեաց :

Ը. Վասն վախճանին Գրիգորիսի՝ մետրապօլտի Սիւնեաց, եւ փոխանորդելոյ զաթոռն սրբոյն Մաշտոցի :

Թ. Վասն Անդոկայ՝ Սիւնեաց իշխանի, թէ զինչ գործ գործեաց . եւ թէ ո՛րպիսի անցք անցին ընդ աշխարհս Սիսական ի Շապհոյ՝ Պարսից արքայէ . և երթն նորա առ կայսրն Յունաց առ մեծն Թէոդոս . եւ անդ վախճանիլն՝ յասացուածոց սրբոյն Պետրոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի :

Ժ. Վասն գալոյ Բարկայ ի Հռոմոց առ Շապուհ . և քաջութեանն զոր եցոյց . եւ վերստին տիրելոյն սեպհական հայրենեաց իւրոց Սիւնեաց աշխարհիս և շինութեան սորա . եւ նախագահ պատուելոյն ընդ Բագրատունիս՝ ի նոյն ճառիցն Տեառն Պետրոսի . եւ այս ի վաթսներորդ յութերորդ ամի Թագաւորութեանն Պարսից Շապհոյ Արմզղեան :

**ԺԱ.** Յայտնութիւն եկեղեցւոյն Շաղատայ և գիւտայնչափ սրբոցն որ ի նմա . եւ հաւատաւն Գորայ և Գաղանայ և այլ Պարսից . և սքանչելիք Տիրոտ երիցուն :

**ԺԲ.** Գարձեալ ի նոյն ճառից Տեառն Պետրոսի՝ յետ բազում ժամանակաց զրոյցք վասն գիւտի նշխարաց որ ի Շաղատայ եկեղեցին . եւ որ յաւուրս Յովակիմայ եպիսկոպոսի վիճմունք . եւ սակս նախադասութեան տանուտերաց և գիւղից Սիւնեաց թէ՛ ո՛րք նախապատիւ եւ գահազլուխ սահմանեցաւ :

**ԺԳ.** Գարձեալ վասն իշխանացն որ զկնի Բարկայ :

**ԺԴ.** Կարգ. իշխանացն Սիւնեաց որ ի Բարկայ մինչև ցԲուրդոյ :

**ԺԵ.** Վասն գալոյ սուրբ վարդապետին Մետրորայ ի Սիւնիք և ի Գողթն . եւ շրջելոյ ընդ գաւառսն . եւ զղօղեալ զկուսապաշտութիւն ի տեղիս տեղիս սրբելոյ օգնութեամբ Վաղինակայ իշխանին եւ Շաբիթայ :

**ԺԶ.** Վասն նորոգ եպիսկոպոսութեանն Սիւնեաց Տեառն Անանիայի . եւ երթն յԱղվանս, և պատուիլն յԵսվաղէն՝ թաղաւորէ նոցունց :

**ԺԷ.** Գործ անարի եւ վատ իշխանին Սիւնեաց Վասակայ . եւ պատճառ նորին կորստեանն :

**ԺԸ.** Վկայութիւն սուրբ և փառաւորեալ սեպուհին Հատ . Ա :



Սիւնի՝ երանելոյն Ազգայ, որ ի ձեռաց Միհրա-  
նայ ի մէջ Պարսից հանդիսին :

ԺԹ. Վասն վկայիցն որ կան ի հանգստի ի Վայոց  
ձոր գաւառի աստ եւ անդ . եւ վասն վկայարանին  
որ շինեցաւ ի գետամիջին Եղեգեաց եւ Մողանի  
մերձ բլրին ուր ամրոցն էր :

Ի. Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց որ յաջորդեցին  
զկնի Անանիայի . եւ վասն Տեառն Երիցակայ  
սքանչելի օծմանն :

ԻԱ. Պատմութիւն համառօտ հօրն Գիւտայ եւ  
Քրիստոսասիրին . եւ շինութիւն վանիցն որ յե-  
ղերն Երասխայ :

ԻԲ. Յազազս Մակարայ եւ Պետրոսի եւ Գիգանայ  
եւ Վրդանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսաց :

ԻԳ. Թուղթ զոր Հայոց կաթողիկոսն Տէր Յովհան-  
նէս եւ այլ եպիսկոպոսք արարին առ Տէր  
Վրդանէս՝ եպիսկոպոս Սիւնեաց :

ԻԴ. Եթէ յորում աւուր եղաւ թուականն Հայոց .  
եւ սուրբ Աստուած՝ որ խաչեցար, սահմանեցաւ :

ԻԵ. Վախճան Վրդանիսի . եւ յաջորդելն Գրիգորի  
եւ Քրիստափորի . եւ որ ինչ գրոյցք եղեն յաւուրս  
նոցա :

ԻԶ. Յազազս միաբանելոյն Հայոց եւ միապետելոյ  
Տեառն Աբրահամու . եւ վասն մեծ ժողովոյն որ ի  
Դուին . եւ վասն ինն կարգաց եկեղեցւոյ . եւ վասն

Վրաց բաժանման զրոյցք յողովք և պիտանիք,  
զոր հաւաքեցաք ի հին նամակաց և յՈւխտանէսի  
գրոց. և սակս Աղվանից արքեպիսկոպոսութեանն.  
և Սիւնեաց մետրապօլտութեանն. և վասն Աիւ-  
նեաց խաչին թէ էր ազազաւ տուաւ :

ԻԷ. Վասն ինն դասուց եկեղեցւոյ թէ որք են և  
որպէս վարին :

ԻԸ. Վասն Մաթուսաղայի՝ Սիւնեաց եպիսկոպոսի.  
եւ վասն ժողովոյն Աարնոյ որ ի Հերակեաց. և  
վասն Եգրի խմորեղոյն յաղանդն Քաղկեդոնի :

ԻԹ. Թուղթ Մաթուսաղայի՝ Սիւնեաց եպիսկո-  
պոսի, զոր գրեաց հրամանաւ Տեառն Եգրի՝ Հայոց  
կաթողիկոսի, եւ այլ եպիսկոպոսաց Հայոց առ  
Թազաւորն Հերակլ վասն հաւաքոյ :

Լ. Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց, որք յաջորդե-  
ցին զկնի Տեառն Մաթուսաղայի քերթողի :

ԼԱ. Վասն Տեառն Ստեփաննոսի Աիւնեցւոյ վարք  
եւ վախճան. եւ որ ինչ տատմի զնմանէ :

ԼԲ. Տեսիլ սրբոյն Մեթողի եպիսկոպոսին Պատա-  
րայ եւ վկայի յաղազս անցելոյն, ներկայիս եւ  
ապառնեացն, ասացուածք յԱստուածաշունչ  
գրոյ, զոր թարգմանեալ է Տեառն Ստեփաննոսի՝  
Սիւնեաց եպիսկոպոսի :

ԼԳ. Վասն գալոյն Մրվանոյ տաճիկ զօրավարին ի  
Սիւնիս, եւ փեսայանալոյն Բարանայ պարսկի

**Արևնեայ տեառն վասակայ. եւ այրելոյն զՄա-  
քենացն. և կոտորելոյն զԳեղարունի և զԲազա-  
սական :**

**ԼԴ. Վասն Թանահապի վանից եւ հօրն Մխի-  
թարայ**

**ԼԵ. Վասն եպիսկոպոսացն Արևնեայ, որ զկնի  
սրբոյն Ստեփաննոսի յաջորդեցան ի տեղին :**

**ԼԶ. Վասն Շահանդխտոյ՝ արքայազն աղջկանն . և  
վասն մեծ և ահաւոր հրաշիցն որ եղեն յաշխարհիս  
Արևնեայ :**

**ԼԷ. Յազազս իշխանացն Արևնեայ Սահակայ եւ  
այլոցն. գործք եւ վախճանք նոցին որ յերկերիւր  
եւ յեթնամասուն թուականէն ընդ այս . զրոյցք  
եւ համառօտ տեղեկութիւնք բանից եւ գործոց  
նոցա :**

**ԼԸ. Գալն Յուսիայ ի Ախական աշխարհս : եւ  
գերիումն եւ կոտորումն դաւառացս . փախուստ  
իշխանացն . տիեզերահոծ տազնապ եւ հրակէզ  
հրդեհումն երկնատեղած բարկութեանն . վկայա-  
կան մահն Սմբատայ թագաւորին . և կրկին դարձ  
գերելոյն և փախստելիցն . զրոյցք որ յԾԾԸ թուա-  
կանէն Հայոց ընդ այս ածեսլ ձգի :**

**ԼԹ. Վասն եպիսկոպոսարանին Տաթեւոյ . և վասն  
սուրբ խաչին եւ այլ սրբոց . եւ վասն ժառան-  
գութեան Հայրապետացն :**

**Խ.** Վասն Տեառն Սաղմօնի . եւ որ ինչ նովաւ  
ետուն ի սուրբ եկեղեցին ժառանգութիւն :

**ԽԱ.** Վասն Տեառն Յովհաննիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի . եւ վասն շինութեան մեծ կաթողիկէ եկեղեցւոյն որ յեպիսկոպոսարանին անդ Տաթեւ եւ վասն այլ շինուածոցն :

**ԽԲ.** Վասն ժառանգութեան եկեղեցւոյն և հայրապետացն զորս ետուն թագաւորքն և իշխանքն . և սահման վանիցն, զոր գտաք գրեալ ի մագաղաթի եւ կնքեալ արքունական մատանեաւ :

**ԽԳ.** Գիր վճռի շրջակայ սահմանին Տաթեւոյ :

**ԽԴ.** Վասն Խոտակերաց վանիցն որ կոչեցաւ Քարկոսի կործանմանն ի շարժէ եւ վերստին շինելոյն ի Շուշանկայ աիկնոյն եւ ի Տէր Յովհաննիսէ :

**ԽԵ.** Շինութիւն Յովհաննու վանից ի Վահանայ՝ որդւոյ Չագկայ :

**ԽԶ.** Վասն Տեառն Գէորգեայ քահանայի, որ էր որդի իշխանին Սիւնեաց :

**ԽԷ.** Վասն շինութեան Նորավանից որ ի գաւառին Բղենոյ :

**ԽԸ.** Վասն Յուրայ բերդին աւերելոյն . և նովիցն որ այլ ոչ շինի :

**ԽԹ.** Վախճան Տեառն Յովհաննիսի . և յաջորդելն

**Տեառն Յակոբայ . և որ յաւուրս նորին եզեն յաւ  
ւելուածք ժառանգութեան եկեղեցւոյն :**

**Ծ. Շինութիւն եկեղեցեաց եւ վանորէից ի ձեռն  
Տեառն Յակոբայ եւ Սմբատայ իշխանին որ ի  
Վայոց ձոր գաւառի . և վանն սրբոյն Մամասայ :**



# ՄՏԵՓԱՆՆՈՍԻ

## ՕՐԲԷԼԵԱՆ

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Ս Ի Ի Ն Ե Ա Ց :



Ա. — Նախադրութիւն գրոցս . և պատճառ աստանձինն  
աստանձին :

Սկիզբն ամենայն գոյացութեանց՝ Աստուած :  
Սկիզբն ամենայն բարեաց՝ սէր : Սկիզբն ամենայն  
չնորհաց՝ խոհականութիւն :

Աստուած է սկիզբն ամենայն գոյացութեանց զի  
ի նմանէ սկսեալ և յառաջ եկեալ ամենայն բնու-  
թիւնք արարածոց երևելեաց և աներևութից՝ բա-  
ժանեցան ի զանազան սեռս և ի տեսալս և տրոհեալ  
տպաւորեցան ըստ իւրաքանչիւր պատշաճի ի ձեռս .

ի կերպս և յորակս : Սէրն է սկիզբն բարեաց զի ի նմանէ ծնանին ամենայն հոյք զանազան բարութեանց առ Ստտուած, առ հրեշտակս և առ մարդիկ : Առ Ստտուած զի ի սիրոյ շարժեալ գոյացոյց զեղեալքս ամենայն . և ի սիրոյ շարժեալ սակս պատկերին Հայրն ոչ խնայեաց յՈրդին . Որդին ոչ խնայեաց յանձն . Հոգին ոչ խնայեաց ի միշտ բաշխելն մարդկան : Առ հրեշտակս զի անխոնարհ կամօք, անխզելի սիրով միշտ միացեալ են ընդ Ստտուած, և միշտ հոգան վասն մարդկան՝ գոյակից (1) և ծառայակից գոլով մեզ : Առ մարդիկ զի ի սիրոյ յղացեալ ծնանին զամենայն բարիս հոգևոր և մարմնական. հոգևոր այնքան զի զանձինս սակս սիրոյ արքայութեանն ի մահ մատնեն և ի զանազան տանջանս և ի ճգունս անհնարինս ամօք և ժամանակօք . և մարմնաւոր, այսինքն ըստ աշխարհիս այնքան զի ի խելաց ևս ցնորին և յանհնարինսն ձեռնարկեն :

Խոհականութիւնն է սկիզբն շնորհաց զի ամենայն շնորհք որ ի մարդիկ հոգևոր և մարմնական եթէ ի բանս և եթէ յարհեստս նախ խոհականաւ խորհեալ լինի, և յետ բազում որոճմանց և ընտրութեանց լաւին և վատթարին, օգտին և անօգտին, ապա յառաջ եկեալ լինի իմաստ և բան խորհրդական, և կամ արուեստ կատարեալ՝ ծնունդք գեղեցիկք յընտիր ծնողէ խոհականութեանն :

Եւ արդ ստեղծ Աստուած զմարդն ամենայնիւ նման ինքեան, և եղ զերիս զայս ի նմա . որով կարող գոյ ամենայնիւ նմանիլ Աստուծոյ, այս է զարարչութիւնն, զսէրն, զխոհականութիւնն որ է բանակածութիւն : Զարարչութիւնն, որով արարչակից լինի ստեղծողին . զսէրն, որով միշտ բաղձայ ցանկալոյն, և հանապազ ջանայ հասանել և վայելել ի նմին . զխոհականութիւնն, որով որոշի յանբանից և կարող գոյ խորհել և ընտրել զպիտանին և զանպիտանն, զմլասասակարն և զօգուտն . և ուսմամբ և ջանիւ ի կատարեալն հասանել հասակ : Եւ թէ որպէս լինի արարչակից . վարդապետք ուսմամբ զտհաս ոգիան առնեն այր կատարեալ . քահանայք՝ զախտի ծնունդս՝ անախտ, զմարդիկ՝ Աստուած : Իսկ արհեստաւորք գոյացուցանեն յանպատշաճ իրաց պատշաճաւոր եւ պիտանի . որպէս հիւսունք ի մայրից սեղան և աթոռ . կարուակք յօգեաց՝ կօշիկ և զգեստ . Դարբինք ի քարանց՝ զերկաթ, և յերկաթոյ՝ սուսեր և այլ ինչ գործի . ահա այսօրիւք նմանին մարդիկ Աստուծոյ և արարչակից կոչին :

Ահա սակս այսր պատճառի ոչ կարէ զօրել մարդն զերիս զայս շնորհս յաման մարմնոյն թաքուցանել և անգործ պահել . այլ միշտ եռայ, զեռայ կայտաւրով . և ջանայ զամենայն ի գործ արկանել զի ի վերջոյս ունի միշտ զձգտումն և զտուխումն առ ազգակիցսն :

Հատ. Ա :

3.



Եւ գործէ այսգունակ յղացեալ մարդն ի սիրոյն եթէ բարի և եթէ չար. սաղմն առեալ յարգանդի մտացն՝ միշտ խորհի խոհականաւն եւ յօրինէ զհարս պիտոյիցն եւ ջանայ ծնանիլ եւ ի կատարումն ածել զբաղձալին. և ապա յառաջ բերեալ գործէ զոր յղացան սիրով եւ յարմարեաց խոհականաւն. եւ լինի արարիչ այնմ իրի : Յորոց մի ես վատթարագոյնս քան զամենայն ժարդ, և վերջինս ի ծնունդս եկեղեցոյ, լի անկարգութեամբ և պղերգ յամենայն գործս պիտանիս և մնացականս, չքեալ ի լուսոյն և եղծեալ ի շնորհացն, ոչ զօրեցի տանել այսմ արարչաւանդ պարզեացս որ ի բնութեանս մեր. այլ սերմն առեալ ի սիրոյն՝ վազ աւուրբք և յոլով ժամանակօք՝ եռայր յիս տարիումն բաղձանաց, եւ խորհի, խոկայի, խնդրէի, սօսկաւ ինչ գրէթէ ընդ լումային պտղաբերել ի սուրբ եկեղեցիս երկնականգէտ և աստուածաբնակ տանս Սիսական, այսինքն ընձեռել գրով ըստ իմում կարի զպացազատութիւն նախարարութեան եւ զմեծ նահապետութիւն բարձր իշխանութեանս Սիւնեաց, և զնախագահութիւն վսեմական և աստուածամեծար աթոռոյ հայրապետութեանս այսմ. և այս ո՛չ վայրապար. այլ Հոգւոյն ազդամբ. զի ի նուազեալ աւուրս և ի վերջին ժամանակս տեսաք ամենայնիւ բարձեալ և ջնջեալ զյիշատակ այսմ՝ գեղեցիկ և մեծափառ աթոռոյ տէրութեանց. մարմնա-

հանն բնաւին սպառեալ և ի մոռացոնս անկեալ . և հոգևորն ոչ ընդհատ քան զնա մերձ ի սպառումն :

Յորով երկօք որոնեալ՝ ոչ գտաք յառաջնոցն զյիշատակ սոցա ընդ գրով արկեալ, և զկնի եկեղոցս թողեալ արձան գովելի : Թէ ոչ էին գրեալ . և կամ թէ ի բազում աւերմանց և հինահարութեանց կորուսեալ էր՝ ոչ գիտեմ : Յաղագս որոյ և մեք ոչ կամեցաք անիոյթ առնել և ընդ անգիտութեան խաւարաւ թողուլ և կորուսանել զորպիսութիւն այսց իշխանութեանցս, և զանազան զրոյցքս պիտանիս և գովելիս հոգևոր և մարմնական գործոց իշխանաց և հայրապետաց . և այս երկու պատճառաւ . մի՛ զի մի՛ կորիցէ առաջնոցն գովելի գործ քաջութեանցն : Եւ մի՛ զի մի՛ բնաւին ջնջեսցի, և յանգիտութիւն անկցի յզկնի եկեղոցս յիշատակ առաջնոցն, և ժառանգութիւն եկեղեցեացս : Նաև շիոթեսցի սահման իշխանութեանս և խանգարեալ քակտեսցի և պառակտեսցի ի զանազան բարբանջմանց, որպէս և եղև իսկ բազում անգամ : Եւ զի ծանիցեն զպատիւ և զբարձ իշխանաց և հայրապետաց Սիւնեաց և զամենայն կարգ սահմանի նոցա, և մի՛ զրկեալ կողոպտեսցի յազահոզաց և ի դիւապատիր մարդկանէ : Բայց թէպէտ ցանկաղի է ինձ այս . այլ սաստիկ երկիրդիւ անկրթութեան ուղղոյս ընդոստուցեալ միտք իմ վրիպեցուցանէ զիս յառաջարկութեանցս :

Սակա որոյ սատար առեալ նեցուկ և օգնական զաղօթն նախնի սուրբ հայրապետացն և զձեր իսկ ընթերցողացդ, նաև զչնորհս մեծի և առաքելական եկեղեցւոյս և աստուածագումար սրբոցս՝ կառուցից զգարչապար մտացս ի յոյսն անկարծելի և ի սէրն անկեղծաւոր, և զօրացեալ ի Բանէն որ բանիւ գոյացոյց զեղեալքս ամենայն՝ ուղղեսցուք զընթացս բանիս ի վերայ անյայտ շաւղաց անկոխ ուսհիս՝ սկիզբն առնելով համառօտիւք հին և նոր զրուցաց յոգնատեղեակ վիպագրութեանս որում աւարտն և նաւահանդիստն յանձն է բաջ և անմոլար նաւապետին : Եւ արդ ո՞վ եղբարք՝ ի բազում ամաց տենչացեալ իմ այսմ իրագործութեան, զորոյ զպատճառն կանխագոյն ասացի, ստիպեալ միշտ ի տասալոյ բաղձանաց, բազում խոյզ քննութեան ի մէջ առեալ՝ տեղեկացայ յաշխարհս հեռաւորս և մօտաւորս, ի վանորայս և յարկեղս կտակարանաց, այլ և ի գիտունս և ի տեղեակս հնագէտ պատմութեանց, և ոչ ինչ գտաք յիշատակ զրուցարանութեանց ուրոյն այսմ աշխարհի և կամ տեղեկութիւն իրաց :

Ապա հանդէս արարեալ ամենայն պատմագրաց Հայոց . և զոր գտաք՝ հաւաքեցաք ի նոցանէ ամենայն ճշդիւ, նաև սակաւ ինչ ի Պետրոսի՝ Արմենաց եպիսկոպոսի ճառիցն, որ վասն Բարկայ՝ Սիւնեաց տեառն, և այլ ինչ ի հին նամակաց Թագաւորաց

Հայոց և իշխանաց Սիւնեաց, նաև ի կաթողիկոսաց  
Հայոց և յեպիսկոպոսաց Սիւնեաց, որ մնացեալ էին ի  
վաղ ժամանակաց յամուրս քարանձաւին և որ ի  
սուրբ ուխտս հայրապետանոցիս Տաթևու, և յար-  
ձանագրութեանց եկեղեցեաց և ի յիշատակարա-  
նաց գրոց : Աստ և անդ գտեալ զթիւ աւուրց և  
զթուական ժամանակաց իշխանաց և եպիսկոպոսաց,  
և իւրաքանչիւր գործոց և բանից, շինութեանց և  
աւերմանց, նաև կարգի և սահմանի և պատուց  
սուրբ աթոռոյս և առատատուք պարգևաց ի սուրբ  
եկեղեցիս զոր ժողովեալ սևադեղով՝ եղաք ի մի  
պարութեալիս (2) սակաւ ինչ տեղեկութիւն զոր  
հնար էր ի մէնջ և կար : Եւ սակս ստուգութեանն  
առաւել տարժանեցաք՝ սկսեալ յառաջին նահապե-  
տէն Սիսակայ մինչև ի բաց բարձումն նոցին : Եւ  
յառաջին եպիսկոպոսէն Սիւնեաց ի Գրիգորէ մինչև  
ի մերս ամանակ թշուառութեան. զոր և ընկալ դու  
սիրով և հաւատա՛ գրեղեացս ամենայն ողջմտու-  
թեամբ. և շնորհ կալ զՀոգւոյն. և զմեզ անմեղա-  
դրելի թող :



Բ. — Սակի ազգաբանութեան եւ նախնական նախա-  
կարգութեան երէ ուստի՝ սերեցան նահապետութիւնք  
Սիսական ազգին յԱդրանայ հետէ :

Տիրապատուէր հրամանաւն պարաւանդեալ յան-  
պայքար օրէնս ժառանգախոյզ խնդրողացն Այն, որ  
ասէ « ո՛չ է ձեզ գիտել զժամն և զժամանակս զոր  
Հայր եղ յիւրում իշխանութեան », միայն հետոց ան-  
ուանցն և ծննդաբանութեանց հետևեսցուք ստոյգ  
կտակաւ յարմատոյն մարդկութեանս մինչ ի սկիզբն  
նահապետութեան ազգին Սիսական : Եւ այս վասն  
զի ծանկցես զնոսս ո՛չ ի խառնիճաղանճ ամբոխոյ,  
կամ վասն յառաջադիմութեան ինչ կամ վասն պա-  
տահման ունել զնախագահ նահապետութիւնն. այլ ի  
ծայրագոյն եւ յազնուական տոհմէ յաստուածաս-  
տեղծ մարդոյն սկսեալ երևելի հարազատութեամբ  
որդիք զհարս փոխանակելով՝ հասին ի նախարարու-  
թիւն :



Գ. — Յուցմունք սահմանաց աշխարհիս Սիւնեաց . և  
բէ զինչ ունի պարարտութիւն ի պէտս մարդկան . և  
արքանութիւն գաւառաց և անատիկ բերդից :

Իսկ գաւառք ունի երկոտասան . առաջինն որ

Նշուի  
Հ. Գ. 279

ունի գրուն դաս իշխանացն և հայրապետաց՝ Ծղուկ  
 գաւառ. անուանեալ ի Ծղկայ գաւառապետէ : Երկ-  
 կրորդ՝ Վայոց ձոր որ ի հասարակական դիպուածոց  
 ողորոց և աշխարանաց կոչեցաւ Վայոց ձոր : Երրորդ՝  
 Գեղաքունի որ ի հարկեանն Գեղանայ կոչեցաւ Գե-  
 զարքունի (3) : Չորրորդ՝ Սոթից գաւառ, որ սակս  
 հանապաղորդեան բքոց և դառնաշունչ օդոցն կո-  
 չեցաւ Սոթք : Հինգերորդ՝ Աղահէջ գաւառ, որ  
 այժմ կոչի Քաշաթաղ և Խոթոռաբերդ : Վեցերորդ՝  
 Հարանդ գաւառ : Եօթներորդ՝ Բաղք գաւառ, որ  
 այժմ կոչի Աճէն, որ ի Բազակայ անուանեցաւ :  
 Ութերորդ՝ Կովսական գաւառ, որ այժմ Գրհամ  
 կոչեն : Իններորդ՝ Արևիք գաւառ, որ այժմ կոչի  
 Գաշտօն և Մեղրի : Տասներորդ՝ Չորք գաւառ, որ  
 ունի զանմատոց ամուրն Բաղաբերդ, և այժմ կոչի  
 Կապան : Մետասաներորդ՝ Երնջակ գաւառ եւ  
 Գողթն : Երկոտասաներորդ՝ Ճահակ գաւառ, որ և  
 ձորն որ Շահապաւնս կոչի :

Ահա՛ այսբիկ են գաւառք երկոտասանք զլիա-  
 ւորք Սիւնեաց : Բայց այլ ևս ունի գաւառս յորով  
 զորս ոչ յիշեցաք, է՛ որ փոխեալ են անուանք սոցա.  
 է՛ որ յայլ և յայլ գաւառս բաժանեալ են : Իսկ Ե-  
 մուրք անառիկք ի սմա որ ի մարդկան հնարից հեռա-  
 ցեալ են, բայց միայն Թէ Տէր մատնեացէ՛ Բաղաբերդ,  
 որ և մի ոմն ի զարմիցն Սիսակայ Բաղակ անուն,

տեւալ զայս գաւառ մասն ժառանգութեան՝ շինէ  
զբարն Բաղակու ամրոց, որ կոչի Բաղակի քար. և  
ամրացուցանէ զբերդն և կոչէ Բաղարբերդ. և գաւառն  
յիւր անուն կոչեցաւ Բաղաց դաւառ (Է) : Իսկ  
մի ոմն ի կանանց նոյն նահապետացն Երնջիկ անուն,  
շինէ եւ զանհնարին ամուրն Երնջակ . եւ յիւր  
անուն բերդն և գաւառն կոչի Երնջակայ . և զնենն ի  
նմա տուն գանձու և հարկաց աշխարհին : Եւ այլ ևս  
ամուրք գովելիք անվախ և անսասան ի հնարից  
մարդկան՝ Հայրաբերդ, Գրհամ, Մայրի, Ելորուտն,  
Կբերբերդ, Բարկուչատայ բերդ, Անդուկայ բերդ,  
Գեղաբունույ բերդ, Բշենոյ բերդ, Վանդայ բերդ,  
Բորողանայ բերդ, Հանրադայ բերդ որ ի նոյն տոհմէ  
Սիսակայ ի Չագայ նահապետէ շինեալ ի վերայ  
գետոյ միոյ՝ կոչէ յիւր անուն զձորն Չագէձոր եւ  
զբերդն՝ Չագէձորոյ բերդ, Քաչէթաղուց բերդ, Խո-  
ժոռաբերդ, Արոտան բերդ, Սիւնեայ բերդ, Բորսոյ  
բերդ, Եահապաւնից բերդ՝ ի Եահապայ պարսկէ շի-  
նեալ . և զձորն յիւր անուն Եահապաւնից ձոր, որ  
հատուածի պատճառաւ եկեալ էր առ նահապետքն  
Սիւնի : Իսկ իՎայոց ձոր՝ Կապոյտ բերդ, Հրասեկայ  
բերդ ի Հրասեկայ շինեալ անհնարին ամրութեամբ  
աստուածաստեղծ պարսպօք ամրացեալ : Սուլե-  
մայ բերդ՝ ի Սուլեմայ տանուտեառնէ շինեալ, և այլ  
ևս յողովս, զորս աւելորդ համարեցաք գրել : Իսկ ունի

ժայրաբաղաբ զՆախիջևան : Եւ արդ՛ այս այսքան  
տեղեկութիւն՝ քեզ բերոց պարարտութեանց (5)  
եւ սահմանաց և բերդից և զաւառաց Սիսական  
աշխարհիս :



Դ. — Մակս Սիսական տոհմիկն նախակարգութեան քէ  
որպէս կարգեցաւ ի Վաղարշակայ՝ քազատորէ Հայոց :

Փափագելի է մեզ այժմ՝ թողուլ զամենայն սնո-  
տիապատում վէպս հնոցն, և բունն հարուլ միայն  
զերջանկաւէտ բարեբաստութեանց և նախազահ  
նախակարգութեանց վեհափառ տէրանցն Սիւնի եւ  
ցեղին Սիսակայ. քանզի երկք աշխատութեանց յու-  
լովք են, և շահօգտութեան և ոչ մի ինչ. յորմէ ի բաց  
տարեալ զձգտումն մտացս՝ պիտանիքն միայն ի  
մէջ անցեալ արձանասցին մեզ :

Արդ՝ սկսեալ նահապետութիւնս այս ի նախնւոյն  
Սիսակայ երևելի հարազատութեամբ պայազատեն  
զտէրութիւնն որդիք ի հարց երկայն և բազում ժա-  
մանակօք : Բազում և մեծամեծ քաջութիւնս ցու-  
ցեալ ի պատերազմունս թագաւորացն Հայոց. եւ  
բազում եւ մեծամեծ պարգևօք եւ զահիւք պատուե-  
ցան ի թագաւորացն Պարսից եւ Հայոց նաեւ Յու-  
նաց իսկ : Եւ այնքան անուանիք եղեն, մինչ հրա-



մայեցաւ նոցա զահոցս ունել արծաթի, եւ վարսա-  
կալ ածել մարգարտեայ եւ մատանի ունել վարսա-  
զագիր : Նաեւ կօշիկ կարմիր (6) եւ մահան ոսկի՝  
ունելով ի վերայ գրեալ զանուն եւ զպատիւ ցեղին :  
Եւ այսպէս հասեալ մինչեւ ցԱաղարշակ, զոր թա-  
գաւորեցոյց Արշակ՝ եղբայր իւր, ի վերայ Հայոց ի  
սկիզբն թագաւորութեան ցեղին Արշակունեաց ի  
վերայ Հայոց, որ էր առաջին Աաղարշակ : Սա ոչ  
կամեցեալ խառն կարգօք եւ անազգի մարդկամբ  
վարել զթագաւորութիւն իւր. զի ցայն վայր ոչ էր  
եղեալ ումք փոյթ յառաջնոցն կարգի եւ գեղեցիկ  
յարմարման օրինի թագաւորութեան. այլ ըստ յա-  
ռաջադիմութեան և պատահման ամենայն ոք բարձ-  
րանայր եւ ամենայն ոք խոնարհէր :

Արագէ սա գեղեցիկ յօրինուածով եւ գովելի կար-  
գօք. նախ՝ ի գլխոյն սկսեալ հրամայէ Բագրատու-  
նեացն թագադիր լինել, և անուանէ զնոսա ասպետա,  
եւ շնորհէ ունել զնախնականն բարձ ի վերոյ բան  
զամենայն : Եւ ապա կարգէ ընդ սմա զՋեռէս ի  
զաւակէ Քանանացոց, ի ցեղէն Պնթունեաց զգե-  
ցույանողս ինքեան. եւ զնէ ի վերայ արքունի հան-  
գերձից : Ըստ սոցա եւ զայլնն ևս ըստ պիտոյից  
ասանն արքունի : Իսկ յարևելից կողմանէ կարգէ մեծ  
եւ առաջին նահապետութիւն զԱիսական տոհմ. ընդ  
սմա եւ զԿաղմեանն : Եւ հրամայէ Աիսականայն

Հասնեալստար լինել ի վերայ ամենայն արքունի զօրոցն, եւ երկորոգ թագաւորութեան իւրոյ (7). և ընդդէմ կալ հանապազ պատերազմաւ դրանն Հօնաց (8). որոյ անուն առաջնոյն Սիսակ կոչիւր : Իսկ Քաւակէ սոցա ընտրեալ այր մի յոյժ արի եւ գեղեցիկ եւ քաղցր բարութ՝ զԵրան (Առան) անուն . եւ կարգէ նահապետ ի վերայ մեծ դաշտին Առանայ, յԵրասխայ մինչեւ ցՀունարակերտ : Եւ վասն քաղցր բարութեն սողու ձայնէին զնա . որ և աշխարհն յանուն նորա Աղուանք (Աղվանք) կոչեցաւ (9) : Ահա այս սակաւ մի տեղեկութիւն քեզ զի գիտասցես զսոսա ոչ միայն Սիւնեաց, այլ եւ Աղվանիցն զու նախնի նաեւ երիցագոյն քան զնոսա :



Ե. — Մակս շուտաորութեան աշխարհիս Սիւնեաց Ատուած գիտութեանք և հաւատարոյ իշխանացն ընդ Տրդատայ ի մեռն սրբոյն Գրիգորի շուտաոր շին մերոյ, ի Քրիտոսս Ատուած . եւ աւերելոյ զմեհեանս եւ շինելոյ ակեղեցիս . և մեռեաղբերոյ արիակոպութիւն Սիւնեաց . և այլ գրոյցք պիտանիք :

Անտանելի լցեալ խնդութեամբ Հրաշման միտք ի վերայ ասրայի պատմութեանս որ առաջի կայ :

Չի ցայս վայր իբր զժահահոտ մեռելոյ ուրուք ճառեցաք զբանս որք ի հեթանոսական մոլորութեանցն էին յափշտակեալք, միայն մարմնոյ և եղծական փառաց հաղորդեալք. զուրկ և ունայն ի ճշմարիտ գեղեցկութեանցն և յանկողոպտելի փառացն : Իսկ այժմ զերկուց իրաց ունիմ գրել փառաւորութիւնս՝ զհոգեւոր և զմարմնաւոր, զմնացականն եւ զմշտնջենաւորն իբր զգեղեցիկ եւ անուշահոտ կենդանւոյ, որք պայծառացան յանբուսածառալ ճառագայթից արեգականն արդարութեան. եւ երկու (10) աշխարհաւ վայելչացեալ զարդարեցան : Եւ արդ՛ ըստ կարգի և հարազատութեան նահապետացն և իշխանացն Սիւնեաց ոչ ունիմ ինչ ասել զանուանց եւ զծննդոց նոցա մինչև ցայս վայր. զի և առաջնոց պատմագրացն անյայտ էին իրքն. եւ մեք թէ եւ բազում անգամ ջանացաք, այսքան միայն գտաք զոր վերագոյն կարգեցաք. նմանապէս եւ յառաջիկայսդ է իմանալ : Եւ թէ է՞ր աղագաւ. ասացից զպատճառն, զի եւ դու մի պահանջեսցես յինէն կարգս եւ շարս իշխանաց եւ թիւս շարեալ ժամանակաց, որպէս ի սկզբան պատմութեանս ցուցաք թէ՛ ոչ գտաք առաջնոցն փոյթ եզեալ զսցամանէ և գրեալ ուրոյն առանձին զգրոյցք և զորպիսութիւն այսմ աշխարհի և տէրանց, որպէս զայլոցդ տեսաք՝ զՄամիկոնեանն եւ զՏարօնոյն, զԲագրատունեացն, զՎաս-

պուրականացն, որք յեռոյ թագաւորեցին, զՎրացն,  
զԱզվանիցն .

Վասն այնորիկ ոչ երևին կարգ իշխանացն և թիւ  
ժամանակացն. այլ ցիր և ցան գտաք յառաջնոցն վի-  
պագրութիւնսն աստ և անդ ընդ աղօտ նշանակեալ :  
Եւ այս վասն զի յորում ժամանակի երեւելի գործ  
ինչ ցուցեալ է յիշխանացն Սիւնի ուրեք, հարկ է  
եղեալ պատմողաց ժամանակին զայն ևս յիշել . իսկ  
զաննշանիցն և անյայտ գործոցն հասարակաբար ոչ  
ինչ յիշթ լեալ, որպէս օտարի ուրուք : Յաղագս որոյ  
և մեր ոչ հետեւեցաք կարգի և ժամանակաց, այլ  
բողեալ զպիտանիսն որ ըստ աւուրց աւուրց հանգի-  
պեալք են՝ յառաջնոցն բանից շարայարեսցուք ըստ  
կարի : Արդ ի ծագել իմանալի ճառագայթից արե-  
զականն արդարութեան յաշխարհիս Հայոց եւ ի  
ծաւալել յորդառատ բարոզութեան աւետարանին  
յարեւելս եւ ի հիւսիս ի ձեռն բազմաչարչար նահա-  
տակին առաքելական առնն սրբոյն Գրիգորի, ի մկրդ-  
տել զաստուածապսակ թագաւորն Տրդատ ամե-  
նայն նախարարօք Հայոց և խառնիճազանճ ամբո-  
խիւք յԵփրատ գետ, առնու և անդ զկնիք լուսաւոր  
մկրտութեան մեծ իշխանն Սիւնեաց իւրով զնդիւն,  
որ եւ գնացեալ էր ընդ սրբոյն Գրիգորի ի կե-  
սարփա :

Եւ ի դարձին մտեալ ի Տարօն գոււառ, և բազում

Յէ մեծամեծ գործս քաջութեան ցուցեալ անդ ի  
պատերազմի բրմացն Գիսանեան կոոցն, զոր պատ-  
մէ թուղթն Զենոբայ եպիսկոպոսի տարծնացոյ :  
Եւ բազում գանձիւք եւ Զանիւ գործակից լինի շին-  
ուածոյ հանգստարանի սրբոյ Կարապետին, եւ  
կանգնէ անդ ի վանան Գլակոյ արձան զնշանն տէրու-  
նական յիշատակ իւր : Իսկ ի դաշն եւ ի հանդիպիլն  
մեծ արքային Տրդատայ, հրաման առեալ ճանապար-  
հորդ նախարարացն զնալ յիւրաքանչիւր գաւառս եւ  
հանգչել, եւ մատակարարել գշինութիւն աշխարհաց  
իւրեանց : Եւ զի դեռ ևս կային կոոցն և մեհենիցն  
բազմութիւնք ի գաւառս նախարարացն՝ հրաման ա-  
ռեալ ապա և իշխանն Սիւնեաց յարքայէ՝ խնդրէ և ի  
սրբոյն Գրիգորէ վարդապետս և ուսուցիչս զի և աշ-  
խարհի իւրոյ ուսուցէ զՔրիստոսեան աւետարանն  
և կործանեսցէ զբազինս կոոցն : Եւ շնորհէ նմա զոմն  
յԱսորոց անտի զոր բերեալ էր : Եւ անցեալ մեծաւ  
ուրախութեամբ եկն յաշխարհ իւր եւ զամենայն  
ընտանիս իւր մկրտեաց աւազանին լուսաւորու-  
թեամբն . եւ կործանեաց զամենայն բազինս կոոցն .  
եւ դարձոց զաշխարհն ամենայն ի քրիստոնէութիւն,  
և զտեղիս բազնացն նուիրէր (11) ի շինութիւն եկե-  
ղեցեաց և տան Աստուծոյ : Եւ դարձեալ միւսան-  
գամ գնաց սա ընդ արքային Տրդատայ և սրբոյն Գրի-  
գորի ի հանդիպումն Կոստանդիանոսի . իսկ ի դաւ-

նայն ի Հոռոմոց եւ ի գալն յաշխարհս Հայոց,  
այնուհետեւ ոչ դադարէր ի շրջելոյ սուրբն Գրիգոր  
եւ յուսուցանելոյ և կանգնելոյ եկեղեցիս :

Երթեալ ի Վիրս, և անտի յԱղշլանս մինչ ի Մաս-  
գութս եւ ի պահակն Հոնաց. եւ հաստատեալ զա-  
մենայնսն ի հաւատս՝ զայ ի փոքր Սիւնիք. եւ  
մտեալ յԱմարաս՝ շինէ եկեղեցի եւ թողու անդ  
սպասաւորս : Եւ ելեալ անտի՝ զայր ի սահմանս Սի-  
սական աշխարհիս : Որում ընդ յառաջ ելեալ մեծ  
նախարարն Սիւնի՝ բերեալ յաշխարհ և ի տուն իւր.  
եւ մեծածնիս ընծայիւք եւ արքունական պատարա-  
գօք պատուէ զնա, եւ շրջեցուցեալ ընդ դաւառան  
ամենայն՝ հաստատէ ի հաւատս. եւ ի պատշաճաւոր  
տեղիս շինէ եկեղեցիս եւ կանգնէ զնշան տէրունի :  
Ապա այնուհետեւ մինչ յանկ ել, կատարեցաւ ամե-  
նայն շնորհօքն Աստուծոյ, խնդութիւնն ո՛չ սակաւ ինչ  
լինէր ամենեցուն. վասն որոյ առաջի անկեալ սրբոյն  
Գրիգորի՝ հայցէր տեսուչս և առաջնորդս աշխար-  
հին, զոր և փութով եւ յօժարութեամբ յանձն առ-  
նու շնորհել : Եւ եկեալ ի Վաղարշապատ ձեռնա-  
դրէ զոմն յիւրոց մերձաւոր աշակերտաց, այր ճշմա-  
րիտ եւ լաւ, լի՛ ամենայն հմտութեամբ, երկոտասարդ  
հասակաւ, որոյ անունն Գրիգորիս. և տայ ցիշխանն  
տանեւ վիճակեցուցանել յեպիսկոպոսութիւն աշ-  
խարհիս Սիւնեաց : Աստանօր եղև սկիզբն եպիսկոպո-

պութեանս Աիւնեաց. որ և եկեալ՝ մեծաւ ջանիւ հաստատէր ի հաւատս զնորածին բրիտոնեայսն ոչ դադարելով յուսուցանելոյ զճշմարիտ վարդապետութիւն սրբոյ աւետարանին :



**Զ.** — Զրոյցք հին ժամանակաց որ վասն գաղոյ սուրբ Առաքելոյն Բարդուղիմէի յաշխարհս Սիւնեաց, և վասն շինելոյ եկեղեցի ի գաւառին Գողբն. և դարձուցանելոյ ի հաւատս զոմանս, և հաստատելոյ սեղան և ձեռնադրելոյ եպիսկոպոսս :

Նախքան զամենայն կարևոր և յոյժ պիտանի էր ինձ զայս իսկ ցուցանել թէ՛ քան զՀայաստանեայս նախահաւատ երեւցան սոքա (14), և եկին իհնազանդութիւն սրբոյ աւետարանին ի ձեռն սուրբ առաքելոյն Բարդուղիմէի. զոր և ոչ է անտեղի այժմ՝ կարգել : Ի դառնալն Բարդուղիմէոսի ի Պարսից անցեալ ընդ Ատրպատական՝ զայ իւրովք աշակերտօքն. եւ անցեալ ընդ գետն Երասխ՝ մտանէ ի սահմանս Սիւսականու, և սկիզբն արարեալ քարոզութեան յԱրդվատ գետը և յԱրևիս գաւառ և ի տունն Բաղայ եւ ի Գողթն : Որք ընկալեալ զբարոզութիւն աւետա-

րանին. լուսաւորեցան մկրտութեամբ աւազանքն ի ձեռն սուրբ առաքելոյն Քարղուղիմէոսի : Իսկ սուրբ առաքեալն շինէ եկեղեցի ի Գողթն յարեւմտից եղերն ի վերայ վիմի միոյ յիւրեանց հանգստեան տեղւոջն, ուր վանքն էին կարեալ. և անուն կոչեցին Տեառնընդատալ. և արարին նշանս մեծամեծս : Քանզի էր ջուր փնասակար ի յՈրդվատ գիւղ, որ ոռոգանէր յամենայն աթի զամենայն անդաստանս և զայգիս : Եւ աղօթեցին յանկարծակի, և կորուսին զջուրն. որ և տեղին յայտ է մինչեւ ցայսօր :

Եւ էր իշխան գաւառին Շար և որդի իւր Խոսրով և թոռն իւր Վահան և կին իշխանին Ննա : Ապա կացուցանէ նոցա տեսուչս. զի մի վերստին մոլորեցցին ի կռապաշտութիւն, զոմն յաշակերտաց իւրոց Կումսի անուն, ձեռնադրեալ զնա եպիսկոպոս : Եւ ինքն յանձն արարեալ զնա սուրբ Հոգւոյն՝ զայ ի Վանանդ գիւղ. և մի յաշակերտացն անդ վախճանեցաւ Լուսիկ անուն, զոր ի նմին տեղւոջ եղին ի հանգստի և շինեցին փոքրիկ մատուռն մի ի վերայ. և կատարին մեծ սքանչելիք և բժշկութիւն մինչեւ ցայսօր. և զամեհիս յոյժ հնազանդեցուցանէ հող գերեզմանին : Էր և անդ բազին մի, կործանեաց և զայն, և շինեաց ի տեղին խրթին եկեղեցի, և կոչեաց յանուն սրբոյն Թովմայի. և անդ լինին բաշատ. Ա :



զում նշանք : Իսկ սուրբ Թուաբեայն ելեալ անտի՛  
գնաց ի մայրաքաղաքն Հայոց Դավին : Յետ այսորիկ  
վախճանեցաւ Առանի. և նորա ոչ կամեցան առանց  
առաջնորդի մնալ. և այլ ուրեք ոչ ունէին ակնկա,  
լութիւն : Ապա կացուցանէին իւրեանց առաջնորդ  
զխաւթիկ ոմն Բարեւաս անուն : Զկնի սորա քաջալե,  
քեալք ի սուրբ Հողույն՝ առաքեն առ սուրբն Թաղէ  
զոմն մի Մուշէ անուն. որ և ոչ կարաց անդրէն դառ-  
նալ . այլ սորա կային մնային անտերունչք բնակեալ  
այսր և անգր. և ոմանք զօղեալք ի լերինն Գարուայ  
միայնաւորութեամբ զկեանս իւրեանց վարէին զբա-  
զումս ուսուցանելով յոլով ժամանակօք՝ մինչ ի գալ  
մեծի լուսաւորչին ի Հայս, և լուսաւորելոյ զամե-  
նայն աշխարհս Հայոց : Ապա գնացեալ սոցա  
լանդրեցին իւրեանց առաջնորդ. եւ ետ այր մի տա-  
րօնայի Մովսէս անուն (13). եւ յետ սորա Սահակ  
տարօնայի . և ապա զԶրուանդատ . և ապա զՍտե-  
փաննոս . եւ ապա զՅովհաննէս :

Եւ այսպէս ի կարգ անկեալ՝ մի զմի փոխանորդե-  
լով մինչեւ ցայժմ : Բայց զիտեա՛ զի ոչ եթէ հատ-  
ուածեալ էին սորա ի Սիւնեաց, այլ յառաջն մինչդեռ  
ոչ էին հաւատացեալ, եւ ոչ էին կարգած յաշխարհս  
Հայոց եպիսկոպոսք, սորա առանձին ունէին տե-  
սուչս : Իսկ իլուսաւորել սրբոյն Գրիգորի զՀայս. և  
ի կարգաւորել զբարձ և զաստիճան եպիսկոպոսացն և

զոտա յանձնեաց եպիսկոպոսացն Միւնեաց զի նոցա  
հրամանաւ եւ ի ներքոյ կացցեն հազանդութեամբ.  
որում վկայ առաջին կաթողիկոսացն շրջաբերական  
թուղթք եւ հին գաւազան գաւառացն որ վասն  
հարկաց եկեղեցւոյն, զի լիով ունի գրեալ յինքեան  
զբովանդակ գաւառն Քողթան. նմանապէս եւ իշ-  
խանք Քողթանն ոչ եթէ յայլմէ տոհմէ էին, այլ ի  
նոյն Միսական ցեղէ, ըստ մասին ի ժառանգութիւն  
առեալ էին զայս գաւառ, որպէս ցուցանէ քեզ Մով-  
սէս Խորենացի : Եւ թէ որպէս է պատիւ եւ բարձ  
եպիսկոպոսացն Հայոց՝ ցուցից քեզ ի միւս ճառիս :



Է. — Յաղագս եպիսկոպոսաց և իշխանաց Հայոց. և եթէ  
ոչք ևն գահերէցք և գահագրուիք կարգեալ ի մեծէն  
Տրդատայ և ի սրբոյն Գրիգորէ և յորպոց և ի բոռանք  
իւրոց . եւ վասն առանձին պատուոյ եւ ստոյնանի  
եպիսկոպոսին Միւնեաց :

Նորոգեալ նորածին շնորհք զՀայս առաքելա-  
գործ այրն Աստուծոյ՝ սուրբ քահանայապետն Գրի-  
գորիոս, հրամայէ մեծին Տրդատայ կարգել զթագա-  
ւորութիւն իւր ըստ սահմանի կայսերացն Յունաց,

և տալ ըստ իւրաքանչիւր պատշաճի դահ և պատիւ իշխանացն յաջմէ եւ յահեկէ : Որ եւ գեղեցկապէս յօրինեալ ի ժամ ճաշուն նստել բարձա 400 իշխանաց. որոց գահազլուխք՝ բղեաշխն Գուգարաց և իշխանն Աղճնեաց, իշխանն Անգեղտան և իշխանն Կորդուաց, առպետն Բաղրատունի և իշխանն Արծրունեաց, իշխանն Սիւնեաց եւ իշխանն Մամիկոնէից : Սոքա էին գահազլուխք ամենայն իշխանացն Հայոց : Իսկ զօրացն եւ աշխարհին չորս միայն կացուցանէ իւրոյ Թագաւորութեանն երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին : Սրեւելեան կողմանն՝ իշխանն Սիւնեաց (14) 21 իշխանօք . հիւսիսային կողմանն՝ բղեաշխն Գուգարացուց 22 իշխանօք . արևմտեան կողմանն՝ Կորդուացին 21 իշխանօք . հարաւային կողմանն՝ իշխանն Անգեղտանն 22 իշխանօք : Զայս այսպէս ի գահ նամակի իշխանացն Հայոց զոր Ղևոնդ (15) գրեաց . և սակաւ մի ցուցանէ Ագաթանգեղոսին եւ Ներսիսին :

Իսկ մինչ այս այսպէս կարգեցաւ . ապա կարգէ և սուրբն Գրիգոր ղեկեղեցական դասս, զգահ և զպատիւ եպիսկոպոսացն . և հրամայէ բազմել ընդ ինքեան աթոռով եւ ոսկենկար բարձու 36 եպիսկոպոսաց՝ 18 յաջմէ եւ 18 յահեկէ . յաջմէ առաջինն Հարթայ եպիսկոպոսն . եւ յահեկէ առաջինն Բասենոյն, իսկ զՍիւնին յաջ կողմանն յեօթներորդ

զահուն նստուցանէ . եւ ցուցանէ զայս Սամուէլ  
կամրջաձորեցի : Իսկ ի թագաւորելն Արշակայ եւ ի  
նստուցանել յաթոռ հայրապետութեան զմեծն  
Ներսէս՝ մինչ յուղարկեցին զնա ի ձեռնադրութիւն  
ի Կեսարիա առ Եւսեբի հայրապետն, յայնժամ յու-  
ղարկեցին ընդ նմա զԱնդոկ՝ իշխանն Սիւնեաց,  
զլուիս այլոց իշխանացն Հայոց, եւ զԳրիգորիոս՝  
եպիսկոպոս Սիւնեաց, զլուիս եպիսկոպոսացն Հայոց:  
Եւ հրամայեաց Արշակ ոչ միայն ձեռնադրել զՆեր-  
սէս եպիսկոպոսապետ Հայոց . այլ և պատրիարք ինք-  
նագլուիս (16). զի ոչ է պարտ, ասէ, Հայոց ի ներքոյ-  
լինել եպիսկոպոսապետին Կեսարու . զի թէ առա-  
քեալն մեր Թադէոս անդ միայն եկեղեցի շինեալ է և  
յիւրոց աշակերտացն ձեռնադրեալ եպիսկոպոս . եւ  
վասն այսր պատճառի առնումք անտի ձեռնադրու-  
թիւն . քանի՛ ևս առաւել՝ նոյն ինքն առաքեալ առ  
մեզ այլ ևս երիւք առաքելովք . որոց հանգիստ եւ  
աթոռ և եկեղեցի եւ ձեռնադրեալք աստ են բովան-  
դակ . ընդէ՞ր կարօտանամք յայլմէ կրսերագունէ  
առնուլ օրհնութիւն . և սակս այսր պատճառի նստու-  
ցանեն զնա պատրիարք Հայոց : Եւ զի հարկ է ամե-  
նայնիւ ի ներքոյ լինել պատրիարքին եւ մետրապո-  
լիտ, զի լրացեալ լինի ինն դաս եկեղեցւոյ որ ըստ վեր-  
նոյն : Ապա թագաւորն հրամայէ մեծաւ ժողովով  
սահմանել զբովանդակ կարգս եկեղեցւոյ անթերի :

Հատ. Ա. :

4.

Կացուցանեն պատրիարք զսուրբն Ներսէս, և ի ներքոյ նորա արքեպիսկոպոս զԱղվանիցն, որ է կաթողիկոս . եւ մետրապօլիտս՝ զՍիւնեաց եպիսկոպոսն եւ զՎրացն և զՄարդպետականն, և յետոյ այլ ևս մետրապօլիտս կացուցանեն զՄելիտինեայն և զՍեբաստիոյն :

Իսկ Գրիգորի՝ Սիւնեաց մետրապօլիտի, աւելի պատիւ արարեալ սուրբն Ներսէս, վասն երթալոյն ընդ նմա ի Կեսարիա, տայ նմա բազմահան ոսկեթել . և կարգէ զՍիւնիք նախաթոռ պատրիարքին որ կոչի ի հոռոմ լեզուն պոռտոֆրանտէս (17) Հայոց մեծաց : Իսկ յետ ոչ ինչ բազում աւուրց՝ յաւուրս Սահակայ եւ Մեսրոբայ կրկին պատիւ առեալ Անանիայի՝ եպիսկոպոսի Սիւնեաց, Եսվաղէն՝ Թագաւորէն Աղվանից, զի պարգևէ նմա զիւր Թագաւորական դրօշն կարմիր եւ ոսկետտուն վառիւ՝ ունելով ի գլուխն գունդ ոսկի և ի վերայ խաչ պատուական . և հրամայէ հանապազ առաջի կրել եպիսկոպոսացն Սիւնեաց . զորոյ զպատճառն եւ զորպէսն յիւրում տեղւոջ ասացից : Ահա այսպէս կարգեցաւ եւ պատուեցաւ եպիսկոպոսութիւն Սիւնեաց . և սկսաւ ի սրբոյն Գրիգորէ, եւ յորդոց եւ թոռանց իւրոց, որք կոչին մետրապօլիտք : Եւ գործ է սոցա ձեռնադրել եպիսկոպոսս գաւառաց . վասն որոյ երկոտասան եպիսկոպոսաց գլուխ կարգեցաւ . եւ առանց սոցա ոչ ձեռ-

ճողրի պատրիարք Հայոց եւ ոչ լինի ժողով. այլ  
զլուխ եւ հրամանատար ժողովոյ սոքա լինին . եւ  
նախաթոռ վարդապետութիւն եւ հրաման մեկնու-  
թեան եւ թարգմանութեան սոցա միայն շնորհեցաւ  
ի մէջ Հայոց ի սրբոյն Սահակայ եւ յերանեալ վար-  
դապետէն Մեսրոբայ : Այլ ե յետ ժամանակաց յո-  
լով ևս եզեն վիճճունք յաշխարհիս Հայոց վասն  
գահերէցութեան սոցա եւ վասն գունակ գունակ  
բաժանմանց եւ մեծարանութեանց . զորո յիւրում  
տեղուջ եղից զչափաւորն եւ զյոյժ պիտանին :



Ը. — Վասն վախճանին Գրիգորիս՝ մեռապօրոյ Միւ-  
նեաց . և փոխանորդեոյ գարուն սրբոյն Մաշտոցի :

Որպէս եւ գտաք աստ եւ անդ մասնաւորաբար ի  
գիրս հնոցն, զնոյն եւ ճշդիւ քննեալ կարգեցաք ի  
ամա, որ եւ այսպէս ցուցաւ . զի ի գալն մեծին Ներ-  
սիսի ի Աեսարիոյ, և յարդարեւն զկարգս գովելի աշ-  
խարհիս Հայոց . յայնժամ յետ սակաւուց վախճանի  
Գրիգորիս՝ եպիսկոպոս Սիւնեաց, կացեալ յեպիսկո-  
պոսութեանն ամս 46 : Եւ խնդրէ Անդոկ՝ մեծ նա-  
հապետն եւ նախարարն Սիւնի, ի սրբոյն Ներսիսէ  
առաջնորդ եւ տեսուչ իւրոյ աշխարհի : Եւ նա կա-

տարեալ զհայցուածս նորա՝ ձեռնադրէ զերանկէփ  
այրն Մաշտոց եւ նստուցանէ յաթոռ մետրապօլ-  
տութեանն Սիւնեաց՝ երկրորդ զկնի Գրիգորիսի : Որ  
եւ եկեալ առաքինաջան վարուք զարմայուցանէր  
զամենեսեան, եւ յորով կարգս բարեպաշտութեան  
ուղղէր յաշխարհիս յայս . եւ ոչ դադարէր զյայգ եւ  
զցերեկ յուսուցանելոյ զհօտն . եւ այնպէս բարի  
քաղաքավարութեամբ եւ ճշմարիտ առաքինու-  
թեամբ կեցեալ յաթոռ մետրապօլտութեան ամս  
ինչ՝ փոխի ի կարգս հրեշտակաց : Եւ լինի խափան-  
ուած աթոռոյն ամս բազում . զի խանդարեցաւ իշ-  
խանութիւնն Սիւնեաց ի Պարսից թագաւորացն . և  
մնաց երկիրն անիշխան, ապալերկ, ամայի յամենայն  
շինութեանց ի մարդոց եւ յանասնոց զամս 25 . զս-  
րոյ զպատճառն եւ զորպէսն այժմ՝ կարգեցից :



Թ. — Վասն Անդոկայ՝ Սիւնեաց իշխանի, թէ զինչ  
գործ գործեաց . եւ թէ որպիսի անցք անցին ընդ աշ-  
խարհս Սիւսական ի Շասպոյ՝ Պարսից արքայէ . եւ  
երբև նորս առ կայսրն Յունաց՝ առ մեծն Թէոդոս .  
և անդ վախճանիկն՝ յասացուածոց սրբոյն Պետրոսի՝  
Սիւնեաց ևպիսկոպոսի :

Ստուգիւ քննեալ իմացաք զի բան անիծից սրբոյն

Ներսիսի ի վերայ Արշակայ կատարեցաւ : Քանզի կամաթող եղեալ Արշակայ ի Թագաւորութենէն Հայոց՝ զնայ առ Շապուհ, եւ իւրովի մեռանի անդ յԱնուշն բերդի : Եւ Թագաւորութիւն նորա նման Արտովամայ յերկուս ձեռքեալ՝ կէս աշխարհիս լինի ընդ Պարսից իշխանութեամբ և կէսն՝ ընդ Հռոմոց : Յազազս որոյ եւ Սիւնեաց տէրութիւնն անկանի ի բաժինն Պարսից : Իսկ այս Անդոկ այլովք նախա-  
րարօք Հայոց լինէր հանապազ ի դրանն արքունի . և սա էր ձօխ եւ փառաւոր ի մէջ իշխանաց Հայոց . և խառնեալ էր խնամութեամբ ընդ Արշակունիսն զի զդուստր իւր զարմանագեղ զՓառանձեմ տուեալ էր ի կնութիւն Պանելայ՝ եղբորորդւոյն Արշակայ, զոր յետոյ ինքն էառ . և ծնաւ ի նմանէ ժառանգ Թագաւորութեան իւրոյ զՊապ, որ Թագաւորեաց Հայոց յետ հօր իւրոյ :

Եւ ապա լինէր օր մի պարապորդ . եւ Շապուհ՝ որդի Ուրմզդայ, արքայից արքայ Պարսից, Արեաց և անթիւ աշխարհաց, կամեցեալ խրախանալ . եւ ճաշ արարեալ ամենայն մեծամեծաց իւրոց, ամենիցն ամենայն տոհմիցն ազատատոհմ Պարսից նախա-  
րարացն եւ Արեաց զնդին, ըստ նախադասութեան նախապատիւ արարեալ բաժակօք և ուտովք առաջի իւր զիւրաքանչիւր ուրուք նախամեծարս ցուցանէր : Իսկ զմովպետէն մովպետն (18) ի սեղան արքունի



մեծապատիւ մեծարէր : Եւ խորհուրդ բերեալ թա-  
ղաւորն Պարսից Շապուհ՝ խօսիլ սկսաւ առ նախա-  
րարն Հայոց և ասէ « ՂՊարսից, ՂՊարթեւաց զրնա-  
կան պահլաւիկս եւ զազատագունդս զազատ արանց  
զԱրեացս աշխարհի նախամեծար դասապատիւ քաջ  
գիտեմբ զորպիսութիւն. բայց զԱրմենու զազատա-  
տոհմ՝ եւ զնոցին նախապատիւ, զնախադաս նախա-  
զահութիւնս ոչ կարացաք գիտել ո՛չ ի նախնեացն  
մերոց հարցն հարանց թագաւորաց և ո՛չ այլ ուստեք  
յամենխմաստ մատենագրաց : Եւ արդ՝ մի յերկուց  
առաջի կայ ձեզ նախարարացդ Հայոց ազատ արանց  
կատարել զխնդիրս մերոց Արեացս աշխարհա-  
ժողով ազատագարմ՝ կուսակալաց. ցուցանել ձեզ  
զնախնական զգիր ըստ իւրաքանչիւրումն ըստ տանց  
ազատագարմն եկացն ձերոց զնախաստիճանն եւ  
զնախանիստ պատիւն. և դարձեալ մեծագոյնն ունեղ  
զքքեղաշուք մեծարանս ևս բան զևս : Եւ եթէ ոչ  
կարէք ակն ի յայտ Արեացս գնդի ժողովոյ ցուցա-  
նել զգիր նախազահութեան՝ զպատիւ եւ զտուն,  
զհող եւ զջուր եւ զստացուածս ձեր Արեացս աշ-  
խարհի ազատ արանց շնորհեսցուք. և զձեզ ապա-  
շնորհ եւ ունայնս արձակեսցուք : Եւ ստացուածք  
գիւղից և սպարանից ձերոց Արեացս ազատ արանցս  
ի ծառայութիւն լիցին :

Եւ նոյն ժամայն խորհուրդ արարեալ իշխանացն

և իշխանապետացն Հայոց մեծաց՝ մատուցին առաջի  
թագաւորին զյանկալին ամենայն տառից՝ զհրաշա-  
բանականն զտպաւորումն, զգրաւորականն զգիրս  
ցանկաւոյն սրբոյն Գրիգորի որ Ագաթանգեղն կոչի :  
Եւ հրամայեալ թագաւորին Պարսից ընթեռնուլ եւ  
թարգմանել ի պարսիկ գիր եւ ի լեզու. եւ իմացեալ  
եթէ սկիզբն յԱրտաշրէ առնու՝ յիւրոյին նախնուոյ,  
առաւելագոյն ևս զուարճացեալ բերկրեցաւ առաջի  
աշխարհածողով Արեացն զնդին : Եւ առեալ զգիրս  
սրբոյն Գրիգորի՝ եղ ի վերայ աչաց իւրոց. և զուար-  
ճացեալ Պարսից թագաւորն՝ համբուրէր զգիրս սրբ-  
ոյն Գրիգորի, եւ պէսպէս պարսկական լեզուաւ  
զգուանա խանդաղատանաց ներբողումն արարեալ .  
վասն զի զիւրականն եւ զաղգային զԱրտաշիր գոլ  
սկիզբն գրոյն գիտէր : Եւ գտեալ ի նմա զգիր տասն  
և եօթն բարձի ազատացն Հայոց իշխանացն՝ սկսաւ  
ըստ այնմ գրոյ նախապատիւս յարդարել յարքունա-  
կան տաճարին զնխոտս իւրաքանչիւրոց ի սեղանս  
ուրախութեան : Իսկ տասնեւչորրորդ բարձն եհաս  
Անդոկայ՝ Սիւնեաց տեառն : Եւ նա հպարտու-  
թեամբ խրոխտացեալ՝ ոչ ինչ ճաշակեաց յայնմ  
ուրախարար արքունական ընդունելութենէն :

Եւ զգացուցեալ սպասաւորացն արքունի թագա-  
ւորին զարիննուշտութիւն խոովութեան երեսացն  
Անդոկայ՝ Սիւնեացն տեառն : Եւ Շապհոյ՝ Պար-

սից արքային, ոչ ինչ փոյթ զայնմանէ լինէր : Յայնմ  
ժամանակի փոյթ ընդ փոյթ զգացումն եղև ի դուռն  
արքունի թէ Խազիրք բազմամբոխ գնդօք հասին՝  
արտաքս ելեալ ընդ գրունան Չողայ (19) յաշխարհս  
մեր : Եւ ժողով անթիւ արարեալ Շապհոյ՝ Պարսից  
արքայի, Ասորոց, Խորասանի, Խորազմայ, եւ  
առաւել քաջացն Պարսից Ատրպատական նահանգ  
գին, Հայոց, Վրաց, Աղվանից, երկոտասան լեզուաց  
խուժադուժ ազգաց լերինն Կովկասու բարձրաբերձ  
կոհակացն սառնամանեաց : Եւ ել, զնաց անհամար  
բազմութեամբ պատերազմաւ ի դիմի հարկանիլ նո-  
ցա : Իսկ Անդոկայ հաղար և եօթն հարիւր արամբ  
ընտրելովք ժիր եւ քաջ տաճիկ նժուգօք զինքն կող-  
ման տուեալ . և ապա զգօրսն աստ և անդ նկանա-  
խորդաւաճանութեամբ թաքուցեալ շուրջ զարքայա-  
նիստ շահաստանաւն զՏիսրոնիւ (20), որ է յԽատահր  
գեււառի ի Պարսից աշխարհին : Եւ պակաս ինչ  
վաշտօք սրամբ ընտրելովք, քաջակորով հեծելովք  
ընդ գրունս արքայարնակ քաղաքին մտեալ՝ հարցա-  
նէր յանգէտս եւ ի չքմեզս եղեալ « եթէ ես առ Շա-  
պուհ արքայ եկի » : Եւ քաղաքացիքն ըստ Պարսից  
խրատու հրահանգի տեղիս իջևանի նմա պատրաս-  
տեցին պէսպէս բաժակօք եւ ընդունելութեան ոռճ-  
կօք՝ բազմախորտիկս համեզաճաչակս յարդարեալ  
մեծաշուք չքեղութեամբ պատուով : Եւ իրրեւ գի-

չեր լինէր՝ Անդոկ դաւաճանութեամբ ազդ արարեալ զօրուն իւրոյ . եւ իբրեւ առաւօտն զլոյսն մերկացաւ, եւ դրունք քաղաքին բացան . եւ յանգումանիս (առ նակնկալ) եւ յանպատրաստ զօրքն Անդոկայ իներքս գիմեցին ընդ դրունսն, եւ առին զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ անհամարս, եւ գոհարս ականց եւ մարգարտաց զչահաւորն բազմագին եւ ոսկեթել հանդերձից եւ թագաւորական ծիրանի, մարգարտայեոն պատմուճանաց ի տանէ թագաւորին եւ յամենայն տանց իշխանացն Պարսից առին. և որ ինչ կարէին բառեալ : Եւ բերեալ զանթիւ զաւարն զամենայն հաւաքեցին ի Բաղարբերդ : Եւ զամենայն զաւառացն զհամբարս զհացի, զխտտոյ, զյարդի եւ զբազմութիւն գինւոյ, իւղոյ և զզենլեաց և զմեղո: ի, զպէսպէս մրգոյ համբարս անթիւս ժողովեցին ի Բաղարբերդ, եւ զկազմածս հեծելոց, զզէն, օճառս :

Եւ հրաման տուեալ Անդոկայ՝ Սիւնեաց տեառն, ամենայն Սիւնեաց փախչել, և զտունս եւ զհամբարանոցս համբարօք հանդերձ այրել : Իսկ բազմութիւն ամենայն դաւառացն Սիւնեաց՝ ժողով արարեալ եկեղեցեացն պատուիրանաց, կտակարանաց եւ սրբոց խաչից ոսկւոյ եւ արծաթոյ անթիւ, եւ նշխարաց սրբոց պատուական եւ սուրբ մարտիրոսաց : Եւ հաւաքեցին զամենայնն ի Շաղատայ եկեղեցին, քարկոփ գմբէթաւոր . ոմանք յորմս եկեղեցւոյն պատուհանս  
Հատ. Ա :

գործեալ երկաթով զքարկոփ զեկեղեցին՝ զնէին  
զիւրաքանչիւր սուրբա ի ներքա յօրմա եկեղեցւոյն :  
Եւ ոմանք ի ներքոյ եկեղեցւոյն ընդ բեմաւն զարանս  
գործեալ քարկոփա՝ լցին, եւ ոմանք՝ ի միջի եկեղե-  
ցւոյն : Եւ ոմանք ի ներքոյ եկեղեցւոյն արկեղօք ի  
վայր իջեալ, եւ համբուրէին լալով եւ արտասուելով  
զիւրաքանչիւր զխաչս եւ զսուրբ վկայիցն զնշխարս  
եւ զկտակարանս սուրբ աւետարանաց, մարգարէից  
եւ առաքելոց՝ յանձն արարեալ սրբոյ եկեղեցւոյն  
սուրբ Ստեփաննոսի : Եւ զու թն օր խնդրուածոց ցալ-  
գապաշտօն արարեալ ի նմին եկեղեցւոյն ամենայն  
Սիւնեաց, եւ կունձամբ թաղեալ բազմօ թեանն, եւ  
հողաբուր արարեալ ի վերայ սուրբ եկեղեցւոյն Շա-  
ղատայ որ է ի Յղուկս գաւառի, փախուցեալ ցրուե-  
ցան ընդ ամենայն երկիր . եւ ո՛չ ոք իշխէր ասել  
զանուն Սիւնեաց : Զի զբսան եւ զհինգ տարի ապա-  
լերկ աւերակ եկաց աշխարհն ցանկալին Սիւնեաց :  
Եւ եկեալ Շապուհ՝ Պարսիցն արքայ, ի վճարմանէ  
պատերազմին Խազրայ . մեծաւ ցասմամբ հրամայէր  
ամենայն զօրաց իւրոց ելանել յաշխարհն Սիւնեաց,  
գերեզ զմարդ եւ զանասուն ի ծառայութիւն : Եւ  
հասեալ յաշխարհն՝ ոչ ինչ գտին ամենեւին, բայց  
զսրբութեանցն տեղիս, զսուրբ զեկեղեցիսն, զոր  
քանդեալ աւերէին և հրակէզ առնէին յամենայն աշ-  
խարհին Սիւնեաց : Եւ հասեալ զօրն անաստուած

պարսկական ի Օղուկս գաւառ ի Շաղատ գիւղաքա-  
ղաք . եւ անցեալ յեկեղեցաբլուրն, ընդ որով սուրբ  
եկեղեցին թաղեալն էր, իմացեալ թէ ընդ բլրովն  
լինի ինչ ի ներքոյ չարիմաց եւ չարահար ազգն  
Պարսից : Եւ ոմանք ի պարսկական պայիկացն ի վեր  
յեկեղեցաբլուրն ելեալ, եւ յանկարծօրէն թնդին  
որոտման շարժումն եղև, և յեկեղեցաբլրէն արտաքս  
ձգեալք վերելեակքն Պարսից սատակեցան : Եւ  
Աթաշխողա՝ ինքն պարսկական գնդովն իւրեանց ի  
փախուստ դառնային ի սաստիկ յահի եղանելով :  
Եւ դարձեալ ժողով տուեալ ամենայն բազմութեան  
գնդին Պարսից և Արեայ աշխարհին որ է Խորասան  
Շապուհ Որմզդեան անց տալ պատերազմ ընդ Բա-  
ղաբերդի, եւ ոչ ինչ կարացեալ առնել ամրութեան  
տեղոյն, զի վէմն գլեալ ի տեղոյն զառ ի վայրն՝ զա-  
մենեսին առ հասարակ սատակէին : Եւ հրամայեալ  
Շապուհ արքայի բազում քան զնոյն կրկնապատիկ  
զօրք գալ ի Պարսից . եւ վերջապահս թողեալ՝ հրա-  
մայեաց սաստկացողցանել զպատերազմն ընդդէմ  
ամրոցին :

Եւ դարձեալ որպէս յառաջնումն, նոյնպէս յերկ-  
րորդումն պարսաքարիւք եւ վիմագլմամբք զանհուն  
բազմութիւն պարսկական զօրուն զամենեսին դիա-  
թաւալ կացուցանէին : Եւ դարձեալ երեքիկն քան  
զնոյնն այլ զօր բովանդակեալ Շապուհ, եւ հրամայէ

սաստկացուցանել զսլատերազմն, եւ վերջապահ  
հրամայեաց թողուլ, եւ ասաց եթէ որ ի վերջ որ  
դառնայ՝ սպանէք : Եւ սորա նոյնգունակ վիմօք եւ  
պարսիք կոչկոճեալք՝ առ հասարակ սպառեցան .  
որպէս յառաջնումն եւ յերկրորդումն, նոյնպէս եւ  
յերրորդումն : Եւ դարձեալ զայրադին լի ցասմամբ  
եղեալ Շապուհ՝ արքայն Պարսից, ընդ եղմունս  
իրացն՝ կամ եղեւ այլ զօրս անթիւս բովանդակել  
առ ի սաստիկ եւս տալ պատերազմն ընդ Բաղաբեր-  
դի : Եւ նոյնժամայն իշխանքն մեծամեծ նախարա-  
րացն ի ծունր իջեալ առաջի արքային Պարսից Շապ-  
հոյ, աղաչեցին մի եւս պատերազմել ընդ ձնպար-  
տելի ամրոցին Բաղաբերդի . եւ մի՛ տալ կոտորել  
զԱրեացն գունդս : Եւ ասացին շուրջ զամրոցաւն  
յաւեր դարձուցանել, նոյնպէս և զամենայն զիշխա-  
նութիւն գաւառացն Սիւնեաց : Հրաման եւ յար-  
բունուտ եթէ մարդ եւ անասուն ձեզ Արեաց աշ-  
խարհի զօրաց ի ծառայութիւն լիցին : Իսկ Անդոկայ՝  
Սիւնեաց տեառն, օր պարապորդ գտեալ . եւ ելաւ  
յամրոցէն Բաղաբերդի մեծաւ աւարաւն, անցանէ  
յաշխարհն Հոռոմոց առ մեծ ինքնակալն Թէոդոս՝  
արքայն Յունաց . եւ ի նմանէ պատիւ մեծագոյն  
գտեալ, այսինքն պատրկաց պատրիկ արարեալ  
զԱնդոկ, վախճանի անդէն յաշխարհին Հոռոմոց :

Ժ. — Վասն գաղոյ Բարկայ ի Հռոտնոց առ Շապուհ .  
և քաջութեանն զոր եցոյց . և վերաոտին տիրելոյն սեպ,  
հական հայրենեաց իւրոց Սիւենայ աշխարհիս եւ  
շինութեան սորա . եւ նախագահ պատուելոյն ընդ  
Բագրատունիս՝ ի նոյն ճառիցն Տեառն Պետրոսի . եւ  
այս ի վարսներորդ ութերորդ ամի թագաւորութեանն  
Պարսից Շապուհոյ Որսզրեան :

Իսկ ի վախճանեղն պատրկաց պատրկին Անդոկայ  
ձնաց որբ և անմխիթար միայնակ որդին իւր Բարկի :  
Եւ զի թէպէտ բազում եւ մեծամեծ ունէր պատիւ  
յաստուածապատի և ի սուրբ թագաւորէն Թէոդոսէ  
մեծէ . այլ ոչ հանդուրժէր արտաքոյ ընկի տէրու  
թեան իւրոյ՝ փախազեալ սաստիկ կարօտութեամբ  
յաշխարհ իւր ըստ ասացելուքն Դաւթայ թէ ի հողս  
իւրեանց զթացսին . եւ դարձեալ ըստ իմաստնոյն  
բանի, եթէ չիբ ումեք քաղցրագոյն քան զծնողս .  
եւ ո՛չ քան զգաւառ իւր : Եւ գնացեալ յաշխարհէն  
Հոռոմոյ առ արքայն Պարսից առ Շապուհ, հասանէ  
ի դուռն արքունի, և ումեմն (զուցէ՛ անդ ուրեմն կամ  
ուրումն) ի զօրականաց արքային հեշտ պաշտակու  
թեամբ (ընկաղեալ), և բազում արութիւնս պէսպէս  
յոլումպիազան Պարսից ցուցեալ . և ո՛չ ումեք զինքն  
յայտնեալ եթէ ո՛վ եւ կամ ուստի ոք իցէ : Եւ նոյն



ժամայն յայնժամ ելեալ Հոնն ի Հոնաց Հոնագուր անուն՝ աւար առեալ զամենայն աշխարհս Պարսից, ստէ « զի է հեղումն արեան և վատնումն զօրաց բազմութեան . եկ, և մենամարտեսցուք ես և զու միով միակաւ » :

Եւ վառեալ Հոնին, որոյ Հոնագուր անուն ճանաչէր յիանանիւթեայ զրահին զանհնարին բարձր եւ զլայն հասակն, եւ երկաթազամ եւ բւեռապինդ սաղաւարտին զահեղակերպ զլուխն եւ զճակատն պղնձեայ եւ տախտակամած յօրինուածով ամրացուցանէր, եւ զանհեղեղ զեղարդան զբունն ի բարձրամայր փայտից, եւ զսուսերն բոցանշան եւ զարինահեղ յօրինէր ի յինքեան՝ ահաբեկեալ զամենայն զօրս Մարաց եւ Պարսից եւ Արեաց աշխարհին, որպէս զեկոյց մեզ ի ներբողմանն իւրում երանելին Պետրոս՝ Սիւնեայ եպիսկոպոս, քերթողահօրն Մովսիսի աշակերտ : Եւ դարձեալ զեկուցանեն արքայիցն արքային Պարսից վասն Բարկայ թէ՛ գոյպը մի ի դրան քում, որ գործ պատերազմիզ նովաւ վճարի : Եւ արքայիցն արքայի կոչեցեալ զԲարիկ . և թագաւորութեան պատուի վճիռ կնքեալ վարազազիր մատանեաւ . և ստէ « եթէ վրիժուց նախանձութիւնուս այսորիկ յանգումն արասցես՝ մեծամեծ խոտմանցս ասացելոցս հասցես » : Եւ նորս ձեռն յանձին հարեալ առ արքային առ ի կատարել զհրամանն ար-

քունի . եւ նոյնժամայն ապաւինեալ ի վերին օգնու-  
թիւն . եւ առեալ զիւրոյ զօրութեան զգէնն յօրինէր  
ինքեան : Եւ ճաճանճաւոր և մարգարտակապ զրա-  
հին տրքունական զվայելուչն հասակ (զինէր), եւ  
վազրակերպեան սաղաւարտան՝ զգեղեցիկն գլուխ .  
եւ զսուսերն սեաւ պոզովատիկ զսէզն միջով . եւ  
զվահանն զոսկիակապ եւ զականակապ ի յահեակ ի  
յուան ընկեցեալ : Եւ զգեղարդն՝ զսուրն քաջամուխ  
ի յաջ բազուկն ընկեցեալ հաստաբեստեալ աշտա-  
նակէր ի սեաւն քաջ երիվար :

Այսոյանանայր ընդդէմ թշնամուցն, յարձակէին ի  
միմեանս . ի տուր եւ յառ զեղարդացն ճայթին  
որոտման ելանէր յառաւօտէ մինչեւ ցինն ժամն :  
Անդ դատապարտեալ լինէր անհնարին հսկայն Հո-  
նագուր, յաղթողանայր քաջն Բարիկ . աճապարէր  
ի սուրն միասայրի, որով անդէն սատակէր զմարդա-  
խոշոշ եւ զվիշապազօր գազանն :

Եւ դարձեալ , որպէս վերադոյնն ասացաք, յերա-  
նելուցն Պետրոսի՝ Աինեայ եպիսկոպոսի, ի ներքող-  
մանէն առաք, զոր արարն ի վեհն Բարիկ, զոր եւ  
Պարսիկք յիւրեանց լեզուն լաւ կոչէին զնա : Եւ  
յետ այս եղմանց սխրակեաց հրաշութեանց կոչեաց  
զԲարիկն Շապուհ՝ արքայն Պարսից, մեծաւ ցնծա-  
լից ուրախութեամբ առ ի կատարել առ նա զխոս-  
տացեալն զմեծ խոստմունս : Եւ նորա բան խնդրեալ :

յարքայից արքայէն առ ի բառնալ զսանդն լի մոխրով հնոցի զոր ի դարապատին եղեալ կոփելով վերակոփմամբ յիջելով ի վերայ մոխրոյն ասէին « եթէ Սիւնեաց տէրանցն նախագահութիւն տէրութեանն ընդ այս մոխիրս ի վայր լիցի, և որպիսութիւն նոցին խորհրդոց և կենաց » : Եւ արքայիցն արքայի մեծաւ զարմացմամբ եղեալ՝ հրամայեաց բառնալ զսանդն ի տեղուջէն յայնմանէ : Եւ խնդրեալ Բարկայ յարքայիցն արքայէ զի միայն զսեպհական աշխարհն իւր՝ զքնիկն, զնախնական տէրութիւնն իւր աղգին ի նա դարձուցէ : Եւ շնորհեալ նմա արքայիցն արքայի Շապհոյ՝ առաքէ զնա մեծաւ պատուով յաշխարհն իւր Սիւնեաց . և աւանդէ նմա նախագահ լինել ընդ Բագրատունւոց եւ ընդ Մամիկոնէի համապատիւ եղանիլ :

Եւ անցեալ ընդ Երասխ գետ՝ շինէ դեղաքաղաք մի՝ կոչելով զանուն տեղոյն Նախկորզան, որ թարգմանի նախ զնա կորզեալ ա՛ռ յինքն յիւր հայրենեացն : Եւ դարձեալ, որպէս վերագոյնն ասացաք, եթէ ի վաթսներորդ տթերորդ (21) յամի Շապհոյ՝ Պարսից արքայի՝ որդւոյն Որմզդի, և յերկրորդ ամին Խոսրովու՝ Հայոց թագաւորի, Բարիկ Սիւնեաց տէր լինի . եւ ի նմանէ առնու զտէրութիւն : Եւ Հոռոմի թուական լինի 124 . զոր ստոյգ գիտացաք . եւ 138 ամաւ յառաջ քան զթուական Հայոց :

**ԺԱ.** — Յայտնութիւն եկեղեցւոյն Շաղասայ . եւ գիւս  
այնչափ սրբոցն որ ի ննա . եւ հաւատաւն Գորայ եւ  
Գազանայ եւ այլ Պարսից . եւ սքանչելիքն Տիրոտ  
երիցուն :

Եւ բաղձալի ի կենցազս ո՛չ այլ ինչ բայց միայն  
սեպհականութեան ժառանգութիւն առն, յորում  
ծնեալ եւ սնեալ լինի, եւ վայելել խորհիցի . որպէս  
զստինս մօր եւ զգութ հօր, այնպէս քաղցր թուեցեալ  
լինի ի միտս ժառանգորդին : Այսն որոյ միշտ կա-  
րօտի չըջիլ, տեսանել, գրօնուլ, խնդամտիլ ի վերայ  
նորա, որպէս եւ գովելի եւ քաջուղէջ մանուկս այս  
Բարիկ, որ յետ տիրելոյն բնիկ ժառանգութեան  
իւրոյ՝ յորս ելեալ խնդալով, խաղալով ի վերայ սովո-  
րական թատերացն եւ խնջոյից խրախարանացն ի  
լերինս որսասուն եւ բազմաջողի վնջրացն Ալմեսայ,  
նաե ի տես որպիսութեան գաւառացն յառաջին  
ամին իւրոյ տէրութեանն : Որ եւ գրեա՛ զայս ո՛չ  
աշխարհագրօս ինչ դատարկութեան գործ . այլ ի  
Հոգւոյն շարժեալ : Եւ մինչ յայս իսկ յառաջեալ  
տեսանէր ապա ոգորմելի տեսակաւ զցանկալի աշ-  
խարհս այս ապալերկ ի մարդոյ եւ յանասնոյ, եւ  
հիմնախիլ արարեալ զգեղեցկայարմար աւանս շինից,  
գիւղից եւ ագարակաց, վատնեալ զամենայնն եւ  
յաւեր դարձուցեալ :

Հատ. Ա. :

5.

Իսկ ի տեսանելն զայս ողբալից եւ աշխարհի տե-  
սակս, ապա անցեալ ի գաւառն Մղկայ՝ հասանէ  
յաւանն ի շինանիստն Շաղատայ. և ելանէ յարեւելից  
կողմանէ ի հանդիպակաց բլուր մի : Եւ նոյնժամայն  
ի բլրոյն ելանէ եղջերու մի, եւ խուճապեալ ի փա-  
խուստ դառնայր էրէն զինքն եկեղեցաբլրոյն եղեալ :  
Եւ Բարկայ տաճիկ երիվարաւն զհետ մտեալ եւ  
ելեալ զկնի եղջերուն յեկեղեցաբլուրն : Եւ անդ  
երիվարին ոտքն խրեցան ի բլրին . եւ եղջերուն  
ի բլրին աներևոյթ եղեւ : Եւ Բարկայ՝ Սիւնեայ  
տեսառն, ի վայր իջեալ յերիվարէն ի վերայ եկեղե-  
ցաբլրին՝ հրամայեաց բազմութեանն քարշէլ զխրեալ  
ոտան երիվարին ի վերայ բլրոյն : Եւ իբրև քարշէցին  
ուժգնակի բազմութիւն գնդին Բարկայ՝ Սիւնեայ  
տեսառն : Եւ դարձեալ սխրալի զարմանք յահի կալսւ  
զամենայն բազմութիւնն . զի ընդ ոտնատեղիս երի-  
վարին անուշահոտութիւն բուրման զանազան գրե՛թ է  
զամենայն զփորակ գաւառին ելից : Եւ հրամայեաց  
Բարիկ՝ Սիւնեայ տէր, բազմութեանն պեղել զհող  
բլրին . եւ տեսին ի ներքոյ եկեղեցի քարկոսի չքնա-  
զաչէն որ ոչ ուրեք էր այնպիսի հրաշաքարտար շի-  
նուած, գմբէթն եւ խորանքն չորեքիուսի, մի յարկ  
մի տանիք եւ ոչ ուրոյն ուրոյն որպէս եւ այլ գաղա-  
տոսաչէն եկեղեցիք :

Եւ բացեալ զգրուս սրբոյ եկեղեցւոյն Նախառ/ը...

կային Ստեփաննոսի . և տեսին բազմաՀոյս բազում  
խաչա ոսկիս եւ արծաթիս եւ բազում գրեանս  
պատուիրանաց և սոց սարսա ամենայն եկեղեցեացն .  
Միւնեաց իւրաքանչիւր գրով գիւղաքաղաքացն : Եւ  
նշխարք սուքք և պատուական մարտիրոսացն անհա-  
մար, անթիւ որ յորմն եկեղեցւոյն մնաց : Եւ յայտ-  
նութիւն և գիւտ արոյ եկեղեցւոյն Շաղատայ (եղև)  
ի Հոռի ամսոյ որ օր մի էր ամսոյն : Յայնմ ժամանակի  
յամենայն տարւոջ ժողով արարեալ Միւնեաց տեառն  
հանդերձ եպիսկոպոսիւն՝ զօր երևման սուքք եկեղե-  
ցւոյն սոնաթմբէին իբրև զմայր եկեղեցեաց աշխար-  
հին ամենայն Միւնեաց : Եւ դարձեալ յայնմ աւուր  
աղօթպարդարքն ցայգաղաչտամամբ, որ ինչ և խըն-  
գրուածս սունէին յԱստուծոց նոյնժամայն ներկա-  
տարումն հրաշիցն եղանիւր : Եւ դարձեալ զայն  
տեսեալ զերևումն հրաշիցն, որ եղեն ի սուքք եկե-  
ղեցւոյն սրբոյն Ստեփաննոսի, զի բազում բժշկու-  
թիւնք պէս պէս ցաւոյ լինէին, որք ի ժամուն յայնմիկ  
հանդիպեցան, հաւատոյին եւ մկրտեցան Գոր եւ  
Քազանն՝ երկու եղբարք, հանդերձ պարսկական  
բազմութեամբ զնդիւն իւրեանց, որ եկեալ էին ի  
Պարսից զհեա Բարկայ՝ Միւնեաց տեառն :

Եւ դարձեալ վիճակ արկեալ Բարկայ՝ Միւնեաց  
տեառն, Գորայ և Քազանայ . Գորայ՝ աւագ եղբորն,  
հասանէ աւանն Խոտայ եւ քաջարի արիացելոյն՝

քաջամարտիկն Վազանայ հասանէ վիճակաւ գիւզա-  
քաղաքն Շաղատայ հանդերձ սուրբ եկեղեցեան, որ  
յայնմ ժամանակի մայր եկեղեցեաց անուանէին :  
Եւ Բարիկ՝ Սիւնեաց տէր, վանական կայոյց եւ  
սպասաւոր զընտրեալն Տիրոտ՝ հաւատարիմ, սուրբ  
և ներանձնաւոր քահանայ, որ յայնմ ժամանակի ո՛չ  
որ գոյր նման նմա վարուք առարինութեան : Եւ  
դարձեալ սքանչելագործ հաւատովք, զոր սուղ ինչ  
յիշեսցուք, զի յորժամ գայլ յայծեաց ուլ, կամ  
գառն յափշտակէր . եւ ձայնեալ օմանց առ նա, եւ  
նորա արարեալ սուրբ աջովն իւրով զնշան խաչին  
քնդդէմ գազանին, եւ ասէր Քրիստոսիւ ասեմ չիչ-  
խես տանել » . եւ գաղանի գայլուն ի վայր եղեալ  
զուլն կամ զգառնն՝ զնայր հանդարտութեամբ : Եւ  
դարձեալ թաղք մի Շաղատայ (էր) ի լերինն ծովուն  
յեզր ծովակի միջ (22) . և երանելին Տիրոտ նստէր  
ի միջի ոմանց . եւ գորտքն ի ծովուն ըստ սովորու-  
թեան իւրեանց բարբառոյ ընուին (23) յաւէժ աղա-  
վակելով . եւ երանելին Տիրոտ զչարեալ նոցա ասէ  
« ո՛հ խլացէ՛ք (24) ձեր անհեղեղ բարբառովդ » . եւ  
զբազում աւուրս կարկամեցան գորտքն, եւ ոչ կա-  
րացին բարբառել : Եւ եղև ի միում յաւուրցն սուրբն  
եւ երանելին Տիրոտ եհաս ի նոյն տեղի . եւ բնակիչք  
տեղւոյն զգացուցին վասն գորտոցն . եւ նա ասէ  
« հրամայեալ եմ նոցա լուծանիլ ի նոյն սնոտի բար-

բառն վերաձայնել » : Եւ նոյնժամայն գորտքն զաղաղակ կալեալ իբրև զառաջինն յաւէժարար մեծաձայնէին բարբառել :

Եւ դարձեալ ի միում յաւուրց ընդ երեկոյան ետես որայն լուցեալ հրով, ձգեաց զգաւազանն և ընկեաց ի մէջ որայի հրոյն : Եւ ընդ առաւօտն յորժամ զարժանաւոր զաղթան ի յանկումն կատարելութեանն հասեալ՝ հրամայեաց բերել զգաւազանն իւր և մարդիկն զաղաղակ բարձին եւ ասեն « որայն սաստիկ այրեալ է . եւ արդ գաւազանին ու՞ր խնդիր առնես քաղեակ (կամ քաջեակ) տէր՝ » . եւ նորա սաստեալ նոցա ասաց բերել . եւ երթեալ մարդկանն՝ տեսին զգաւազանն սրբոյն Տիրոտի անմնաս մնալով ի մէջ հրոյն շնորհօքն Աստուծոյ . եւ բերեալ մեծաւ զարմացմամբ զգաւազանն կարմրագունեալ իբրեւ զհուր առ երանելին Տիրոտ : Եւ առեալ առ ինքն զգաւազանն . և նայեցեալ ի գոյն գաւազանին և ասէ « այսպէս արիւնագոյն կսկծելով իբրև հրացեալ այրի սիրտ որային տեսան : Եւ դարձեալ յաւիտենից անողորմ, անէջ հրովն դատելոց են արարողք արկածից մնասուն այնորիկ : Եւ երանելոյն Տիրոտի էր ոմն (մշակ), եւ դժնդակ եւ չարաչար մնաս գործեաց . եւ սուրբն զչարեալ ցասմամբ ասէ « գնա՛, չտամ զվարձն քո » . եւ նորա գաղտնի խորամանկութեամբ փայտատ մի առեալ գնաց . եւ եհաս ի խոռա Անձնատու, որ է



յարեւմտից կոյս եկեղեցւոյն իբրեւ ձայնընկէց մի .  
պարտաւանդեցան ոտքն . և ոչ կարաց զնալ : Եւ առ  
սուրբն Տիրոտ դարձեալ զղջախոհ մեղալիւ՝ եղ զեր-  
կաթնն առաջի նորա . եւ դարձեալ հեզն եւ բարե-  
պաշտն, սուրբն եւ ցանկալին Տիրոտ ետ զվարձն,  
օրհնեաց եւ արձակեաց յիւրմէ :

Եւ դարձեալ՝ գետոյ միոյ (որ է գետն Արտանայ)  
յայնմ կողմանէ էր ջրաղացք մի . և երանելին Տիրոտ  
ի գետավարարան հանապաղ զնշան խաչին արարեալ՝  
անցանէր ընդ գետն աներկեղաբար : Եւ եղեւ ի  
միում յաւուրց ետես ցանկալի եւ գեղեցկատեսիլ  
քոռակ էչ մի, և ասաց ի մտի իւրում երթայց, ան-  
ցից իշո՞նն այնուիկ ընդ գետն . եւ ելեալ յէջն եւ  
մտեալ ի գետն . եւ ի միջի գետոյն դարձեալ էջն առ  
նա՝ եւ եցոյց փայլատակմամբք զերկաթի զպայտիւն  
(նալ) իւր և ասէ « քո այսպէս իշոյ պայտիս տեսեա՞լ  
է » . և նորա հանեալ ի թափուցն զխորրիկ զգանա-  
կիկն իւր՝ եցոյց եւ ասէ « եւ քո այսպէս իշոյ մտրակ  
տեսեա՞լ է . զիս ի գետէս բաց անցո՞ եթէ ոչ՝ հարկա-  
նեմ և միբաւորեմ զքեզ » . և անցուցեալ զսուրբն  
ընդ գետն՝ աներկոյթ եղև չարն սատանայ : Եւ սցլ  
բազում ինչ նշանազործութիւնք, որ յերանելոյն  
բնէին, և պէսպէս ցաւոյ լկանաց անդորրութիւնք .  
և այսահարաց նորին աղօթիւք բժշկութիւնք : Եւ  
զախճանեալ սրբոյն՝ եղաւ ի դիր յարևելից կող-

մանէ սրբոց եկեղեցւոյն. որ եւ բազում այցելու-  
թիւնք լինէին ի սուրբ գերեզմանէ նորա հիւանդաց :  
Եւ դարձեալ կանանց ոչ հրամայեցաւ ի նմանէ ի  
սուրբ եկեղեցին մտանել. եւ այսու կարգաւորու-  
թեամբ կրօնիւք եկաց (ուխտ) սուրբ եկեղեցւոյն  
Շաղատայ մինչև յամս 300. և ոչ դարձեալ կանամբի-  
քահանայի սպասաւորութիւն առնել սրբութեան  
տեղւոյն :



**ԺԲ.** — Դարձեալ ի նոյն ճատից Տեսան Պետրոսի .  
յետ բազում ժամանակաց զրոյցք վասն գիւտի նշխա-  
րաց սրբոց որ ի Շաղատայ եկեղեցին. և որ յաւուրս  
Յովակիմայ եպիսկոպոսի վիճմունք . և ասկս նախա-  
դասութեան տանուտերաց և գիւղից Սիւնեաց, և թէ  
ո ոք նախապատիւ և գահագրուի սահմանեցաւ :

Արդ յետ բազում ժամանակաց ինչ Յովհաննէս՝  
կուսակիւն քահանայ և սպասաւոր սուրբ եկեղե-  
ցւոյն, առանձինն աղօթս մատուցանէր ի նմին սուրբ  
եկեղեցւոյն ի գիշերին : Եւ յանկարծակի շարժումն  
եղեւ անուշահոտ բուրմամբ : Եւ յարևելից կուտէ  
խորանին յեկեղեցւոյն աղիւսածև քար վազեաց  
յորմոյն . եւ զյատակն եկեղեցւոյն էստ ի վերայ  
բեմին : Եւ քահանային ելեալ ի բեմն մեծաւ երկիւ-

ղիւ՝ տեսանէր սլատուհան մի բացեալ. եւ ի ներքս  
բազում նշխարք սրբոց գրով իւրաքանչիւր ան-  
ուանք եղեալ ի կողովս լի անուշահոտ ցանկալի բուր-  
մամբ. եւ փոյթ ընդ փոյթ ընթացեալ պատմեաց  
աստուածապահ տեառն Խոսրովայ, որ էր ի զար-  
մից Գաղանայ : Եւ եկեալ եւ տեսեալ զերևեալ  
սուրբան մեծ՝ գոհարանելով աղօթիւք գոհանայր զԱս-  
տուծոյ : Եւ հրամայեաց նոյն քարին աղիւսաբոսա-  
րով ծածկել զտեղի հանգստարանի սրբոցն : Եւ  
դարձեալ՝ երանելոյն տեառն Բարկայ՝ Սիւնեաց  
տեառն, հրամայեալ զի նախաթոռ լինիցին յամե-  
նայն Սիւնիս սպասաւոր քահանայք և հաւատացեալ  
ժողովրդականք պաշտօնեայք սրբոց եկեղեցւոյն Շա-  
ղատայ իբրև մայր եկեղեցեաց և մայրաքաղաք սմե-  
նայն աշխարհին Սիւնեաց : Եւ դարձեալ՝ յաստուածա-  
պատիւ և ի հոգևոր Տեառն Յովակիմայ՝ Սիւնեաց  
եպիսկոպոսի, յիշատակի պատարագին ներհակ հա-  
կառակութիւն սաստիկ եղև վասն նախագահ նա-  
խադասութեան նախապատիւ լինելոյ զիւրաքաղաք  
աւանայն թէ ո՛վ ոք է լինելոց :

Եւ Խոսրով Շաղատայ ի զարմից Գաղանին, ըզ-  
տպաւորումն գրաւորական տառիցս առաջի եղեալ  
աստուածապահ և բնիկ տեառն Ատրնեբսեսի՝ Ար-  
նեայ տեառն եւ Հայոց իշխանի : Եւ հրամայեցաւ  
Շաղատնեցեաց իբրև մայրաքաղաքացեաց յառա-

Ջանիստ լինել վեհագոյն պատուով : Նոյնպէս եւ զվարդապետութեանն Սիւնեաց զնախագահութեանն զնիստ հրամայեցին Գէորգեայ՝ Շաղատայ վարդապետի : Ընդ որ յոյժ զչարեալ Փանոսի ոյծեցոյ՝ Սիօնի վանականի, ակամայ զնաց . եւ ոչ ինչ ումեք ի ժողովոյն փոյթ զայնմանէ լինէր : Եւ ապա դարձեալ ընդ Ոյծ եւ ընդ Աղխիտու սաստիկ հակառակութիւն եղև : Իսկ հնագիտակք Աղխիտուացեաց զՈյծեցեացն հաստատեցին ի Վրաց աշխարհէն լինել պանդուխտ եւ նժդեհ գոլ ամենայն Սիւնեաց : Եւ դարձեալ՝ Շաբլոյ եւ Աղխիտուաց հրամայեցաւ զկնի Շաղատայ զնախադասութեան ունել զվեհագոյնն զերկրորդականն զպատիւ : Եւ զբառորդ նախադասութիւնն Աւան գիւղաքաղաքին Մրենոյ ընկալեալ վասն ազատազարմ լինել գոլոյ հնոյն : Եւ ապա զհինգերորդ զգահն հրամայեցաւ Ոյծեցեաց ունել : Եւ ապա յայնմհետէ իւրաքանչիւր ոք իւրեանց քահանայիւք : Եւ զայս դարձեալ սուղ ինչ յիշելով ապառնեացոյ սակս վերահասու լինելոյ յայտնեցաք զի մի ներհակ հակառակութիւն ինչ լինիցի յետնոցն :

ԺԳ. — Դարձնալ վասն իշխանացն որ զվնի Բարկայ :

Ստասարաւն եւ տիրասուն պերճապանոյնն եւ զեղանին այն Բարիկ՝ որդի Անդոզայ, գործով գո՛վելի եւ հաւատով զերազանց բնաւից, յետ առնլոյ զտեպհական տէրութիւնն Արւեհաց . եւ շինելոյ զա՛մենայն աւերեալ զաւատոն կրկնապատիկ քան զա՛սաջինան, ստանայ ուսոր մի Վասակ անուն. եւ ի զարգանալ հասակին ընծայեցուցանէ զնա ի դուռն տրքունի Վասակ՝ Պարսից արքայի : Զի յետ 72 ամի Թադաւորութեանն Շապհոյ՝ վախճանի սա . եւ առնու զԹադաւորութիւն որդի նորա Արտաշիր ամս 3. (28) ապա Արման որ է Վասակ՝ ամս 11 : Ոչ է սա նա որ պատերազմեցաւ ընդ Հայոց : Ապա Յազկերտ՝ ամս 11 : Իսկ Բարիկ առեալ զտէրութիւնն Արւեհաց ի վաթսմերորդ ութերորդ ամի Շապհոյ՝ Պարսից արքայի, եւ վարեալ զիշխանութիւնն ամս 21, փոխի յատեաացս յանփոփոխ իշխանութիւնն եւ յանգրաւոր ուրախութիւնն յերկինս : Իսկ Սամ Գնթունի՝ սենեկապետն նորին, զնայ ի դուռն արքայի. եւ ծանուցանէ զբոթ գութին . սակս որոյ տրտմեալ Վասակայ եւ աղէկիղեալ ի վերայ մանկանն որ ի գրանն կայր, խորհի ընդ սենեկապետի իւրում տալ զիշխանութիւնն ի ձեռս Վասակայ. եւ առսքել զնա

յաշխարհն իւր: Եւ զայս իմացեալ նորա՝ զայս առ Վասակ եւ աւետիս մատուցանէ նմա զխորհուրդ արքային: Իսկ նա չար և չոր մտաք հոծ լի գորով, ոչ եթէ աւէտ չեայ ինչ շնորհէ նմա. այլ ցուրտ և ապաշնորհ պատասխանի արարեալ նմա, առէ բայց եթէ զի՛ս առնէ տէր մինչ բնական իմ հարցն է ժառանգութիւն Արևեայ: Եւ երթեալ սենեկսպետին ծանոյց զայս արքայի: Իսկ Վասակ խոժոռեալ ընդ բանն Վասակայ. եւ հրահայեալ զսենեկսպանն. Բարկայ ի ներքս ածել զՍամ Պնթունի. և կտոյց զնա տէր Սիւնեայ: Սա կալեալ զտէրութիւնն ամ մի՝ վախճանեաց զմոլեխինդն արուցեալ դաւաճանութեամբ: Իսկ յետ սորա Վաղինակ ի բնիկ ցեղէ իշխանացն Արևի՛ ամն Զ: Եւ ապա յետ սորա Վասակ՝ որդի Բարկայ, առնու ի Վասակ-Շապուր զտէրութիւն իւր, և Վարէ ամն 39: Այլ զգրոցք եւ զգործ զոր ինչ եղեն առ սաքօք, ո՛չ է պարտ զանց առնել. այլ ըստ պատշաճին կարգեսցուք զպիտանին:



ԺԴ. — Երարգ իշխանացն Սիւնեաց, որ ի Բարկայ միև յև ցՔուրդոյ:

Այլ զի պատշաճ համարեցաք սատ նախ զնեղ զկարգ իշխանացն, եւ ապա անդրէն դառնալով՝

վերստին ցուցանել զգործս եւ զբանս որ յիւրաքան-  
չիւր ժամանակս եղեն, վասն որոյ եւ ճառեցի է :  
Արդ՝ Բարիկ առնու զտէրութիւնն Սիւնեացի Շապ-  
հոյ . եւ կեցեալ ամս 21, վախճանի : Սենեկա-  
պետ նորին Սամ Գնթունի՝ մի ամ : Վաղինակ՝ 9 .  
Վասակ՝ 39 ամ : Վարազ-Վաղան՝ փեսայացեալն  
Վասակայ՝ 25 : Ընդ մէջ 5 (ամ) : Գղեհոն՝ 17 : Այս  
երեքս ելին յաստուածադրոշմ ուխտէ եկեղեցոյ՝ յի-  
մարեալք չարութեամբ և պատրեալք ի հրապաշ-  
տիցն : Վ ոամ՝ 7 ամ : Ընդ մէջ՝ 1 : Միւս Վասակ՝  
11 ամ : Աչիր՝ 9 ամ : Ընդ մէջ՝ 3 : Բարգէն՝ 10  
ամ : Ընդ մէջ՝ 11 ամ . զոր ի Շապհոյ միւս կալաւ  
Յովհանն 18 ամ : Վասդուղ՝ մի ամ : Գրիգոր՝ 10  
ամ : Միհր-Արտաշիր 23 ամ : Ընդ մէջ՝ 3 : Պի-  
րան՝ 1 : Ընդ մէջ՝ 2 : Սարգէս՝ 2 ամ : Ընդ մէջ՝ 3,  
Սահակ՝ 10 ամ : Ընդ մէջ՝ 13 . զոր Պարսիկք կա-  
լան : Գրիգոր որ վասն առաւելութեան եւ առոյգ և  
ուժեղ հասակին քաջաց նուիրակ կոչեցաւ, 16  
ամ : Հրահատ՝ 16 ամ . Յովհանն՝ 27 ամ . Քուրդոյ՝  
18 ամ :

Ահա այսոքիկ ի Բարկայ հետէ մինչև ցայժմ կա-  
լան զիշխանութիւնն որդի ի հօրէ պայազատելով,  
թուով 20՝ ամս 332 : Իսկ զԳրիգորոյն որ քաջաց  
նուիրակ կոչեցաւ, ցուցից քեզ զբան, զի գիտաս-  
ցես զսոսա ոչ միայն Հայկազունիս . այլ և խառ-

նեալ ի թագաւորական ցեղն Պահլավկայ և Արշա-  
կունեայ (26). եւ յայսմէտէ իմասցիս զսոսա ձեռ  
Արշակունի և զաւակ Պահլաւունի. և այնքան բարձր  
եւ փառաւոր գոլ. զի հաւասար էին խնամութեամբ  
ընդ Պարսից թագաւորութեանն եւ ընդ Հայոց :  
Արդ՝ եղև օր մի յաւուրց. եւ Խոսրով՝ արքայ Պար-  
սից, որդի Ուրմզդայ, զոր ոմանք շահնշահ անուանեն,  
այսինքն թագաւորայ թագաւոր, նստոյ զարապաս  
արարեալ ազատաժողով Արեայ գնդին . եւ կամե-  
ցաւ ի ճաշս խրախանալ : Իսկ թռչնաբաշտ որ մե-  
ծամեծ են եւ սևաթոյր, սլացաւ ի վերուստ ի վայր,  
եւ եկն ի սեղան թագաւորին, եւ կամեցաւ ինչ  
յափշտակել ի սեղանոյն : Եւ թագաւորն խրոխտա-  
ցեալ լի եղև ցաամամբ, որսխս թէ գուշակունն ինչ  
համարելով : Եւ յայն ամենայն բազմութենէն ոչ  
ոք շարժեցաւ զկնի նորա : Ապա Գրիգոր առեալ  
զհաստարեստ ազեղն իւր . եւ լայնալիճ գրկօք կորո-  
վակի փրթուցեալ զնետն ի վեր յօղն յոյժ բարձրա-  
գոյն՝ ընկէց զթռչունն ի վայր առաջի թագաւորին  
առ սեղանոյն : Իսկ թագաւորն լցեալ խնդութեամբ՝  
կոչէ յառաջ զԳրիգոր . եւ հրամայէ նմա զծանրա-  
գոյնն խնդրել խնդիր . եւ Գրիգոր՝ Սիւնեայ տէր,  
ասէ տէր իմ արքայ՝ մինչ հրամայեցեր խնդրել՝  
տացի դուստր արքայի ինձ ի կնութիւն : Եւ առ ժա-  
մայն կատարեցաւ խնդիրն բազում եւ մեծ պար-



գեօր եւ բարձրագոյն փառօր. և խնդացին ամենայն  
տունն Սիսականու :



ՓԵ. — Վասն գարոյ սուրբ Վարդասպետին Մեսրոբայ  
ի Սիւնիք եւ ի Գողթն . և շրջերոյ ընդ գաւառսն . և  
զղօղեայ կուսապաշտութիւնսն ի տեղիս տեղիս սրբերոյ  
օգնութեամբ Վաղիկնակայ իշխանիկն և Շարիքայի :

Յուցից և զկրկին լուսաւորութիւն այսմ աշխար-  
հի որ ի ձեռն սուրբ եւ յոգնեւրանեան առնն Մաշ-  
տոցի Մեսրոբ կոչեցերոյ : Ի նուազել թագաւո-  
րութեանն Հայոց համարձակեցաւ ամենայն ոք ըստ  
իւր բարուց ընթանալ, որպէս եւ աստ. զի աղանդն  
հեթանոսական դեռ ևս զօղեալ կայր ուրեք ուրեք ի  
գաւառն Սիսական եւ ի Գողթն, այժմ համարձա-  
կեալ երևեցուցին : Իսկ երանելին Մեսրոբ հր  
դպիր դիւանի դրանն արքունի . որ և կամեցաւ թա-  
քուցանել զինքն ի խռովարար կենցաղոյս . առեաղ  
զձև միայնակեցութեան՝ փութայր ի նաւահան-  
դիստն : Եւ եկեալ ի Սիսական կողմն՝ հաճեցաւ  
բնակիլ ի գեղեցիկ գաւառն Գողթան, և խստամբեր  
ձգնութեամբ բազում աւուրս առաքինացեալ, ծա-  
նեաւ զկրկին երեւեալ աղանդն կուսապաշտութեան.  
և սկսեալ ի բարոզութիւն՝ մեծամեծ և ահագին

նշանօք ոչ ինչ ընդհատ բան զարրոյն Գրիգորի, ի հաւատս ածել զաշխարհս Սիսական հրամանաւ և օգնութեամբ բարեպաշտ իշխանին Սիւնեաց Վաղինակոց, սրբել զկուսպաշտութիւնն և խորտակել զկուսանթաքուցեալ : Նմանապէս և զԳողթն սրբեալ ի ձեռն իշխանին իւրեանց Շարիթայի :

Եւ այնքան հալածեաց զբազմութիւն դիւան, որք մարմնաւոր տեսեամբ իբր զծուխ ծառայեալ՝ գունդ գունդ բարձրացեալ վայիւ եւ ազաղակաւ գնային փախտեայ. և անցեալ ընդ Երասխա՝ անկանէին ի կողմն Մարաց : Իսկ սուրբ այրն Աստուծոյ՝ թողեալ անդ յաշխարհին Սիւնեաց թարգման եւ ուսուցիչ յընտրեալ աշակերտաց իւրոց զԲենիամին եւ զԱնանիա, որ և ձեռնադրեցաւ յետոյ յեպիսկոպոսութիւն աշխարհին զի մի վերատին (անկցի ի մուրրութիւն). եւ ինքն գնաց առ սուրբն Սահակ :



ԺԶ. — Վասն նորոգ Լպիսկոպոստրեան Սիւնեաց Տեսուն Անանիայի . և Երբն յԱզվանս . և պատուիչն յԵպիստէն քաղաքիէ նոցուն :

Եկն, եհաս մեզ ձառել զցանկաղի եւ զլաւագոյն իրաց, այսինքն զնոր նորոգութենէ խաւարեալ եւ

խոսականացեալ եկեղեցւոյս մեր և աթոռոյս մետրապօլտութեանս Սիւնեաց : Քանզի ի վազուց հետէ ոչ գոյր տեսուչ և ուսուցիչ այսմ աշխարհի, յաւերմանէն Անդոկայ մինչև ցտէրութիւնն Վասակայ իշխանին : Իսկ ի հայրապետութեան մեծին Սահակայ. մինչ կրկին նորոգէր զՀայաստանեայս, եւ յամենայն տեղիս շրջէր եւ ուղղէր եւ ընդր վկարգո եկեղեցւոյ. ձեռնադրեաց եւ զԱնանիա աշակերտ Մեսրոբայ, թարգմանիչ եւ լի ամենայն առաքինութեամբ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց, նստել ի գահ մետրապօլտութեան եւ կոչիլ նախաթոռ Հայոց պատրիարքին : Ար եւ եկեալ նորոգեաց զերկոտասան գաւառս մեծավիճակ գաւազանի իւրոյ :

Իսկ ի բանալ դպրութեանս Հայոց վերին պարգեւքն ի ձեռն սրբոյն Սահակայ եւ Մեսրոբայ՝ եղ դպրատունս յաշխարհին Սիւնեաց, եւ կարգեաց ի վերայ զաշակերտակիցն իւր զԲենիամին : Եւ փութապէս զամենեսեան ուսոյց հայերէն դպրութեամբ. եւ արար գիտողս աստուածային կտակարանայ : Եւ յետ զայս յարդարելոյ առեսլ ընդ ինքեան զԲենիամին՝ գնաց յաշխարհն Աղլանից առ թագաւորն Եսվաղէն ի խնդրոյ Մեսրոբայ. եւ արարին ի միասին գիր ազգին այնմ ըստ խեցրեկագոյն լեզուի նոցա : Եւ զմնացեալ կուսպաշտութիւնն սրբեաց, և աստուածային վարդապետութեամբն լուսուորեաց

զաշխարհն կրկին անգամ. եւ եթող զՔենիամին անդ ի վերայ Թարգմանութեան և դպրոցաց մանկ տւոյն . եւ ինքն Անանիա կամեցաւ անդրէն դառնալ :

Իսկ Թագաւորն Եսփաղէն Աղվանից, որ էր առաջին Շապուհի Արտաշէրեան՝ Պարսից Թագաւորի, Թոռն բուեր, պատիւ արարեալ նմա, երախտահար տոյց լինի, և պարգևէ զիւր նշանակն Թագաւորական ոսկէտուտն վառիւ և ի գլուխն գունդ ոսկի . և ի վերայ խաչ պատուական : Եւ հրամայէ զայն հանապազ չրջեցուցանել ընդ իւրեանս եպիսկոպոսացն Սիւնեաց ի յիշատակ Թագաւորացն Աղվանից : Ահա զայս ցուցանէ մեզ սուգ ինչ Մովսէս քերթողահայրն, եւ զբովանդակն ճգրիտ՝ աշակերտ նորին Պետրոս՝ եպիսկոպոս Սիւնեաց : Այս Անանիա, ի հասանել նեղութեանն ի Յագիերտէ ի վերայ բահանայից եւ ի իշխանացն Հայոց, էր ընդ նոսա : Սա յետոյ գնաց ի Ժողովն Շահապիվանի, ուր էր Յովհան Մանդակունին . եւ արարին կանոնս եկեղեցւոյ : Ապետալ սա յաթու մետրապօլտութեան Սիւնեաց որ պոօսո Փրօնտէս Հայոց մեծաց, ամն 22 . եւ կատարի ի Քրիստոս :



**ԺԷ.** — **Գործ տեսրի և վատ իշխանիև Սիւնեաց վա-**  
**սակայ . և պատճառ ետրիև կորստեան :**

Աւա՛զ բանիս և եղու՛կ է սկսմանս, զի ոչ խնդամը-  
տարար ինչ կամիմ՝ ճառել վէպս, այլ լի երկամբք և  
սգով, յոգնահոծ եւ թանձրատարաւի մթացեալ ող-  
բովք . քանզի բարձաւ պսակն ոճոյ մերոյ, և պակա-  
սեաց թագաւորութիւնն ի ցեղէն Արշակունեաց, և  
քահանայապետութիւնն ի ցեղէն սրբոյն Գրիգորի .  
եւ քայքայեալ խանգարեցաւ ամենայն կարգ իշխա-  
նաւորութեանց . ի յիսխուտ դարձաւ բարին . եւ  
տեղի ետ խաղաղութիւնն . եկն խռովութիւնն . եւ  
թագաւորեաց չարն :

Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց որ էր  
վերջին Արտաշէս, եկաց մարդպան ի տեղի Ար-  
տաշիսի վեհ Միհր-Շապուհ ամն 13 : Իսկ սրբոյն  
Թահակայ խնդրեալ ի Վռամ-Շապուհ՝ կացուցանէ  
զթոռն իւր զՎարդան՝ որդի Համազասպայ, տալ-  
բապետ Հայոց . եւ ինքն վճարեալ յաստեացս փոխի  
ի կարգո հրեշտակայ : Իսկ յետ վեհ Միհր-Շապուհոյ  
մարդպանութեան կացուցանեն ի տեղի նորա զՎա-  
սակ՝ Սիւնեաց տէր, մարդպան Հայոց : Եւ էր Վա-  
սակ մարդպան, եւ Վարդան Մամիկոնեան՝ սպա-  
րապետ Հայոց : Իսկ յետ Վռամ-Շապուհոյ թագա-

ւորէ Պարսից Յազկերտ ամս 19 (27) : Եւ էր Յագ-  
կերտի հազարապետ մի յոյժ խորհրդագէտ Միհր-  
Ներսէհ անուն. և կայր յԱտրպատական աշխարհի,  
յոյժ չարահնար եւ մեքենաւոր բարուք. եւ ի վա-  
ղուց հետէ կամէր հնարս գտանել առ ի բառնալ եւ  
չիջուցանել զքրիստոսեան աւետարանն : Եւ Վասակ  
էր շքեղ եւ բարձր ի մէջ աշխարհիս Հայոց . եւ յոյժ  
մեծարգոյ եւ երևելի ի դրան արքունի . եւ ունէր  
երկուս որդիս՝ Բաբիկ եւ Ատր-Ներսէհ անուն, եւ  
գաւտոր մի, որում փեսայացուցեալ էր զՎարագ-  
Վաղան, ի նոյն տոհմէ Ախականացն : Որ և սատա-  
նայական արկածիւ անկաւ ատելութիւն ի մէջ նոցա,  
եւ ատէր Վարագ-Վաղան զկին իւր : Վասն որոյ  
մախացեալ Վասակայ՝ կամէր սպանմամբ խնդրել  
զվրէժ քինուն. զոր եւ իմացեալ նորա՝ փախտեայ  
անկանի առ Միհր-Ներսէհ. եւ վասն չար եւ սաստիկ  
նախանձուն առ ի հաճել զկամս նորա ելանէ յաստ-  
ուածադրոջմ ուխտէ քրիստոնէ ութեան և երկիր պա-  
գանէ կրակի եւ արեգական . եւ հանապազ գրգռէր  
զՄիհր-Ներսէհ՝ հազարապետ արքայի, ի վերայ  
Հայոց զի թերևս լցուացէ զխորհուրդ իւր չար քինուն  
որ ընդ Վասակայ :

Իսկ Միհր-Ներսէհ մատուցեալ զսա առաջի Յազ-  
կերտի. և ծանուցանէ նմա զխորհուրդ նորին. և նա  
մեծարեալ զՎարագ-Վաղան յաստուածոց իմն հա-

մտորեցաւ զպատահումն զայն . և խորհէ ընդ մովպե-  
տան մովպետն և ընդ այլ աւագանին դարձուցանել  
զաշխարհս Հայոց ի կրօնս իւրեանց . (ընդ որ) հաճե-  
ցան ամենեքեան : Եւ հրամայեաց Թագաւորն հրօ-  
վարտակս գրել առ իշխանսն Հայոց, եւ ընդ նմին  
ատրու շանս եւ փուշտիպանս եւ քուրմս առաքեալ ի  
ձեռն մեծամեծաց իւրոց . որք եկեալ հասեալ յաշ-  
խարհս Հայոց՝ մատուցին զնամակն մեծամեծ նա-  
խարարացն . որոց լուեալ՝ սուգ անհնարին պատեաց  
զամենեսեան : Եւ փութանակի ժողովեալ ղեպիս-  
կոպոսունս եւ զվանականս աշխարհին ի մի վայր եւ  
զսեպուհս եւ զաւագ տանուտեարս, որոց զլուիս ժո-  
ղովոյն Յովսէփ որ եկաց զինի սրբոյն Սահակայ  
տեղապահ աթոռոյն, եւ Անանիա՝ եպիսկոպոս Սիւ-  
նեաց, եւ Ղեւոնդ երէց, եւ խորհեալք ի միասին՝  
գրեն պատասխանի յոյժ բիրտ և պինտ վասն օրի-  
նաց իւրեանց առ Թագաւորն : Եւ դարձեալ անդ-  
րէն ղեսպանացն՝ մատուցին զպատասխանին ար-  
քայի : Ընդ որ յոյժ ցասուցեալ ահագին եռանդ-  
մամբ սրտին իբրև օձ Թաւաղզոր լինէր . եւ փութա-  
նակի հրաւիրակս հանեալ կոչէր զամենեսեան ի  
կամաց եւ յակամայ զիշխանսն Հայոց . եւ տայր  
ածել զառաջեաւ . և ի մէջ մեծ ատենին սաստիւ հար-  
ցեալ զնոսա՝ ընտրել զմի յերկուցն՝ կամ ապրել և  
յանձն առնուլ զօրէնս մոգութեան, եւ կամ զար-

միւք եւ զաւակօք մեռանել խալառ : Որոյ առ ժա-  
մայն ոչ ինչ պատասխանեալ՝ ելեալ արտաքս խորհե-  
ցան . և ընտրեցին առ ժամ մի վերին երեսօք յանձն  
առնուլ զհրամանս արքունի, եւ երթալ յաշխարհն  
իւրեանց եւ հնարել պատերազմաւ եւ կամ սիրով  
զփրկութիւն աշխարհիս եւ զգիւտ անձանց . զոր եւ  
արարին իսկ . եւ մեծաւ պարզեօք արձակեցան  
յաշխարհն իւրեանց ածեալ ընդ ինքեանս ատրու-  
չանս եւ վարդապետս օրինաց :

Բայց կասկածեալ թագաւորին եթէ խաբիցի,  
պատանդ առեալ զդէտաշին Վրայ զԱշուշա և գեր-  
կու որդիսն Վասակայ՝ զԲարիկ և զԱտր-Ներսէհ :  
Իսկ իշխանքն Հայոց նախ ուխտեալ էին միմեանց  
և աւետարանին երդամբ կնքեալ զգիր ուխտին՝ մի  
միարանութեամբ կեալ եւ մեռանել ի վերայ քրիս-  
տոնէական հաւատոյն : Որք եկեալ, հասեալ յաշ-  
խարհ իւրեանց, ի գաւառն Սրարատու՝ երևեցուցին  
զծածուկ ուխտ պայմանին . և զոմանս ի մոգուցն  
սպանին և զայլն փախուցին . և զկրակն ցրուեալ  
արկին ի ջուր : Ընդ որ խոժոռեալ Վասակայ՝ վա-  
րանէր ի մեծիտրումութեան, մի՛ զիրօց ծնողութեանն  
ջեռոյց զփորոտիս նորա վասն որդւոցն որ կային  
անդ ի պատանդի . և խեղայնորեալ ափշեցուցին զնա .  
եւ մի՛ զի երկիւղ թշնամւոյն Վարազ-Վազանայ, որ  
կայր սռ արքայի, եւ սպասէր Վասակայ մահու . եւ  
Հատ . Ա :



մի՛ ղի գրկուամն մեծ եւ երևելի փառացն եւ հայրենի տէրութեանն : Յայսց երից անհնարին տարակուսանայ տազնապեալ խուճապէր միշտ . եւ ոչ ունէր քուն ի գիշերի կամ հանգիստ ի տունջեան : Եւ զի սահման է մարմնոյ ի կենցաղումս հանապաղ սխալիչ եւ գթիչ . սակս որոյ և սա սխալեաց յերդումն սուրբ աւետարանին . և զայս համարձակիմ ասել եթէ միով բանիւ զմեզայ էր իոստովանեալ ի վերջոյ . ոչ էր թողեալ զնա ի կորուստ անսահման գթութիւնն Աստուծոյ : Բայց այս ծնունդ էր չար յուսահատութեան, զորոյ զորպէսն ի դատաստանին Աստուած միայն գիտէ եւ ո՛չ այլ ոք :

Արդ սակս այսր պատճառի խարեալ ի չար դիւէն՝ ապաշխարութեան յուսով օտեաց ուխտին առ ժամ մի (զի) թերևս զերծուացէ յեկեալ, հասեալ չարէն զորդիան իւր եւ զինքն : Եւ յղեալ զՎարդան զօրօքն Հայոց ի պատերազմ յԱղվանս առ Պարսիկքն որ եկեալ էին անդ . և ինքն ծանուցանէ զխորհուրդ իւր միամտութեան, որպէս թէ հաւատ պահելով թագաւորին, Միհր-Ներսէհի հաղարապետի ի ձեռն նամակաց, նա եւ զօրազլխացն Պարսից որ յԱղվանս . զայս ևս օրէն համարելով որպէս ասէ աստուածային գիրք հնազանդ լերուք մարմնաւոր տէրանց որպէս Աստուծոյ : Եւ ապստամբեալ սա ի Վարդանայ եւ ի Կամսարականացն և յայլ ազատացն որ ընդ նոսա՝

այլովք իշխանօք Հայոց՝ իշխանաւան Բազրատունի Տիրոցաւ, Խորխոռունի Գաղիշոյիւ, Վահեւունի Գիւտիւ՝ Պալունի Վարազ-Շապուհիւ, Գարեղենի Արտէնիւ, Ուրծայ Ներսէհիւ և այլովք բազում ոստիկանօք եւ սեպհօք տանց և տոհմից, որք երկուցեալք յակէ Պարսիցն՝ կամեցան շնորհուկս առնել Թազաւորին. և զամենայն բերդս եւ ամրոցս Հայոց ընդ իւրեանց ձեռամբ արարին. եւ զամենայն մանկունս Մամիկոնեան տոհմին և Կամսարականացն և այլ ազատացն ետ ածել Վասակ առ ինքն և ամրացոյց յանառիկ ամուրս աշխարհիս Սիւնեաց : Եւ մինչ այս այսպէս եղև, ապա լուեալ Վարդանայ զդառն գոյժ մահարար բօթին. եւ մեծաւ յաղթութեամբ եկեալ ի պատերազմէն որ առ Աղվանս. այլովք ազատօքն խորհէին ի միասին զաւուրս բազումս հնարս ինչ : Եւ մինչ Թափեցան յամենայն յուսոյ՝ զմահ ընտրեցին լաւ քան զկեանս. եւ անցեալ յԱրտազ գաւառ. յետ ամսօրեայ աւուրց եղև խմբումն մեծ պատերազմին յորում պսակեցաւ սուրբն Վարդան այլովք ընկերօք. զոր լուեալ զայս Յազկերտի՝ ի մեծի եւ յանհնարին սուգ դառնութեան վարանէր :

Իսկ Վասակայ հաւատարիմ եւ մեծավաստակ զինքն համարեալ՝ առեալ զկալանաւոր մանկունսն և զսուրբ քահանայսն՝ խաղաց, զնայ ի դուռն արքունի, յորում ատեան մեծ լինէր եւ հարց եւ փորձ

Ֆալանսաւորացն ընդ Վասակայ : Եւ ամենայնիւ պարտեալ եւ յիմարեալ լինէր անօրէնն Վասակ . և ըստ արժանաժառանգ իւրոյ թոշակին առնոյր զփոխարէնն : Եւ ի նմին դրան ի դիպահոջ կացեալ լինի մինչև անդէն առնու զվախճան, զորոց եւ զորպէսն լիով պատմեն քեզ Եղիշէ եւ Ղազար Փարպեցի : Իսկ զիշխանութիւնն Սիւնեաց առնու ուրացօղն Վարազ-Վազան, որ էր դիւարախ, և յետոյ ի դիւէն խեղդամահ եղև : Եւ յետ նորա նոյն չարութեամբն անհեղեղ հսկայն Գղբէհոն որ անպարտելի էր զօրութեամբ և միշտ պատերազմէր ընդ մնացորդս Հայոց, զոր և Վահան՝ եղբորորդի Վարդանայ, վերին օգնութեամբ հարեալ սատակեաց ի պատերազմի դրուրդն ահագին զԳղբէհոն ի գաւառին Շիրակայ մերձ ի դիւղն որ Բշտէ անուանի : Եւ ծառայից իւրոց թափեալ զփոր նորա՝ պատեցին եղեգամբ եւ բերեալ եղին ընդ հարս իւրեանց ի դամբանի :



ԺԷ. — Վկայութիւն սուրբ եւ փառաւորեաց սեպուհին Սիւնի, երանեւոյն Ազդրայ, որ ի ձեռաց Մինրանայ ի մէջ Պարսից հանդիսին :

Լաւագոյն և խրախալի թուի ինձ այժմոցս վիպա-

բանութիւն քան գերասացեալդ . զի թէ միով իւր  
պարտեալք ամաչեցաք և կորագլուխ եղաք վասն  
ամօթալի գործոց իշխանացն Սիւնի . սակայն միւ-  
սովս բարձր ի գլուխ պարծիմք . եւ իբր պսակ զար-  
մանահիւս ի գաղաթ մեր եղեալ՝ բժշկիմք յառաջին  
խոցուածոց . եւ համարձակ չքեղութեամբ պերճա-  
պանոյճ պայծառանամք : Քանզի թէպէտ ցցուեալ  
ոստոց Սիսական տոհմին՝ երբեմն փուշ եւ դժնիկ  
ընծայեցին մեզ . այժմ ահա վարդ եւ շուշան անու-  
շահոտ եւ պտուղ գեղեցիկ եւ քաղցրահամ մատու-  
ցին մեզ . յորմէ հոտոտեցաւ Տէր ի հոտ անուշից :

Արդ թէպէտև տեսարքն երևելի Սիսական պե-  
տութեանս պատրեալք ի հին խաբողէն՝ հետևեցան  
կամաց թագաւորին . եւ առին ժառանգութիւն  
զգիտոս աշխարհականս, զառօրեսոյս եւ զեղծական .  
սակայն ոմանք ի նոցանէ եղբարք ըստ մարմնոց և  
արեանառուք իմաստնացան զվերին իմաստութիւնն  
եւ լուսով հաւատոյն ոչ գնացին ընդ մոլոր շաւիղն  
օր հայի ի վիհն կորստեան . այլ հրաժարեալք յամե-  
նայն աշխարհական իրաց՝ թողին գիտոս եւ զմե-  
ծութիւն . և գնացին զհետ երանաւէտ ձայնին, որոց  
անուանքն Բաբգէն եւ Բակուր եւ Ազդ : Սոքա  
եղեալք ի գնդէն Սիւնեաց գնացին զհետ ուխտա-  
պահացն Հայոց, որոց գլուխ եւ սպարապետ էր  
երանելին եւ քաջն Վահան Մամիկոնեան՝ եղբոր .

որդի Վարդանայ : Եւ ի բազում պատերազմունս մեծամեծ բաջութիւնս ցուցանէին : Իսկ ի գաղն Միհրանայ բազում, զօրու ի Վիրս պատերազմել ընդ Վախթանկայ՝ թագաւորին Վրաց, գնաց եւ Վահան Հայոց զօրօքն յօգնութիւն Վախթանկայ՝ զի ուխտակիցք էին միմեանց : Եւ իջեալ ի դաշտն Ճարմանու մերձ Գուբ գետոյն՝ ճակատեցան ընդ Պարսիցն եւ գամ մի յաղթեցին :

Իսկ Վրաց երկուցեալ իրազմութենէ Պարսկացն՝ ի փոխուստ գարձան : Եւ Վահան՝ զայս իմացեալ դարձաւ անդրէն իւր գնդաւն, յորում տեղւոջ էառ զնահատակութիւն Վասակ՝ կրսեր եղբայր Վահանայ : Իսկ Միհրան զհետ մտեալ զօրացն՝ կալաւ զՀրահատ Կամարական՝ եղբայր Ներսէհի Շիրակայ տեառն, այսու պատճառաւ զի երիվար նորա վազս առեալ սաստիկ՝ ընկէց զնա . ապա և սնդեալ զկնի կալան և զգովելի սեպուհն Սիւնի զԱզգ. եւ մեծապէս խրախացեալ Միհրանայ՝ դարձաւ անդրէն . իսկ Վահան գտանէ զԲարգէն՝ Սիւնեաց պայազատ, կարեվէր խոցեալ եւ անկեալ ի տեղի մի, հեծուցանէ զնա յերիվարն . եւ հանեալ անտի ապրեցուցանէ, որ եւ վասն խոցուածոյն այլ ոչ շրջեցաւ ընդ Վահանայ . այլ անց,՝ գնաց յանբոյթ տեղիս :

Այլ պիտօն Միհրան առեալ զերկու սեպուհան

չրջեցուցանէր ընդ ինքեան, եւ հետամուտ լինէր  
Վահանայ . եւ զնոսա օր ըստ օրէ զառաջեաւ ածեալ  
կապանօք՝ դառն տանջանօք նախատէր և չարչարէր  
եւ հնարէր դարձուցանել յիւր կրօնս . յորմէ անե-  
րևոյթ օգնութեամբ ազատեալ լինէր Ամասարականն  
Հրահատ . վասն որոյ սաստկապէս զչարեալ Միհրա-  
նայ՝ դարձեալ և երկուցեալ (թէ) մի գուցէ նոյնգո-  
նակ եւ Սիւնին Ազգ զերծցի՝ հրամայէ զորոճն ան-  
մեզ եւ զգառն տարևոր զառաջեաւ ածել զի լիցի  
պատարագ անուշահոտ Տեառն իւրոյ : Եւ զի առա-  
ւելապէս գրգռեալ լինէր սա յանօրէն եւ ի կայենա-  
տիպ եղբորէն Ազգայ ի Գղեհոնէ՝ Սիւնեաց տեառ-  
նէ . եւ սակս այսր սաստիկ դրդեալ լինէր բռնաւորն  
ի ցասումն : Խօսել սկսանի ընդ Ազգայ մեծամեծ  
պատուհասիւ . և ահարկու խրոխտմամբ հնարէր զա-  
նաղան հեթեթանօք խախտել ի քրիստոսական հա-  
ւատոյն . եւ ընդ պատժոյն խոստանայր եւ սարգևս  
մեծամեծս՝ եթէ արասցէ զկամս նորա . իսկ երանելին  
այն լուռ միայն ունկն դնէր բանից նորա . և ապա  
հրաշաղիտակ տեսական յերկինս հայեցեալ առ  
անձկալին իւր՝ կոչէր զնա յօգնականութիւն . եւ  
պնդեալ զսիրտն և զմէջն անճառելի յուսովն՝ պա-  
տասխանի տայ Միհրանայ եւ ասէ « Թէ զժամանա-  
կեայ կեանս մարմնոյ եթէ վաճառէր ոք, եւ հնար էր  
ինձ զնել և կեալ, յաղագս ցաւոյ մարմնոյս և սիրոյ

կենցաղոյս տայի արդեօք զամենայն ինչ զոր ունէի, եւ դնէի . բայց զյաւիտենից պատուհասն եւ զանշէջ գեհենին զսպառնաղիսն դնել ընդ կարասւոյ յոյժ անմտութիւն է, մանաւանդ զի և անյայտ է երևումն վաճառոյն, քանզի ո՛չ որ զիտէ զկեալն իւր զհեռին և զմօտեալն . գուցէ զնեաղ խնդայցէ, եւ ի վաղիւն վախճանեալ յուղարկեացի ի խաւարն արտաքին : Այլ զայդպիսի աղտեղի եւ կորստական վաճառ թէ սիրեցեալ էր իմ՝ ընդէ՞ր այժմ՝ զնէի զզս վասն կելոյ . այլ վաղ իսկ առնուի հանդերձ փառօք եւ մեծամեծ պարգևօք . այլ զայս ընտրեցի յորում եմս, և զսոյն համարեալ լաւ եւ սլատուական՝ ուրախ եմ եւ խնդամ մեռանել վասն Քրիստոսի, քան թէ զհաղարս ամաց կեալ մեծամեծաց փառօք յուրացութեան, եւ անվախճան պատուհասին լինել ժառանգորդ » :

Եւ լուեալ զայսպիսի բանս անօրէն Պարսկացն ի սրբոյն յԱզդայ՝ իբր զանգառագեղ զազան յարձակեցան ի վերայ, և կամէին կենդանւոյն հաղորդիլ ամենեքեան յարիւն նորա : Եւ առեալ սպանողացն տարան մերձ մատրանն սուրբ եւ առաքելաման նահատակին Պրիգորի, ի գեօղն որ կոչի Բագաւան, ի գաւառին Վաղարշակերտու, ի նահանգին Բագրևանդայ, ի լանջակողման լերինն որ կոչի Նպատ՝ մօտ ի սուրբ տեղի մատրանն իբրև երկու քարընկէ-

յօք : Եւ անդէն Հատին զսուրբ գլուխն, զոր բարձեալ քրիստոնէիցն տարեալ Հանգուցին ի սուրբ մատրանն Գրիգորի : Կատարեցաւ սուրբ սեպուհն Սիւնի՝ երանելի նահատակն Ազդ, յամենանն Հոռի, որ օր վեց և տասն էր ամսոյն . յորոյ վերայ եղեն նշանք մեծաւ մեծք, և լինին բժշկութիւնք ամենայն ախտածէտաց . որ է բարեխօս վասն մեր և աշխարհիս այս առ Քրիստոս, որում վառք յաւիտեանս :



ԺԹ. — Վասն Վիսպիցն որ կան ի հանգստի ի Վայոց ձոր գաւառի ստո եւ անդ . եւ վասն Վիսպարանին որ շինեցաւ ի գետամիջին Եղեգեաց եւ Մոզանի մերձ բլրին ուր անրոցն էր :

Յետ աւերման աշխարհիս Հայոց, և կատարածի սրբոյ Վարդանանց՝ զամս 23 ոչ դադարեաց սուրն պարսկական ի ճարակելոյ զսեռս արամեան : Քանզի յետ Յազկերտի Թագաւորեաց անիծեալ արեանարբուն Պերող (28) 22 ամ . եւ խտացոյց զանողորմ կոտորումն եւ դերումն, այրումն եւ քանդումն աշխարհիս Հայոց : Իսկ ի սատակիլն նորա ի Հեւթաղացոյ (29) Թագաւորէն և ի բնաջինջ լինելն տամբ և զաւակօք, ապա Թագաւորէ Պարթից խաղաղաւէրն Հատ . Ա. :



Վաղարշ (30) . որ եւ յառաջին ամին իւրոյ տէրու թեանն արար հաշտութիւն ընդ Վահանայ եւ այլ նախարարաց Հայոց . եւ եղին զնա մարզպան աշխարհիս . և կնքեցին ուխտ երդման և հաստատեցին գիտազաղութիւն ընդ Հայս :

Ապա յետ սրբոյն Վարդանայ շրջին ընդ ամենայն տեղիս զօրն Պարսից . ոմանք զկնի փախստէիցն, ոմանք ի վերայ բերդից և ամրոցաց . և ջանային և խնդրէին ի սպառ ի սպուռ ջնջել և արմատախիղ առնել զսոց Հայոց : Սուրն վաղակաւոր կայր մերկացեալ ի վերայ ամենայն հայ գինուորի, և միայն խնդրէին բանիւ միով ուրանալ զՔրիստոս . և գլուխ կորացոյցանել արեգական . և թէ ոչ՝ մեռանել առ ժամայն : Վասն որոյ լի եղեն վկայիւք ամենայն առապարք եւ խորածորք, հովիտք եւ ըլուրք աշխարհիս Հայոց . եւ իբր զկանառս աստեղաց, որ ի մէջ գիշերի փայլեն թանձրախիտ ընդ երեսս երկրիս : Արպէս եւ աստ է տեսանել յաշխարհիս Սիսական ի գաւառս Վայոց ձորոյ . ուր եկեալ ի զօրացն Հայոց փախստեայ կամէին անցանել յամուր աշխարհն Արձախայ . որոց զկնի պնդեալ անիծեալ Աթաշխուդային չարահնար զօրօքն Պարսից . և հասեալ ի գաւառամէջն Վայոց ձորոյ մերձ ի բլուրն որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն ամրութեան ի գետաժիջին Եղեգեաց եւ Մոզանի . եւ մատուցեալ եղին արեան ճապաղիս . եւ

կոտորեցին զրազուան եւ գեղեցիկս որ էր յազատ տոհմէ Հայոց վասն անուանն Քրիստոսի : Յորոց վերայ եղեն նշանք զարմանալիք ի վերուստ : Եւ ինքեանք պնդեցան զհետ այլոցն . և հասեալ կիսոց յստորոտ բերլաբարի միոց ի նեզ ձորակի անդ՝ կոտորեցին, որոց գլխաւորին անուն Մարտիրէ . որ և տեղն կոչեցաւ Անգեղձոր : Եւ անդ ասպատակ եղեալ հասին եւ 300 արանց ի ջրկիցն որ Ոստինք կոչի եւ Արտաբայնք . և անդ զնոսա խողխողեցին . որոց վերայ յետոյ շինեցաւ եկեղեցի ի բնակչաց տեղեացն :

Եւ անտի սակաւ մի անցեալ Պարսկացն ի ձորադուռն որ ի ձախ կողմանէ որ հայի ի վեր յուխտն սուրբ Յաղապար կոչեցեալ, որ ի վերայ բարձրաւանդակին ի մէջ սահմանաց երկուց գեղջն, որ վերոց ասացաք . և անդ կոտորեալ յոյժ բազմութիւնք սեպուհ արանց և ընտիր զօրաց : Եւ ինքեանք եկեալ ի շինամէջն բնակեցան խորանօք՝ լքեալք եւ վաստակեալք ի կոտորածէն, կամեցան գիշերօթ առնել : Իսկ ի մէջ գիշերին սլարսիկ մի, որ էր գուշակ զօրացն, տեսանէր զերկինս բացեալ և լոյս սաստիկ հեղեալ ի վերայ սպանելոցն, եւ կառք մի ոսկեղէն բարձր յոյժ, յորոյ վերայ նստէր կին մի ծիրանազգեստ թագաւորակերպ, եւ ամբոխք ահագին զօրաց լուսեղինաց շուրջ զնովսա : Եւ նա հայէր ի վերայ կոտորածին, և լայր ողբով, և մի մի գգուէր ի նոցանէ : Իսկ սլար-

սիկն այն զարհուրեալ կամեցաւ ազդ առնել զօրացն,  
և կապեցան ոտքն և լեզուն . ապա մերձենայր ի նա  
մի ի սրբոց զօրացն : Եւ նա հարցանէր « ո՞վ է այդ » .  
ասէ հրեշտակն « այդ մայրն է երկնաւոր Թագաւո-  
րին . եւ իջեալ էառ զվկայսն եւ սիրելիսն որդւոյն  
իւրոյ . եւ մի մի կամի փառաւորել զնոսա » : Ապեալ  
տեսլեանն մինչև յառաւօտն և աներևոյթ լինէր :

Իսկ ի լուսանալ առաւօտուն կամեցան զօրքն  
զնալ ի տեղւոյն . եւ գտին զայրն Թալացեալ , ան-  
կեալ . և հարցանէին ցնա զպատճառն . և նա այլ ինչ  
ոչ կարէր պատասխանել . միայն մատամբն ցուցանէր  
և լեզուաւ ասէր « մայր անդ այ , մայր անդ այ » վասն  
որոյ և անուն տեղւոյն մինչև ցայժմ՝ Մարանդ կոչի :  
Եւ զնացեալ պարսիկն այն անկեալ զսրբովքն եւ  
բժշկեալ ինքն լինէր քրիստոնեայ . եւ զամենայն  
աւուրս իւր սպասաւորէր սրբոցն . որ եւ յետոյ եր-  
թեալ քրիստոնէիցն՝ ամիոփեցին զսուրբսն . և շինե-  
ցին մատուռն ի վերայ : Իսկ զառաջին սուրբսն , որ  
կատարեցան առ բլրան , ի ժամուն ամիոփեցին  
ոմանք քրիստոնեայք : Եւ յայնժամ կաթողիկոսն  
երանելին Գիւտ , զոր լուեալ հրամայէր շինել վկայա-  
րան մեծ ի վերայ սրբոցն : Եւ ժողովեալ զոսկերսն  
նոցա ի վկայարան . ապա ձեռն ի գործ արկեալ Յրև  
և Շահիրէտ եւ Սրչէն երէց եւ Սբդիու՝ հիմն արկին  
սրբոց կաթողիկէին յիններորդ ամի Գիւտոյ երա-

ներոյ՝ Հայոց կաթողիկոսի, յամարան ամամտին, որ  
օր Հինգ էր ամսոյն : Եւ կատարեալ զնա մեծածախ  
զանձիւք կանգնեցին ճեմարան իմն երկնանման  
հրաշաքարտար շինուածովք երկազմբէթս և եռախո-  
րանս . եւ յերկուց կողմանէ գաւիթս եւ սրահակս,  
վերնատունս սեամբք և սքանչելի յօրինուածովք շի-  
նեալ : Եւ վայրն ամենայն ի մեծ գետոյն մինչ ի վեր  
ի լեռնակողմն որ Սրկղօնք կոչի, ընծայեցաւ ի Ժա-  
ռանգութիւն սուրբ եկեղեցւոյն պաշտօնէիցն :

Իսկ ի կատարման գործոյն զան երանելի կաթողի-  
կոսն Գիւտ եւ Անանիա՝ Սիւնեաց եպիսկոպոս, եւ  
բաղմամբոխ ժողովով փոխեն ի հանգիստ զսուրբան,  
և առնեն նառակատիս սուրբ եկեղեցւոյն 8 օր ի  
փառս Քրիստոսի Աստուծոյն մերոյ օրհնելոյն յաւի-  
տեանս : Բայց այժմ՝ յետ աւերման տեղոյն եղև շի-  
նանիստ գեղջկաց, և կոչեցաւ տեղին Խոտորալեզ :  
Եւ ահա՛ զայս ամենայն ծանեաք յիւրոց արձանագը-  
րութեանցն, և այն՝ էր որ ի գրոց, և էր որ ի տեղեացն  
և ի վկայիցն և յանուախցն և ի հաւաստի աւանդու-  
թեանց հնոցն ծանեաք . եւ տեղեկացեալ ամենայնի-  
ստուգիւ՝ աւանդեցաք ձեզ :



Ի. — Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց որ յաշորդե-  
ցին զկնի Անանիայի . եւ վասն Տեառն Երիցակայ  
աքանչեյի օժմանն :

Յետ աստուածարեալ եւ սուրբ եպիսկոպոսին  
Սիւնեաց Տեառն Անանիայի յաջորդէ զաթոռն Տէր  
Նուն՝ այր բարի եւ լաւ, ամն 8. և յետ նորա Գաղատ՝  
ամն 17 : Եւ յետ սորա Մուշէ՝ ամն 36 : Եւ ապա  
բռնարարեալ զսուրբ Հայրն Երիցակ Երիցուվանից  
մեծ էզոնոմոս (30), խարազնազգեսա և խստակրօն  
ճգնատր, բերեալ կացուցանեն եպիսկոպոս Սիւ-  
նեաց. որ և եկաց ամ մի, զորոյ զորպէսն և զգիարդն  
ասելի է սահաւուք : Յամն Կալատայ՝ արքայի  
Պարսից, ի մարզպանութեանն Հայոց Վահանայ  
Մամիկոնենոյ, եւ ի Հայրապետութեան Տեառն  
Մուշէի կաթողիկոսի վախճանի երանելի եպիսկո-  
պոսն Սիւնեաց Մուշէ կայեալ զաթոռն ամն 36 :  
Եւ զի պակասեալ էր իշխանն Սիւնի . եւ էր նորա  
կէն մի մեծաւաստ, լի պմենայն բարեպաշտու-  
թեամբ Սահակիա անուն . եւ ոչ ունէին տեսուչ  
հոգւոյ : Յայնժամ բողոք բարձեալ ամենայն ազատաց  
եւ տանուտերաց եւ քահանայից աւագաց աշխարհին  
առ մեծ բարեպաշտուհին Սահակիա . եւ խնդրէին  
իւրեանց առաջնորդ :

Իսկ նորա պատրաստեալ դեսպանս ի մեծ և ի պատ-

ուսուոր արանց և յընտիր քահանայից՝ բազում ընծա-  
յիւք և պիտանի պատարագօք յուղարկէ՝ առ սուրբ  
կաթողիկոսն Հայոց Մուշէ . եւ թախանձեցուցանէ  
զնա գալ յաշխարհ իւր և ընտրել արժանաւոր այր և  
կացուցանել յաթոռ մետրասօլտո՝ թեան Սիւնեաց :  
Եւ նորա տիրաբար խոնարհեալ գթալով ի հօտն իւր՝  
օչ ինչ վերջացաւ ի գալոյն . այլ պատրաստել հրա-  
մայեաց ըստ հայրապետական ճոխութեանն զճանա-  
պարհն՝ հեծեալ ի սպիտակ ջորուջ ոսկէզօծ թամբօր,  
եպիսկոպոսօք և բազմամրոխ պաշտօնէիւք զառաջեալ  
աւնելով զոսկիապիացի նշանն աստուածընկալ արե-  
գակնակերպ նշույիւք՝ ընթանային զճանապարհան  
տաղմոսիւք և քաղցրաձայն եղանակօք : Եւ այն ինչ  
հասանէին ի սահմանս Սիւնեաց, ի գաւառն Վայոց  
ձորոյ՝ տեսին երաշտացեալ ի բազում աւուրց եւ  
սղորմ տեսակաւ թարշամեալ ամենայն բոյսք : Ապա  
արտասուածոչ սրաղտոսանօք ձեռս ի վեր ամբարձեալ  
հայրապետին՝ խնդրէր ի Տեառնէ այցելութիւն, որ և  
ի ժամուն ցօղեաց Տէր զցօզ քաղցրութեան . եւ  
զաւուրս երիս զցայգ եւ զցերեկ ոչ դաղարեաց ի  
տեղալոյ . եւ ամենայն երկիրն զարմացեալ վառս ի  
վեր առաքէին մեծաւ գոհութեամբ :

Իսկ ի մերձենալն ի գահ իշխանաց ի Սիւնիս՝  
աւետատրքն առաջի ընթանային : Եւ ել տիկինն  
որդւով իւրով և ամենայն ազատագունդ հեծելովքն

եւ բազում ամբոխիւք քահանայիւք եւ տանուտէրօք ընդ առաջ կաթողիկոսին . եւ մեծաւ խնդութեամբ պատահեալք՝ իջանէին ամենեքեան ի վերայ ծնկաց եւ երկիր պագանէին . կէսք հետևակք կէսք հեծեալք ընթանային յաջմէ և յահեկէ . և մեծաձայն աղաղակաւ հնչէին, գոչէին զերգս օրհնութեան այնքան, մինչ լի լինէր փորակ գաւառին իբրև յորոտմանէ ամպոց : Եւ այնպէս փառաւորութեամբ տարեալ իջուցանէին ի խորանն արքունական . և նստուցանէին ի վերայ ոսկեթել և մարգարտաչար բազմականին, ի զահ իշխանացն, ի տեղին որ կոչի Աից վտակաց : Եւ անդ հանգուցեալ զաւուրս երիս՝ հրամայէ հայրապետն ժողովոյն ընտրել իւրեանց առաջնորդ զի ձեռնադրեսցէ : Ապա ամենայն բազմութիւն զաղաղակ բարձին ի մի բերան և ասեն « խնդրեմք մեք տեսուչ հոգւոց մերոց զհայր Երիցակ . եւ բաց ի նմանէ ո՛չ պիտի մեզ այլ ոք » : Հրամայէ հայրապետն պատրաստել երիվարս զի երթիցեն փութանակի ի վանս նորա . և իշխանին ասէ « դու գնաս պատճառաւ որսոց եւ պահեաս՝ զդրունս վանիցն զի մի իմացեալ եղեալ փախիցէ . և ընդունայն լիցի աշխատութիւնս մեր » :

Իսկ տիկինն Սահակիա ընծայէ նմա զվրանն արքունի ամենայն կահիւքն և բազմականօքն . և հեծուցանէ զնա յոսկիապատ կառս սպիտակ ջորուց . ընդ որում և ամենայն բազմութիւնն գրոհ տուեալ զնա

ցին զինի: Եւ այն ինչ հասեալք ի դուռն Երիցու վա-  
նիցն որ է ի Բաղք գաւառի որ Քաշունիք կոչի, եւ  
այժմ Բարկուշատ, կամեցաւ սուրբն Երիցակ իջա-  
նել պարանօք ընդ պարիսպն և փախչել. և ոչ թո-  
ղացուցին պահակքն: Եւ էր վանքն այն տեղի գեղեցիկ  
և զարմանատիպ ի վերայ բարձրաւանդակի միոջ շի-  
նեալ եկեղեցի յանուն սրբոյ Նախավկային նորին Ե-  
րիցակայ ձեռամբ, և պարսպեալ մեծամեծ քարամբք,  
եւ ի ներս ի պարսպին խցկունք թուով միայն 40.  
մշտնջենաւորք, խարաղնազգեստք, լուռք, որք իբր  
զկանթեղունս մշտաւլառս եւ անչէջս յիւրաքանչիւր  
խղի հանապազ տքնութեամբ վառեալք լինէին բոցով  
չնորհաց Հոգւոյն:

Իսկ Երիցակս այս սնեալ էր նախ բազում ամօք ի  
Բաղք գաւառի, ի տեղի մի քարանձաւ. և ապա զնա-  
ցեալ ի վանս երանելոյն Գիւտոյ. և անդ անցուցեալ  
բազում աւուրս անտանելի ճգնութեամբ. եւ ապա  
օժանդակութեամբ և հրամանաւ սրբոյն Տեառն Գիւ-  
տոյ եկեալ ի տեղին յայն երկոտասան կրօնաւորօք եւ  
բազում ընչիւք, զորս պարզեւեալ էր հայրն Գիւտ. շի-  
նեաց զեկեղեցին որ կոչեցաւ Նոր Երուսաղէմ: Բայց  
ուրուկքն որ ի ժամանակին հալածեալ լինէին յանվայր  
տեղիս, բնակեցուցեալ էր սուրբ հօրն Գիւտոյ յայնմ  
վայրի, որք հակառակէին շինութեան Երիցակայ  
զոր լուեալ սուրբ հօրն՝ եկն եւ համոզեաց զնոսս ի  
Հատ. Ա.:



խաղաղութիւն . եւ սահմանեաց զպէտա ընձեռել ի վանօպն ըստ չափոյ : Եւ ինքն օր ըստ օրէ գործակից լինէր շինուածոյն , և զճաշ շինողացն յղէր : Եւ այսպէս շինեալ տուն Աստուծոյ և կանգնեալ տեղի փառաբանութեան՝ յարդարէ զնա ի բնակութիւն հրեշտակակրօն արանց :

Իսկ երանելի Հայրապետն Մուշէ մտեալ ի վանան՝ ողջունէ զեկեղեցին , և բազմեալ յղէ պատգամաւոր զորդի այբւոյն ի Յովհաննու վանից յԱրագածոտանէ , որ էր սարկաւազապետ և դպիր Հայրապետին , նմանապէս եւ իշխանքն եւ այլ ժողովք , եւ ոչ կարացին հաւանեցուցանել զնա : Ապա երթեալ կաթողիկոսին առ Հայրն Երիցակ ի սրահ նորա , և լի սրտմըտութեամբ ցասուցեալ՝ կնքեաց նշանաւ խաչին եւ ասէ « ընդէ՞ր այդպէս յամառեալ կաս , դե գոյ ի քեզ , սաստեացէ՛ Աստուած ի չարն և հպածեացէ՛ » : Յայնժամ ընդ բան սրբոյն եւ ծուխ թանկն իբր գիոթորիկ հողմոյ և վերացաւ ի տանէն . և ապա եկեալ երամբ սպիտակ աղանեսաց իջան ի ցուս սրահին . եւ մին ի նոցանէ սլացեալ եկն իջաւ ի վերայ կաթողիկոսին . եւ վերացեալ ի նմանէ իջաւ ի վերայ Երիցակայ . եւ շրջէր ի վերայ խոշոր քուսիթային , և նուազ ձայնիւ խօսէր մարդկօրէն « արժան է , արժան է : Իսկ բազմութիւնն տեսեալ զայն՝ մեծապէս գոչէին միաբանն » արժան է , արժան է :

Չայն տեսեալ սուրբ Հայրն՝ այլ ոչ ինչ իշխեաց ընդդիմարանել . այլ ի գուճս անկեալ առաջի կաթողիկոսին արտասուածոր կականմամբ ասէր « կամք տեսառնդ լիցի եւ ո՛չ իմս » . ապա առեալ Տեառնն գձեռանէն տանի յեկեղեցին . եւ հանեալ ի բեմն օծանէ զնա մետրապօլիտ Սիւնեաց . և բերեալ նրս տուցանէ յաթոռն . և ինքն մեծարանօք և անչափելի շքեղութեամբ հրաժարեալ յամենեցունց՝ գնաց ի Հայրապետական աթոռն ի Պլին շահաստան բազում փառս եւ գոհութիւն Ամենատեառնն առաքելով : Իսկ երանելին Երիցակ կալեալ զաթոռն ամ մի՝ փոխի ի վերինն Երուսաղէմ, ուր ժողովք սրբոցն են, և քաղաքապետ նոցա՝ Յիսուս Քրիստոս Աստուած բուրից : Այլ և ասի զնմանէ բան աւանդութեամբ եթէ երթեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և յամեալ անդ մինչև յօր մեծի ճրագալուցին սրբոյ Յայտնութեանն, եւ ի դրան սուրբ այրին որ ի Բեղղեհէմ ի միտս ածեալ զսուրբ մենաստանն իւր եւ զեղբարսն՝ լայր դառնապէս ի սաստիկ կարօտոյն, եւ խնդրէր ինքն յայնմ ժամու լինել ընդ եղբարսն իւր . զոր իմացեալ կնոջ մի կախարդի գրեանթէ ի Հոգւոյն սրբոյ ազգմանէ հարցուկ լինէր . եւ ասէր ցհայրն « ասա ինձ վասն որո՞յ դառնապէս արտասուես » : Եւ նա յայտնեալ նմա զպատճառն . ապա հայցէր « ո՞վ սուրբդ Աստուծոյ՝ խնդրեալ ի Քրիստոսէ թողութիւն ան-

չափելի յանցանացս . եւ ես յայսմ ժամուս ցուցից  
քեզ զփափագելին քո :

Չայս լուեալ հօրն, և համարձակեալ ի փարթամ  
զթութիւն Աստուծոյ, նա և յանձկոյն բռնադատեալ՝  
յանձն առնու զխնդրելին : Եւ նորա կազմեալ անօթ  
ինչ լի ջրով . եւ նիւթեալ ըստ իւրում աղանդու-  
թեան՝ անցուցանէ զսուրբն ի վերայ նորա . որ եւ  
խկոյն գտաւ ի վանսն յԵրիցու առ դրան եկեղեցւոյն  
մինչ չև էր կատարեալ փրկական խորհուրդն : Ապա  
մինչ իմացաւ, ոչ երևեցոյց եղբարցն մինչ ժողովե-  
ցան ի սեղանն մարմնաւոր . և անգէն ծանօթութիւն  
տուեալ ողջունէր զամենեսեան, և զանհաւատալի  
բանսն պատմէր նոցա, և զնշանն զոր բերեալ էր՝  
ցուցանէր, այսինքն խաւարոսս եւ կանաչս, նարինջս  
եւ թուրինջս . եւ այնու հաւաստեցուցանէր զբանն :  
Իսկ յետ սեղանոյն յարուցեալ ընթացան ի դուռն  
եկեղեցւոյն, և զայն գիշեր հսկմամբ խնդրեցին զթու-  
ղութիւն կնոջն այն : Արում լուեալ մարդասէրն  
Աստուած՝ շնորհէ նմա թողութիւն . և յայտնէ տես-  
լեամբ սուրբ հօրն : Ար և այնպիսի մարդասիրու-  
թեանն ըրի րապատիկ օրհնութեամբ զոհութիւն եւ  
փառք այժմ և յանվախճան յաւիտեանսն :



**ԻԱ.** — Պատմութիւն հասնաօտ հօրն Գիւտոյ և Քրիստոսասիրիկն . և շինութիւն վանիցն որ յեզերն Երասխայ :

Որպէս գիւտոյ արար ինչ (մի) վարկցիս զառաջի եղեալս բան, և աւելախոյզ զիս ծանիցես . այլ պատշաճ և ի դէպ մերումս ձեռնարկութեան զի զՄիսական աշխարհի սկտաք ճառել զվէպս : Վասն որոյ հարկ է ամենայնիւ զեզեալսն ի սմա գործս եւ հրաշք ցուցանել ձեզ . որ եւ ո՛չ յայսչափ լաւագոյն իմն իր երևեալ եզեն յայսմ աշխարհի որպէս զայս զոր ասել սկսաք : Էր ի գաւառին Գողթան իշխան մի հաւատացեալ որում անուն էր Շաբիթայ . եւ էին նորա թոռունք երկու՝ որդիք որդւոյ նորա . որոց անուանք Վասակ և Շապուհ : Էարկ սատանայ աղմուկ և նախանձ մեծ ի մէջ նոցա վասն բաժնի ժառանգութեան հայրենեայ իւրեանց . և կոուէին ի վերայ գեղեցիկ գեղջն Որդուատայ : Եւ ի ճակատելն զօրօք ընդ միմեանս եհար Վասակ սրով զեղբայրն, և խողխողեաց մերձ ի մահ . և ապա զըջացեալ եղբայրական գթով՝ գնաց առ եղբայրն եւ անկաւ ի վերայ նորա եւ լայր սաստկագին, և աղիողորմ ողբով հառաչէր և ուխտադրէր Աստուծոյ, զի թէ բժշկեսցի եղբայրն՝ հրաժարեսցէ ինքն յամենայն աշխարհական իրաց . որ և բժշկեսաւ :

Յայնժամ ողորմեալ Ասասկ հոգւոյ իւրում՝ յեղա-  
կարծում ժամու անյայտ եղև ի միջոյ, և ծածկեցաւ  
յընտանեացն . եւ և գնաց ընդ կողմն Բաղայ : Եւ  
մինչ ի բարձրաւանդակ լերինն եհաս՝ յանձնեաց  
դինքն շնորհաց Հոգւոյն . եւ ի բերան առեալ զսաղ-  
մոսս զայս՝ ասէր անդադար « զճանապարհս իմ ուղի դ  
արա ինձ Տէր՝ ըստ բանի քում . և մի տիրեսցեն ինձ  
ամենայն մեղք » : Եւ անցեալ ընդ գաւառօքն յեզր  
գետոյն Աղաւնոյ, անդ վճարեալ զճմեռնային եղա-  
նակն՝ անց ընդ միւս վտակն ի կողմն բերդոյն ի գա-  
ւառն Քաշունիք որ այժմ՝ Բարկուշատ կոչի, յորձ  
բլրին զամս երեք և զամիսս վեց ի խղի միում : Եւ էր  
երկիրն այնվայր, աւերանի, լի անտառախիտ ծառօք .  
եւ ի ներքոյ՝ դաշտ անհուն լայնութեամբ մինչ յեզր  
Երասխայ : Իսկ ընտանիք նորա ոչ գիտելով (Թէ)  
ուր յափշտակեաց հոգին՝ դեսպանս ի Հայս և ի  
Հոռոմն և ի Պարսս հանէին, և անհնարին սղով ող-  
բային . և ոչ ինչ ծանեան զհետս նորա :

Ապա օր մի (իրբև) պարագէր սուրբ հայրն յերե-  
կոյեան աղօթիցն, և կամէր հանգչել՝ լսելի եղեն նմա  
ձայնք երգոց և խաղուց . յորմէ զայրացեալ ասէ « ոչ  
կարացի այնքան յախչել յաշխարհէ զի զձայնս նորա  
ոչ լսէի » : Ի նմին ժամու յարուցեալ զնայր ի տեղոյն .  
և անկեալ ի դաշտն առաջնորդութեամբ հրեշտակի  
գնաց մինչ ի ծագել արեգականն . եւ հասեալ յեզր

Երասխայ՝ եգիտ ձորակ մի եւ ի միջի՝ վէմ՝ մի մեծ եւ ի ներքոյ՝ քիւ փոքրիկ . անդ արարեալ զքնակու թիւն իւր զամս 10 : Եւ էր կերակուր նորա ունդք եւ պտուղք ծառոց զի երկիրն նման է Եգիպտոսի զամսուն եւ զձմեռն : Ապա ըստ բանին թէ՛ ոչ լուցանի ճրագ եւ դեի ընդ զբուսանաւ, կամեաց կամք Տեառն յայտ առնել զծառայն իւր սուրբ զԳիւտ որ յառաջն կոչէր Ասասկ : Եւ եւ որդի թագաւորին Պարսից յորա ի մերձակայ լերինն որ դիտէր ի դաշտն Մուղանայ : Եւ երևեալ առաջի նորա էրէ մի, եւ ի մէջ եղջերուացն խաչ լուսեղէն . և ջոկեալ զմանուկն ի գորացն նման Եւտտաթէի՝ եկն, երբ մինչ յեզր Երասխայ ի տեղին որ կոչի Քարաւազ որ յերիս ձէզ զջուրն : Եւ եղև խաչն ի կերպարանս լուսեղէն մարդոց, և վազեաց ընդ վտակսն . զոր տեսեալ մանուկն և թանձրացեալ աչօք ի լուսոյն՝ անկաւ ի գետին երկու ծառայիւք եւ անց . և առաջնորդեալ եղջերուին յստորոտ վիմին . և անդէն աներևոյթ լինէր :

Ապա ի վեր նայեցեալ տեսին սրջ մի ահագին կերպարանօք նստեալ . և միոյն թաթն ի ձեռն սրբոցն զի բժշկէր ի վիրաց : Անդէն զարհուրեալ մանկանն երկեաւ . եւ զի ի տեսլեան իմացեալ էր սուրբ հայրն զգալն նորա՝ ձայնեաց « մի երկնչիւր, ե՛կ առ իս » . և նա ասէ « զի՞նչ ես դու » . և ասէ « մարդ իբրև գբեզ » . ասէ « և զի՞նչ են դոքա որ ընդ քեզ » .

ասէ Գիւտ « շունք իմ են » . ասէ « Հրամայեալ դոցա ի բաց գնալ » . և Հրամայեաց : Եւ յարուցեալ ինքն՝ էջ ի վիմէն և քարոզեաց զաւետարանն և ուսոյց զՔրիստոսի հաւատն : Եւ նա յոյժ սիրեաց, և խնդրէր կընիք, որ և իսկոյն Հրամանն առեալ սուրբն ի Տեառնէ՝ մկրտեաց զմանուկն և զերկու ծառայսն . և կոչեաց զանուն նորա Քրիստոսասէր : Եւ բազում աւուրս կացեալ մեծամեծ ճգնութեամբ՝ ասէ Քրիստոսասէրն « Հայր՝ կարօտ եմ եկեղեցւոյ և լուսաւոր կարգաց նորա զի տեսից . ո՛չ է մեզ բարւոք միայն բնակիլ ի վիմիս յայս . այլ Հրամայեալ զի ես երթամ և բերեմ արծաթ, և շինեցից եկեղեցի և հաստատեցից ուխտ և ժողովեցիին եղբարք » : Եւ Հրամայեաց նմա երթալ . և գնացեալ՝ երեր արծաթ բազում . և կոչեցին արհեստաւոր և շինեցին եկեղեցիս և ժողովեցին եղբարս բազումս :

Իսկ թագաւորն Պարսից խնդիր արարեալ որդւոյն իւրոյ բազում դեսպանօք ընդ ծով և ընդ ցամաք . և մինչ ոչ երևէին հետք նորա, զցայդ և զցերեկ ողբայր դառնապէս . և ոչ միսխարէր երբէք : Ապա ի գիշերի մի տեսաւմբ ծանեալ ի հրեշտակէ եթէ որդին քո յայս նիչ տեղի է քրիստոնեայ ձևով : Ընդ որ յոյժ խնդացեալ՝ դեսպանն փութանակի առաքէր ածել զորդին . որք եկեալ գտին զնա, եւ ոչ կարացին բակտել : Դարձան ունայն եւ ասեն « ոչ եկն » .

այլ աղաչէ զքեզ թոյլ տալ նմա . ասէ, է իմ հայր որ վերստին ծնաւ զիս լուսաւոր եւ անսպական ծնընդեամբ . ես ոչ կամիմ թողուլ զսա . եւ խոստացեալ է ինձ թագաւորութիւն որ բիւրապատիկ է քան գրոյդ » : Յարուցեալ այնուհետև թագաւորն ինքնին եկն ի տեղին, եւ ոչ զոք գտաւ բայց միայն հիւանդ մի . եհարց ցնա « ու՛ր է որդին իմ » . և նա ասէ « ծա նեան ի հրեշտակէ գրո զալդ եւ փախեան » : Ապա հրամայէ սպանանել զնա, եւ զտեղին այրել եւ քանդել :

Եւ ինքն դառնայ անդրէն յաշխարհն իւր . եւ անկանէր ի սաստիկ ախտ հիւանդութեան ի կարօտութենէ որդւոյն . եւ դարձեալ առաքէր դեսպանս, եւ աղաչէր խնդրել զոր ինչ պիտոյ իցէ : Եւ նա հայցէր զանձս բազումս եւ արուեստաւորս զի շինեսցէ զաւերեալ տեղիսն : Եւ առաքեցաւ առ ժամայն հազար այր, հինգ հարիւր քարգործ եւ հինգ հարիւր փայտագործ . եւ փոխեցին զտեղին ընդ վէմն ի վեր եւ հարթեցին զվիմարդեանքն, եւ շինեցին եկեղեցիս երիս յանուն սուրբ Երրորդութեանն : Եւ ել համբաւս այս ընդ ամենայն աշխարհ . եւ զային բազմութիւնք եղբարց եւ ընոյր տունն Աստուծոյ : Եւ ընդ երեկս սկսան հսկել . եւ ահա ի մէջ գիշերին եկն այր մի լուսաւոր և ի ձեռին խաչ, և ասէ « հայր՝ թագաւորն երկնից օժ զքեզ ի հայրապետութիւն տանս »



որ է երկրորդ Երուսաղէմ . և բարձաւանդակ տեղին քո Գողգոթայ, և նոյն անցք որ ընդ Երուսաղէմ անցին՝ անցանելոյ են և ընդ տեղիս . և բնակութիւն սորա հանապազ ի չարի . եւ կրօնաւորք սորա առաւել օրհնեսցին քան զայլ աշխարհաց . դու ե՛լ եւ օրհնեա՛լ զեկեղեցիդ » :

Զայս ասացեալ եւ ինքն եղեւ աներեւոյթ . եւ ընդ առաւօտն սքողեալ հայրն սուրբ ել ի բեմն եւ օրհնեաց զսեղանն եւ զտաճարն . եւ ընդ օծանելն դասք հրեշտակաց ի խորանին թեմաքօղեալ գոչէին զամէնն . յորմէ զարհուրեալ ժողովոյն՝ ելանէին արտաքս : Եւ այնպէս փառաւորեաց Աստուած զտեղին զայն ի ձեռն երանեալ հօրն Գիւտոյ եւ Քրիստոսասիրին : Կարգեցին ի նմա եղբարս հինգ հարիւր, 200՝ ի վաճօքն եւ 300՝ ընդ քարանձաւան եւ անտառան անապատաւորս , որք անտանելի ճգնութեամբ եւ անդադար աղօթիւք իբր սիւն հրեղէն կանգնեալ էին յերկրէ յերկինս : Իսկ նախանձոտն տատանայ ոչ կարացեալ տանել այսմ ամենայնի գրգռէ զթագաւորն Պարսից ի չարաչար նախանձ : Եւ յարուցեալ 150,000 հեծելովք զայ, հասանէ ի տեղին սուրբ . եւ սպանանէ ի նոցանէ 10 կրօնաւոր . եւ այլքն փախչին : Ըմբռնի եւ իւրովի հայրն Գիւտոր հանեալ ի վէմն ընկեցին . եւ ո՛չ ինչ վնասեաց շնորհօքն Աստուծոյ . եւ բուռն հարեալ կամեցան եւս

ընկենուլ . և հարան կուրութեամբ . և կէսքն մեռան .  
զոր եւ տեսեալ զօրացն ի փախուստ դառնային եւ  
գնային անդրէն :

Ապա ժողովեալ սրբոցն յեկեղեցին լալով եւ  
համբուրելով զսպանեալսն ամփոփեցին յարեւելից  
կուսէ եկեղեցւոյն ուր աւագ դուռնն է : Յայնժամ յղէ  
յեղբարցն սուրբն Քիւտ առ եպիսկոպոսն Քողթան  
Անաստաս եւ առ ընտանիս իւր, եւ կոչեաց զնոսա  
ի տես . որք խնդացեալ մեծապէս ընդ անյուսալի  
իրան՝ եկին ի վանսն Քիւտոյ . բայց մայրն դեռ եւս  
կայր կուրացեալ . եւ առեալ զգիրկ որդւոյն եդ ի  
վերայ աչացն, և լուսաւորեցան . և մեծապէս գոհաւ  
նայր զԱստուծոյ : Ելեալ սուրբ հօրն եղբարբքն հանւ  
ղերձ ընդ յառաջ . եւ ածեալ յեկեղեցին մեծաւ  
գոհութեամբ յանձնէր նմա զեկեղեցին . եւ տայր  
ընձայ ամ յամէ ութն օր կէտ (31) ի գետոյն Երասս  
խայ : Զայն ընտանութիւն ցուցեալ Քողթան և ան  
դէն դարձուցեալ ի տեղի իւր զեպիսկոպոսն : Դար  
ձեալ յետ աւուրց մկրտեցին եւ զեղբորորդի նոյն  
թագաւորին Պարսից Աբլ-Աբաս անուն . և փեսայաւ  
ցուցին Վաչագանայ՝ Աղվանից արքայի . և շինեցին  
բերդ յեզր գետոյն զի անդ բնակեալ պահեսպէ զեղ  
բարսն : Իսկ Աբլ-Աբաս և Վաչագան խնդրեալ յիշ  
խանէն Սիւնեաց՝ սահման հատին վանիցն եւ ետուն  
հինդ դիւղ սկիզբն արարեալ ի Սևուսարէ ածեն ի

Բոթիրոթեր ի վար եւ վար . ուր ի ջուրն թզենույն  
և յայգեստան ուրկանոցին . և անտի գնայ, հասանէ  
մինչև ի շրջանս գետոյն Աղաւնույ, հանդէպ եկեղե-  
ցւոյն Նակորզանու, և անտի մինչև ցտունն Աստու-  
ծոյ, գեողք հինգ այսու սահմանօքս : Եւ փարթա-  
մացեալ էր տունն զի էր նորա արջառ 1000, ոչխար  
12,000, ուղտ 700, ձի 600 . էջ 400 եւ այգեգործս  
կատապանս 170 :

Ապա մեռան ի Բարկուշատ թագաւորքն Վաչա-  
գան եւ Արլ-Արաս : Եւ լուեալ թոռն Վառմ-Շապ-  
հոյ՝ գայ բազում զօրօք եւ յանկարծ մտանէ ի վանքն  
յառաւօտուն, և կոտորէ զկրօնաւորսն . և զաւագա-  
գոյնան կապեն, քանդեն զեկեղեցին եւ յատակեն,  
եւ զքարն արկանեն ի գետն : Եւ ի մէջ գիշերի էջ  
հրեշտակ եւ արձակեաց զկապեալսն . եւ նորա զար-  
հուրեալ փախեան : Ապա ընդ առաւօտն ժողո-  
վեալ եղբարցն մեծ ողորմք լացին ի վերայ եկեղե-  
ցւոյն . եւ փոխէին ղեղբարսն ի հանգիստ . եւ սկսեալ  
այլ նոր կանգնեցին տուն Աստուծոյ պայծառ քան  
զառաջինն . եւ ժողովեցան եղբարք 600 . եւ շինե-  
ցին այլուր եկեղեցի եւ ետուն զՄանակկայ ի ներս  
որ կոչի վանք նորա . եւ սահմանեցին ուրկանոցս եւ  
առաստ տային զպէտս նոցա ի վանիցն : Եւ հայր Յով-  
հաննէս ի Ապպանէն եկն աստ եւ առեալ զեղբարսն  
գնաց յեզր գետոյն . եւ խնդրեաց ի Տեառնէ չը-

նորհեւ ձուկն ի պէտս եղբարցն : Եւ երևեցաւ ի տես-  
լեան այր մի լուսաւոր զի գնայր առ գետափամբն,  
եւ զգաւազանն կախեալ ունէր իջուրն, և ի ծայրից  
գաւազանին ելանէին ջուլիբք ձկանց ամբաւ բիւրա-  
ւորք . եւ ինքն ուսուցանէր նմա զպատճառս որ-  
սոյն :

Եւ այնպէս պարզեցաւ վանիցն կէտ ի գետոյն :  
Իսկ սուրբ Հօրն Պիւտոյ լցեալ զամս կենաց իւրոց  
84՝ տեսիլ ետես Քրիստոսասէրն և յարուցեալ պատ-  
մէր Հօրն եթէ ազուաք պատեցին զվանս . և թռեալ  
ի գաղաթ իմ նստան . և յարուցեալ աստի ի բո  
գագաթդ իջան . և ապա սպիտակ աղաւնիք իջին  
յիմ դագաթս եւ թռեան ի բո գագաթդ : Զայն  
լուեալ սուրբ Հօրն՝ իմացաւ զի հասեալ էր ժամ կա-  
տարման նոցա : Եւ բազում քաջալերութեամբ պըն-  
դէր և յորդորէր զՔրիստոսասէրն ոչ երկնչել, այլ  
փութալ հասանիլ վերին արքայութեանն : Եւ առեալ  
կերակուր՝ շրջեցան ընդ անապատաւորան եւ կերա-  
կրեցին . ողջունեցին և օրհնեցան ի նոցանէ և գային  
սաղմոսելով ընդ Մախաղատափսն դէպ ի վանքն . եւ  
տեսին զբազմութիւն հեծելոց զի գային : Փութացան  
յեկեղեցին և մտեալ յաղբիւրն լուացին զինքեանս .  
եւ մտին յեկեղեցին եւ համբուրէին զուրբ սեղանն  
եւ ողջունելով լային : Եւ ահա պատեաց զօրն զեկե-  
ղեցին, եւ մտեալ խնդրէին զՊիւտ եւ զՔրիստոսա-

սէրն : Եւ նորա յառաջ կայեալ ցուցին զինքեանս . ապա ըմբռնեալ կապեցին և տարան ի Քողզոթ այն և ընկեցին ի վայր . զառաջինն ոչ ինչ վնասեաց . եւ յերկրորդին հայր Քիւտոյ զազաթն փեղկեցաւ , և կամէր զոգին արձակել . ձայնէր առ Քրիստոսասէրն . « Ջանս , փութա՛ որդեակ՛ զկնի իմ » . եւ նոքա սպանին սրով զՔրիստոսասէրն ի վերայ քարին :

Եւ կատարեցան սուրբքն ի քաղոց ամսի ի 15 : Յայնժամ եկեալ ամպ հովանի . և պատեաց զվանսն վեց ժամ : Զոր տեսեալ անօրինացն եւ ի մեծ ահի եղեալ՝ փախեան զողալով : Իսկ ցրուեալ եղբարքն ժողովեալ՝ մեծաւ սգով լացին լալիւն մեծ եւ փառէին զսուրբ մարմնովք հօրն և Քրիստոսասիրին . և տարեալ հանգուցին զՔիւտ ի զաւիթ եկեղեցւոյն եւ զՔրիստոսասէրն յեկեղեցին . եւ անյայտ արարին զտեղին : Ահա աւանդեաց մեզ զայս հրաշալուր պատմութիւն Յովհաննէս՝ եկեղեցական սուրբ ուխտին , որ 25 ամ ոչ ել արտաքոյ յեկեղեցւոյն . եւ ոչ խօսեցաւ ընդ ումեք բաց ի պաշտամանէն : Արոց բարեխօսութեամբ հաշտեսցի ընդ մեզ Քրիստոս . եւ տացէ խաղաղութիւն եւ շինութիւն աշխարհի :



ԻԲ. — *Յադագս Մակարայ և Պետրոսի, Գիգանայ և  
Վլդրանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսաց :*

Երանելին Երիցակ կալեալ զաթոռ եպիսկոպոսու-  
թեան ամ մի՝ փոխի ի վերին քաղաքն, որոյ պա-  
րիսպն յասպիս է եւ կարկեհան և դրունքն՝ յականց  
վանեաց, և քաղաքապետ՝ Քրիստոս. յարում ժողո-  
վեալ կան ամենայն հոյք սրբոցն : Իսկ յետ նորա ար-  
ժանապատիւ այրն Աստուծոյ Մակար՝ ամս 28 : Եւ  
ապա բազմերջանիկն եւ անհամեմատն ի մարդկանէ  
Պետրոս՝ աչակերտ քերթողահօրն, քաջ հռետորն  
եւ անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ եւ կա-  
տարեալ առաքինութեամբ, նախաթոռ վարդապե-  
տաց Հայոց, բերթող եւ թարգմանիչ : Ար արար  
բազում թարգմանութիւնս . եւ խօսեաց ճառս ի-  
մաստայեղց ի ծնունդն Քրիստոսի և ընդ դէմ Քաղ-  
կեդոնականացն և այլս յոլովս . և մեկնեաց զխրթին  
եւ զգժուարիմաց բանս հին և նոր Կտակարանաց :

Ջեռնադրի սա ի Ներսիսէ՝ Հայոց կաթողիկոսէ, ի  
մարդպանութեանն Վահանայ Մամիկոնոյ իններորդ  
եպիսկոպոս Սիւնեաց : Սա հարցեալ ի Վաչագանայ՝  
Աղվանից թագաւորէ, բանս բազումս, ուժեղս եւ  
զօրաւորս, և ընկալեալ զպատասխանին յոյժ ի ճահ  
եւ ուղիղ լուծմամբ : Սա գնաց ընդ այլոց վարդա-

պետաց Հայոց Մամբրէի, Եղնակայ, Կորեան, Դաւթի ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպօլիս . և հանդիպեալք ի ժողովն Քաղկեդոնի՝ յոյժ մարտուցեալ ընդ չարափառացն, պարտեալ բմբերանեցին և յամթ սրարեալ զամենեսին՝ եկին մեծաւ ճոխութեամբ, ողջամիտ վարդասպետութեամբ յաշխարհս Հայոց . եւ հաստատեցին զամենեսեան յուղզափառ հաւատս երկոց սուրբ ժողովոցն յաւանդեալն ի սրբոյն **Գրիգորէ :**

Սա գնաց ի ժողովն Դմնայ յառաջինն, որ եղև հրամանաւ Ներսիսի կաթողիկոսի վասն խուժկացն Նեստորականաց : Արք ժողովեալ ի վանսն Գրիգորի Մանածիհր Ռաժկի՝ սկսան սերմանել զգարչելի եւ զպիղծ աղանդն իւրեանց . զոր քակեալ ցան եւ ցիր արարին եւ մեծ կանոնաւ որոշեցին զմեզ յամենայն հաղորդութենէ նոցին, և սոսկալի նզովիւք փակեցին : Սա ետես նուաղեալ զճշմարտութիւնն եւ քայքայեալ զաթոռ սրբոյն Գրիգորի եւ մերձ ի բաժանումն . քանզի երկու կողմանք Յունացն եւ Պարսիցն զհակառակութեանն բերէին զվէճ առ միմեանս, եւ կամէին Յոյնք հակառակաթոռ նստուցանել զոր եւ արարին յետ սակաւուց . զի Մովսէս նստաւ յաթոռ սրբոյն Գրիգորի ի Դվին, և Յովհաննոմն ի Թէոդուպօլիս եղև կաթողիկոս . և եկեալ եղաթոռ ի Կոստայսն յԱրամօնս գիւղ, զոր յետոյ միա-

պետեաց Աբրահամ կաթողիկոս : Եւ սակա սյսպիսի վիճմանց հրամայեաց սուրբն Պետրոս յետս կազ յաղմկէ անտի և ի խանգարմանէ, եւ յԱղվանից առնուլ ձեռնադրութիւն եւ ձէթ մինչև խաղաղասցի խռովութիւնն, զոր եւ արարին իսկ :

Սա կեցեալ յաթոռն ամս 10՝ վախճանի. և յետ սորա յաջորդէ զաթոռն Տէր Գիգան ամս 3. ապա երանելի աշակերտն Պետրոսի՝ սուրբն Աբղանէս, որ և վասն հրամանաց սրբոյն Պետրոսի ոչ հնազանդեաց խախտեալ աթոռոյն Հայոց. այլ գնացեալ յԱղվանս հրամանաւ տեառն Միհր-Արտաշրի՝ Սիւնեաց գահ-երէց իշխանի, առ երջանիկ կաթողիկոսն Տէր Զաքարիա . եւ ի նմանէ առնու ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան : Եւ ամ յամէ անտի առնուին զիւղն օծութեան մինչև միապետեաց Աբրահամ կաթողիկոս Հայոց, եւ բարձաւ հակառակութիւնն ի միջոյ : Առ սա գրեաց թուղթ վասն ուղղափառութեան եւ սակա զգուշութեան ի Քաղկեդոնականացն, ի պիղծազանդոյն Նեստորի սուրբ կաթողիկոսն եւ մեծ պատրիարքն Հայոց Տէր Յովհաննէս, որ ունէր օրինակ զայս :





**ԻԳ.** — Թուաք զոր Հայոց կարողիկոսն Տէր Յովհաննէս և այլ եպիսկոպոսք արարին առ Տէր Վրդանէս՝ եպիսկոպոս Սիւնեաց :

Քրիստոսիւ պայծառացելոյ սիրեցելոյ եղբոր և աթոռակցի մերոյ Տեառն Վրդանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, և մեծավայելչի և փառաւորելոյ Միհր-Արտաշրի՝ Սիւնեաց տեառն : Ի Յովհաննիսէ՝ Հայոց կաթողիկոսէ, յԱրրահամայ Տարօնացւոյ եւ Մամիկոնենից եպիսկոպոսէ, ի Ներսայ՝ Բասենոյ եւ Մարդաղոյ եպիսկոպոսէ, ի Մաշտոցէ՝ Խորխոռունեաց եպիսկոպոսէ, ի Գիւտոյ՝ Վանանդայ, յԱրդիսոյէ, ի Բաբայ՝ Ամատունեաց եպիսկոպոսէ, օրհնութեամբ եւ հոգևոր սիրով ողջոյն :

Դուք ինքնին գիտէք զանհնարին վտանկան որ այժմ յաշխարհս մեր եհաս, զի յառաջագոյն երանելի հարքն մեր եւ զկնի նոցա մեք ընկալաք զհաւատ ճշմարտութեան զայն զոր քարոզեցին մարգարէք եւ առաքեալք, ուսուցին հարքն ճշմարիտք սուրբն Գրիգորիոս սրբոյն Թաղդէոսի յաջորդն եւ 318 եպիսկոպոսքն որք ժողովեցան ի Նիկիա քաղաք, և 150քն որք ժողովեցան ի Արստանդնուպոլիս եւ 200քն որք ժողովեցան յԵփեսոս. որք սրբոյ Հոգւոյն ազդամամբ ուսուցին մեզ զոր և իսկզբանէ իսկ տէրու-

նեան բարբառն վարդապետեայ աշակերտացն ասե-  
լով « գնացէ՛ք, աշակերտեցէ՛ք զամենայն հեթա-  
նոսս, մկրտեցէ՛ք զնոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ  
Հոգւոյն սրբոյ » : Որ բարձր եւ հռչակեալ կնիք եղաւ  
ի վերայ ամենայնի : Զայս հաւատ ճշմարտութեան  
ստուգեալ ունէր միաբանութեամբ աշխարհս Հայոց.  
(մի) ինչ ամենեւին յումեք արատութիւն յայտնի  
երուէր, եւ բնակեալ էաք ի սուրբ կաթողիկէ եկե-  
ղեցւոջ ընդ հովանեաւ սուրբ խաչին Քրիստոսի Աս-  
տուծոյ մերոյ ի խոր խաղաղութեան : Իսկ ի ժամա-  
նակիս յայսմիկ Նշատորի անիծելոյ, որ կուրացոյց  
չար հերձուածովն իւրով զկողմանս Խուժաստանի,  
երուեցաւ եւ իմոր չափութեանն յաշխարհիս մերում,  
որ էր ծածկեալ յանձինս անսուրբս, որք սկսան  
պղտորել զյատակ, ճշմարիտ հաւատ սուրբ Երրորդու-  
թեանն, պատրել զանձինս անհաստատս մարմնասէք  
ցանկութեամբք . եւ տարածեցաւ երկրայութիւնն .  
եւ հիւանդացան բազումք զախտ անհնարին :

Եւ ոչ կարացեալ մեր տանել այսպիսի չարաչար  
եւ դառն հայհոյութեան՝ փութացաք մեք եւ այլ  
աշխարհիս Հայոց եպիսկոպոսունք ընդ որս էր եւ  
երանեկին Պետրոս՝ եպիսկոպոսն ձեր, եւ քահանայք  
եւ ուխտ սրբոյ եկեղեցւոյ եւ վանաց երիցունք,  
ազատք եւ համօրէն ժողովրդականք ուղղափառք  
ժողովեալ ի սուրբ եկեղեցիս . եւ միաբանութեամբ

զպիղծ Նեստորիանոսս եւ զՔաղկեդոնիոսս եւ զայլ  
հերձուածոզս ի մեր սուրբ եկեղեցւոյս հարածականս  
արարաք նշովիւք. և սուրբ և փառաւորընկալ սեղա-  
նոյս և կենսատու աւետարանիս և փրկչական սուրբ  
խաչիս առաջի պայմանեցաք ամենեւին հեռանալ ի  
հաղորդութենէ նոցա. եւ ոչ լսել բանից նոցա մա-  
հարերից. վասն զի ի հաւատարիմ մարդկանէ լուաք  
եթէ պիղծ Նեստորականք բաղումք և ի ձեր աչ-  
խարհիդ են բնակեալ. եւ դուք զգոսա ի սուրբ եկե-  
ղեցի ընդունիք և ընդ դոսա հաղորդիք (ոչ) յիշելով  
ձեր զարդոյն Գրիգորի զմեծ վաստակ եւ զջան, որ ի  
մեր եւ ի ձեր աչխարհիդ վերայ հասարակայս, եւ  
զսուրբ ծնունդն զոր սրբով աւազանան վերստին  
ծնայք, և զլուսաւոր-և զճշմարիտ հաւատն զոր մեք և  
դուք ընկալաք եւ այժմ ունիմք. եւ զհոգևոր սէրն  
զոր ընդ ձեզ ունիմք առաւել քան զամենայնն :

Զայդ հոգ կալաք յանձին հեռացուցանել եւ ի  
ձէնջ զչարի որոմանն սերմանս. վասն նորին յուխտէ  
մերմէ զհաւատարիմ այր զՄատթէոս քահանայն ա-  
ռաբեցաք առ ձեզ, եւ աղաչեմք զձեզ Քրիստոսիւ  
Աստուծով մերով, որպէս ցայժմ լեալ էք աղք սուրբ,  
ժողովուրդ սեպհական Տեառն Աստուծոյ. նոյնպէս  
եւ այժմ եւ մինչեւ ցյաւիտեան դուք եւ զաւակք  
ձեր զօրացարու՛ք տերամք և կարողութեամք զօրու-  
թեան նորա. եւ առէ՛ք զսարսաղինութիւնն Աս-

տուճոյ և զսուրբ և զճշմարիտ հաւատս զոր ի սրբոյն  
Պրիգորէ և յայլ հոգեկիր երանելի հարցն ընկալայք,  
հաստատուն եւ անշարժ պահեցէք յանձինս ձեր :  
Եւ զպիղծ Նեստորիանոսդ եւ զայլ հերձուածողս  
որ յաշխարհիդ ձերում են, նոյնպէս ի սրբոյ յեկեղե-  
ցոյ եւ ի ձեր հաղորդութենէ նզովիւք ի բայ մեր-  
ժեցէք . եւ ամենայն ուղղափառաց պատուիրեցէք  
մի լինել հաղորդ անպտղութեան գործոց նոցա, եւ  
մի լսել հրապուրող եւ չարաթոյն բանից նոցա մա-  
հաբերից : Քանզի զնոսա որոշեաց սուրբ առա-  
քեալն մանկունս անիծից, եւ զնոցին կորստական  
վարդապետութիւնն անուանեաց ամպս անջրդիս  
վարեալս ի մրրկէ ի կորուստ, ծառս դօսս, պտղակո-  
րոյս, նիւթս կիզման հրոյն յաւիտենից որք յիրաւի  
խակ նզովին . զի նոքա են պղտորիչք եկեղեցոյ  
Քրիստոսի Աստուծոյ յայժմոյս ժամանակիս յամե-  
նայն տեղին :

Որք եւ անուանեցան իսկ ի սրբոյ առաքելոյն եղ-  
բարք սուտք եւ մշակք անօրէնութեան եւ նեոինք  
եկեալ յաշխարհ . եւ հրամայեցաւ մեզ ճշմարիտ  
հաւատացելոցս ի սրբոյ աւետարանչէն ի Յովհաննէ  
\*չ ընդունիլ զնոսա ի տունս եւ ոչ ողջունել բանիւ .  
այլ հեռանալ ամենեին ի նոցանէ որպէս ի թշնա-  
մեաց խաչին Քրիստոսի : Եւ մեր աղօթեմք զի նոյն  
ինքն սուրբ Երրորդութիւնն խափանեացէ եւ նկու՛ն  
Հատ. Ա. :

արասցէ զթշնամիս իւր, ղհակառակորդոսն ճշմարիտ  
հաւատոյ, եւ զօրացուացէ՛ զպաշտօնեայս եւ զեր-  
կրպագուս անուան իւրոյ սրբոյ. եւ եթէ յումեք ի  
հերձուածողս զսոցի զղջումն, եւ ամենայն կամօք  
իւրովք զառնացցէ ի սուրբ հաւատս մեր եւ ոչ խա-  
բէութեամբ՝ նզովեալ գրով զպիղծն Նեստոր եւ  
զամենայն հերձուածողս եւ զթէոդորեոսս եւ զժո-  
ղովն Քաղկեդոնի, եւ ապա ընդունիլ զայնպիսինս  
ապաշխարութեամբ. վասն զի դուռն ողորմութեանն  
Աստուծոյ խոստովանողաց եւ ապաշխարողաց հա-  
նապազ բաց է :



**ԻԳ.** — Երէ յորում աւուր եղաւ բուսկանն Հայոց . եւ  
սուրբ Աստուած՝ որ իսպնեցար, սահմանեցաւ :

Ի չորրորդում ամի հայրապետութեան Տեառն  
Մովսիսի՝ Հայոց կաթողիկոսի, եւ ի տասներորդ ամի  
մարզպանութեան Հայոց Մժէժ Գնունայ, մինչ էր  
կենարարին թուականն 553 ի լրման երկու հարիւ-  
րեկին Անդրէասայ, յորում ամի էր լրումն զատկին  
ի մարտի ի 25, եւ սկիզբն բողորին ի յապրիլի չորան  
էր՝ ոչ կարացին գնալ ի սկզբանն. քանզի յետ քսան  
եւ հնգին ի տասն եւ երեքն էր ապրիլի. եւ ինն

բմունք ի միջոցին պակաս դայր . եւ այնր աղագաւ  
սկասան շիոթիլ ամենայն տօնք տարւոյն :

Ապա հարկ եղև թուական Հայոց կարգել զի նո-  
վաւ ուղղեսցեն զտարակոյսն զոր եւ ուղղեցին իսկ  
ի տասն թուականին ի ձեռն Էասա իմաստնոյ որ կար-  
գեաց զանտարակուսելի օրինակն զՀինգհարիւրեկին  
այլովք իմաստնովք Հայոց : Արդ՝ ի կարգել թուա-  
կանին մեծաւ ժողովով ի Ղալին քաղաքի, էր եպիս-  
կոպոս Սիւնեաց Տէր Վրդանէս, եւ իշխան՝ տէր  
Միհր-Արտաշիր, որք եւ միաբանեալ ժողովոյն  
յղարկեցին զիմաստուն վարդապետս եւ զկատարեալ  
գիտնականս իւրեանց, որք էին նախաթոռ ի վարդա-  
պետան Հայոց . եւ ուղղեցին զանտարակուսելի տու-  
մարն . յորում ամի ի նոյն ժողովն հաստատեցին  
« զսուրբ Աստուած՝ որ խաչեցարն » ընդ դէմ Քաղ-  
կեդոնականացն եւ Նեստորի իմացմանցն : Յայսմ ա-  
ւուրս կատարեցաւ խաչիւ մեծ վրայն Քրիստոսի նոր  
նահատակն եւ երանելի պարսիկն Մախոժ, որ եւ ի  
մկրտութեանն Յիզտրուզիտ անուանեցաւ որ թարգ-  
մանի Աստուածատուր, ի Ղալին քաղաքի : Ընդ ամա եւ  
ի սոյն ազգէ Սահակ եւ Սամուէլ եւ Յրզըմխուսատ  
կատարեցան մարտիրոսութեամբ :



**ԻՆ.** — Վախճան Վրդանիսի . եւ յարդդնն Գրիգորի  
եւ Քրիստափորի . եւ որ ինչ գրոյցք եղեն յառաջ  
նոցա :

Յաւուրս Տեառն Վրդանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, եկին ոմանք Նեստորականք եւ Քաղկեդոնիկք, և խարկանօք բնակեցան յաշխարհս Սիսական եւ յԱղվանս : Ապա լուեալ Տեառն Յովհաննիսի ընդոստոյց թղթովք և ծանոյց զվնասն որ ընդ յարդիւ ծածկեալ կայր. յորմէ զարհուրեալ Տեառն Վրդանիսի՝ հարածական արար ի վիճակէ իւրմէ . եւ մեծաւ նզովիւք փակեաց զի մի իշխեսցեն թողացուցանել ի սահմանս իւրեանց . և այնպէս ճշմարիտ վարդապետութեամբ եւ առաքինի վարուք կացեալ յաթոռն մետրապօլտութեան զամս 23՝ փոխի յաստեացս : Եւ ապա առնու զաթոռն Տէր Գրիգոր ամս 15 յԱղվանս ձեռնադրեալ . եւ ասպա փառաւորեալն եւ երանելին Քրիստափոր, ընկալեալ եւ սա զձեռնադրութիւնն յԱղվանից : Իսկ յետ վախճանին Մովսիսի լինի տեղապահ ամս 3 Վրդանէս քերթող . եւ զի ոչ գոյր իշխան Հայոց, այլ յետ Մտէժայ տաճիկ մարդպանք ունէին զՀայս զամս 36. վասն այն խափան լինէր աթոռոյն . եւ Վարդ Մամիկոնեան՝ որդի Վասակայ, աստտամրեալ էր ի Պարսից եւ նուաճեալ ընդ Յունօք :

Ապա միաբանեալ ամենայն Հայոց երկուց կողմանցն որ ի Յունաց բաժնին եւ որ ի Պարսից . եւ ժողովեալք եպիսկոպոսաց եւ վանականաց ի Գլին՝ կամեցան կաթողիկոս նստուցանել . եւ ոչ յաջողեցաւ այն անգամ : Վասն որոյ եկն ի միաբանութիւն ժողովոյն Քրիստափոր՝ Սիւնեաց մետրապօլիտ, եւ արարին կանոնս եւ եղին սահման եկեղեցւոյ : Իսկ ի դալ ամին յաւուրս քառասնորդի պահոյն միաբան ժողովին ի Գլին . եւ նստուցանեն պատրիարք Հայոց յաւուր ողոգմենի տօնին արմաւենեացն զՏէր Աբրահամ՝ Ռչտունեաց եպիսկոպոս . եւ բաժանեալ աստ ուրեմն Սիւնեաց աթոռն յօղեցաւ վերտին ի գլուխն պատուական ի սուրբ Գրիգորի աթոռն եւ ի յաջորդն ի Տէր Աբրահամ : Բայց զի եղեն յայսմ ժամանակի բազում խռովութիւնք եւ մեծամեծ յուզմունք ի Հոռոմոց, ի Վրաց, եւ ի մէջ Հայոց՝ երկպառակութիւնք, բաժանմունք, վէճք, աղմուկք, շիտթմունք, նշկահմունք աստուածային օրինացն, երբեմն վասն Քաղկեդոնի ժողովոյն . երբեմն վասն ինն դասուց եկեղեցւոյ, երբեմն Վրաց մեծաբանութիւն և թեւակոխումն ի վերայ Աղվանից . վասն որոյ եւ դառնալ Աղվանից ի Հայոց, հպարտանալ եւ Մարդպետական եպիսկոպոսին և անկումն ի պատուոյն : Սակս որոյ բազում ժողով և ուժեղ քննութիւն աստուածային կտակարանաց . և



հաղիւ հազ ուրեմն հաւանութիւն Հայոց եւ խաղաղութիւն եկեղեցւոյ . զորոյ զորպիսութիւն անցիկն և զպատճառս բանիցն, որպէս վերագոյն խոստացաք, բայցայայտեցից սակաւութիւն, որպէս հաւաստի ուսաք ի սրբոյն Ուխտանէսէ՝ Սերաստապետոյ եպիսկոպոսէ, և ի սրբոյն Սաղօսնի՝ Մաքենոյաց առաջնորդի թղթոյն, որ կարգեալ է յԱղվանից պատմութեանն ի միջին հատորն, և ի սրբոյն Մաշտոցի թղթոյն, զոր գրեալ է ի Տեառն Գէորգեայ կաթողիկոսի խնդրոյն : Յայս երից հաւաստապատում և ճշմարտախոհ վարդապետացս ցուցից քեզ զամենայն զոր խոստացայ :



**ԻԶ.** — Յարգա միաբանեղոյն Հայոց . եւ միապետեղոյն Տեառն Արքահաւու . և վասն մեծ ժողովոյն որ ի Դալին եւ վասն ինն կարգաց եկեղեցւոյ . եւ վասն վրաց բաժանմանն գրոյցք յոշովք և պիտանիք զոր հաւաքեցաք ի հին նամակաց և յՈւխտանէսի գրոց . և սակա Աղվանից արքեպիսկոպոսութեան և Սիւնեաց մեծարապօրտութեանն . եւ վասն Սիւնեաց իսպիկն թէ էր աղագաւ տուա :

Յամն Խոսրովու՝ արքայից արքայի, և Յուստիանոսի՝ ինքնակալ կայսեր, յիշխանութեանն Մաքատայ

Բագրատունոյ, որ կոչեցաւ Վրկան աշխարհի Մարզպան, ի տեղապահութեան յաթոռոյն Հայոց Վրդանիսի քերթողի, և տէրութեան Սիւնեայ Սահակայ իշխանի, հրամանաւ Սմբատոյ և կամօք այլոց իշխանաց Հայոց ժողովեցան եպիսկոպոսք Հայոց ի Դավին. ածան եւ նոքա որ ի բաժնին Յունաց կային հակառակութեամբ որոց գլուխ Մանասէ՛ Բասենոց եպիսկոպոս, եւ Քրիստափոր՝ Սիւնեայ, եւ եղին ուխտ միաբանութեան : Յորոց խնդրեաց ձեռնարկ Սմբատ՝ Վրկանի մարզպան, և առեալ կնքեաց մատանեաւ և եղ ի սուրբ եկեղեցւոջն : Եւ ապա ընտրեալ վերին ազգամամբն աւետարանին մի՛ճակաւ զԱբրահամ՝ զՌչտունեաց եպիսկոպոս, կացուցանեն կաթողիկոս Հայոց : Յայնմ ժամանակի բորբոքէր չարահընար աղանդն Քաղկեդոնի ի ձեռն բուռն թագաւորաց Յունաց . եւ կամէր իբրև զբաղցկեղ ճարակել զաշխարհս Հայոց եւ ՂԱսորուոց ուղղափառաց, և սա առաւել ի թագաւորելն Մօրկայ : Եւ գեսպանք եւ հրաւիրակք Հոռոմոց երբէք ոչ դադարէին յերթեակութեանց, բազում անգամ հրստման տային ժողովոյ, մի անգամ ի Կոստանդնուսօլիս կոչեցին եւ երիցս անգամ ի Թէոդուսօլիս . եւ դէմ յանդիման եւ ուժգին մեծամեծ հարցափորձութիւնք վինէին . և էր յայնմ ժամանակի Հայաստանի դպրութիւնքս նորոգ եւ շէն . եւ յոյն լեզուին և դպրութեանն յոյժ

Հին օրք և տեղեակք : Եւ որպէս հարցանելինն նորա՝  
առաւել իմն սրատասխանի լսելին . սակա որոյ եւ  
ոմանք զրպարտեն զսուրբ Հայրն Յովհան մայրազո-  
մեցի եթէ նա ասաց եթէ Հայր պարոտաւորեցան ի  
հաւատոյ մասին . որ և քաւ և մի լիցի . այլ ցուցանէ  
մեզ զստոյղն Սաղօմօն՝ հարանց հայր սուրբ ուխտին  
Մաքենոցաց և առաջնորդ, (որ եւ հարցեալ) ի կա-  
թողիկոսէ Հոյոց զպատճառս զսոս, եւ նա զրոզ  
ուանդեաց այսպէս եթէ՝ Յովհան վկայեաց թէ  
Հայր ի հաւատոյ մասին անպարտելի մնացին . այլ  
յոյսմ՝ մտին յոյժ պարտեալք եւ ըմբերանեալք  
զտան, զի ասացին Հոռովք եթէ՝ կարգաւորեաց  
Աստուած զսուրբ եկեղեցի ինն դատուք ըստ վեր-  
նոյն, և ըստ չորից աւետարանչայն մեծախորհուրդ  
դիտուածոյ չորս միայն սահմանեաց աթոռս ի վերայ  
երկրի (և) պատրիարքունս, յորոյ վերայ հանգչինոյն  
ինքն Քանն Աստուած՝ թագաւորն անվախճան . եւ  
տմենայն աշխարհ հնազանդիմք այսոյ աթոռոց . և ի  
ներքոյ սոցա գեղեցիկս կարգաւորեալ են ութն դասք  
եկեղեցւոյ : Արդ՝ ո՞ր է ձեր աթոռն և պատրիարքն  
ընդ որով դասեալ է արքեպիսկոպոսն և այլն : Ամ  
ցուցէք զձերն, եւ կամ թէ ոչ ունիք՝ հնադանդեցէք  
միումն ի չորից աթոռոցս, ապա թէ ոչ՝ կատարեալ  
հերձուածող էք և թերի յամենայն շնորհս աստուա-  
ծայինս :

Ահա՛ այսու բանիւ յոյժ սլարտեալ դռան Հայր . եւ թէպէտ զառաջնոցն եղեալ սահմանս յիշատակէին . զի ցայն վայր անյայտ և ծածուկ էր լեալ ի նոցանէ . եւ նուազեալ իսկ էր . եւ անխոյժ եղեալ յաթոռակալացն : Իսկ ապա դարձեալ այսրէն Հայոց՝ խորհուրդ ի մէջ առին եպիսկոպոսն իշխանօքն եւ աւագ տսնուտէրօքն հնարէին ելս հնարից տարակուսանայ : Եւ հրաման հանեալ ընդ ամենայն աշխարհ՝ արարին մեծ աշխարհաժողով ի թագաւորութեան Պարսից Ապրվէդ Խոսրովու (Ա), և Հոռոմոց՝ Մօրկայ : Եւ էր ընդ նոսա զահերէց եւ զահագլուխ ժողովոյն Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս, եւ Մանասէ՝ Բասենոց . զի Քրիստափոր յետ 10 ամի եպիսկոպոսութեանն իւր վախճանեալ էր . և նստեալ ի տեղին Տէր Դաւիթ յԱրրահամայ կաթողիկոսէ ձեռնադրեալ :

Սորա նախ հաստատեցին զուղղափառ հաւատս երից սուրբ ժողովոցն, միաբան նզովեցին զՔաղկէդոնին եւ զԷւսնին . եւ ամենեքեան ձեռագրեցին զնամակն հաւատոյ եւ կնքեցին մատանեաւ Տեառն Արրահամու և այլոց եպիսկոպոսաց և իշխանացն : Եւ ապա համարձակութիւն առեալ այսու պատճառաւ . զի ի թագաւորէն Յուստիանոսի ժողովեալ նորա ղմեծամեծ ավոռակալս եւ զսուրբ հարս՝ հրամանս խնդրէ, եւ նորօք հանդերձ փոխէ զաթոռն Յովնան Հատ . Ա :

նու աւետարանչի յԵփեսոսէ ի Կոստանդնուպօլիս . և բունն մնայ ի տեղին, եւ զԱնտիօքայն յԵրուսաղէմ զՄատթէոսի աւետարանչին : Եւ յայսմանէ համար ձակեալ սպա ամենայն իշխեցողք և մեծամիտք հպարտացան, եւ ուր առաքեալ վախճանեալ էր՝ զամենեցուն աթոռա ինքնազլուխս արարին . եւ պատրիարք խոստովանէին : Յայսմանէ ուտեալ և մերոցս կացուցանեն պատրիարք Հայոց զԱրրահամ կաթողիկոս, և զԱղլանիցն՝ արքեպիսկոպոս . և զՎրացն՝ մետրապօլիտ : Եւ զի Սիւնիք, հրամանաւ Պետրոսի, ժամանակս ինչ յետս էին կացեալ ի հակառակ աթոռոցն, և սցծմ՝ միաբանեալ նորոգ : Ապա Վրաց մեծաբանեալ ի վերայ Աղլանից՝ ոչ կամէին ի ներքոյ լինել դասու . այլ զՎիրս յառաջահաւատ կարդային քան զԱղլանս : Եւ էր նոցա առաջնորդ Աիւրիոն, և սա Նեստորի աղանդովն խմորեալ էր ի ծածուկ եւ ոչ կամէր յայտնել . այլ ժամու և պատճառի մնայր : Եւ ունէր ընդ ինքեան խուժիկ եպիսկոպոս մի, զոր ինքն ձեռնադրեաց : Եւ էր լեալ սորա փակակալ սուրբ կաթողիկէին ի Վաղարշապատ . և գնացեալ էր ի սարկաւազութեանն ի Կողոնիա եւ բնակեալ առ երկաբնակ երիցու մի և ներկեալ յաղանդն :

Ապա ի խնդրել Վրաց ինքեանց առաջնորդ ի Մովսիսէ՝ կաթողիկոսէ Հայոց, ձեռնադրեաց զկարապետ նեռինն զԱիւրիոն և ետ նոցա : Իբրև լուան

Աղվանք զՎրաց մեծարանութիւնն՝ երևեցուցին եւ նորա զառաքեալ ոմն եկեալ կանխագոյն քան ի Հայս յԱղվանս Եղիշէ անուն, և շինեալ եկեղեցի և ձեռնադրեալ եպիսկոպոս : Գարձան եւ նորա առ ժամանակ մի ի Հայոց . ձեղքեցաւ և Վրացն բաղբաղելով զԱղվանս զի ի խնդրելն զարքեպիսկոպոսութիւն յԱբրահամէ՝ սաստեաց նմա : Եւ թէպէտ ի ձեռն Պետրոսի եպիսկոպոսի բաղում անգամ մաղթեաց, և շնորհէր զխնդրելին, ոչ հաւանեցաւ . ապա բանադրեալ եղև յԱբրահամէ : Արոյ առեալ զկնկուղն և զիղլոնն՝ ետ ցՊետրոս և ասէ « ձերդ ցձեղ լիցի » . եւ յետոյ երկուցեալ յուղարկեաց ի ծածուկ զկնի եւ ետ սպանանել զՊետրոս երկու սարկաւազօք ի լերինն Կանդրոս : Բայց ազանդ սորա յայտնեցաւ ի Մովսիսէ՝ Յուրտաւայ եպիսկոպոսէ, որ է Գաչեանք, զորոյ զթէմն սցժմ ունի Հախպատ :

Իսկ մինչ այս այսպէս լինէր՝ ետուն զմետրապօլտութիւնն Մարդսպետական եպիսկոպոսին Թէոօբոսի . ապա և նորա հպարտացեալ խնդրէր եպիսկոպոսունս ընդ ձեռամբ լինել . յորմէ երկուցեալ Հայոց ասէին մի գուցէ և այլ իմն գունակ բաժանուցմն լիցի . առին ի նմանէ և զայն . և տեսին զտեսարան Ալանեաց քաջ յուամուճս և ուղղափառս և երևելիս յամենայն Հայաստանս, և յառաջին հարցն նոյն պատու ու կուչեցեալ . սպտշաճ համարեցան միաբան ժողովով

տալ նոցա զմետրապօլտութիւնն, առնել և բարձակից եւ սեղանակից կաթողիկոսի աթոռով եւ բարձու ի միասին բազմել : Կայուցանեն ապա զՂաւիթ մետրապօլիտ Սիւնեաց և տան նմա զխաչանիչ նշանն զառաջեալ կրել հանապազ, և ոչ քարոզել զկաթողիկոսն Հայոց յիւր եկեղեցիսն ի վերայ սրբոյ սեղանոյն . այլ միայն զիւրն անուն : Եւ ի թղթագրութեանն ոչ գրեն Սիւնիք եպիսկոպոսապետ կամ այլ անուամբ զկաթողիկոսն . այլ տէրունիք ի Սիւնիք Աստուածապատիւ եւ հոգևոր Տէր գրէին . եւ նոքա՝ ի ծառայէ . բայց (ի սակս) Եղիայի կաթողիկոսի խակագործութեանն յԵրիցու վանս մինչ զնայր ի հնազանդել զԱղվանս՝ ոչ գրեցին սոքա ի ծառայէ և նոքա՝ զհոգևորն :

Ահա՛ սակս նախանձուն Հոռոմոց, որ ջանային փոքրկացուցանել զԹագղէոսի վիճակն և շիջուցանել զսրբոյն Գրիգորի աթոռն, այսպէս զետեղեալ սահմանեցին զինն դասս եկեղեցոյ, Հայոցն՝ պատրիարք. Աղվանիցն՝ արքեպիսկոպոսութիւն. Սիւնեացն՝ մետրապօլիտ (32) : Բայց Յովհաննէս պատմագիր յիշէ եւ զՄելիտինոյն եւ զՍեբաստիայն մետրապօլիտս գու : Եւ զայլ աշխարհս թողին յառաջին սովորութեանն զի մի ամբոխ ինչ լինիցի : Այլ և խնդրեցին ի Սիւնեաց մի ինչ աւելի իրս ժտել, այս ինքն եպիսկոպոս ունել ընդ ինքեամբ և ձեռնադրել . այլ միայն

բաղմականան և խաչիւն մեծարեցին, և նախաթոռ  
կոչեցին պատրիարքին, որ է պոստոֆրոնտէս . եւ  
անուանեցին մետրապօլիտ : Եւ այս կրկին անգամ  
եղև շնորհեալ նոցա զայս պատիւ եւ ղնչան : Առա-  
ջին՝ յԵսվաղէն՝ Թագաւորէն Աղվանից, և երկրորդ՝  
ի Ժողովոյն Հայոց ի Տէր Աբրահամէ :

Եւ արդ՝ ո՛վ ընթերցասէր՝ զայս փոքր ի շատէ հա-  
մառօտիւք ցուցի քեզ զբաւականն միայն . եւ թէ  
զլիովն և զերկայնն կամիս լսել՝ ընթերցիր զՈւխտա-  
նէսն և զԱղվանից պատմութիւնն և ի գիրս թղթոցն  
տեղեկացի՛ր, ևս և զՏեառն Մաշտոցին որ ի խնդրոց  
Գէորգեայ՝ Հայոց կաթողիկոսի, գրեալ է : Ես յետ  
բազում ընթերցման տեսայ այլ և այլ զգրեալսն . և  
բազում ջանիւ գտայ զստոյգն եւ կարգեցի աստ-  
վան այն ոչ զնկարագիր նոցին բանիցն եղի, այլ  
զքնութիւն բանին ամբողջ ունելով . և զկարգն ուղիղ  
չարայարեցի աստէն . և զու ամենայն ողջմտութեամբ  
ընկալ և մի ինչ երկրայիր :



Ի է. — Վասն ինն դասուց եկեղեցւոյ քէ՛ ո՛րք են և  
ո՛րպէս վարին :

Արդ՝ ի գալ բանին Աստուծոյ և անճառ մարդե-  
ղութեամբ յազատելն զքնութիւնս մարդկացին ի գե-



րութենէ նախաչարին, լուսաւորեալ երկնահրաւէր  
աւետարանաւն . եւ վերստին ծննդեամբ աւազանին  
որդիացոյց Հօրն երկնաւորի . և զանճառելին հրեղի-  
նաց եւ հողեղինաց շնորհս ետ եւ պարգևեաց առա-  
տապէս մարդկան զմարմին իւր եւ զարին ի կերա-  
կուր, որով միացեալք լինին ընդ Աստուած և փառ-  
ուածացեալք : Եւ կոչէ զազգս մարդկան յերկնաւոր  
քահանայութիւնն տալով իշխանութիւն աստուա-  
ծաբար կապել և արձակել մինչ յերկինս և մինչ յեր-  
կրի . եւ անտանելի շնորհօք եւ անպատում փառօք  
զարդարեաց զքնութիւնս մեր : Ասան որոյ կառու-  
ցեալ հաստատեաց երկին ի վերայ երկրի՝ զսուրբ  
եկեղեցի . զի մինչ երկրածինքս երկնաւոր եղաք կեն-  
դանի, ապա հսրկ էր երկնաւորիս ի մէջ երկրի կա-  
յանալ, և ընդ հրարուն սեռիցն ճախրել և ճոխապէս  
ճեմել ի մշտնջենաւոր փառաբանութեանն Աս-  
տուծոյ :

Եւ արգ՝ այս այսպէս լինէր երկին ի վերայ երկրի  
կառուցեալ . և երկնաւորք զերկրաւորքս ի նմա կա-  
ցուցեալ . ապա պատշաճ էր երկնաւորացն դասու և  
սահմանաւ կարգաւորել ի մէջ եկեղեցւոյ ըստ երկից  
քահանայապետութեանցն եւ ինն դասուցն, զոր Հո-  
գին Աստուած յօրինեալ տնօրինեաց աստուածային  
տեսչութեամբն ի ձեռն առաքելոյ և հայրապետաց,  
և որ ունի օրինակ զայս . առաջին դաս եկեղեցւոյ որք

անընդամիջաբար հուպ են յաստուածայինսն՝ հայրապետք, որ կոչին պատրիարքք որք բազմեալ կան ի վերայ չորից աթոռոց աւետարանչացն . եւ ունին սորա ձև զառաքելականն բոլոր նաւիրտամբ զգեստաւորիլ և արկանել եմիւիրոնն հինգ կրկին . և գործ է նոցա ձեռնադրել արքեպիսկոպոս ընդ չորս բաժինս աշխարհի . եւ հրաման տան աշխարհագումար ժողովոց : Երկրորդ դաս եկեղեցւոյ՝ արքեպիսկոպոսք, այսինքն եպիսկոպոսապետք որ կոչին կաթողիկոսք եւ սքեմ է նոցա պճղնաւոր փիլոն որ է բազմախաչն . եւ ի վերայ եմիւիրոնն չորեքկին . եւ գործ է նոցա ձեռնադրել մետրապօլիտս եւ օրհնել զաստուածագործ մեռոնն : Իսկ ի վախճանել պատրիարքին երեք արքեպիսկոպոսք այլովք եկեղեցական գասուք ձեռնադրեն պատրիարք : Երրորդ դաս եկեղեցւոյ՝ մետրապօլիտք, որ մայրաքաղաքաց և աւագագոյն աթոռոցն լինին տեսուչք : Եւ սքեմ է նոցա նաւիրտ . եւ որքան եպիսկոպոս ընդ ձեռամբ ունի, նոյն թուովն ի վերայ խաչ թուխ կտաւեայ, և եմիւրոնն երեքկին . եւ գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոս և օրհնել զձէթն որ յաւելուածով ունի եկեղեցի ի պէտս երախայից և հիւանդաց, և թէ խառնել կամին յառաքելական ձէթն որ է սուրբ մեռոն : Եւ թէ հարկ ինչ լինի կամ վասն ոչ գոլոյ պատրիարքի կամ վասն այլ մեծագոյն պատճառի, հրամանաւ և կամօք .

մեծ աթոռոյն ձեռնագրեն երեք մետրապօլիտք  
այլովք եկեղեցական դասուք զարքեպիսկոպոսն իւր,  
եանց : Զորրորդ դաս եկեղեցւոյ՝ եպիսկոպոսք, որք  
կոչին այցելուք, եւ իշխեն ի վերայ գաւառաց. եւ  
սքեմ է նոցա նախորտ անխաչ սոսկ եւ եմիւփորոն  
կրկին միայն. եւ գործ է նոցա ձեռնադրել երիցունս  
և սարկուսագունս և օրհնել եկեղեցի և օծանել սեղան  
եւ աւագան. բայց զմեռոնն ի մեծագոյն աթոռոյն  
առնցւ յիւրմէ մետրապօլտէն. և մետրապօլիտն՝ յիւր,  
մէ արքեպիսկոպոսէն. զի իբր աստիճանօք ի վերուստ  
իջանի աստուածային շնորհն սկսեալ ի պատրիարքէն  
և գայ, հասանէ մինչ ի բնաւին վերջինքն որք են ժո-  
ղովրդականք : Հինգերորդ դաս եկեղեցւոյ՝ երիցունք  
որք են քահանայք. և սքեմ է նոցա շուրջառ և զերկու  
ուսովքն ուրար, այսինքն փակեզն. և բաճկոնաւ իշ-  
խեն կալ ի վերայ բեմին. և գործ է նոցա զկենարարն  
և զփրկականն կատարել և բաշխել արժանաւորացն,  
առնել մկրտութիւն եւ օրհնել խաչ. եւ որ այլ ինչ  
կարգ է քրիստոնէից. առնուլ խոստովանութիւն կա-  
տարելոցն եւ թողութիւն տալ մեղաց. եւ զիւր հօտն  
կարող է կապել և արձակել. բայց զմեռոն ոչ իշխեն  
չարժեւ. այլ զանկատար ձէթն զոր մետրապօլիտքն  
եւ եպիսկոպոսքն օրհնեն, զի մեռոն որ է առաքելա-  
կան ձէթ, եպիսկոպոսն միայն իշխէ շարժել. եւ ի  
տարւոջ միանգամ շրջելով ի գաւառն օծանէ զձեռ-

նադրեալսն ի քահանայից . կարէ եւ առնել զման-  
կունս անագանոս և փսաղտոս, և տայ կարգ սպաշ-  
խարողաց եւ սարկաւագուհեաց : Աւեցերորդ դաս  
եկեղեցւոյ՝ սարկաւագունք որք են սպասաւորք . եւ  
յայլ լեզու դիակոնք կոչին . և զգեստ է նոցա հալա-  
ագանիլ, հոլանի կալ և փակեզն միայն զահեակ ուսով-  
քըն և բայաւ գլխով սպասաւորել սրբոյ բեմին և սե-  
ղանոյն և քահանայիցն . և գործ է նոցա աւետարան  
կարգալ և քարոզել, խունկ արկանել և սպասաւորել  
սրբոյ խորհրդոյն . կրել զսկին և զմաղզմայն : Իսկ ի  
կանանց սարկաւագուհիք լինին զի ի կանանց վանս  
քարոզեն . զգեստ է նոցա հաւատաւորացն, փիլոն  
արկանել և ի ճակատն խաչ ունել և փոքրիկ ուրարն  
յաջմէ ի ներքոյ բաղկին զհանդերձէն կամ զգօտւոյն  
ի կախ ունելով ելանէ ի բեմն և քարոզէ և ընթեռնու-  
աւետարան ոչ յամբոխին ի վերայ բեմին . այլ առան-  
ձինն կամ յանկեան ուրեք . բայց ի սուրբ խորհրդոյն  
սպասաւորութիւն բնաւ մի հպեսցի որպէս արու-  
սարկաւագունքն : Եթե՛նքերորդ դաս եկեղեցւոյ՝  
դպիրք որք են կէս սարկաւագունք, եւ ունին զգեստ  
զսարկաւագաց . բայց ուրար յահեակ բազուկն ի վե-  
րայ արմկանն, եւ կան հոլանի գօտելոյ՛ծ . եւ գործ է  
սոցա ընթեռնուլ զառաքելական գրեանս յեկեղեցին,  
և սպասաւորել տաճարին, կրել մոմեղէնս և զխաչա-  
զլուխ վարոցսն, և պահել զդրունս եկեղեցւոյն : Ութ-

Հատ . Ա :

9 .

երորդ դաս եկեղեցւոյ՝ անադանոսք որ կոչին գրա-  
կարդացք . ունին զգեստ զնոյն եւ աղարողոն, բայց  
ուրար ոչ . և արտաքոյ եկեղեցւոյն զգենուն մեկնակ  
կտաւիս . և կան հոլանի . և գործ է նոցա ընթեռնու  
մարդարէական եւ վարդապետական դրեանս : Ինն  
երորդ դաս եկեղեցւոյ՝ փսաղտոսք որք են սաղմոսեր  
գուրք . և զգեստ և սքեմ է նոցա նոյն . և գործ է սաղ-  
մոսել և եղանակօք պաշտել յեկեղեցին զձայնաւորս  
և զարուեստիս ալէլուիս և մեսեղի և որ ինչ այլ  
իւնչ են :

Ահա այս են ինն դասք եկեղեցւոյ, զոր Հոգին  
սուրբ կարգեալ սահմանեաց ի ձեռն սուրբ առաքե-  
լոցն եւ նոցին հետևող սուրբ հայրապետացն, զոր  
պարտ է եկեղեցւոյ լրիւ ունել և անթերի . զի ամե-  
նայնիւ ամենևին ոչ է հնար պակաս գոլ սոցա . ապա  
թէ պակաս լինի, ոչ հաճի Աստուած . և նոյն գունակ  
սրակաս լինի և շնորհքն աստուածեղէն : Քանզի իմա՛  
զեկեղեցի որպէս բոլոր անդամք մարմնոյ մարդոյ յօ-  
դեալ ի գլուխն Քրիստոս : Արդ՝ եթէ պակաս գոյ  
յանդամոց եկեղեցւոյ, թէև ի յոյժ փոքրագունից,  
խեղ է մարմին նորա . եւ խեղ մարմնոյ ոչ հաճի  
Քրիստոս գլուխ լինել : Եւ դու եղբայր՝ քննեա՛ եւ  
տե՛ս զորքանութիւն վնասուն : Բայց այս ամենայն  
դասք եկեղեցւոյ բովանդակ միաբանեալ՝ ապա կա-  
րեն ձեռնադրել զպատրիարքն :

**ԻՆ.** — Վասն Մարուսադայի՝ Սիւնեաց կախկոպութիւնի . և վասն Ժողովոյն Կարևոյ որ ի Հերակկեայ . և վասն Եզրի իսորելոյն յադանդն Քաղկեդոնի :

Երանեալ Հայրն և յոգնապայծառ ճգնաւորն Տէր Դաւիթ կացեալ յաթոռ մետրապօլտութեան Սիւնեաց ամս 27՝ վախճանի : Եւ ունէր զաթոռն տեղապահութեամբ մեծ քերթողն և անյաղթ փիլիսոփայն Մաթուսաղայ : Այս Մաթուսաղայ էր սնեալ ամենայն պարկեշտութեամբ եւ զարգացեալ ամենայն առաքինութեամբ . ուսեալ զքերթողութիւնն և վարժեալ ճարտասանականաւն . հմտացեալ փիլիսոփայական արհեստից, լի ամենայն իմաստութեամբ և եկատարեալ գիտութեամբ : Եւ զի էր մեծարոյ եւ նախաթոռ ի վարդապետսն Հայոց աթոռն Սիւնեաց զի էր ի վաղնջուց հետէ հրամայեալ զթարգմանութիւնն եւ զմեկնողութիւնն նոցա ունել ի սրբոցն Սահակայ և Մեսրոբայ, և գլուխ կալ և հրամանատար ամենայն վարդապետաց Հայոց : Վասն որոյ տեսեալ յայնմ ժամանակի պայծառացեալ իմաստայեղց ճառագայթիւք զերանելին Մաթուսաղայ, վարժեալ և սնեալ ի նոյն տան՝ կացուցանեն յառտիւ ճան վարդապետութեան եկեղեցւոյ . և նստուցանեն զլուխ ամենայն վարդապետացն ի վերայ բարձր եւ

ահարկու ամբիոնի բարունարանին, յորմէ բղխէր գե-  
տորէն աստուածային իմաստութիւնն և փարթամա-  
ցուցանէր զամենայն աշակերտեալն :

Յայսմ համբաւոյ հրաշացեալ սուրբ պատրիարքն  
Կովիտաս՝ զանց արարեալ զամենայն վարդապետօք  
կաթողիկոսարանին, նաև զվարդապետարանաւն  
Հայոց որ յԱրշարունիան էր, յորում զմանկունսն  
ժողովեալ էին ճարտարք եւ գիտունք Հայոց, այն որ  
յԵրասխաձորին է, զոր այժմ Վարդիկ հայր կոչեն,  
յղէ առ քերթողն Սիւնեաց Մաթուսաղայ զիւր  
ձեռասուն համբակն, զոր մեծափափագ սիրով սնու-  
ցանէր սրբութեամբ զԹէոդորոս՝ եղբորորդի իւր :  
Զոր առեալ նորա՝ մեծաւ զգուշութեամբ ուսոյց եւ  
հասոյց ի գլուխ կատարման գիտութեան զարդա-  
րեալ տեսականաւն և գործականաւն :

Ասլա վախճանեալ Տէր Կովիտաս՝ պատրիարք  
Հայոց, դնի ի տապանի յիւրում շինեալ եկեղեցւոջն  
մերձ հանգստարանի սրբոյն Հռիփսիմեայ . և նստի  
յաթոռն Տէր Քրիստափոր ի յազատ տանէ ամս 3 .  
առլա , ետ սորա խաւարաբերն եկեղեցւոյ Եզր՝ ամս  
10 որ էր ի Նիգ գաւառէ, ի Փառաժնակերտ գեղջէ :  
Ասլա յերրորդ ամի կաթողիկոսութեան սորա, մինչ  
վախճանեալ էր Դաւիթ Սահառունի . եւ առեալ  
զմտրզպանութիւնն Հայոց Թէոդորոս Ռշտունի .  
հրաման հանեալ Հերակլեայ կայսեր ընդ աշխարհս

Հայոց եւ Ասորւոց գալ ժողովիլ ի Կարնոյ քաղաք վասն քննութեան հաւատոյ : Եւ ինքն իսկ առեալ ընդ ինքեան զճարտարսն Յունաց՝ եկն անդ : Խորհուրդ արարեալ ապա իշխանին Թէոդորոսի Ռուտունւոյ այլովք նախարարօք Հայոց ընդ կաթողիկոսին Եզրի, եւ ասեն « մեք երթամք փութապէս ի ծառայութիւն արքայի, դու ընտրեա՛ զգիտունս ազգիս, և եպիսկոսոսօք Հայոց եկ ի ժողովն. բայց մի լիցի քեզ շարժիլ ի տեղւոյս առանց Մաթուսաղայի Սիւնեցւոյ եւ Յովհաննու մայրազոմեցւոյ, մի գուցէ եւ փլուցանէ չարն զգեղեցիկ շինուածս հաւատոյս մերոյ. ահա՛ ո՛վ Տէր կաթողիկոս՝ օր մարտի և յաղթութեան, ահա՛ օր փրկութեան և ժամանակ ընդունելի. պնդեա՛ զմէջս քո իբրև այր կատարեալ, սպառազինեա՛ զքեզ ամրութեամբ հաւատոյ զի մի ի յունական հանդիսին թուլացեալ պարտիցիս ի ճարտար խարողացն, և կողոպտեալ զրկիցիմք մեք յուղղափառ հաւատոյս » :

Ապա յղեալ կաթողիկոսին հրաւիրակս ի պատուաւոր արանց Մաթուսաղայի, եւ ծանուցանէ նմա զեկեալ, հասեալ վտանգն. և կոչէ զի ի միասին հոգասցեն զարժանն : Իսկ նորա ոչ կամեցեալ խափանածել վարժարանին և իւրոյ մեծամեծ ճգանցն զցայգ եւ զցերեկ՝ ոչ գնաց : Ապա կրկին անգամ հարկէ զնա գնալ. և նորա ոչ առեալ յանձն պատճառելով



զտիարութիւն մարմնոյ՝ արձակէ առ նա զնախասա-  
ցեալն Թէոդորոս՝ աշակերտ իւր, եղբորորդի Առմի-  
տասայ . և գրէ թուղթ վասն հաւատոյ որ է ի տօնա-  
նամակին, զոր եւ աստէն կարգեցաք, թէ եւ այդու  
օրինակաւ խօսիցիք . եւ աղաչէ անմեղադիր լինել  
վասն չերթալոյն . ասէ « դուք ինքնին գիտուն էք, և  
ընդ ձեզ ունիք զաշխարհալոյս վարդապետդ զՅով-  
հան, և այլ գիտունք և ճարտարք յոլով կան առ ձեզ .  
եւ ի մեզնէ ( ի մէնջ ) յուղարկեցաւ մեր աշակերտդ  
Թէոդորոս, այդ բաւականասցի » :

Իսկ Եզդի ոչ առեալ ընդ իւր զՅովհան . այլ հա-  
մարձակեալ ի Թէոդորոս՝ զնայ ի ժողովն առ Հերակլ-  
ապա հարցեալ ընդ նա Հերակլեայ եթէ ընդէ՞ր ոչ  
միաբանիք ընդ մեզ ի հաւատս . ասէ Եզդր « բարերար-  
արքայ՝ եթէ կամիս, հեշտ է այդ, միայն հրաժարի ի  
Քաղկեդոնի ժողովոյն և ի Ալեոնի տօմարոյն, և մեք  
միաբան եմք » : Ապա առեալ թագաւորին զնամակն  
հաւատոյ ժողովոյն Քաղկեդոնի՝ դնէ ի վերայ սուրբ  
խաչին որ ընդ ինքեան ունէր և ասէ « ահա Տէր կա-  
թողիկոս՝ ա՛ռ, ընթերցի՛ր և քննեա՛ եթէ գոյ ի դմա  
արատ կամ թիւրութիւն ինչ՝ ցո՛յց ինձ . և ես զա-  
մենայն Հոռոմս ի քոյդ դարձուցանեմ դաւանու-  
թիւն, եւ այրեմ զթուղթդ . ապա թէ ոչ՝ հաւանե-  
ցէ՛ք եւ դուք մեզ » : Առեալ կաթողիկոսին զթուղթն  
տարաւ յիջևանս իւր, և և քննեցին զաւուրս երիս, եւ

չկարացին վերահասու լինել ծածուկ եւ անյայտ աղանդոյ նորա . զնացին առ թագաւորն եւ ասեն « արքայ՝ յաւիտեան կեաց . ոչ գտաք ի սմա թիւր . այլ ամենայնիւ հաւասարեալ է հարցն սրբոց ուղղափառ դաւանութեան » . ասէ թագաւորն « հաւա՞ն էք այժմ մեզ » . ասէ կաթողիկոսն « յայսմ մասին հաւան եմք . բայց զայն ոչ ընդունիմք զի ձեր եկեղեցականքն համարձակ են ի պոռնկութիւնս և յայլ պղծութիւնս . և հագորդին օրինաց անխտիր » . ասէ թագաւորն « մեր բանս վասն հաւատոյ է և ոչ վասն գործոց քննութեան . դուք Հայքդ ունիք զանբնական պղծութիւնս ընդ արուս եւ ընդ անասունս եւ այս յողմս, բարձէ՛ք դուք զայն ի Հայոց, բառնամ և ես զայդ ի Հոռոմոց . զբողանոցն և զմունին Քաղկեդոնի ժողովն չէ կարգեալ, զոր յիշէքդ այժմ . վասն այն եղին իշխանք զի մի այլանդակ չարիք երևեսցին » :

Եւ կաթողիկոսն յերեսաց թագաւորին անպատասխանի . եւ խորհի ընդ ատպետն եւ ընդ այլ իշխանսն եթէ զինչ արասցեն . ասէ « ո՛չ ինչ գտանեմք պատճառ » : Խոժոռեալ ասպետին ասէ ցառամար « ոչ ասացի քեզ եթէ առանց Մաթուսաղայի և Յովհաննու մի գար ի ժողովս . ահա՛ քո տգիտութեամբ կորուսեր զմեզ » : Ասէ Եզր « Մաթուսաղայ ոչ եկն . և Յովհան ղեկեղեցին եւ ղկաթողիկոսարանն ոչ կամեցաւ թողուլ . և ամենեքեան ասացին եթէ մինչ Մաթուսա-

ղայի աշակերտող ի հետս է, ոչ է կարիս մեզ այլ ոք, դա բաւական է » : Սկսաւ խօսիլ Թէողորոս եւ ասէ « Ընդէ՞ր վիճիք և տրտմեալ էք . ոչ ցոյ ի նոսա թիւրութիւն ինչ վասն հաւատոյ . սպլ մի եմք մեք և նոքա, և նոքա բուն արմատք են, և մեք ոստք մի ի նոցանէ բուսեալ և առեալ զհաւատ և զամենայն կարգքրիատոնէութեան . ոչ է պարտ ապստամբել ի նոցանէ և խլիլ յարմատոյն մեր . այլ մեք կրսերագոյնքս հնազանդիմք երիցագոյն հրամանաց նոցին . և լիցի մի հօտ և մի հովիւ » :

Այսու բանիւքս մտկարդեալ ի ժամուն զմիտս իշխանին և եպիսկոպոսացն . և զի Եզր ակն ունէր մարմնաւոր փառաց եւ ազահութեան յարքայէն, եւ միտք իւր թուլացեալ էին ի ճշմարտութենէն, միայն ակն ածէր յիշխանացն եւ յեպիսկոպոսացն իւրովի հաւանել : Իսկ մինչ լուան ի Թէողորոսէ զայն՝ գնացին միաբան առ թագաւորն և յանձն առին զՔաղկեդոնին, արարին պատարագ և հաղորդեցան միմեանց, եւ ետուն ձեռնարկ միաբանութեան արքայի : Խնդրեցին և զՔաղկեդոնին զոր ետ թագաւորն ոսկեգիր մագաղաթաւ պարգև Եզրի զերրորդ մասն գիւղաքաղաքին Կողբայ եւ զաղսն բովանդակ : Ո՛վ անմիտ եւ չար վաճառին : Եւ այնպէս մեծամեծ փառօք եւ երևելի պարգևօք հրաժարեալք յարքայէն՝ դարձան ի Դավին կապուտք, կողոպուտք ի ճշմարիտ հաւատոյն :

Եւ անդ կամեցան ժողովով հաստատել զնոր օրէնան զոր առին. որում ոչ հաւանեալ Յովհանու Մայրա- գումեցոյ՝ անարգեալ և հալածեալ եղև յԵզրայ. որ եւ ասէր » յիրաւի կոչեցար Եզր զի եզր և վախճան եղեր հաւատոյ ուղղափառութեան » : Եկն եւ Մաթուաղայ ի Սիւնեաց . եւ յոյժ տրտմեցաւ ընդ եղեալ չարիսն . բայց ի ժամուն ակիրերան եղև զի յիւր աչակերտէն էր բուսեալ չարն :

Իսկ ժողովոյն եւ Եզրի բազում ողորանօք պարտեալ զմիտս նորա՝ ածին ի հաւանութիւն ձեռնադրիլ եպիսկոպոս Սիւնեաց, եւ արարին իսկ . եւ մեծաւ պատուով արձակեցին յաթոռն իւր և ի վիճակ : Որ և եկեալ նորա՝ ամենայն ջանիւ զգուշացոյց զվիճակն իւր ոչ խմորիլ յաղանդն Քաղկեդոնի . այլ զաւանդեալն ի սուրբ հարցն զուղղափառ հաւատան պինգ ունել զոր ունէին ի սրբոյն Գրիգորէ մինչև ցայն . որք և մնացին շնորհօք սուրբ Հոգւոյն : Զի Հայք կացին ի նոյն յաղանդն յաւուրս 6 կաթողիկոսաց ամս 85, մինչ ի բազմերջանիկ և գովելի զաւակն զարդու սուրբ եկեղեցոյ Յովհան օձնեցին . և ի ձեռն նորա սրբեալ և նորոգեալ եղեն Հայք յայնմ աղանդոյ : Իսկ երանելին Մաթուաղայ կացեալ ի մետրապօլտութեան Սիւնեաց ամս 18՝ վճարի յաստեացս . բաղում եւ մեծամեծ վաստակօք առաքինութեան զնայ առ կոչնատէրն առնուլ զիւրն

ըստ արժանւոյն վաստակոցն զայն՝ զոր ակն ոչ ետես  
եւ ունին ոչ լուաւ եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ :



ԻԹ. — Թուրք Մարուսարայի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց հրահանաւ Տեսու Եզրի՝ Հայոց կարողիկոսի. և այլ եպիսկոպոսաց Հայոց, առ թագաւորն Հերակի վասն հաւատոյ :

Ամենաբարեպաշտ եւ բարեյաղթող Քրիստոսիւ պայծառացեալ եւ մեծամեծ բարեգործութեամբ ի սարժանս Քրիստոնէից եկեալ յԱստուծոյ թագաւոր Հոռոմոց Հերակէս. Եզրաս նուաստ՝ կաթողիկոս Հայոց, Յովհաննէս՝ Մարդպետական եպիսկոպոս, Մաթուաղայ՝ Սիւնեաց եպիսկոպոս, եւ յամենեցունց ի նուաստից ի ծառայական աշխարհէս ձերմէ Հայոց եպիսկոպոսաց Տէրամբ խնդալ : Գիր հաւատոյ խոստովանութեան զոր մեծանձնութեան ձերոյ արարեալ առ նուաստութիւնս մեր՝ տեսանելով մեր քննութեամբ գտաք ըստ ամենայն հարցն ճշմարիտ և ուղիղ խոստովանութեամբ առ սուրբ միանական Երրորդութիւնն բարեպաշտեալ, զոր ընկալաք և ընդունիմք : Բայց զժողովն Քազկեղոնի խոստովանեալ էր եւ կարգեալ ընդ երիս ժողովսն՝ ընդ Նիկիոյ 318իցն որ յաղազս Արիոսի որ զՈր.

դին Աստուծոյ արարած ասէր և ոչ արարչակից . եւ (ընդ) 150իցն որ ի Կոստանդնուպօլիս , որ վասն Մակեդոնի որ զՀոգին սուրբ ի սպասաւորութեան կարգի ասէր հրեշտակ կամ առաքեալ . եւ (ընդ) երկերկրոցն որ յԵփեսոս , ուր ըզ ի Կուսէ ծննդեանն Հայհոյութիւն Նեստորին նզովեցին . եւ զկնի նոցա զՔաղկեդոնին :

Եւ պատճառ ժողովոյս Եւտիբէս եղեալ , որ խոստովանեալ զԲանին Աստուծոյ զծնունդն ի Կուսէն . բայց յետ միանալոյ Աստուածութեանն ընդ իւրում մարմնոյն ուրանայր զմարդկութիւնն , որ երկուս բնութիւնս բաժանեալ ի ներքս ամէ եւ սրբօք վարի այսպէս ասելով « ոչ բառնալով զբնութեանցն զանազանութիւնս . այլ ամբողջ սլահելով առանձնաւորապէս երկաբանչիւրոց բնութեան » , զոր ոչ ընդունին Աստուածաշունչ գիրք և ոչ վարդապետք հոգևորք եւ նշանաւորք որ եզեալ են յիւրաբանչիւր ժամանակս աստուածարեալք եւ աստուածախօսք վկայեալք յեկեղեցեաց Աստուծոյ որ ընդ տիեզերս , քանզի զերկուս բնութիւնս ի մէջ բերելով համարէին լուծանել զԵւտիբէսի Հայհոյութիւնն : Պարտ էր նոցա զերանեկեացն հարանց ի կիր առնուլ զամենապայծառ և զհրաշափառագոյն յազազս մարմնաւորութեանն Տեառն զասացուածս՝ զԱթանասի Աղեքսանդրացոյ , զԲարսղի Կեսարացոյ , զԳրիգորի Նազիանու

զացւոյ, զԳրիգորի Նովեսարացւոյ սքանչելագործի, զԳրիգորի Նիւաացւոյ՝ եղբօր Բարսղի, զՊրոկղի և զայլոցն նախեղեալ վարդապետացն. քանզի Աստուած կատարեալ և մարդ կատարեալ յերկուց բնութեանց մի Աստուած խոստովանեցան. որք բաւական են վեր ի վայր տապալել զԵւտիքէսի հայհոյութիւնն : Իսկ եթէ բաժանեալ ի միմեանց երկու բնութեամբ վարեցան՝ ընդ դէմ ուրեմն նախասացելոց վարդապետացն են. զի այլ ոմն զՔրիստոս Յիսուս ասելով և այլ ոմն՝ զԲանն Աստուած և զործ՝ առանձին իւրաքանչիւր, եւ յերկուց յորդոց հայհոյութիւնս անկան, որ ո՛չ Երրորդութիւն. այլ մանաւանդ չորրորդութիւն, որք են վատափառ և ըստ չարահաւատ, հրէամիտ Նեստորի. քանզի եւ յառաջնորդան Քաղկեդոնի ժողովոյն լինել ասեն զԹէոդորէտոս եւ զԻբաս (33) զգուգախտացողան Նեստորի :

Եւ զի այս այսպէս է, թէ կամիցիք ընել՝ յայտնի է ճշմարտութեամբ : Քանզի Յորնաղ անուն Երուսաղէմի եպիսկոպոս ի Քաղկեդոնի ժողովումն էր. և եկեալ անտի զԵրուսաղէմացւոց ընթերցուածն (կարգեաց), զոր մեր (պահեալ է) մինչև ցայժմ. որք զՔաղկեդոնի ժողովն խոտեն, հերձուածողս կոչեն զնոսա. և այսպէս բամբասեն եթէ Աստուած իաչեալ ասեն և անմահ իաչեալ ասեն : Եւ ինքեանք այսպէս գրեն

առ մեղ եթէ՝ Յիսուս է որ չարչարեցաւն, Քրիստոս  
ասեն, խաչեցաւ . և դիրք նոցա կան առ մեղ . եւ ոչ  
կարեն յուրաստ լինիլ . յորմէ բաղումք եւ յայս կողմանս  
թիւրեցան . եւ ոչ կամին Աստուած խաչեցեալ եւ  
անմահ խաչեցեալ (ասել) . զի չարչարեցաւ  
անչարչարելին չարչարելեաւն . եւ մեռաւ անմահն  
մահկանացուաւն, այսինքն է անչարչար Բանն  
Աստուած մեռաւ իւրով մարմնովն . վասն այնորիկ  
համարձակիմք ասել Աստուած խաչեցեալ, որպէս  
տէրունականն ունի բան եթէ « այնպէս սիրեաց  
Աստուած զաշխարհ՝ մինչև զՈրդին իւր միածին  
ետ . « եւ առաքեալն Պօղոս ասէ » եթէ էր ծանուցեալ՝  
ոչ արգեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին » . զոր  
Յովհանն՝ Աստուանդնուպօլսի եպիսկոպոս, մեկնէ  
թէ « զՏէրն փառաց մարդ սոսկ ասել և ոչ դէք  
յանդգնին » : Որոյ համաձայն և ճշմարիտ հարքն բարբառին՝  
Յովհանն, որ Երուսաղէմի քաղաքին կացեալ եպիսկոպոս,  
թէ « Աստուած ի կուսէ ծնեցեալ, և Աստուած խաչեալ » :  
Եւ Գրիգոր Նազիանդացին թէ « Աստուած խաչեցաւ . և  
երկիր շարժեցաւ » . և դարձեալ յայլում վայրի թէ « որ զԼոյսն  
Աստուածածին ոչ խոստովանեսցի, հեռի է յԱստուածութենէն .  
եթէ որ Խաչելոյն երկիր ոչ պագանէ, ընդ  
աստուածասպանան կարգեսցի » . քանզի որ ոչ ասէ  
Աստուած խաչեալ՝ ոչ խոստովանի և զԱստուած



ի կուսէ ծնեալ, և ոչ զկոյսն՝ Աստուածածին որպէս  
և Նեստոր. բանգի ոչ այլ ոմն Յիսուս Քրիստոս, եւ  
այլ ոմն՝ Աստուած Բանն. այլ նոյն և մի Աստուած  
ծնեցեալ ի կուսէն, նոյն անչարչարելի իւրով աստ-  
ուածութեամբ, նոյն անմահ եւ նոյն մեռեալ իւրով  
մարմնովն, որպէս Աթանաս՝ Աղեքսանդրու եպիսկո-  
պոսն ասէ » յաղագս որոյ մոլորին և որք ասեն, եթէ  
այլ ոմն է որ չարչարեցաւ, և այլ ոմն է որ ոչ չար-  
չարեցաւ. բայց ոչ այլ ոք էր քան զԲանն որ չար-  
չարեցաւ եւ զմահ ընկալաւ. բայց նոյն ինքն անչար-  
չարելի և անմարմին Բանն լինելով մարմին մարդ-  
կային՝ համարելով զամենայնն ելից » : Եւ Գրիգոր  
Նէոկեսարացի սքանչելագործն » որ ոք, ասէ, այլ  
ոք ախտակրեալն է, եւ ոչ խոստովանեսցի զնոյն  
(ան) ախտակիր Աստուածն Բան մարմնովն ախտա-  
կրեալ, որպէս և գրեալ է, նզովեսցի » :

Արդ՝ եթէ ըստ նոցա բանիցն այլ ոմն Քրիստոս  
Յիսուսն է, և այլ ոմն՝ Բանն Աստուած. և ոմն ի  
նոցանէ զախտ եւ զչարչարանս կրէ՝ ծնեալ ի կու-  
սէն, եւ ոմն ի նոցանէ սլայծառանայր նշանօք և ար-  
ուեստիւք, որ է Բանն Աստուած, հեռացուցանելով  
զնա ի տնօրէնութեան խորհրդոյն, որպէս կայ ի  
տոմարին Ղևոնի, զոր ժողովն Քաղկեդոնի ուղղա-  
փառ կոչէ, և որպէս ի վերայ խարխալեալ և չար-  
ժուն հիման զիւրն շինէ շինուած : Եթէ այդպէս է՝

ո՞րպէս աղքատացաւ մեծատունն վասն մեր, աստու-  
ցեն մեզ՝ որ բաժանեն զմարդն յԱստուծոյ Բանէն,  
և զմիացեալն որոշեն որոշութեամբ բնութեանցն. որ  
երկուս ոմանս ասեն զՔրիստոս, եւ զմին իմացու-  
թեամբ միայն, և առատաբանութիւն բերեն : Քան-  
զի վասն ձեր աղքատացաւ մեծատունն, ասէ առա-  
քեալն, զի դուք նորա աղքատութեամբն մեծաաջիք-  
այսինքն անմարմին Բանն Աստուած ի Հօրէ, յառաջ-  
բան զյաւիտեանս, ծնեալ՝ էակից և բնակից Հօր և  
սուրբ Հոգւոյն, ի վերջին ժամանակս էջ և մարմնա-  
ցաւ ի սուրբ Կուսէն Մարիամայ, ըստ աւետարան-  
չին Յովհաննու թէ. Բանն մարմին եղև, եւ բնա-  
կեաց ի մեզ մարդ եղեալ ճշմարտապէս, ամենայնիւ  
ըստ նմանութեան մեր առանց մեզաց . ի խանձա-  
րուրս պատեալ եղաւ ի մտւր որ ի վերայ քերով-  
բէից շրջէր, ի գիրկս մօր գգուեցաւ, կաթն արբուցաւ՝  
ղարդացաւ հասակաւ, ճանապարհորդեցաւ ընդ ամե-  
նայն կիրս կենցաղոյս, մատնեցաւ Հրէից, չարչարե-  
ցաւ եւ խաչեցաւ, թաղեցաւ եւ յարեաւ անապա-  
կանաբար զի ոչ թողաւ ոգի նորա ի գժոխս, եւ ոչ  
մարմինն նորա ետես զապականութիւն, որպէս առա-  
քեալն Պետրոս ասէ. զոր եւ Աթանաս Աղեքսանդ-  
րացի ի հաւատոյ բանին ասէ « եւ ս՛ռ մարմին յա-  
պականացուացս զի զգեցուցէ զանապականու-  
թիւն . էսո՛ւ մարմին ի մահկանացուացս որպէս զի

մեզկանացուս այս զղեցցի զանմահութիւն, որպէս  
և այժմ ի ձեռն մահուան եւ յարութեան իւրոյ  
չնորհեաց մեզ զկեանս և զանապականութիւն » :

Արդ՝ եթէ ըստ նոցա բանիցն եղանի, ոչ թափեաց զինքն էնն Աստուած, ոչ զկերպարանս ծառայի էառ. և ոչ կերպարանօք դատուիր և մարդ. եւ զիարդ զտնօրէնութեանն խորհուրդ բովանդակ կատարեսցէ : Քանզի ո՛չ աստուածային բնութիւնն առանձինն եղեալ ի կնոջէ եւ մտեալ ընդ օրինօք. և աղբատացեալ ի մեծութենէ, և օծումն ընկալեալ, որպէս եւ ո՛չ մարդկային բնութիւնս յատուկ որդի Բարձրելոյն գոլ, եւ աթոռ ունել յաւիտենական. այլ ըստանձառ միաւորութեան երկուց բնութեանցն. քանզի յետ երկուց զմին խոստովանին ճշմարիտ քրիստոնեայք, որպէս Պրոկղոս ասէ « թէ յորում աստուածապէս դրոշմեալ ի միաւորութեանն պատմուճան » . և Բասիլիոս առ Ապողինար, յորժամ ընդդիմադրէր Ապողինար զվիճումնն թէ » երկու կատարեալք՝ Աստուած եւ մարդ մի կատարեալք ոչ լինին » . նա պատասխանի տայ » առ մարդկան արդեօք անկարելի. բայց Աստուծոյ՝ կարելի (ի լուծումն Բարսղի), որպէս կուսի ծնանեւն. որպէս ի վերայ ծովուն գնալն. որպէս դրօքն վիակելովք մարմինն թանձրամած մտանեւն ի մարմնոյ և յոսկերաց հաստատեալ. զսրօրինակ այն կարելիք Աստուծոյ,

նոյնպէս եւ այս » . և այսպէս Պիրք վկայեն զստու-  
ուածատվայելուչսն եւ զմարդկայինսն նմին Տեառն  
մերոյ Աստուծոյ, զոր եղն ժառանգ ամենայնի  
Հայրն վասն կամաւորութեանն, եւ անդրանիկ ի  
ներքս ած յաշխարհս ի բազում եղբարս : Նա վկայի  
զյաւիտեանս արարող, որ է բացափայլումն փառաց  
եւ նկարագիր էութեան նորա . և նոյն ի կերպա-  
րանս ծառայի երևեալ, ի նմանութիւն մարդկան  
եղեալ . եւ ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ  
զինեղն հաւասար Աստուծոյ Յիսուս Քրիստոս՝ ի  
վերջինսն ի Կռուէն ծնեալ, և ի սկզբանն հաստիչ  
աշխարհի ընդ Հօր, որպէս ասէ Պօղոս « այլ մի է  
Աստուած Հայր յորմէ ամենայն . և մեք ի նա, և մի՛  
տէր Յիսուս Քրիստոս որով ամենայն . և մեք նովաւ » :

Նա զտնօրինականսն համբերելով քաղցնոյր . եւ  
նայն կերակրէր զբազմահազար ժողովուրդսն . նա  
ծարաւեալ, և նոյն ինքն՝ արբուցանող ծարաւեաց-  
նոյն զմարդկայինսն բարբառելով . նոյն՝ զաստուածա-  
վայելուչսն ասող առ աշակերտսն « Հայր իմ մեծ  
է բան զիս » : Եւ նոյն ոչ ինչ յափշտակութիւն հա-  
մարեցաւ գոլ հաւասար Աստուծոյ : Նա ի ժամ  
խաչին աղաչող զԱստուած Հայր թէ « հնար իցէ,  
անցցէ՛ զինև բաժակս » . նոյն ինքն կամաւորու-  
թեամբ եկեալ ի ժամն յայն ասէ « ես անձամբ իմով  
զհեմ զանձն իմ, և իշխանութիւն ունիմ միւսան-  
Հատ. Ա. :

զամ առնուլ զնա » . առաջի Պիղատոսի դատեցեալ .  
և ի հրեշտակաց սպասաւորեալ . բեւեռեալ ի փայտի .  
եւ ընդ աջմէ Հօր յերկինս (բաղմեալ) . Թաղեալ ի  
գերեզմանի , եւ աւերեալ զըժոխս . յարուցեալ ի  
մեռելոց , ի վեր երթեալ յերկինս . ուր էր զառաջինն ,  
ըստ նորուն Տեառն բարբառոյն . զորմէ եւ Պօղոս  
ասէ » որ էջննոյն է , և որ ելն ի վերոյ քան զամենայն ,  
եւ զայ դատել զկենդանիս եւ զմեռեալս » :

Սա՛ Աստուած ամենայնի , Թագաւոր յաւիտենա-  
կան , երկրպագեալ ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ յաւի-  
տեանս : Վասնորոյ և նախեղեալ ճշմարիտ վարդապե-  
տացն Դիոնիսիոսի և Պիղատոսի (34) և Յուլիոսի՝  
Հռոմայ եպիսկոպոսաց , և Դիոնիսիոսի և Պետրոսի  
վկայի և Թէոփիլեայ . և յետնոցա՛ Աթանասի և Կիւր-  
զի եւ Գրիգորեանց և այլոց բազմաց յերկուց բնու-  
թեանց մի Աստուած խոստովանեալ է : Բայց զի ի  
Քաղկեդոնի ժողովին պատճառանօք բաժանմամբ  
զերկուս բնութիւնս ասացին այսպէս » ապրեցելոյ եր-  
կաքանչիւրոյ բնութեանն իւրոյ յատկութիւն (35) » :  
Ոչ ընկալան զնա ոմանք ի ձերոց ճարտարացդ առաջ-  
նորդք Աղեքսանդրացւոց , այլ և յայտարարութեամբ  
ընդդիմադրութիւնս բազումս արարին : Եւ Հայոց  
արհեստաւորաց որ Սղեքսանդրիս և յայլ քաղաքս  
բազում ժամանակօք ի հրահանգս կացին , ոչ է ըն-  
կալեալ զնոսա և ոչ հաղորդութեամբ միաւորեցան

ընդ ձերում աշխարհիդ : Իսկ այժմ աւելագոյնք այսպէս ասեն թէ՛ անխտիր հաղորդութիւն առնուն, որ է անհնարին չար . զի Տէրն ասէ » ես եմ հացն իջեալ ի յերկնից . և ես եմ հացն կենաց . եւ մարմին իմ ճշմարիտ կերակուր է եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի է . եւ որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի և ես՝ ի նմա, և որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան » : Եւ Պօղոս բաղում երկիւղիւ զգուշացուցանէ » քննեսցէ՛, ասէ, մարդ զանձն իւր և ապա ի հացէ անտի կերիցէ և ի բաժակէն արբցէ . զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ ի դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ . զի ոչ խտրէ զմարմին Տեառն » :

Եւ ևս սոսկալի՛ եթէ անարժանութեամբ հաղորդեալքն պարտական եղիցին մարմնոյ Տեառն, զոր ստուգեաց հաւաստապէս կանոնն ընդհանրական, չափ ժամանակաց սահմանելով առանձինն իւրաքանչիւր յանցանաց, յորս պնդագոյն ասլաշխարութեամբ սրբեալք ի մեղաց՝ արժանաւորին հաղորդութեանն : Իսկ այժմ ընկեցեալ երևին ի բաց զտէրունական հրամանն, և զկանոնս ուղղագոյն անխոյժ պարեալ ստէպ ստէպ մեղանչելով, եւ լուացմամբ մարմնոյ վաղվաղակի անարժանք ի հաղորդութիւն գասն . զորս Տէրն խոտէ յաւետարանի անդ ասելով ցՊարիսեցիսն » զարտաքին զբաժակին և զսկաւառաւ .

կին լուանայք, և ներքինն ձեր լի է պղծութեամբ » :  
Եւ Պօղոս ստէպ ստէպ ղմկրտութիւնն Հրէից մարմնոյ արդարութիւն կոչէ, որ յառաջ բան զժամանակն ուղղութեանցն էին : Զտկարագոյն միտս կատարեն պաշտօնեայքն . եւ այլ հայհոյութեան ևս բանիւք եթէ մարմին և արիւն Տեառն ի քառութիւն մեղաց է. գեղեցիկ է թէ այդպէս է, և ոչ անարժանութիւն իսկ . և սուտ գտանիցի առաքեալն և կանոնք համաձայն որ սսեն անարժան գոլ զմեղուցեալն և ոչ ապաշխարեալն . և համարձակ ևս վայելել ի ճաշակմանէ մարմնոյ և արեան Տեառն և ի սեղանոյ դիւաց : Այլ մի՞ ոք խարեսցի զի մարմին և արիւն Տեառն արդարև ստոյգ ի քառութիւն մեղաց է . այլ ապաշխարեւոյն եւ հեռացեւոյն ի մեղաց . այլ ոչ միշտ թաթաւեւոյն ի մեղս, զի սպառնայ այնպիսեացն Տէրն առնելով վրէժ անհնարին տանջանօք ի դատաստանին մեծի աւուրն : Եւ ոչ պարծիմք ղմեղ սուրբս լինել, այլ սակայն ո՛չ անխտիր ի հաղորդութիւն (դիմեմք) . այլ ահայեալք՝ բազում երկիւզիւ մեկուսանամք : Այլ զԵւտիքէս ընդ նմանիս նորա՝ առաջին և վերջին հերձուածոզս, նզովեալ եմք և նզովեմք . բայց զժողովն որ զբաժանեալ բնութիւնսն պահէ, եւ ոչ տայ ասել Աստուած խաչեցեալ, որպէս և այլք բազումք ի Հռոմոց, յորոց ոմանք եւ ի մեքովէ կողմանէս թիւրեցան, ոչ կարեմք ընդունիլ,

եւ ոչ ընդ այնոսիկ որ փոքրկայուցանեն զմարմին  
եւ զարին Տեառն՝ հաղորդել. զի ոչ ունիմք այդ-  
պիսի սովորութիւն :



Լ. — Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց, որք յաշորդե-  
ցին զկնի Տեսուն Մարտապոլայի քերթոյի :

Յետ երանելի առն Տեառն Մաթուսաղայի մնաց  
աթոռն անիշխան ամս 8 վասն հանապազ հինից եւ  
խռովութեանց, երբեմն ի Պարսից, երբեմն ի Յու-  
նաց, երբեմն ի Հոնաց : Ապա ընտրեն այր մի փա-  
ռաւոր, յոյժ լաւ և պիտանի ի գործ եկեղեցւոյ . եւ  
կացուցանեն զնա եպիսկոպոս Սիւնեաց. որոյ անունն  
Աբրահամ կոչիւր : Սա կեցեալ յաթոռն ամս 30՝  
վախճանի : Ապա յաջորդէ ի տեղին Տէր Յովսէփ  
հանդոյն նմին՝ այր բարի եւ լաւ, ամս 19. ապա Տէր  
Յովհան՝ ամս 22 . ապա Տէր Մովսէս՝ ամս 7 :

Սա սնուցանէր ամենայն զգուշութեամբ զսուրբն  
Ստեփաննոս իմաստասէր և մարտիրոս. ապա Անա-  
նիա՝ ամս 7 . ապա Յովհան՝ 9 : Ապա բաղձալին  
բնաւից, արեգակն ջահաւորեալ ի տանա Թորգո-  
մեան, երանելի և մեծ նահատակն, պարծանաց  
զաւակն և անդրանիկ որդին սուրբ և երկնահանգէտ  
Հատ. Ա :

10.



աթոռայս Սիւնեաց՝ Ստեփաննոս, ոչ ինչ ընդհատ քան զառաջինն, որ հանդիսադիրն է ամենայն մարտիրոսաց . զորոյ զհանդէս բանից եւ զերջանիկ բարեբաստութեանցն զհանգամանս ո՛չ է զանցառնլի . այլ կարգել համառօտիւ յայսմ մատենի :



**ԼԱ.** — Վլաս Տեստե Ստեփաննոսի Սիւնեցոյ վարք և վախճան . և որ ինչ պատմի զնմանէ :

Տարփումն բաղձանաց գործարանի սրտիս ձգտեցուցանէ զմիտս իմ՝ զհոմերականն առնուլ հագներ, գութիւն յիմումն առասանութեան՝ ստեղծուլ տաղս քաջողորակս և հիւսել դրուատս հրաշալուրս առ ի սխրացուցանել զներբողումն բաղձալոյս բնաւից յականճս մտադիւր լսողաց, զանհամեմատն յէիցս՝ իմաստնոյն եւ սերոբէասարաս առն Ստտօծոյ ասեմ զՍտեփաննոսի իմաստասիրի և անյաղթ հռետորի՝ Սիւնեացս մետրապօլտի, զորոյ զերկնահանգէտ քաղաքավարութիւն եւ զցանկալի կատարած կենացն եւ զսարսափելի գործ պատուհասին որ յետ վախճանին այսպէս ուսաք . եւ ձեզ կարճ թ կարճոյ շարագրեցաք :

Ստեփաննոս՝ սիւնն երկնի եւ խարխիւն հաւա

տայ, վէճն անդրդուելի եւ ախոյեանն անվախ սուրբ եկեղեցւոյ, մարտն երկնային և հրեշտակն երկրային, հանապազ մեռեալն եւ միշտ կենդանին, հիացուցիչն հրեղինաց եւ զարմացուցիչն քերորէից . զորոց զգովութեանցն հոյլս ո՛չ է պարտ իմոյ տհաս եւ թե՛րավարժ մտացս աղաւաղել բանիւք : ՍՊԼ միայն զգրուցացն բուռն հարկանել : Էր սա որդի աւազ երիցու մեծ մայրաքաղաքին Հայոց Գալլայ . և անանէր եւ զարգանայր ուսմամբ ի տան կաթողիկոսարանին Հայոց : Եւ յետ ընդ հասակին ոչ կամէր թաքչել ջահն ընդ գրուանաւ մարմնոյն . այլ հրաժարէր ի բազմամբոխ քաղաքէն . և գնայր ի համբաւատենչ եւ մեծաաքանչ հանգիսարանն , ի հրեշտակերամ կրօնաստանն սուրբ և յաստուածաբանակ առաքինաբանն Մաքենոցաց, առ աստուածազգեաց եւ սերորէատիպ հարանց հայրն Սաղօմ, որ էր էգոնոմոս մեծի ուխտին . որ պայծառանայր յայնմ ժամանակի մեծամեծ ճգաւրք եւ անտանելի խստամբեր վարուք : Որ եւ յորինեաց զպայծառացուցիչն տօնից տէրօնականաց եւ գլխատակս մարտիրոսաց զՏօնականն ի 150 թուին Հայոց : Եւ անդ տուեալ զանձն ի մեծամեծ տքնութիւնս եւ յանըմբերելի վարս մշտաջան առաքինութեանց : Եւ յետ ամաց ինչ, մինչ լցաւ հասակ ներքին մարդոյն գործականան . ապա ոչ համարեցաւ պատշաճ ընդ խաւարաւ

անգիտութեան կալ մնալ. այլ եւ ի գիտութիւն եւ ի կրթութիւն աստուածային իմաստիցն ջանայր հասանել. զի ոչ է անկ միակողմանի լծով ձգել զակօս երկրագործութեան. այլ զերկուան լծել՝ զտեսականն ասեմ եւ զգործականն, զի ամենայնն պատշաճաւոր լիցի : Սակա որոյ ելեալ ի մենարանէ անտի՛ փութայ, ձեպի յաղբիւրն իմաստից՝ ի վարդապետարանն Սիւնեաց, որ գլուխ էր ամենայն գիտնոց Հայոց, եւ պայծառացեալ դպրոցքն որ ի նմա. քանզի որպէս Աթենացիքն ի մէջ Հոռոմոց եւ Յունաց ճոխացեալ էին եւ մայր իմաստից կոչեցեալ յիսապանիացոց աշխարհին լատին եւ հելլէն դպրութեամբ. այսպէս և սոքա ի տանս Թորգոմայ յաշխարհիս Հայոց :

Որ եւ գնացեալ սորա առ երանելի եպիսկոպոսն Սիւնեաց Մովսէս՝ աշակերտի նմա. եւ ըստ առատ շնորհին որ ունէր, փոյթ ընդ փոյթ հմտացաւ աստուածային իմաստից. և փարթամ՝ ճոխութեամբ զարգացաւ եւ հասաւ ի գագաթ տեսական շնորհին՝ լցեալ անհամեմատ հանճարով : Եւ առեալ հրաման յեպիսկոպոսէն նստաւ յամբիոնն ըստուանական. եւ մեկնէր զաստուածային գիրս աշակերտելոցն ի վարժարանին : Ապա հասեալ վախճան երանելոյն Մովսիսի՛ յանձնէ նմա զհոգաբարձութիւն ակադեմիոյն : Իսկ յետ նորա եկեալ Ստեփաննոսի ի Դվին

առ կաթողիկոսն. եւ տայ ձեռնադրել յեպիսկոպոստութիւն Սիւնեաց զԱնանիա . եւ ինքն դադարէ անգէն ի կաթողիկոսարանին . եւ ոչ դադարէր երբէք ի մեկնելոյ զգրեանսն հին և նոր Ատակարանաց : Ապա եղև նմա հարաճատել վասն հաւատոյ ընդ երկարնակ իշխանի միոյ, որ էր ասպետ Հայոց՝ Սմբատ Բագրատունի . և զի ոչ էր հմուտ արտաքին փիլիսոփայական արհեստին, ոչ հաւանեցաւ իշխանն բանից նորա . այլ անարգեաց զՍտեփաննոս տգէտ կոչելով եւ կամէր հպածել : Ելեալ ապա նորա գաղտ ի քաղաքէն եւ փոխեալ զձեն՝ գնաց փախըստեայ ի Թագաւորական քաղաքն Կօտտանդնուպոլիս . եւ բնակեցաւ յանապատի (առ) ուղղափառ միայնակեցի մի որ էր հմուտ արտաքին իմաստից : Եւ ուսեալ անդ զգիր և զլեզու հելլէն և լատին աղգին՝ վարժէր զցայգ և զցերեկ ի գիրս եւ յարհեստս նոցա ըստ փիլիսոփայական ոճոյն : Լուեալ զայն ասպետին Սմբատայ՝ ազդ առնէ կայսերն Լեւոնի եթէ չարափառ ոմն՝ անարգիչ Թագաւորութեան քոյ եւ հայհոյիչ սուրբ հաւատոյդ, հալածեալ ի մէնջ բնակի այդր առ այս անուն միայնաւորի. որոյ անունն՝ Ստեփաննոս :

Լուեալ կայսերն ցասեաւ յոյժ . և հրամայեաց ածել ի դուռն . զոր և արարին : Իսկ նորա խրատեալ ի միայնակեցէն ասել զինքենէ անազգի եւ օտար եւ

մուրոյ պատճառաւ եկեալ ձստ . վասն որոյ ի հար-  
ցանել կայսերն պատասխանէ զնոյն . յորմէ շիջաւ  
ցտտումն . եւ հրամայեաց թողուլ : Ապա նորա հա-  
մարձակ բնակեալ ի քաղաքին՝ երթայր ի սուրբն  
Սոփիա . եւ խնդրէր յարկեղէ գրոցն զպիտանին եւ  
ընթեռնոյր յարածամ : Գնացեալ եւ յԱթէնս . եւ  
անդ վարժեցաւ ամենայն իմաստիւք . եւ դարձաւ ի  
նոյն քաղաք : Եւ ծանօթացեալ մեծ հիւպատոսի մի  
Դաւիթ անուն եւ թագաւորական սեղանոյն կենա-  
ռի . եւ ձեռնտուութեամբ նորին թարգմանէ զգե-  
զեցիկ գիրսն սրբոյն Գիտնիսիոսի . և դնէ ինքն դրժ-  
ուարագոյն և խրթին բանիցն լուծումն բան առ բան .  
թարգմանէ և զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիւսա-  
ցոյ զընութեան եւ զկազմութեան . ծանօթանայ եւ  
պատրիարքին Գերմանոսի . և ի տէրունական տօնսն  
ընթանայր յեկեղեցին և կանգնէր ի ժամ պատարա-  
գին . որ եւ յաւուր միում հարկեցաւ հաղորդիլ օրի-  
նացն եւ ոչ ա՛ռ յանձն պատճառելով թէ առանց  
իմոյ պատրիարքին հրամանի ոչ իշխեմ : Ընդ որ  
դժուարացեալ մտօք պատրիարքին՝ բազում հարց և  
փորձ առնէր ընդ նմա վասն հաւատոյ :

Եւ տեսեալ զանպարտելի իմաստութիւնն՝ հիանայր  
և գրէր թուղթ ի Հայս վասն հաւատոյ, որոյ սկիզբն է  
« Քրիստոս է խաղաղութիւն մեր », և տայր ցՍտե-  
փաննոս կնքեալ իւրով մատանեաւ տանել ի Հայս :

Իսկ համբաւ իմաստիցն նորա հասաւ յականճա կայսերն . եւ կոչեալ հարցանէր վնա վասն հաւատոյ . եւ նորա համարձակեալ ասէ « ո՞վ բարերար արքայ՝ հրամայեա՛ զի բացցին արկեղք գրոցն զի ես գտա նիցեմ անդ գիրս որ ցուցանեն զորպիսութիւն հաւատոյ ուղղափառ » . եւ առ ժամայն հրամայեցաւ բանալ : Եւ նա գտեալ անդ մատեան մի ոսկէտուփ սուրբ հարցն վասն ուղղափառ հաւատոյ գրեալ , եւ մատոյց առաջի թագաւորին . որում յոյժ հաւանեալ խրախացաւ և ասէ « դուք Հայք զա՛յս ունիք հաւատ » ասէ այո՛ : Ասէ կայսր « ե՛րթ ի Հոռոմ . եւ տե՛ս անդ յարկեղս մեծի եկեղեցւոյն եթէ գտանես այլ ևս երիս գիրս որպէս զայդ . ապա ղամենայն աշխարհ յայդ կրօնս դարձուցից » : Եւ նորա յոյժ խրախացեալ ընդ իրսն աստուածային իմն տեսչութիւն համարելով , գնաց ի Հոռոմ . և գտանէ անդ այլ ևս երիս մատեանս համարանս եւ միախորհուրդս նման առաջնոյն . որք էին սրարապնանց Աիւրդի և գանձուց , և միւսն՝ Աթա նասի Աղեքսանդրացւոյ , և միւսն՝ սրբոյն Եպիփանու ասացեալ : Առեալ զգանձն աստուածային՝ ծանեալ հոգւովն զի ոչ վնէր խորհուրդ թագաւորին . ոչ ղառնայր անդրէն . այլ նաւեալ ի Հոռոմայ՝ անցանէ ընդ անհուն ասպարէզս լայնածիր գոգոյ աշխարհամած ծովուն ովկիանոսական . և հասանէ ի Ղալին . տեսանէ ապա ղաշխարհս աւերեալ և ասպականեալ ի Տաճկաց ,

եւ բարձեալ զամենայն իշխանան Հայոց զոր այրեալ էին ի Նախճաւանի ոգիք իբրև ութ հարիւր . և մնացեալ միայն սինլիքորքն : Եւ էր կաթողիկոս Հայոց երանելին Յովհան օճնեցին սրբեալ զաշխարհս յաղանդոյն Եզրայ . եւ ինքն վախճանեալ . եւ Դաւիթ նստեալ ի տեղին, այն որ յԱրամառնս եղ զաթոռն կաթողիկոսութեան :

Մատոյց առաջի նորա զգրեանան եւ զթուղթն Պերմանտի . ընդ որ յոյժ սխրացեալ կաթողիկոսին՝ անտանելի ընոյր խնդութեամբ եւ առաւել քան զառաւել պատուէր եւ փառաւորէր զսուրբն Ստեփաննոս : Եւ հրամայեաց գրել նեւ պատասխանի թղթոյն զոր ինքն երեր . զոր եւ գրեաց յոյժ զարմացուցիչ բանիւք . եւ արար լուծումն բան առ բան թղթոյն պախարակելով զկրսեր և տգէտ իմացուածս նոցա . որ ունի օրինակ զայս « զՔրիստոսի խազտղութիւնն առբերելով » : Եւ էր յայնմ ժամանակի վախճանեալ եպիսկոպոսն Սիւնեաց Յովհան . եւ էր իշխան Սիւնեաց Բարզէն եւ Քուրդ որք եկեալ առ կաթողիկոսն Դաւիթ՝ խնդրեն ի նմանէ զմեծ իմաստասէրն, զերանելին Ստեփաննոս որ էր սուր հրեղէն ի ձեռին ամենասուրբ Հոգւոյն : Եւ ձեռնադրեալ կաթողիկոսին զնա յաթոռ մետրապօլտութեան Սիւնեաց . և վասն մեծի երախտեացն առաւել սպտուէ զնա և կայուցանէ զլուխ եպիսկոպոսաց, եւ աթոռն Սիւ-

նեայ՝ գլուխ ամենայն աթոռոց . ասեն ոմանք եթէ Սիւնեացն յեթններորդ դասուն էր եպիսկոպոսայ Հայոց . այժմ յերրորդ դասուն կարգեցին . բայց մի հաւանիր զի Աղվանիցն միայն էր ի վեր քան զՍիւնեաց վասն արքեպիսկոպոսութեանն . իսկ Սիւնեացն վասն մետրապօլտութեան գեր ի վերոյ էր քան զամենայն եպիսկոպոսն Հայոց . զի այլ ոչ ոք ունէր զմետրապօլտութեան պատիւն . եւ ո՛րքան պատրիարքն քան զարքեպիսկոպոսն է գեր ի վերոյ . եւ արքեպիսկոպոսն՝ քան զմետրապօլիտն . այնքան մետրապօլիտն քան զեպիսկոպոսն զի նա ձեռնադրէ զեպիսկոպոսն :

Ահա առեալ զմետրապօլտութիւնն Ստեփաննոսի՝ գնաց ի վիճակն . եւ աստուածային օրինօք խրատէր եւ ուսուցանէր, որպէս սուր հատանէր զախտացեալն, որպէս բժիշկ իմաստուն բժշկէր զլիրաւորսն, որպէս աղ ընտիր համեմէր զանհամեալսն, որպէս արեգակն պայծառ լուսաւորէր զխաւարեալսն, տղայոցն ի Քրիստոս կաթն ջամբեցուցանէր որպէս ծնող . կատարելոցն զկատարեալ կերակուրն մատուցանէր որպէս տնտես հաւատարիմ : Մեկնեաց եւ գրեանս բազումն՝ զԱրարածքն, զՅորն, զԵգեկիէլն եւ այլ բազումս . որոյ բանքն նշանաւոր ի մէջ այլոց մեկնչացն փայլին որպէս ջահ պայծառ : Արար եւ ճառս բազումս . բաժանեաց եւ զութն ձայնսն եւ կարգեաց, շարեաց  
Հատ . Ա :



գՅարութեան օրհնութիւնան . երգեաց եւ կցուրդս քաղցրահաման, յարմարեաց եւ զստողողին Յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր, եւ զպահոցն որ յաղուհացան երգի . մեկնեաց եւ զխորհուրդ գիշերային պաշտամանն :

Էր եւ սորա քոյր մի՝ ի մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան եւ առանձնացեալ ի ձորակին Գառնեոյ յայրի միոջ, եւ անտանելի վարս ճգնութեան կրէր յանձին . որոյ անուն Սահակդուխտ : Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին, որ եւ ի ներքոյ վարագուրի նստեալ ուսուցանէր զբաղումն : Եւ արար կցուրդս և մեղեդիս քաղցրեղանակս, յորոց մին՝ սրբուհին Մարիամ, որ իւրով անուամբն է յօրինեալ : Եւ անդէն ի նմին վախճանեալ դնի ի հանգստի յորմէ բազում բժշկութիւնք լինին : Իսկ երանելին Ստեփաննոս կացեալ յեպիսկոպոսութեան ամ մի . զոր ոմանք ութ ամ ասեն, շրջէր յամարայնի ի մէջ երկոտասան գաւառաց մեծավիճակ գաւազանի իւրոյ . եւ քարոզէր զբանն ճմարտութեան : Որ եւ հանդիպեալ սորա սակս հոգևոր հարկին ի գաւառս բարեկից ի ձորն Եղեգեաց յաւանն Մոզան . յորում բնակեալ էր կին մի սեղեխ արբեալ յիմարութեան ախտին, զոր յառաջ քան զայն երիցս անգամ զգուշացուցեալ էր զնա ըստ Տեառն հրամանի . և ոչ էր զղջացեալ : Վասն որոյ այն անգամ

սաստիկ ցասուցեալ սրբոյն եւ վճիռ հատեալ մեծ պատուհասի՝ երանէ ի գեղջէն, եւ վասն տօթածա մուն գնայ յակն քաղցրահամ աղբերն զոր աւագ ակն կոչէին, զովանալ ի նմա . և հրամայէ հարուլ զխորանն իւր . և ինքն ի վերայ ուռոյ միոյ դնէ զմահիճան հան, գստեան : Եւ ելեալ առանձինն աղօթէ ժամս յուրվս . և ննջէ ի վերայ նորա :

Իսկ կինն հերատուկ շարժեալ ի կատաղի բոցոյ ցանկութեանն՝ առնու ընդ իւր զհոմանին իւր եւ գայ սպանանել զսուրբն զի համարձակ լիցին ի գործն : Եւ մերձեալ ի ծառն՝ հանէ ի վեր զայրն եղեալ զսուրն ի ձեռն զի սպանցէ զսուրբն : Ելեալ առնն տեսանէր զսուրբն ննջեալ, և իբր զբոց ցորանայր շունչն ի վեր եւ ճախր առեալ դառնայր անդրէն . եւ հրեշտակ մի կայեալ ի սնարսն հովանի ունէր նմա թւօքն : Տեսեալ զայն առնն կարկեալ թուլանայր . եւ ամենայն յօդ ուածքն խաղայր, շարժէր, դողայր մեծաւ սոսկմամբ : Եւ այնչափ ուշաբերէր՝ մինչ անդրէն իջանէր ի ծառոյն և պատմէր կնոջն : Ապա կրկին յորդորէր կինն և սաղրէր քաղցր բանիւք պոռնկութեան և քաջալերեալ անդրէն յուղարկէր : Եւ նորա հրաշափառագոյն իմն տեսեալ տեսիլ քան զառաջինն՝ սաստկապէս ևս թուլանայր . և անզգայ մարմնով իբր մեռեալ անկանէր ի ծառոյն : Ապա կինն մինչ ետես յանհնարին պատուհաս ըմբռնեալ զայրն, փոխանասկ զջման

տուաւել եւս զչարեալ , եւ սրեալ ի բանսարկուէն՝ առեալ զսուրն հոլանեալ ելանէր ի ծառն . և հարեալ զսուրն ի փողսն սրբոյն՝ հեղոյր զարիւնն ամբիժ ի վերայ փայտեղէն մահճին , որպէս զՏեառն իւրոյ ի վերայ փայտեղէն գարծարանին մահու , սակս սաստիկ նախանձուն աստուածային օրինացն որպէս զՀեղիասն եւ զՅովհաննէսն . յորոյ մին 40 օր փաստական լինէր յԵզգարէլ՝ կնոջէն Աբայաբու , եւ միւսն գլխատեալ ի դստերէ Հերովդիսադայ :

Ապա յառաւօտուն իմացեալ պաշտօնէիցն՝ բազում ողբովք բարձին զնշխարս սրբոյն , տանէին ի սուրբ մենարանն ի լեառնն կոչեցեալ Սիօն որ պայծառանայր ճգնաւոր արամբք յայնմ ժամանակի քան զՍինայն եւ զՍկիւթայն յԵզիպտոս : Զոր լուեալ Սրկազան գեօղն՝ տէրամբն իւրեանց ելին ընդ յառաջ , և հաւանեցուցին զսպասաւորսն հանգուցանել ի սենեակն որ յանուն սրբոյն Քրիստափորի՝ անյաղթ զօրավարին , շինեալ էր . զոր տարեալ անդէն հանգուցին ի սենեկին : Իսկ երանեալ ճգնաւորն Աստուծոյ Նու որ էր բազում ամօք բնակեալ ի սուրբ լեառն Սիօն և հրեչտակացեալ ամենայն վարուք , տեսանէր ի տեսեան յայնմ առաւօտու զերկինս բացեալ եւ զհոյրս հրեչտակայ զի ելանէին գունդ գոնդ ընդ առաջ սրբոյն Ստեփաննոսի . եւ փարեալ զմաքուր եւ սրիւնաներկոգ : ով նորա՝ գոչէին մեծաձայն « ծառայ

բարի եւ հաւատարիմ՝ եկ, մտնոյ յուրախութիւն Տեառն քո» . և այնպէս մեծամեծ գովասանութեամբ տարեալ հասուցանէին առաջի անհղ աթոռոյ Աստուածութեանն, յորոյ վերայ մարմնաւոր տեսեամբ նստէր Քրիստոս՝ որդին Աստուծոյ :

Ապա երկրպագեալ սրբոյն՝ եւ սպիտակ նախորտամբն զոր ունէր ծրարեալ զգոգն լի արեամբ, զոր մատուցեալ առաջի Տեառն ասէր « քո է վրէժխնդրութիւն և արդար իրաւունք» . և այնպէս համբուրեալ առաքելոցն և հայրապետացն տարեալ հանգուցին ի կայանս իւրեանց մինչև յօրն հատուցման : Տեսեալ զայն սրբոյն Նուի եւ իմացեալ զմնասն՝ ժողովեալ զմիանձանցն հոյժ՝ դիմեաց ի լեռնէն առ սուրբն եւ մեծամեծ ողբովք և կականալիբ ազազակաւ պատմէր զտեսիլն և զգալ բարկութեանն Աստուծոյ ի վերայ դաւառին, և հայցէր զգուշանալ և հնարել աղօթիւք զհաշտութիւնն Աստուծոյ : Ապա յանկարծակի եհաս ի վերուստ պատուհաս Տեառն . և կալաւ խաւար շօշափեղի զգաւառն ամենայն զաւուրս 40, եւ շարժումն և զղղումն սաստիկ . զի եռայր երկիրն անհղ դողացմամբ յանդնդոց և բարձրանայր մինչև ի վեր . և անդէն իբր զալիս ծովու վլուզանիւր . լերինք տապալէին, վէմբ ի հիմանց քակտէին, տունք եւ ասարանք գեղեցիկք լինէին գերեզմանք բնակչաց . աղբիւրք խցէին . գետք կորնչէին . եւ ամենայն տեղի-

երերէր տատանմամբ . և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին ի ներքուստ յանդնդոց և ի վերուստ յօղոց « վայ ձոր, վայ ձոր » . և կենդանւոյն ընկզմեցան ոգիք իբրև 10,000, զորս գիտէին եւ ի թիւ արկին . եւ զանծանօթիցն ոչ ոք գիտէր զհամարն . յազազս որոյ կոչեցաւ անուն գաւառին Վայոց ձոր (36) :

Իսկ յետ 40 ատուր պատուհասին դադարեցաւ բարկութիւնն Աստուծոյ ի վերուստ . եւ ժողովեալ մնացորդք գաւառին կոչեն զկաթողիկոսն, և առնեն ժողով վանականաց . եւ բազում ատուրս ցայգապաշտօն կատարեալ՝ փոխեն զնշխարս սրբոյն ի միաբանակեաց վանան Թանահատի վանից, որք էին մշտապաշտօնք, հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց . վասն որոյ և թանահատք կոչեցան : Եւ շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի . զոր յետոյ յ728 թուականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբէթայարկ գեղեցիկ յօրինուածովք . և եղին զտապան սրբոյն ի հիմն նորա :

Եւ էր կատարումն սրբոյն Ստեփաննոսի ի թուականութեանն Հայոց 184, ի հրոտից ի 15 և յուլիսի 21, յաւուր յիշատակի սրբուհոյն Մարգարտայ և Սիմէոնի աղուաշին : Իսկ կինն տիրասպան անագան ուրեմն եկեալ ի սգաւորութիւն՝ մերկացեալ զհանդերձն և առեալ քարինս՝ ծեծէր զկուրծան . և այնքան բաղխէր զի իջանէր վտակ արեանց . և մեծ ող

բովք եւ դառն աղաղակաւ ճչէր եւ խայտառակէր  
զչար գործսն իւր : Եւ եկեալ հանդէպ վանապն յա-  
րևմուտս կոյս, յայնկոյս ձորակին փորեալ զտեղին, եւ  
թաղեալ զանձն մինչ յստինսն՝ զամառն եւ զձմեռն  
տապակէզ եւ ցրտահար լինելով, վայէր եւ ողբայր  
զցայգ եւ զցերեկ . եւ զմեղս իւր խոստովանէր : Յա-  
ղագս որոյ շարժեալ ի գութ հայրապետին՝ խնդրէր  
ի Տեառնէ ողորմութիւն նմա : Եւ յաւուր միում ի  
ժամ պատարագին ելանէր գոչիւն ահեղ ի տապանէ  
սրբոյն « Թողեալ լիցին քեզ մեղք քո ո՞վ կին դու » :  
Եւ լուեալ ամենեցուն փառս եւ գոհութիւն Աստու-  
ծոյ մեծի մարդասիրութեանն եւ անյիշաչար բարե-  
րարութեանն մատուցանէին : Քայց կինն թէպէտ  
էառ զթողութիւնն, ոչ եւ ի տեղոյն . այլ կացեալ  
ի նմին՝ վախճանեցաւ եւ թաղեցաւ յապաշխարու-  
թեան գգին իւր . եւ կայ հանդէպ վանապն : Որ եւ  
այնպիսի մեծ մարդասիրութեանն գոհութիւն եւ  
փառք անհատ եւ անվճար յամենայն եղական բնու-  
թեանց այժմ՝ եւ յանվախճան յաւիտեանս . ամէն :

**ԼԲ.** — Տեսիչ սրբոյն Մ'երոդի՝ Լպիակոպոսին Պատու-  
րայ և Վկայի, յադագս անցելոյն, ներկայիս և ասպա-  
նեացն, ասացուա՛ք յԱստուա՛հաշունչ գրոց . զոր  
բարգմանեալ է Տեսուն Ստեփաննոսի՝ Սիւնեաց  
Լպիակոպոսի :

Ի վերջնում (37) դարի արմատաքի խլեացի թա-  
գաւորութիւնն Պարսից : Ելցէ զօրականն Իսմայէլի  
յանապատէն Եթրիբայ (38), եւ ժողովեացէ զՔա-  
րաւոն . անդ լիցի ասացեալն ի մարգարէէն Եզեկիէլէ  
« կոչեաց զգազանս անապատի և զթռչունս երկնից  
և հրաւիրեաց զնոսա՛ ժողովեցարո՛ւք և եկա՛յք զի զե-  
նումն մեծ զենցի ձեզ : Կերա՛յք, կերա՛յք զմարմին հօ-  
րաց և արբէ՛ք զարիւն սկայից » : Յայս Քարաւոն ի Քա-  
բեթ անկցին զօրաւորք Հոռմայեցւոց յորդւոց Իսմա-  
յէլի, զոր օրինակ նոքա սպանին զզօրաւորսն Եբրայե-  
ցւոց և Պարսից : Քանզի սրտմտութեամբ և բարկու-  
թեամբ առաքեսցէ յերկիր ի վերայ մարդկան եւ  
անասնոց և զազանաց անտառի և տնկոց և ամենայն  
պտղաբեր տեսակի . եւ եզիցի գալուստ նոցա խրատ  
անողորմ : Եւ երթիցեն առաջի նոցա չորք հարուածք՝  
կործանումն, կոխումն եւ ասպականութիւն եւ աւե-  
րումն : Ասաց Մովսէս ցորդիսն Իսրայէլի ո՛չ զի սիրէ  
զձեզ Տէր Աստուած տանել յերկիրն աւետեաց

ժառանգել զնա . այլ վասն անօրէնութեան բնակչաց նորա :

Այսպէս զորգիւն Իսմայէլի ոչ զի սիրէ զնոսա Տէր Աստուած , տայ զօրութիւն աւերել երկիրս քրիստոնէից . այլ վասն անօրէնութեանն որ լինի . և վտանգ այլ այսպիսի ոչ եղև նոցա . և ոչ այլ լինիցի երբէք : Քանզի զգեճեալն արք հանգերձ շնացողաց . եւ որպէս կանայս պոռնիկս զարդարէին զանձինս իւրեանց . նոյնպէս եւ կանայք կային ի փողոցս եւ ի հրասարակս քաղաքաց յանդիման . և փոխանակեցին զընակնս պէտս յանբնականն , որպէս ասէ աստուածային առաքեալն . նոյնպէս և կանայք : Եւ մտանէին առ մի կին հայր եւ որդի համանգամայն եւ ամենայն եղբայր եւ աղբային առ հասարակ . վասն որոյ եւ իմաստունն Պօղոս նախ քան զժամանակն աղաղակեսցայ ասելով « վասն այնորիկ մատնեաց զնոսա յախտ անարգութեան գործել զանարժանս . զի էզք նոցա փոխանակեցին զպէտս բնականս . նոյնպէս եւ արուացն թողեալ զընական պէտս իգութեանն՝ բորբոքեցան ցանկութեամբ ի միմեանս , արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին . որ պարտ էր մոլորութեան նոցա յանձինս իւրեանց ընդունէին :

Արդ՝ վասն այսորիկ մատնեաց զնոսա Աստուած ի ձեռս բարբարոսաց , որոց անկցին ի մեղս եւ ի ժա հահոտութիւն , և պղծեսցին կանայք նոցա ի պղծոց .

Հատ. Ա :

11.



և արկցեն վիճակս ի վերայ նոցա որդիքն Իսմայէլի : Եւ մատնեսցին Պարաք յապականութիւն . և ի սուր անկցի Կապոտիկիա (իցէ՞ Կապպադոկիա) և յաւերումն և բնաւին ի գերութիւն . Սիկիլիա եղիցի անապատ . և բնակիչք նորա՝ ի գերութիւն և ի սպանումն : Եղիցի Գուդայ յապականութիւն եւ ի գերութիւն . Հոռոմք ի փախո՛ւստ դարձցին . եւ կղզիք ծովու՝ յաւերումն , և բնակիչք նորա սրով և գերութեամբ կորիցեն : Հայք ի փախո՛ւստ դարձցին . և բնակիչք նորա՝ ի գերութիւն . Եգիպտոս և Արևելք և Ասորեստան ընդ լծով եւ ընդ նեղութեամբ անկցին , ծառայեցուցեն՝ անխնայաբար եւ պահանջեսցեն յանձանց նոցա կշիռ ի վեր քան զգօրութիւնս նոցա , և եղիցին յանձկութեան և ի նեղութեան առաւել քան զորս ի գերութեան : Եւ լցցի երկիրն աւետեաց մարդով ի չորից հողմոց երկնից , որպէս մարախոյ բազմութեամբ : Եւ եղիցի ի նոսա ապականութիւն եւ սով . եւ բարձրասցի սիրտ սատակչաց նոցա . եւ յամբարտաւանութիւն ամբարձցին ի վեր քան զարժանն մինչև ցահմանեալ իւրեանց ժամանակ . եւ կալցին մինչ ցելս հիւսիսոյ , մինչեւ ցարեւմուտս . եւ եղիցին ամենեքեան ընդ լծով նոցա մարդ և անասուն , և թռչունք և ջուրք ծովուն լուիցեն նոցա . և անապատք դատարկացեալք ի բնակչաց նոցա՝ եղիցին յանձկութեան եւ ի նեղութեան առաւել քան զորս

ի գերութեան : Եւ իւրեանց գրեացեն՝ զլերինս եւ զձկունս ծովու եւ զփայտ անտառի եւ զհող երկրի . եւ քարինք անպտուղք եւ երկր եւ քրտունք երկրաւ գործաց եւ ամենայն շտեմարանք նոցա եղիցին . եւ բարձրասցի սիրտ նոցա պահանջել զմեռեալս ըստ հաւասարութեան կենդանեաց . որբոց եւ այրեաց ո՛չ ողորմեսցեն, զտնանկն եւ զաղքատն անարգեսցեն եւ զամենայն ծեր խռովեցուցեն եւ ո՛չ գթացին ի տնանկս . և անզգայ այսպն արասցեն և ծիծաղեսցեն զնոքօք որք իմաստութեամբն են պայծառացեալք . եւ ամենեքին լռութեամբ ըմբռնեսցին եւ ո՛չ կարասցեն յանդիմանել կամ չրջել ինչ . այլ եղիցին ամենեքեան յակէն զարհուրեալ . եւ խրատ նոցա չարաչար . եւ ո՛չ ոք իցէ որ կարիցէ այլայլել կամ պարսաւել զքանս նոցա . եւ եղիցի ճանապարհ նոցա ի ծովէ մինչեւ ի ծով, յարեւելից մինչեւ յարեւմուտս, ի հիւսիսոյ մինչեւ յանոպատն : եւ կոչեսցի ճանապարհ նոցա անձկութիւն :

Եւ գնասցեն ընդ նա ծերք եւ պառաւունք, տընանկք եւ մեծամեծք, քաղցեալք եւ ծարաւեալք եւ կապեալք երանելով զմեռեալս . քանզի ասացեալն յառաքելոյ խրատ ապստամբութեան այս է : Քանզի ասէ, եթէ ոչ եկեսցէ նախ ապստամբութիւնն եւ յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ որդին կորստեան . արդ՝ ապստամբութիւն խրատ է : Եւ վասնզի էջ .

վայրի կոչեաց Աստուած զԽամայէլ. վասն այսորիկ և իշավայրիք եւ այծեմունք անասաւտի եւ ամենայն տեսակը գազանաց ձեռընդելը եղիցին և ընտանասցին . սովեսցին եւ ասականեսցին եւ հալածեսցին մարդիկ . եւ գազանք սատակեսցին . եւ կոտորեսցին ամենայն վայտք անտառի . և գեղեցկութիւն լերանց ապականեսցի . եւ աւերեսցին քաղաքք . եւ եղիցին սահմանք նոցա անկողք զի պականեսցին մարդիկ . եւ պղծեսցի երկիր արեամբ եւ արգելցէ զպտուղ իւր . քանզի որ բռնապէս ունին զնոսա՝ չեն մարդիկ . այլ բարբարոսք եւ որդիք անապատի . եւ յանապատացուցանել եկեսցեն . ասականեալ եւ յապականեալը առաքեսցեն . եւ ծայրիւ սրոյ իւրեանց հարցեն զյղիս . եւ ի գրկաց մարց յախշտակեսցեն զմանկունս եւ հարցեն զգետնի . եւ եղիցին ի կերակոր գազանաց :

Եւ զքահանայսն ի ներքս ի սրբութիւնս սպանցեն . եւ ննջեսցեն ընդ կանայս նոցա ի տան սրբութեան, ուրանօր աստուածային խորհրդականութիւնն մատչէր . եւ զպատմածան սրբութեան սպասու զգեցցին կանայք նոցա և որդիք նոցա և դատերը նոցա . և դիցեն զայն ի վերայ երկվարաց իւրեանց . և կապեսցեն զգրաստոս իւրեաց ի հանգստարանս սրբոցն . եւ եղիցին սպանողք եւ ապականիչք իբրեւ զհուր փորձիչ աղբի քրիստոնէից՝ քանզի ասէ սրբազան առաքեալն

« ո՛չ ամենեքեան որ յԽարայէլէն են Խարայէլացիք են » : Ապա ուրեմն ո՛չ ամենեքեան բրիստոնեայք են, որպէս ասէ զիր, եօթն հազար ապրեցան յորդուոցն Խարայէլի որք ոչ կրկնեցին ծունր Բահազու. և ամենայն Խարայէլ ապրեցաւ ի ձեռաց նոցա : Այսպէս եւ ի ժամանակի ապստամբութեան եւ խրատու որդուոցն Խամայէլի սակաւ գտցին ճշմարիտ քրիստոնեայք . որպէս և ինքն Փրկիչն մեր ի սուրբ աւետարանին ասէ « արդե՛օք և Որդի մարդոյ եկեալ՝ գտցէ՞ հաւատս յերկրի » : Նուազեսցի ի ժամանակին յայնմիկ հոգին . և բազումք ուրասցին զճշմարտութիւն և զկենարաք իսաչն եւ զսուրբ խորհուրդն եւ առանց բռնութեան չարչարանաց ուրասցին զՔրիստոս եւ երթիցեն՝ զհետ ապստամբացն . քանզի յառաջագոյն աստուածային առաքեալն քարոզեաց ասելով թէ ի ժամանակս յետինս ապստամբեսցին մարդիկ ի հաւատոցն առ ունողն հոգի մոլորութեան . եւ ի վարդապետութիւն գիւաց, ի կեղծաւորութիւն ստաբանից ստեալք իւրեանց խղճի մտաց :

Եւ դարձեալ նոյն ինքն՝ « յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք . զի եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անչնորհք, անսուրբք, անմիտք, անազորոյիք, մատնիչք, յանդգուճք, անժոյժք, վէսք, անբարեսէրք, որք ունին զկերպարանս աստ-

ուածպաշտութեան, եւ ի զօրութենէ նորա ուրա-  
ցողք » : Եւ ամենայն ակարբ հաւատով ի խրատուն  
յայնմիկ յայտնեսցին, և ինքեանք զինքեանս որոշես-  
ցեն ի սրբոց եկեղեցեաց իւրեանց յօժարութեամբն.  
նոյն ժամանակն կոչեաց զնոսա ի մոլորութիւն .  
քանզի խոնարհամիտք եւ լռինք, ճշմարիտ քրիստո-  
նեայք և ազատք տանն թորգոմայ և ոչ իմաստուն-  
քրն և ընտիրքն ոչ խնդրեցին ի ժամանակին յայնմիկ  
զճշմարտութիւնն . այլ փոխանակ նորա խնդրեցին  
ինքնասէրքն, արծաթասէրքն, հայհոյիչքն, ամբար-  
տաւանքն, յափշտակողքն, արբեցողքն, պոռնիկքն,  
շունքն, անողորմքն, գողքն, ապստամբքն, անագո-  
րոյնքն, բանսարկուքն, անժոյժքն, վէսքն, մատնիչքն,  
հպարտքն, ցանկասէրքն, ծառայաբարոյքն, որք ունին  
զկերպարանս բարեպաշտութեան եւ ի զօրութենէ  
նորա ուրացողք : Այսպիսիքս եղիցին սպասաւորք  
աւուրցն այնոցիկ . եւ զամենայն զոր ինչ եւ հրա-  
մայեսցէ նոցա՝ խնդութեամբ կատարեսցեն : Եւ  
երկիւղածն ի Տեառնէ յոչ ինչ համարեսցի առաջի  
նոցա :

Եւ եղիցին մարգիկ ի խրատու որդւոցն Իսմայէլի  
ի կարիս մինչև անյուսալի մտաց իւրեանց . և բարձցի  
պատիւ քահանայից եւ սլակասեսցէ՛ պաշտօն ի տան  
Աստուծոյ . եւ լռեսցեն՝ ամենայն պատարագք եկե-  
ղեցւոյ . եւ եղիցին քահանայքն որպէս ժողովուրդն

եւ եղիցին յորժամ լցցի ժամանակ նեղութեան նոյս . բազմասցի նեղութիւն մարդոյ եւ անասնոյ . եւ ապականեսցին մարդիկ եւ անկցին յերկիր . եւ յաւելցէ այլ միւս եւս հարուած մարդկան : Նշեացէ այր յերեկորին եւ յարուցեալ ընդ առաւօտն գտցէ առ դուրս իւր պահանջող ոսկւոյ եւ արծաթոյ . եւ մաշեսցի ամենայն տուրեւառ ոսկւոյ եւ արծաթոյ . եւ վաճառեսցեն զամենայն պիտանիս իւրեանց : Յայնմ ժամանակի վաճառեսցեն մարդիկ զորդիս իւրեանց . արդ է՞ր աղաղաւ, ասեն, անտես առնիցէ Աստուած զհաւատացեալս կրել նեղութիւնս . զի երևեսցին հաւատացեալքն եւ անհաւատքն, եւ որոշեսցի որոմն ի ցորենոյ . վասն զի հուր փորձիչ է ժամանակն այն, եւ երկայնամտէ Աստուած զի երևեսցին ընտրեալքն . ըստ որում ասէ « երանի է ձեզ յորժամ նախատիցեն և չարչարիցեն և ասասցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ, ցնծացէ՛ք եւ ուրախ լերուք զի վարձք ձեր բազում են յերկինս » :

Իսկ ի յետին նեղութեան որդւոցն Իսմայէլի, ի վտանգել մարդկան եւ ի չունելն յոյս փրկութեան ի ձեռաց որդւոցն Իսմայէլի, յայնժամ յանկարծակի յարիցէ ի վերայ նորա թագաւորն Յունաց, այսինքն Հոռոմոց սրտմտութեամբ մեծաւ, և զարթիցէ որպէս այր ի քնոյ, զոր համարէին մարդիկ մեռեալ եւ յոչ

ինչ պէտտ : Սա ելցէ՛ ի վերայ նոցա ի ծովէն Նթով-  
պացուց, եւ արկցէ՛ սուր եւ աւերումն յՆթրիրն՝ յաշ-  
խարհն նոցա . եւ գերեսցէ՛ զկանայս եւ զմանկունս  
նոցա : Եւ ի բնակիչս երկրին ի ջցե՛ն որդիք թագա-  
ւորին սրով . եւ հարցե՛ն զնոսա եւ արկցե՛ն ի վերայ  
նոցա ահ . քանդի ամենայն բանակք նոցա տացին ի  
ձեռս թագաւորին Հոռոմոց . եւ եղիցի լուծ թագա-  
ւորին ի վերայ նոցա : Եւ հասցէ՛ ի վերայ նոցս անձ-  
կութիւն, քաղց և ծարաւ և նեղութիւն . և եղիցին  
ծառայք ինքեանք, եւ կանայք եւ որդիք նոցա ծա-  
ռայեսցե՛ն որոց ծառայեցին նոցա . եւ եղիցին ի  
ծառայութիւն նոցա չարագոյն եւ դառնագոյն հա-  
րիւրապատիկ . եւ խաղաղասցի երկիրն աւերեալ ի  
նոցանէ : Եւ ելցեն իւրաքանչիւր ոք յերկիր իւր եւ  
ի ժառանգութիւն իւր . Հայք, Ալիլիկիա, Սուրիա,  
Ափրիկէ, Փաղաաղ, Սիկիլիա . և մնացեալքն ի գե-  
րութենէ մի ելցեն յաշխարհացն յիւրեանց յերկիր .  
բազմասցին յերկրին որպէս մարախ, եւ աւերեսցի  
Արարիա և ծովեղերք խաղաղասցին . և բորբոքեսցի  
բարկութիւն և սրտմտութիւն թագաւորին Հոռոմոց  
ի վերայ ուրացողացն զՏէր մեր Յիսուս Քրիստոս :

Եւ եղիցի խաղաղութիւն մեծ, որպիսի ո՛չ եղև եւ  
ո՛չ եղիցի . զի ի յետինս եւ ի վախճանի եղիցին յու-  
րախութիւն յերկրի, և շինեսցե՛ն զքաղաքս, և ազա-  
տեսցե՛ն զքահանայս ի վտանգէ իւրեանց եւ հանդի-

ցեն մարդիկ ի ժամանակին յայնմիկ ի նեղութենէ իրեանց : Այս է լազաղութիւն զոր աստուածային առաքեալն անուանեաց, եթէ յորժամ ասիցեն լազաղութիւն եւ շինութիւն եւ ուրախութիւն, յայնժամ յանկարծակի ի վերայ նոցա սատակումն (եկեսցէ) : Եւ դարձեալ Տէրն յաւետարանսն ասէ, եթէ որպէս յաւուրսն Նոյի ուտէին եւ ըմպէին, կանայս առնէին եւ տրանց լինէին, այնպէս եղիցի և յաւուրն յետնում : Եւ յայնմ լազաղութեան նստցին մարդիկ խնդութեամբ յուտել եւ յըմպել, ի ցնծալ եւ յուրախ լինել, շինել շինուածս որպէս զի ոչ գոլ նոցա երկիւղ կամ հոգք :

Յայնժամ ըստ մարգարէութեանն Եզեկիէլի որ ասէ, եթէ յաւուրս յետինս ի վախճանի աշխարհիս ելցեն Գոգ եւ Մազոգ յերկիրն Իսրայելի, բացցին դրունք հիւսիսոյ. եւ ելցէ զօրութիւն ազգացն զորս արգել Աղեքսանդր ի ծագս հիւսիսոյ՝ Գոգ եւ Մազոգ, Անիգ եւ Ագիգ, Աբիազ, Դիւիոր, Փորինացիք, Աղրենացիք, Հոնք, Փարզիացիք, Դեկլիմացիք, Սարմատք, Թեթղէացիք, Զարմետացիք, Կաքոնացիք, Ամազարդք, Գարմադացիք, Մարդակերք, Թարիացիք, Ալանք, Փասկղինկացիք, Արգնէացիք, Սատառէացիք : Այսոքիկ 22 թագաւորութիւնք որք են արգելեալք ընդ դրամբքն զոր կանգնեաց Աղեքսանդր : Եւ տեսցեն մարդիկ եւ զարհուրես.



ցին . եւ փախիցեն եւ թաքիցեն ի լերինս և յայրս  
եւ ի գերեզմանս . եւ սատակիցին բազումք, եւ ո՛չ  
ոք իցէ որ կարիցէ թաղել . քանզի ազգքն որ ելանեն  
ի Հիւսիսոյ, ուտեն զմարմինս և ըմպեն զարիւնս դա-  
զանայ . նոյնպէս եւ զամենայն պիղծ եւ զկարիճս,  
զսողունս և զմեռելոտիս, զվիժածս կանանց . զենցեն  
զմանկունս եւ տացեն ուտել մարց իւրեանց :

Եւ ապականեսցեն զերկիր . եւ ոչ ոք իցէ որ կա-  
րիցէ կեալ առաջի նոցա . եւ յետ եօթն եւ կիսոց  
ամաց Հասցեն ի քաղաքն Յոսպէ : Առաքեսցէ՛ Տէր  
զգօրավար իւր և Հարցէ զնոսա ի վայրկենոջ միում :  
Եւ յետ այնորիկ իջցէ՛ թագաւորն Յունաց, եւ բնա-  
կեսցէ յԵրուսաղէմ՝ եօթն եւ կէս (ամ) . որք են  
ամք 10 և կէս : Եւ ի կատարել ամացն տասանց և  
կիսոց երևեսցին որդին կորստեան : Սա ծնցի ի Քո-  
րաղին և սնցի ի Բեթսայիղայ, եւ թագաւորեսցէ՛ ի  
Ասիատնայում . եւ ուրախասցի Քորաղին զի ի նմա  
ծնաւ . և Բեթսայիղայ՝ զի ի նմա սնաւ . և Ասիատ-  
նայում՝ զի ի նմա թագաւորեսց : Վասն այսորիկ և  
յաւետարանն Տէրն երիցս վայ տայ ասելով վնձ քեզ  
Քորաղին եւ Բեթսայիղայ՝ եւ դու Ասիատնայում՝  
մինչեւ յերկինս բարձրացար, մինչեւ ի դժոխս  
իջցես :

Եւ յորժամ երևեսցի որդին կորստեան, ելցէ  
Թագաւորն Յունաց ի Քաղաթան տեղին ուրանօր

կանգնեցաւ կենարար փայտ խաչին . յորում բեւեռեցաւ Տէրն մեր Աստուած, և զկամաւորն վասն մեր կրեաց զմահ : Եւ առցէ թագաւորն Յունաց զպսակն իւր . եւ դիցէ ի վերայ խաչին . եւ տարածեսցէ զձեռս իւր յերկինս : Եւ տացէ զթագաւորութիւնն իւր ի ձեռս Աստուծոյ և Հօր . եւ համբարձցի խաչն յերկինս հանդերձ թագիւն . վասն զի խաչն յորում բեւեռեցան վասն հասարակաց ամենեցուն փրկութեան, նախ նա հանդերձցի երեւիլ ի գալստեան նորա ի յանդիմանութիւն անհաւատից : Եւ աւանդեսցէ թագաւորն Յունաց զհոգի իւր . եւ յայնժամ խախանեսցին իշխանութիւնք եւ պետութիւնք . և լցցի մարգարէութիւնն Ղաւթի որ ասէ « լերինք ցնծասցեն առաջի Տեառն . զի զայ եւ զայ նա ի գատել զերկիր » :

Արդ՝ որդին կորստեան ի ցեղէն Ղանայ է, ըստ մարգարէութեան նահապետին Յակոբայ, օճ դարանակալ ի ճանապարհի նստեալ սպասելով խածանել զգարչապար երիվարի եւ ընկենուլ զհեծեալն յետս մնալով փրկութեան Տեառն : Արդ՝ հեծեալ է ճամարտութիւն եւ արքայութիւն արդարոց . իսկ գարչապարն են սուրբքն ի ժամանակին յայնմիկ հեծեալ յերիվար ճամարիտ հաւատոյն, խածցին յօճէն, յորդւոյն կորստեան ի գարչապարի յաւուրն յետնում ի ցնորս եւ ի սուտ նշանս անզօրս եւ

անբարտաւանս, քանզի կոյրք տեսցեն. եւ կաղբ  
գնասցեն. խուլք լուիցեն. եւ դիւահարք բժշկեսցին.  
և փոխփոխեսցէ՛ զարեգակն ի խաւար և զլուսինն՝  
յարիւն : Այսոքիւք սուտ նշանօքս իւրովք և ցնու-  
րիւք մոլորեցուցէ՛ զհաւատս և զընտրեալս : Արպէս  
և զայս հայրապետին Յակոբայ մտայ ակամբն ետես  
զհանդերձեալ լինելոց նեղութիւն ի վերայ երկրի, և  
մարդկան անձկութիւն ի սատակիչ յօձէն՝ յորդոյն  
կորստեան՝ ասաց յայսպիսի դէմն մարդկան արա-  
րեալ զօձն, ասէ « փրկութեան քում սպասեսցորք  
Տէր » : Իսկ Տէրն յառաջագոյն ասաց եթէ հնար ինչ  
իցէ մոլորեցուցանել եւ զընտրեալն . քանզի մտցէ  
Երուսաղէմ, եւ նստցի ի տաճարին Աստուծոյ հա-  
ւասար Աստուծոյ, մարդոյ տեսակով մարմնաւորի ի  
սերմանէ առն եւ յարգանդէ կնոջ ի ցեղէն Դանայ՝  
Յուդայ Իսկարիովտայի որ մատնեացն իսկ զՏէրն.  
եւ նա ի ցեղէն Դանայ էր :

Իսկ ի բազմանալ անօրէնութեան որդոյն կորըս-  
տեան ոչ կարէ անտես առնել Աստուած զկորուստ  
ազգի մարդկան զորս գնեաց իւրով արեամբն . առա-  
քեսցէ՛ վաղվաղակի զմտերիմ ծառայս իւր զԵնովք և  
զԵղիա ի յանդիմանութիւն հակառակորդին. առաջի  
ամենայն ազգաց յանդիմանեսցեն զնա սուտ գոլ եւ  
խարերայ, և ասացեն եթէ վասն մոլորութեան և  
կորստեան բազմաց եկն : Եւ տեսեալ զնա ազգացն

յամօթ եղեալ, եւ զմոլորութիւն նորա յանդիմա-  
նեալ, թողցեն զնա, եւ փախիցեն ի նմանէն, եւ  
յարեսցին ի սուրբան յայնոսիկ : Իսկ նա տեսեալ  
զինքն չարաչար յամօթ եղեալ եւ յամենեցունց ար-  
համարհեալ՝ սրտմտութեամբ եւ բարկութեամբ բոր-  
բորեալ սպանցէ զսուրբան Աստուծոյ : Յայնժամ  
երևեսցի նշան փառաւոր գալստեան Որդւոյ մարդոյ  
Աստուծոյ յերկնից . եւ եկեսցէ ի վերայ ամառոց  
երկնից փառօք երկնայնօք, եւ ամենայն հրեշտակա-  
պետօք և հրեշտակօք իւրովք . և սատակեսցէ զչարն  
Հոգւով բերանով իւրով : Եւ աստ առաքելականին  
յայտնաբանութիւն՝ յայնժամ ծագեսցին արդարքն  
որպէս լուսաւորք . և ամբարիշտք դարձցին ի դժոխս  
եւ ի կորուստն յաւիտենից :

30

Լ. Գ. — Վասն գաղտն Մրվանայ՝ տաճիկ գորավարին, ի  
Սիւնիս . և փեսայանաչոյն Բարսեայ սրարալի Սիւ-  
նեաց տեստն Վասակայ . և այրելոյն զՄաքենոցն . և  
կոտորելոյն զԳեղաքունի և զՖաղասական :

Ի ընուլ 176 թուականին Հայոց ելանէ անիծեալն  
եւ աշխարհաւերն Մրվան բազում զօրօք Տաճկայ ի  
Հայս . եւ իբրև հուր ստատիկ այրեաց եւ հրդեհեաց

զգեղեցկութիւն աշխարհիս որոյ անունն իսկ առա-  
ջանշան ճանաչիւր : Եւ բազում աւարան եկեալ ի  
Սիւնիս՝ ամրանայ ի բերդադիւղն Շաղատու . և կա-  
մէր զայն ևս ապականել զգեղեցիկ աշխարհն Սիսա-  
կան . եւ կուտեալ զգօրսն ի գաւառին Ծղկաց ի  
նմին տեղտջ : Ապա Վասակ՝ Սիւնեաց Տէր եւ իշ-  
խանայ իշխեցող, զնայ փութանակի եւ ածէ զԲա-  
բան պարսիկ բազում զօրու յԱտրպատականէ, եւ  
եհար զՄրվան սաստկապէս, և փախստական արար .  
բայց ինքն Վասակ ի նմին ամի վախճանի :

Եւ նոյն ժամայն առնու Բաբան զըուստրն նորա  
ի կնութիւն իւր . եւ առնէր ընդ ձեռամբ զգաւառն :  
Ի սոյն ամի և Տէր Ներսէհ Սիւնի՝ որդի Փիլիպպէի,  
սպանանէ վասն ռիութեան ինչ զՎարազ-Տրդատ՝  
որդի Ստեփաննոսի՝ Աղվանից իշխանի, եւ զորդին  
ևս ի գոգ մօրն սատակէ . եւ զամենայն ինչս նորա  
յաւարի առնու : Այս Վարազ-Տրդատ ի Միհրական  
ստոյմէն էր, որ ունէր զսեպհական տէրութիւնն Աղ-  
վանից : Յետ այսր անհնազանդ եղեւ դաւառն Բա-  
ղասականայ հրամանի եւ օրինաց Բաբանայ, որոյ  
եկեալ ձեռնտուութեամբ Աբլ-Ասադայ Աղվանե-  
ցոյ, կոտորեաց սաստիկ եւ անողորմ զգաւառն  
Բաղասականայ . եւ մաշեաց մինչ ի կանայս եւ  
մատաղ մանկտիս . որք վասն անմեղ խողխողմանցն  
պսակելոյ են ի Քրիստոսէ :

Իսկ ի գալ ամին զնայ Բարան ի գաւառն Գեղաբունուց եւ հարկ ի սուր սուսերի զքնակիչան ոգիք իբրև 15,000, եւ ղյոզնապայծառ մենարանն եւ զհռչակելի ուխտն Մաքենոցաց յաւարի առեալ զամենայն ստացուածն՝ այրեաց եւ քանդեաց զամենայն շինուածն. բայց կրօնաւորքն նախիմաց եղեալ և յերկուս բաժանեալ՝ կէսքն զնացին ընդ հօրն Սաղովի, ոչ առաջնոյն որ հարանց հայր կոչեցաւ, այլ ընդ նորին աշակերտին, ի գաւառն Եիրակայ, ի սուրբ ուխտն Զրեակ. յորում պայծառանայր սոյն այս Սաղովօն ճգնութեամբ սիւնամուտ լեալ : Եւ կէսքն զնացին ի յԱղվանս առաջնորդ կալեալ զվի ոմն յեղբարցն՝ բնակեցան ի Միհր-Ներսէհեաց վանքն որ է Զբվչտիկ : Եւ տեղին անբնակ մնայրապա յաւուրս Գրիգորի՝ Սիւնեաց Տեառն, որ Սուփան կոչեցաւ, վերստին նորոգեցաւ եւ շինեցաւ մեծ եկեղեցին. եւ պայծառացոյց առաւել քան զառաւել :



ԼԳ. — Վասն Թանահատի վանիցն . և հօրն Մխիթարայ :

Յայնմ ժամանակի պայծառանայր սուրբ եւ երկնահրաշ կարգօք գերափառ եւ հռչակելի ուխտն

Թանահատի վանից. որ կայ ի վերոյ Սիւնեաց յստու-  
րոտ լերինն ի բարձրաւանդակի միոջ ի մէջ անտա-  
ռին : Եւ էին սահմանաւորք, մշտապալաշտօնք հեռա-  
ցեալք յամենայն փափուկ կերակրոց, միայն աշտուճ  
հացիւ եւ լոկ ջրով վճարէին զսլէտս իւրեանց, եւ  
զայն յաւուրն միանգամ ընդ երեկս . լռիկք, հեղա-  
շարժք, որք իրր կանթեղունս անշէջս կախեալք լինէին  
յաղօթս զցայգ եւ զցերեկ . եւ պաշտօնք իւրեանց  
երբէք ոչ խափանէին զցայգ եւ զցերեկ : Եւ բաց ի  
սպասաւորացն ընդ դրունս վանիցն ոչ ոք ելանէր  
սորտաքս . եւ թէպէտ բաղում անգամ հարկեցան  
յիշխանացն եւ յեպիսկոպոսաց Սիւնեաց՝ ոչ առին  
յանձն ի կիւրակէքն ի թան կամ ի պանիր կամ  
յիւղ լսթիլ, այլ բանջարօք եւ ընդով շատանային .  
վասն որոյ թանահատք կոչեցան : Եւ ի գլխաւոր  
սօնան ի ձիթոյ ճաշակէին և սակաւ բաժակօք . և  
զայս ծանոց մեզ պատմութիւնն երանելոյն Մաշ-  
տոցի որ ի Սևան : Բայց գտաք յիւրոց արձանա-  
գրութեանցն եթէ 400 տմաւ յառաջ շինեցաւ եկե-  
ղեցին քան զհայ թուականն, յիշխանայն Սիւնեաց  
յանուն սրբոյ նախավկային Ստեփաննոսի :

Եւ էր եղեալ հայր վանիցն որոյ անուն Մխիթար .  
որ անցեալ էր ճգնութեամբ ընդ բոլոր հոյս առաքի-  
նեաց, եւ զգազանս վայրենիս, զարջս եւ զգայս  
ածէր ի հնազանդութիւն սուրբ եկեղեցւոյն եւ ծա-

ուպեցուցանէր վանիցն, զոր եւ արձանն եցոյց եթէ արար հարկատու մեքորայ, այսինքն եկեղեցւոյս : Գայլքն զՂոլիրս հօտիցն պահպանէին զգուշութեամբ եւ զանդեայս արջառոցն . և արջքն քամակօքն բեռնակիրք լինէին : Եւ հանապազ երթայր յանտառն սուրբ հայրն Միհիթար . եւ նստէր հանդէպ վանիցն . եւ ժողովէին ամենայն զազանքն եւ վայրիքն առաջի նորա, և որպէս զգայունք խնդրէին ի նմանէ աղօթս եւ ողորմութիւնս ըստ իւրաքանչիւր պիտոյից : Իսկ սուրբ հայրն կարգեալ սահմանաւ զվանսն . եւ յետ բազում ամաց փոխի ի կարգս հրեշտակաց . և գնի սուրբ նշխար նորա փայտեայ արկեղօք մերձ յեկեղեցին ի փոքր բլրակի միոջ, յորում շինեալ վիրապ գեանափոր և սրբաշէն՝ հանգուցին զնա անդ . որ մինչև ցայսօր կայ եւ կատարէ մեծամեծ սքանչելիս ի հիւանդս եւ յախտաժէտս : Արոյ բարեխօսութեամբն զթասցի Քրիստոս յաշխարհս այս և ի մեզ յետին թշուառացեալս :



ԼԵ. — Վասն եպիսկոպոսացն Միւնեսց, որ զկնի սրբոյն Ստեփաննոսի յաշորդեցան ի տեղին :

Կայեալ յաթ ու եպիսկոպոսութեան սուրբն Ստե-  
Հատ. Ա : 12



փաննոս՝ բսաներորդ երկրորդ եպիսկոպոս Սիւնեաց, վախճանի վկայական մահուամբ : Ապա զկնի նորա յաջորդէ ի տեղին Տէր Յովսէփ՝ այր ճշմարիտ և լաւ վկայեալ յամենեցունց, ամն 17. ապա Տէր Յովակիմ՝ ամն 17. Տէր Սաղովկ՝ ամն 32. Տէր Յովհաննէս՝ ամն 2. Տէր Սաղօմօն՝ ամն 7. Տէր Եղիա՝ ամն 8. Տէր Թէոդորոս՝ ամն 18. Տէր Գէորգ՝ ամն 8. Տէր Դաւիթ՝ ամն 17 : Սա էր յառուրս Փիլիպպէի՝ իշխանի Սիւնեաց, և Գրիգորի Սուփանայ՝ մեծ նահապետին Սիւնեաց, որդւոյ Սահակայ. որ հաստատեաց զաթոռ եպիսկոպոսութեանն ի Տաթեւոյ վանս. և ընդարձակեաց զսահմանս նորուն զոր յիւրում տեղոջ ասացից կարգաւ :

Յետ սորա ունի զաթոռն Տէր Յովհաննէս՝ ամն 10. ապա՝ Տէր Սաղօմօն առաքինին, որ էր զարդարեալ ամենայն ներանձնական առաքինութեամբ, եւ պայծառանայր իբրև արեգակն ի կամարն երկնից. և բազում իսկ ճոխացոյց փարթամութեամբ զեպիսկոպոսարանն : Սա կեցեալ յեպիսկոպոսութեանն ամն 17՝ վախճանի : Ապա երանելին եւ բազմաշխատն, արքայակերպն Տէր Յովհաննէս՝ ցանկալին հրեշտակայ եւ մարդկան, ամն 38. որ կանգնեաց զերկնակառոյց բաւարանն ի Տաթեւ զորոյ զհանգամանս գովելի գործոցն ճոխագոյնս կամիմ ճառել. բայց այժմ յետ բերելոյ զկարգ եպիսկոպոսացն եւ բազում բանիք

ճառերոյ զգանազան գործս նոցին, պարտ վարկանիմ  
անդրէն դառնալ եւ ղիշխանացն ցուցանել հանգա-  
մանս եւ զգրոյցս ըստ կարի իմում, զպատերազմաց,  
ղշինութեանց եւ զխաղաղութեանց եւ զարմացու-  
ցիչ գործս եւ շինուածս տանց Աստուծոյ, որ ի տե-  
ղիս տեղիս սեպհական աշխարհիս իւրեանց կանգնե-  
ցին արձան անջնջելի եւ յիշատակ անմահ :



**ԼԳ.** — Վասն Շահանդիստոյ՝ արքայազն աղչիսնն . եւ  
վասն մեհ եւ ահաւոր հրաշիցն որ եղևն յաշխարհիս  
Սիւնեաց :

Կամիմ պատմել ձեզ ո՞վ եղբարք՝ հրաշս զար-  
մանալիս որ եղևն յայնմ ժամանակի աստուածային  
իմն տեսչութեամբ . քանդի էք դուատր մի Վարազ-  
Տրդատայ՝ Աղվանից գահերէց իշխանի, որոյ անուն  
Շահանդուխտ . եւ ունէր պատկեր նոր եւ օտար . եւ  
գեղ նորա յոյժ չքնաղ եւ զարմացուցիչ տեսողաց .  
որ եւ ոչ ումեք նիւթեղէն կարծիւր . այլ իբր ի լու-  
սատարր օդոյ եւ յանօսր շողից կերպացեալ : Որ եւ  
խնդրեցին հարսն ի տանէ Թորգոմեան : Եւ ել նա  
յաշխարհէն իւրմէ ի հայրենի տանէ . եւ գնայր ի  
կնութիւն հայկազուն իշխանացն . եւ մտեալ ի Բա-

դուց սահմանն՝ երթայր ի ճանապարհն յանբոյթ տե-  
ղիս յառապարի մի յորում էր փրթուած քարի մի  
ահագին խորութեամբ, որ իբր յանդունդս հայէր  
հանդէպ մեծի հայրապետանոցին Տաթեւոյ : Եւ ահա  
անդ ղողեալ, ծուարեալ կային բազմութիւնք լէզե-  
ռնախումբ զօրաց սուսերամերկաց, որք վասն սխրալի  
գեղոյ նորա եկեալ էին ի Պարսից, և պահէին զանցս  
եւ զկիրճս ճանապարհացն զի յախշտակեսցեն զաղ-  
ջիկն :

Եւ նորա անիրազեկ էին բանին . յանկարծակի  
յարեան ի վերայ նոցա . և սուր ի վեր կալեալ սկսան  
յանխնայ կոտորել զբրիստոնեայսն : Ապա տեսեալ  
դայն մեծահաւատ օրիորդին՝ գիտաց զպատճառն, և  
կնքեալ զինքն տէրունեան նշանաւն, մտրակեաց  
զերիվարն եւ թռեաւ ընդ փրթուածս քարին : Եւ զի  
զայս գտաք ի հնացեալ նամակի գրեալ իւրով իսկ  
ձեռամբն, որ էր այսպէս . « Ես մեղուցեալ աղախինս  
Քրիստոսի Շահանդուխտ՝ դուտր Վարազ-Տրդա-  
տայ; երթայի հարսն ի տունն Թորգոմեան . և եկեալ  
ի սահմանս Բաղայ, ի գլուխ քարիս ընդ որ անցանէ  
ճանապարհն : Եւ ահա յանկարծակի պատահեցան  
ինձ Իսմայելացիք որք վասն համբաւոյ գեղոյ իմոյ  
կամէին յախշտակել զիս . եւ սուր ի վերայ եղեալ  
կոտորէին զհեծեղագունդն որ ընդ իս . ապա լսււ հա-  
մարեցայ քան ի ձեռն այլազգեացն գայլապատառ

կորնչիլ, վասն Քրիստոսին իմոյ գահաւլէժ մեռանել . եւ յիշելով զսուրբ Աստուածածինն եւ զսուրբն Հռիփսիմէ՝ յանձնեցի զիս սուրբ Երրորդութեանն . եւ կնքեցի զսողորմելի անձն իմ՝ սուրբ խաչիւն . եւ դարձուցեալ զերասանակ երիվարին՝ թռեայ ընդ քարս . եւ ապա յահագին շնչմանէ հոգմոյ եւ աներևոյթ զօրութեամբ իջայ իբր կառօք ի խորութիւն ձորոյս ես եւ երիվարն իմ անվնաս : Եւ դադարեալ անդէն՝ մեծաւ հիացմամբ գոհութիւն մեծ վերառաքեցի այնպիսի փրկողին զիս . եւ իջեալ ի հեշտավայրն՝ նուիրեցի զանձն իմ՝ Քրիստոսի . և ուխտեցի այլ ոչ ելանել աստի մինչ ցվախիճանն իմ :

Իսկ Իամայելացւոցն տեսեալ զայն՝ մեծաւ զարմացմամբ թողին անվնաս զգօրն իմ եւ գնացին . եւ ես աստէն ի տեղւոջս շինեցի մատուռն մի եւ խցիկ մի . եւ կրօնաւորեցայ ի տեղւոջս զամենայն ժամանակս իմ . թէսլէտ բազումս թախանձեցայ ի ծնողայն իմ՝ եւ ի հարսնածու իշխանայն , ոչ շարժեցայ ի տեղւոյս : Եւ կոչեալ զերանելի եպիսկոպոսն Սիւնեաց՝ յանձնեցի նմա զիս , և զամենայն ինչս իմ ետու ի ձեռս նորա՝ զկէս մասն բաշխել ի կարօտեալս եւ զկէսն տալ ի սուրբ եկեղեցին Տաթեւոյ : Եւ եւ զտեղիքս զայս աւանդեցի սուրբ եկեղեցւոյն ամենայն ձորովս , որ ի Շնհէրոյ սահմանէն ի վեր մինչ ի Քինական գետն » : Ահա այս իսկ իւրով ձեռամբն  
Հատ. Ա. :

էր գրեալ Շահանդխտոյ : Եւ կացեալ ինքն անդէն՝  
այլ ևս կուանս ժողովեաց առ ինքն . եւ մեծամեծ  
ճգնութեամբ կեցեալ ամս 30՝ վախճանի : Եւ եր-  
թեալ եպիսկոպոսին՝ դնէ ի հանգստի ի նմին տե-  
ղոջ զերանելի նշխարս սրբոյն . որոյ բարեխօսու-  
թեամբ խնայեսցէ՛ Քրիստոս ի տունս յայս եւ ի վի-  
ճակեալ սեպհական հաւտ սորա :



ԼԷ. — Յաղագս իշխանացն Սիւնեաց Սահակայ եւ  
այրոցն . գործք եւ վախճանք ևոցին որ յերկերիւր եւ  
յեօրանատուն բուսկանէն ընդ այս . գրոյցք և հանա-  
նօս տեղեկութիւնք բանից և գործոց ևոցա :

Ի հայրապետութեան Հայոց Տեառն Դաւթի  
Կակաղեցոյ, եւ յապարապետութեան Սմբատայ  
Բաղրատունոյ էր իշխան Սիւնեաց մեծ նահապետն  
Սահակ որ արքունական ճոխութեամբ վարէր զտէ-  
րութիւն իւր . եւ յոյժ միաբան եւ միախորհուրդ  
գնայր ընդ Սմբատայ՝ սպարապետի Հայոց, յամե-  
նայն գործս պատերազմաց եւ յօգտակարութիւն  
աշխարհիս Հայոց : Յաւուրս յայսոսիկ ունէր ի ծա-  
ռայութեան զաշխարհս Հայոց մեծ ամիրապետն  
Մայմուն . որ եւ առաքէ ոստիկան ի Հայս փոքր

գնդաւ Հաւլ անուն : Եկեալ նորա յաշխարհս՝ հասանէ ի դուռն Դավին քաղաքի . եւ կամէր մտանել և բնակել ի նմա : Էր եւ անդ այր ոմն ի կայսերական տոհմէ Սևադայ անուն, որ առեալ էր իւր կին ի Բագրատունի տանէ զԱրուսեակ . եւ սակս այնր բռնացեալ ունէր զյոլով մասն աշխարհիս Հայոց :

Սա ընդվզեալ և խանդացեալ ընդ Հաւլն միաբանութեամբ Սմբատայ Բագրատունոց եւ Սահակայ՝ Սիւնեաց տեառն, գումարտակ պատերազմի խմբեալ կամէր կոռել : Եւ թէպէտ հայրապետն Դաւիթ բազումս միջնորդեաց՝ ոչ կարաց համողել . ապա յարուցեալ Հաւլն իբր 2000 աւ խմբեաց ի պատերազմն ահագին յարձակմամբ յեզր Հուրազդան գետոյն հանդէպ Աւակերտի . փախոյց զնոսա . եւ անգէն հարեալ զգեղեցկագիտակ իշխանն Սիւնի Սահակ՝ դիպթաւալ յերկիր ընկենոյր . եւ Սևադայն և Արմբատ հագիւ մազապուր ճողոպրեալք եղեն : Իսկ երանելի հայրապետն Դաւիթ լուեալ եւ անհնարին ողբովք հեծեծէր . եւ ընթացեալ բազմամբոխ պաշտօնէիւք՝ կազմէր զղազաղն արքայակերպ . եւ բարձեալ զմարմինն մեծահանդէս պաշտամամբք, սաղմոսիւք եւ օրհնութեամբ բերեալ ի կաթողիկոսարանն ի Դավին . եւ անդ դնէ ի քնարանի մերձ սուրբ քաւորանին : Իսկ զկնի սորա պայազատէ զիշխանութիւն սորա որդին իւր Գրիգոր որ փաղաքչական անուամբ

Սուփան յորջ յորջիւր, այր մեծանճնեայ եւ բաղմա-  
խել եւ հնարաւոր յամենայն իրս կենցաղոյս . որ  
առաւել քան ղնախնիս իւր կարգէր զգահ իշխանու-  
թեան իւրոյ . եւ տնօրինէր զշինութիւն աշխարհիս :

Բայց յետ Գաթի յաջորդէ ի հայրապետութիւն  
Հայոց Տէր Յովհաննէս ի Առտայից, ի գեղջէ Ուլայից .  
եւ վասն խստամբեր վարուցն եւ ահարկու սաստիցն  
ի վերայ անզգամայ բիւր ոմանք ի նոյն տանէ երևեալ  
ստայօղ բանիւր պատրեցին զԲագարատ՝ իշխան  
Հայոց, եւ զայլս եւս . եւ հրապուրեցին յարսորումն  
կաթողիկոսին : Զոր իմացեալ իւր՝ կամաթող լինի  
աթոռոյն, եւ բնակէ միայնիկ ի վանս Այրից : Զոր  
լուեալ մեծին Սուփանայ Սիւնոյ՝ ոչ ժուժեայ մեծի  
վնասուցն եւ զրպարտութեանն . այլ գնացեալ առ  
սպարապետն Սմբատ խորհի ընդ նմա . եւ լինին  
վրէժխնդիր սրբոյ առնն Աստուծոյ : Եւ անգրէն  
ածեալ վերստին հաստատեն յաթոռն զՏէր Յովհան-  
նէս : Իսկ չարաւէզուքն ամենայն ի վերուստ մեծա-  
մեծ պատուհասիւք սատակեցան : Յետ այսր գործոյ  
մինչ վարէր զիշխանութիւնն ճոխաբար Գրիգոր, ոչ՝  
ժուժացեալ չարին . այլ արկ նախանձ չար ի սիրտ  
Բարգենի՝ եղբօր Փիլիպպէի, որդւոյ Ասասկայ, միւս  
նահապետին Սիւնեաց, որ եւ ի նոյն ցեղէ . եւ իսան-  
դայոյց եւ գրգուրութիւն չար ի մէջ նոցա զարթոյց  
զօրէն Այսենի եւ Հարելի : Որք եւ գումարտակ ի

վերայ իրերաց կարգեալ պատերազմեցան . և սպան  
Բարգէն զԳրիղոր . եւ ինքն յետս կործանեցաւ չա-  
րաչար զայլ թակղութեամբ ի տիրաւանդ օրինաց սի-  
րոյն : Ապա մինչ այս այսպէս լինէր՝ բարձեալ ըն-  
տանեաց նորա մեծակական ողբովք՝ տարեալ հան-  
գույին ընդ հարս իւրեանց : Եւ պայազատէ զտէրու-  
թիւն նորա Վասակ՝ որդի իւր, որ ըստ գգուանաց  
փաղաբջականին, Գարուռ կոչիւր :

Սա փեսայացաւ Աշոտոյ Բագրատունոյ՝ որդւոյ  
Սմբատայ, որ թագաւորեաց իսկ Հայոց, եւ հառ  
գղուստրն նորա Մարիամ իւր ի կնութիւն : Որ և ի  
տիրեչն Աշոտոյ յոյժ հարստակ էր սա գործոց եւ կա-  
մաց իւրոյ աներոյն . եւ նա յոյժ մտերմաբար հոգայր  
վասն Վասակայ . սակս որոյ եւ անցեալ եղև փառօք  
եւ իշխանութեամբ ընդ նախնիս իւր խառնեալ ի  
թագաւորեալ ցեղն Բագրատունի : Ահա յայտմ  
ժամանակի էր ամիրասլետ Պարսից զոր սուլտան  
կոչեն այժմ, անիծեալն Չաֆար . և առաքեալ էր ի  
Հայս ոստիկան մի Աբուսէճ անուն որ եկեալ ի Տա-  
րոն կալաւ զԲագարատ իշխանն . եւ եգ ի կասանս :  
Վասն որոյ յարուցեալ ի վերայ բնակիչք Տորոս լե-  
րինն՝ սպանին զԱպուսէճ եւ փախստական արարին  
(զգօրս նորա) : Լուեալ զայն ամիրապետին եւ յոյժ  
զչարեալ՝ առաբէ զոմն չարագոյն Բուղայ անուն  
ծանր զօրու, եւ հրամայէ զամենայն իշխանս եւ



գլխաւորս Հայոց ածել կապանօք առ ինքն. և զայլն  
ի սուր սոււերի մաշել : Որ եւ եկեալ կալաւ զիշ-  
խանան Հայոց զԱշոտ և զԴաւիթ՝ որդիս Բագարա-  
տայ ի Տարօն, եւ զԱշոտ՝ մեծ իշխանն Արծրունի  
ի կապանս եղեալ : Եւ Սմբատ սպարապետն իւ-  
րովի զնաց առ Բուղայ : Եւ զայլն ի սուր սոււերի  
մաշէր յանխնայ . իսկ զգեղեցիկն ընտրէր և պահէր  
զազատազնեայն յանօրէն օրէնս իւրեանց դարձու-  
ցանել, որք մեծապէս վկայեցին վասն Քրիստոսի՝  
Ատոմ եօթն ընկերօք եւ կոնն Ստեփաննոս և այլ  
150 արք որոց տօն կարգէր սուրբ հայրապետն Յով-  
հաննէս ի մեհեկի 25. եւ այս լինէր յ302 թուակա-  
նին Հայոց :

Ապա մինչ զայս ամենայն տեսեալ Բուղայի յա-  
ջողուած իւրոյ չարութեանն՝ խնդիր առնէր բազում  
հրոսակօք մեծ իշխանին Սիւնեաց Վասակայ Իշխա-  
նիկ կոչեցելոյ եւ եղբարց իւր, որք էին որդիք Փի-  
լիպպէի՝ որդւոյ Վասակայ, Սիւնեաց տերանց. որոց  
պակուցեալ ոմանք ամրացան յանառիկ ամուրնս  
Բաղայ. եւ Վասակ ոչ հաւատացեալ յամրութիւն  
բերդիցն . այլ խոյս տուեալ անց զնաց զկողմամբ  
Կոտայք գաւառի : Զոր խմացեալ Բուղայի՝ զօրս  
զհետ արձակէր, որոց հասեալ կամեցան ըմբռնել-  
ապա նորձս դարձեալ զվաղակաւորն ի գործ սկսաւ  
ածել . եւ զամենեսեան թաւալգլոր առնէր . եւ

ինքն գնաց ընդ արևելքս ի գաւառն Գարդման, առ իշխանն նոցա Կարիճ Թերևս օգնութիւն գտցի ի նմանէ, որ եւ ոչ ինչ եգիտ ըստ յուսոյն : Այլ իշխանն այն խարեալ ի դիւէն դաւաճանեաց նմա . եւ կալեալ կապանօք առաքէ առ Բուղայ Թերևս վասն այնորիկ զերծեալ լիցի ի ցաւմանէ նորա . որ և ըստ ուղղակչիո իրաւանցն Աստուծոյ ըմբռնեցաւ յետոյ ի նմանէ . եւ չարի մեծագունի պատահեցաւ : Իսկ չարն այն եւ անիծեալն Բուղայ ընկալեալ խնդութեամբ զՎասակ ետ ածել ասպատակաւ հինից եւ զեղբայր նորա զԱշոտ եւ զմեծ տիկինն՝ զմայր նոցունց ի Գվին, զորս երկաթի կապանօք դնէ ի դիւակոշ : Այսպէս ածեալ զբռամբ զամենայն իշխանս Հայոց եւ Աղվանից՝ չու արարեալ զնայ ի դուռն արքունի . եւ յանդիման առնէ մեծ ամիրապետին : Իսկ չարագլխին Զաֆարի տեսեալ զնոսա եւ սաստիկ ցասմամբ հարց եւ վորձ եղեալ վասն հաւատոյ՝ մեծամեծ և ազգի ազգի տանջանօք եւ պէսպէս նեղութեամբք տայր չարչարել զնոսա զաւուրս բազումս . եւ խախտեալ զոմանս ի հաւատոց տայր թլփատել :

Իսկ մեծահաւատն Վասակ և եղբայրն իւր Աշոտ ոչ ինչ հաւանեալ բանիցն եւ ոչ թուլսցեալ ի հաւատոցն Քրիստոսի՝ առ ժամ մի վերին երեսօք յանձն առնուն կատարել զկամս ամիրային . բայց

արին եւ քաջն Սմբատ նովին խոստովանութեամբ ի մէջ կապանաց եւ արգելանոցի կատարիւր բարուք մահուամբ . եւ զի նորա տարեալ հանգուցաւ ի վկայարանի մեծ մարգարէին Գանիէլի : Եւ պայազատէ զոտէրութիւն նորա (Աշոտ), որ եւ թագաւորեացն իսկ : Ապա եւ զերծեալ մեծին Ասասկայ Սիւնոց մարբն իւրով եւ եղբարբն եւ այլովք իշխանօք ի զերութենէն Բուղայի ի դառն կապանացն՝ գայ, մտանէ ի սեպհական աշխարհ իւր Սիսական . և ընդ որ անհուն ուրախութեամբ զամենայն աշխարհս : Եւ ի բաց մերկացեալ նորա զստուեր մահածին խոստմանն որ վասն անօրինին Մահմետայ՝ զգենոյր զհայրենի զգեստն մաքրութեան մեծամեծ զղջմամբ եւ ապաշուանօք, խոստովանութեամբ և առատաձիր տրովք տնանկաց միջնորդ ունելով առ Աստուած զերջանիկ եպիսկոպոսն Սիւնեաց զՏէր Սազօմօն : Եւ այսպէս ճոխացեալ երևելի վատօք՝ բաղումս ցուցանէր գործս արութեան յայսմ ժամանակի ի ձեռնտուութենէ նոյն Աշոտոց իշխանի որ եւ թագաւորեացն : Իսկ մեծ սեպուհ իշխանն Սիւնի Ասասկ Գարուռ՝ տղայ հասակաւ յերիտասարդութեան տիս վախճանի . եւ թողու երիս որդիս, որոց երէցն՝ Գրիգոր որ եւ սա Սուրբան կոչեցաւ, եւ Սահակ եւ Ասասկ :

Ապա առեալ երանելի տիկնոջն Մարիամայ զղի նորա զարդարեալ թագաւորական, զարդուք, ան-

հուն ամբողջիւ եւ անչտի աղաղակաւ եւ ողբերգա-  
կան պարուք փողոց եւ քնարահարաց հանդերձ կա-  
թողիկոսին Չաքարիայիւ տարեալ հանգույանէին  
ի քնարանի ընդ հարս իւրեանց : Եւ պայազատէ  
զտէրութիւն նորա որդի իւր Գրիգոր Սուխան :  
Սա յարդարէր դեղեցիկս զկարգ իշխանութեան իւ-  
րոյ . եւ ևս առաւել ծախէր զամենայն փարթա-  
մութիւն իւր և զկեանս ի գործ աստուածապաշտու-  
թեան և ի շինութիւն պայծառակերտ քաւարանայ  
որ դեռ ևս կան եւ վկայեն իրքն : Յայսմ ժամանակի  
պայծառանայր երանելին Մաշտոց ի Սեան կղզին  
մեծահանգէս առաքինութեամբ . որ էր որդի աշ-  
խարհիկ երիցու մի Գրիգոր անուն Եղիսլարդեցի . և  
եկեալ էր ի Սոթք գաւառ և պանդխտանայր անդ . որ  
և ետ զՄաշտոց յաշակերտութիւն սուրբ հօրն Մա-  
քենոցայ Ստեփաննոսի . յորում զարգացեալ ներքին  
հասական՝ ձեռնադրի ի քահանայութիւն ի Տէր Դաւ-  
թայ՝ Սինեայ եպիսկոպոսէ : Եւ անտի երթեալ  
յանապատն Արտաւազի Ապարանք . եւ անտի  
գնայ, մտանէ ի Սեան կղզին : Եւ յետ բազում  
ճգանց հրաման առնու ի տեսլեան շինել եկեղեցի  
յանուն երկոտասան առաքելոց, եւ սահմանել միա-  
բանակեացս . յաղագս որոյ եւ գային առ նա երկո-  
տասանքն ի վերայ ծովուն յանուրջս . եւ նշանէին  
զտեղի եկեղեցւոյն :

Հատ. Ա. :

Ահա սոյն երևմամբ վերին ազդեցութեամբ շարժեալ մեծ թագուհին Մարիամ՝ ամուսին Վասակայ Սիւնուոյ, գայ առ սուրբն Մաշտոյ. եւ բազում թախանձանօք ի հաւան ամեալ զնա ձեռն ի գործ արկեալ շինեն զգեղապաճոյճ եկեղեցիսն յանուն սուրբ առաքելոյ, և զմիւսն՝ յանուն տիրուհոյ Աստուածածնին . եւ զարդարեալ մեծամեծ սպասուք կանգնեն զնա տուն Աստուծոյ եւ բնակարան աստուածազգեաց արանց յՅՅ թուականին Հայոց : Բայց Մաշտոյ եղիւր սահման վանիցն, եւ պայծառացոյց երկնաքատակ կարգօք . յորմէ համբաւոյ միաբանեալ Աշտոյ՝ իշխանաց իշխանի, սուրբ ուխտին՝ գայ ի տեսութիւն սուրբ հօրն . եւ ընծայէ զփրկական նշանն աստուածընկալ խաչին . եւ տոյ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն գեօղա՝ զՎարոներն, զՑամաքաբերդ, զՊոմաճորն, զԲերդքն, զՈւռեաց տափ եւ զորսն կռակծին, եւ այգիս ի Պատնի եւ յԵրևան եւ յայլ տեղիս . եւ բազում նզովիւք հաստատեցին : Դարձեալ՝ սոյն Մարիամ շինէ զմեծապայծառ եկեղեցին ի Շողուագայ յանուն սրբոյ առաքելոյն Պետրոսի . եւ կարգէ ի նմա կրօնաւորանոց, դասս բազմահոյլ քահանայից վասն հողեաց տեսուն իւրոյ Վասակայ՝ իշխանի Սիւնեաց : Եւ գնեալ ի հագարացի մարդկանէ զգեօղն Շողուագայ ընդ 60,000 դրամի արատ յամենայն աշխարհական

հարկաց՝ ընծայէ ի սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն. նմանապէս եւ գեօղ մի ի Մազաղ քաւառի ընդ 3,000 դահեկանի դնէ եւ տայ ի սուրբ եկեղեցին. որոյ անուն գեղջն Գնէր. եւ հաստատէ արձան անջիճջ յիշատակի առաջի Գէորգեայ կաթողիկոսի և Յովհաննիսի՝ Սիւնեայ եպիսկոպոսի, և Գազկայ՝ Սիւնեայ տեառն. և Հրահատայ՝ եղբոր Վասակայ, եւ Արտավազդայ Շաղաանեցւոյ եւ այլ բազում ազատաց եւ իշխանաց :

Իսկ ապա յայնժժ ժամանակի խորհուրդ ի մէջ առեալ աստուածային իմն տեսչութեամբ Գրիգորի Սուփանայ եւ Վասակայ Իշխանիկ կոչեցելոյ՝ տէրանցն Սիւնեայ, ընդ Գրիգորի Դերենիկ կոչեցելոյ, որ էր իշխան տանն Արծրունեայ, եւ ընդ այլ իշխանայ Հայոց, խնդրեն յամիրապետէն Ամիր Ահմատայ եւ կայուցանեն զԱշոտ Բագրատունի թագաւոր Հայոց. որ եւ նորոգապէս զարդարեցաւ աշխարհս Հայոց ի շինութիւնս եւ ի խոր խաղաղութիւնս. զոր էօծ Տէր Գէորգ՝ Հայոց կաթողիկոս, և Տէր Յովհաննէս՝ Սիւնեայ եպիսկոպոս, այլովք եպիսկոպոսօք ի 334 թուականին Հայոց : Բայց յետ այսր մեծ իշխանն Վասակ որ և Իշխանիկ կոչիւր, փոխի յաստեացս եւ դնի ընդ հարս իւր : Եւ եղբայր նորին Աշոտ պայազատէ զտէրութիւն նորա, այր հեզա համրոյր եւ խաղաղասէր եւ բարեպաշտօն եւ երկիւ-

ղած յԱստուծոյ . եւ ամենայնիւ յամենայնի շինու-  
թեան պարապեալ Հայրենի տէրութեան իւրոյ :

Իսկ թագաւորն Աշոտ յետ 5 ամի թագաւորու-  
թեան իւրոյ վախճանի . եւ պայազատէ զթագաւո-  
րութիւն նորա որդին իւր Սմբատ, զոր հրամանաւ  
Ափշնի օծանեն զնա թագաւոր Հայոց կաթողիկոսն  
Գէորդ և եպիսկոպոսն Սիւնեաց Յովհաննէս, բղեչ-  
խըն Վրաց Ատրներսէհ, և իշխանն Սիւնեաց Աշոտ  
եւ իշխանն Արծրունի Պապիկ այլովք իշխանօքն :  
Ապա յետ բազում անցից ընդ աշխարհս Հայոց  
գնաց Ափշինն անգ (Բաղդատ) . և զօր բազում գու-  
մարեալ կամէր գալ ի Հայս եւ բնաջինջ առնել .  
զոր և կամքն վերին առ ժամայն սատակեաց . և խա-  
վան եղև չար առաջարկութեանն : Բայց փոխա-  
նակէ զտեղի նորա եղբայր իւր Յուսուփ . յորոյ ձեռն  
կրեաց յետոյ Հայք զահագին կործանումն եւ զան-  
պատմելի չարիս : Քայ այնուհետեւ Յուսուփ յա-  
միրապետէ անտի ոստիկան ի Հայս . եւ զառաջինն  
յոյժ մեծարգոյ մեծարեալ զՍմբատ թագաւորն եւ  
զամենայն իշխանս մեծամեծ պարզեւօք . նմանապէս  
եւ ինքն մեծարեալ ի նոցանէ կրկնապատիկ ընդու-  
նի պատիւս . եւ այն ինչ ժամանակս յոլով խաղա-  
ղութիւն բերէր ընդ բոլոր Հայաստանեայս . սակս որոյ  
ամենեքեան շինութեան եկեղեցեաց պարապէին . ևս  
առաւել որդիքն Վասակայ՝ Սիւնեաց տեառն, եւ

Գրիգորի Սուփանոյ՝ Սահակ եւ Վասակ, եւ մայրն իւրեանց Մարիամ ի գաւառին Գեղաբունոյ. զի այն իսկ գաւառ շուրջ զծովակոյնն նոցա էր հասեալ ի բաժին ժառանգութեան : Իսկ բուն գահ իշխանայն Սիւնեաց էր Բաղբ, Վայոյ ձոր եւ այլ շրջակայքն՝ Վասակայ եւ Աշոտոյ եւ որդւոյ Աշոտոյ՝ Սմբատայ, Սահակայ եւ Բարգենի եւ Վասակայ, եւ որդւոյն Վասակայ Փիլիպպէի :

Եւ արդ, որպէս վերագոյն ասացաք, շինէ Մարիամ զՍեւանայ եկեղեցիսն . եւ յետոյ՝ զՇողուազային . շինէ եւ Սուփան զգարմանակերտ փարաին բանաւոր հօտի ի գիւղաբաղաքին Արթայ յանուն սուրբ Աստուածածնին . եւ զարդարեալ մեծամեծ սպասուք կարգէ ի նմա դասս պաշտօնէից եւ պարսպէ մեծամեծ վիմօք . եւ մեծաւ ժողովով արարեալ նաւակատիք՝ խնդրէ ի կաթողիկոսէն եւ յեպիսկոպոսայն եւ յիւր եպիսկոպոսէն Տէր Յովհաննիսէ յիշատակ իւր յամենայն եկեղեցիս զերեք քառասունս՝ զնեղութեան կանոնն խաղաղական ժամուն եւ զառաւօտուն տաղմոսն . զոր եւ սահմանեցին իսկ վասն մեծամեծ եւ բազում երախտեաց նորա : Եւ կարգէ յիշատակագիր արձանի ի վերայ սուրբ եկեղեցւոյն որ ունի օրինակ զայս . » Ինձ Սուփանայ յիշատակարան հաստատեալ հոգեւոր ի Քրիստոս ի քաղաքագիւղս Արթայ՝ ի կացուածի իմոց նախնեացն, զոր



Նախքան նպաստ պարագայի հրատարակելու էին իրազեկածախ գանձուց յոլով աշխատութեամբ : Յետ այս ասպա իմոց նախնեացն խորհրդակցեալ կամօքն Աստուծոյ շինեցի տուն Տեառն եւ յարկ Աստուծոյն Յակերայ անուանակոչութեամբ Արքուհայ Տիրամօր Աստուածածնին, վիստոռ, կոխածոյ քարամբք . եւ ի տնս սենեակս Յ ի վերոյ եւ ի ներքոյ . եւ ասպա ի սմին սուրբ քաւարանիս կարգեցի քահանայս եւ զարդարեցի . զԱստուածածնի քահանայքն (39) նախնեաց իմոց եւ այլ ասպասաւորս բազումս աս զաստարի յարթունական ծանրութենէ եւ ի բեկարէ . եւ ասհանեցի հողս եւ ջուրս . եւ ետու միոյ միոյ քահանայի 50 գրամ ի տարւոյն . ոք լինի հնգեցիկս . եւ ասհանեցի չորիցս քառասունս եւ ասզմոս զնեզութեան կանոնն եւ զառաւօտուն ասղմոսն, ոքի որչափ ես եմ ի մարմնի, յաղագս կենացս յաջողման լիցի, եւ յետ վախճանի կենացս մեղուցեալ հողւոյ իմոյ կատարեն : Եւ յամենայն ամի իւրաքանչիւր ոք ի քահանայիցս չորիցս քառասունս առնիցեն վան իմ : Եւ արդ՝ եթէ ոք ձեռնարկէ յայս եւ յափշտակել ջանայ զիմ հոգեցատուր հողսդ եւ զայլ ընծայսդ ի քահանայիցդ . եւ կամ զքահանայ իչար ընկենու զոր աստեցի եւ յամենայն ուրեք, կամ ի զարթից իմոց կամ ի ժառանգաւորաց կամ յայլ ասագայ զկնի մեր, այնպիսոյն բարձցի անունն յերկրէ ե յի-

չառտակն, եւ դատապարտեալ եւ ամօթալից եղիցի յահեղ հրապարակին Քրիստոսի, եւ մեղաց իմոց համարս տայցեն յաւուրն դատաստանի. և ժառանգեացեն զհուրն անշէջ եւ զտանջանան յաւիտենական : Եւ եթէ քահանայքդ երբէք ստունգանիցէք եւ մոռացումն առնիցէք կարգեալ շարագրութեանցդ եւ կամ ծուլանայք յեղեալ քառաներոյդ, Տէր Աստուած դատապարտեսցէ զձեզ զաւակօք և զարմիւք. եւ բաժին ձեր ընդ տիրասպան քահանայիցն լիցի » :

Դարձեալ շինէ եւ ղերկնածեմ խմբարանն ի հրաշագան մենարանին, ի փառաքնակ ուխտն Մաքենոցաց, զգմբէթայարկ եկեղեցին յանուն սրբոց Աստուածածնին, եւ պարսպէ վիմօք. եւ այլ բազում շինուածս յօրինեալ զարդարէ զնա անկնայ գանձիւք եւ փարթամացուցանէ բազում ընչիւք. նա եւ գեղօք և ազարակօք և այգեստանօք ի Քառնի եւ յԵրեւան եւ յայլ տեղիս : Եւ կարգէ ի նմա արձան յիշատակի հարստայոյս արդեանցն իւրոց, որ ունի օրինակ զայս » Կամաւն Աստուծոյ եւ Սուխան՝ Յիւնեաց իշխան, շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս եւ անխնայաբար զարդարեցի սրատուական սպասուք եւ աստուածային կտակարանօք. եւ ետու զսեփական տեղն մեր ի սա ո՛ր ըստ անուան եկեղեցուցս Աստուածածին ասի, իւր ամենայն սահմանօք, լե-

րամբ և դաշտիւ, եւ ետու ուս ձկանց զԲողաչէն սե-  
ղանոյն, եւ 700 դրամ ի Գեղձանագետոյ զապա-  
լէն, 200 դրամ ի Կաթկայ, 350 յԱննուէն, որ լինի  
1250 դրամ. ետու և 5 կուղպակս ի յԱնի և 5 այգի  
Երեւան և 500 առու այգի ի գիւղաքաղաքն Գառ-  
նի, եւ 2 այգի Եղեգիս, եւ զամենայն պէտս սուրբ  
եղբայրութեանս լցի առատապէս եւ փարթամա-  
ցուցի ներքոյ եւ արտարոյ. ետու և ջուրիս եզանց և  
ջուկս զուարակաց եւ անդեայս և հօտս ոչխարաց :  
Եւ արդ՝ մայթեմբ զամենայն աստուածացելոյ սուրբ  
ուխտիդ պաշտօնեայտդ, որում Աստուած է միջ-  
նորդ, կատարել վասն մեղուցեալ հոգւոյս զերկու  
քառասունն տէրունի պատարագ ինձ . եւ անխա-  
փան երգել զերեկորին սաղմոսն՝ զնեղութեան կա-  
նոնն և զառաւօտուն սաղմոսն զոր կարգեալ եմ յա-  
մենացն եկեղեցիք : Եւ Տէր Յովհանէս՝ Հայոց կա-  
թողիկոսն, ի տանէս մի իշխեսցէ դատ կամ՝ փայքար  
հանել, և մի յիմ որդեաց կամ ի ժառանգաւորաց-  
այլ որ ընծայիս հակառակէ կամ հանել ջանայ եւ  
որ հակառակ սնուանեսցի՝ նզովս չարաչար ընկալցի  
յԱստուծոյ եւ յամենայն աթոռակալաց սրբոյն  
Գրիգորի, եւ մասն ընդ Յուդայի մատնչին եղիցի :  
Եւ դարձեալ խօսիմ ընդ ձեզ Առաջնորդք եւ կրօ-  
նաւորք վանացս՝ հաստատուն կալ մինչ ի գալուստն  
Քրիստոսի, և վարդապետելն և սաղմոսելն վասն իմ

անհոսփան եղիցի. և եթէ որ ծուլասցի ի քառասնեակ  
աւուրսդ ամ յամէ կատարել զմեղսաբաւիչ սուրբ  
խորհուրդն յետ ելից իմոց ի կենցաղոյս, ի Քրիստոսէ  
որոշեալ եղիցի, եւ մասն ընդ Սիմոնի կախարդի  
ընկայցի. եւ ի սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի :  
Շինեցի եւ ղեկեղեցին ի գիւղաբաղաբին Արթւայ. և  
ի նմա՝ 8 սենեակ. և արարի պատիւ ի տան Տեառն,  
զոր շինեցաք. եւ ՂԱստուածածնին քահանայքն  
ազատ արարաք յամենայն արքունի չարէ. ընդ նոսին  
եւ զայլ պաշտօնեայս եկեղեցւոյ որք ի քահանայա-  
կան կարգէ » :

Ահա այս իսկ էր արձան Մաքենոցաց, բայց վասն  
հնութեանն եւ խախտելոյ քարանցն ոչ կարացաք  
գրովանդակն իմանալ. այլ բազում բանք եւ տուրք  
իշխանացն պակասին. զայս փոքր ի շատէ եղաք զի  
մի բնաւին ջնջեալ կորիցէ յիշատակ նոցա. եւ այս  
ամենայն գործեալ եղև յ300 թուականէն մինչև  
յ350ն : Իսկ եղբայր Գրիգորի Սահակ շինէ զպան-  
ծալի յարկն մեծածախ յօրինուածովք ի Նորա-  
տուա գիւղ. եւ կարգէ ի նմա բազմութիւն քահա-  
նայից. յորոյ դրան եւ ինքն հանգուցեալ կայ ի տա-  
պանի : Նախանձեալ ընդ այս բարուք մոլութեամբ  
Շապուհ Բագրատունի՝ եղբայր Մարիամայ, եւ ի  
ձեռն քեռն իւրոյ շինէ զվառուար տաճանն Աստուծոյ  
յանուն սրբոյն Գրիգորի Առաւորչին ի ձորակին  
Հատ. Ա. :

Վանէզիանաց որ այժմ Աթանոյ կոչի. եւ պայծա-  
ռապէս զարգարէ զնա. եւ բազում տուրս ընձեռէ ի  
պէտս եղբարցն եւ հաստատէ տուն կրօնաւորաց.  
որոյ յիշատակագրութիւն արձանին ունի օրինակ  
զայս « Յանուն Աստուծոյ եւ Շապուհ Բագրատու-  
նիս՝ Հայոց սուպարապետ, տերանց տէր, որդի Աշո-  
տոյ՝ Հայոց թագաւորի. ի ժամանակս Հայոց թա-  
գաւորի մեծին Սմբատայ՝ հարազատ եղբոր իմոյ, եւ  
վերադիտողի Հայոց հայրապետի Տեառն Յովանիսի,  
իմացայ եւ ծանեայ թէ ամենայն փառք եւ մեծու-  
թիւն սպառելոց են եւ վաղիւ կորնչելոց. եւ մեծա-  
փափագ տենչանօք վերակացու և տեսուչ առնելով  
զբոյր իմ Մարիամ՝ Սիւնեաց տիկին, յիմուան իշ-  
խանութեան ի Վանէզիանս տուն Աստուծոյ կանգ-  
նեալ վիմատաշ կոփածովք, շտաածախ գանձիւք  
եւ մեծաջան վաստակովք կատարեալ. թերևս լիցի  
ինձ ողորմութիւն յայնմ աւուր յորժամ բանքն սպա-  
ռին եւ գործքն թագաւորեն : Եւ տուաք ի քեզ  
Վանէզիանուց վանական հայր Աբրահամ՝ աղօթել  
եւ վայելել, եւ որ այլք յետ քո յաջորդեն. եւ պաշ-  
տօնեայք խորանին՝ յորժամ ժողովիք միարան յա-  
ղօթս, եւ կերակրիք յանմահական կերակրոյն, յի-  
շեսջիք զիս և զիման զի արասցէ ողորմութիւն ողոր-  
մածն Աստուծոյ : Եւ ետու հինգ գեղոց սահման՝  
Կոթաբարն, Աղարոյ վանսն, Շաւառնահոլն, Գե-

տամէջն, Կթանոցն, Գետավանաց ծալն, 260 դրամ  
ի Կոթարարէն, 530 ի Բրտենեացն, 660 յԱղարոց  
վանացն ծովէ, 990 ի Կարբին գետերէն եւ ի նաւե-  
րէն (42) : Որում մի որ իշխեսցէ հակառակել : Եւ  
թէ յանդգնի որ՝ յ318 հայրապետացն նզովեալ եղի-  
ցի, եւ մասն եւ բաժին զՅուդային առցէ. ի թուիս  
Հայոց 352 » :

ՆՈՒ 61

Աստ կան ի շիրմի աստուածազգեաց Տէր Սաղո-  
մօն եւ Տէր Աթանաս եւ Սմբատ Բագրատունի :  
Գարձեալ եւ յետ ամաց ինչ նորոգէ եւ Գազիկ՝  
որդի Աշոտոյ շահանշահի, զհրաշակերտ եկեղեցին  
Վանէվանաց՝ զսուրբ կաթողիկէն, և տայ զԴեղձա-  
նազետ ի նա. եւ պարսպէ շուրջ զեկեղեցեան. եւ  
դրէ արձան անիծից ոչ յախշտակել զսցն ի սուրբ  
եկեղեցւոյն : Արդ՝ այս այսքան տեղեկութիւն քեզ  
գովելի գործոց իշխանացս, եւ շինութեան եկեղե-  
ցեաց եւ ժառանգութեան նոցին. որ եւ ոչ միայն  
այս, այլ և բազում էին շինեալ եկեղեցիք ի Սիսա-  
կան աշխարհի եւ յԱրարատեան գաւառի : Բայց  
մեծ իշխանքն գահագլուխք Սիւնեաց տէրութեան  
Աշոտ եւ որդի իւր՝ Սմբատ եւ այլք յոլով եւ մե-  
ծամեծ երեւեցուցին գործս ի շինուածս եկեղեցւոյ,  
զարմացուցիչ ամենայն տեսողայ, զորոց զհանգա-  
մանս յետոյ պատմեցից կարգաւ : Այժմ՝ անդրէն  
դարձեալ ճառեցից զկարգ իշխանոցն եւ զմեծա-

մեծ անցա աղետիցն որ ընդ մեր աշխարհս յանի-  
ծեալ նեոնէն Յուսիպ :



ԼԸ. — Գաջն Յուսիպ ի Սիսական աշխարհս . և գեր-  
փումն եւ կոտորումն զաւսուացս . փախուաւ իշխա-  
նացն . տիեզերահոժ տագնապ եւ հրակէզ հրդեհումն  
երկնատեղաց բարկութեանն . վկայական մահն Սըմ-  
բատայ բագաւորին . եւ կրկին դարձ գերեւոցն եւ  
փախառէիցն . զրոյցք որ յ358 բուսկանէն Հայոց  
ընդ այս աժեայ ձգի :

Յայնմ ժամանակի ապստամբեալ Յուսիպ յիւր-  
մէ ամիրապետէն՝ կամէր ի դիմի հարուլ նմա . վասն  
որոյ յղէ ամիրապետն առ Սմբատ Թագաւորն՝ զօ-  
րու ծանու գնալ ի վերայ Յուսիպ յԱտրպատա-  
կան : Զոր եւ կամեցաւ կատարել իսկ Սմբատ . եւ  
զօր գումարեաց : Եւ ի ծածուկ ծանոյց զիրոն Յու-  
սիպ . բայց նա ոչ հաւատաց մտերմութեանն . այլ  
ծածուկ ի սրտին նիւթէր, նօթձէր զդառն ոխու-  
թիւն . եւ ակն սուեալ սպասէր դիպող ժամու :  
Ապա հնարեալ հնարս եւ հաշտեալ ընդ ամիրապե-  
տին՝ առնու ընդ ձեռամբ եւ զՀայս . եւ զօր գումա-  
րս . պատրաստութիւն կազմէր՝ ի գալ գարնանն

եղանել յաշխարհս Հայոց . յորում աւուրս մեծ նախարարն Սիւնի եւ գահերէց իշխանն Աշոտ յետ բազում քաջութեանց և մեծամեծ երեւելի գործոց, այնչափ բարեպաշտութեանց եւ շինութեանց աշխարհի եւ եկեղեցեաց և վանորէից փոխի յաստեացս :

Իսկ մեծ բարեպաշտուհին եւ անհամեմատն ի կանայս Շուշան՝ կին նորա, զարդարեալ զղի նորա արքունական ձեւով . եւ աշխարհաժողով ամբոխիւ, դամբանական փողովք եւ ողբերգական քնարահարիւք տարեալ հանգուցին յեպիսկոպոսարանին Տաթեւ ի դրան սուրբ եկեղեցւոյն զոր իւր հրամանաւ շինեալ էր Տէր Յովհաննէս : Յորոյ ի սուգ եկն Մմբատ թագաւորն ամենայն իշխանօք Հայոց . եւ լացեալ ղյալիւն մեծ՝ մխիթարեցին զտիկիմն եւ զորդիսն՝ զՄմբատ, զՍահակ, զԲարդէն եւ զՎասակ : Եւ կացուցանեն զՄմբատ գահագլուխ իշխան Սիւնեաց եւ տէր ի վերայ ամենայն Սիսական աշխարհին : Իսկ և իսկ ապա ի բանալ դրանն գարնայնոց շնչեաց հողմ դառնութեան եւ ցոլացաւ բոցն հարաւային յաշխարհս մեր . եւ յորջից իւրոց գազանն անդառադեղ և շունն կատաղի՝ Յուսուփ . և կամէր կլանել զամենայն Հայաստանեայս : Եւ հասեալ ի Նախշաւան քաղաք յաւուրս սուրբ պատեքին, և ասպատակ սիւռեալ կամեցաւ ջնջել ղգլուառն Սիւնեաց և զբոամբ ածել



զիշխանսն : Իսկ դահերէց իշխանն Սիւնեաց Սմբատ  
ժողովեալ զեղբարս, զազգայինս իւր եւ զազատա,  
գունդ զօրս ասինայն իւրոյ իշխանութեանն՝ եւ ընդ  
յառաջ Իսմայելականացն . եւ կալաւ զանցս եւ  
զկիրճս ճանապարհայն . եւ զբազումս սատակեցին :

Բայց զի խնամք վերնոյն հեռացեալ էր, և կամէք  
մատնել զմեզ, ոչ ինչ օգտեցան եւ ոչ կարացին ըզ  
զէմ ունել . այլ զմայրն իւր զՇուշան եւ զկինն իւր  
Սոսիի, որ էր դուստր Գերենկին՝ քոյր Գազկայ Թա-  
գաւորելոյն ի Վասպուրական, փոքրիկ ստնդեայ  
սողայով միով, եւ զկինն Սահակայ՝ եղբօր իւրոյ, որ  
էր (դուստր) բրեշխին Գուգարաց, տարեալ ամրա-  
ցուցանեն յանառիկ ամուրն Երնջակայ . և ինքեանք  
փախատեայ լինին : Սմբատ զնայ առ աներն իւր  
Գազիկ ի Վասպուրական . և Սահակ՝ առ իւր աներն  
ի Գուգարս . բայց Բարգէն եւ Վասակ մնացին ան-  
դէն . եւ Գրիգոր Սուփան եւ եղբարք իւր մնան  
յիւրեանց տեղիս ամրացեալք ի կատարս լերանց և ի  
ծործորս ծերպից վիմաց : Իսկ անիծեալն Յուսուփ  
տեսլեալ զայն, և ասպատակ սփռեալ ընդ գաւառն  
ամենայն՝ ժողովէր զառ եւ զաւար եւ զբազմութիւն  
զերեաց զօրս միանգամ եգիտ . և ի նոցանէ ընտրեալ  
զպիտանիսն եւ զգեղեցկադոյնսն՝ ի գերութիւն վա-  
րեաց . և զայլսն սրոյ ճարակ տուեալ կոտորեաց . և  
ահա լինէր այս յաւուրս տօնի սուրբ զատիկին : Ե-

խառնեցաւ անբաւ սպանելոցն արիւն յարիւնն փրկական Փրկչին մերոյ Յիսուսի, որ յայնմ աւուր հեղաւ ի վերայ խաչին . որոց պահի պսակն մարտիրոսաց . եւ եղև այս յ358 թուականին Հայոց :

Իսկ անիծեալն Յուսուսի գործեալ զայս ամենայն ոճիրս, եւ երկոտասան օր երեկոթս արարեալ՝ անց, գնաց ի Գլին քաղաք . եւ նստաւ ահագին բանակօք առ եզերք գետոյն Երասխայ : Ապա այն ինչ ամենայն հարբ փրկութեան վճարեալ լինէր . և ոչ գոյր ուստեք ակնկալութիւն, Գրիգոր Սուսիան՝ Սիւնեաց իշխան, գայր, հասանէր առ Յուսուսի անձնտուր լինելով, թերևս այնու հար լիցի զերծանիլ յեկեալ, հասեալ չարէն . զոր եւ տեսեալ Յուսիայ՝ խնդաց մեծապէս և առ ժամայն ընդունի զնա պատուով վերին գիմօք : Տեսեալ զայն և համազգւոյն նորա՝ մանկանն Վասակայ, և լուեալ թէ պատուեցաւ Գրիգոր և ոչ ինչ վնասեցաւ . եւ և նա յամրոցէն իւրեանց և գնաց առ Յուսուսի անձնտուր լինելով . զոր առ ժամայն ընկալեալ և յետ սակաւուց զնէ ի դիպահոջ ի Գլին քաղաքի . որ եկաց անդէն ամ մի : Իսկ անիծեալն Յուսուսի բազում մարտս ընդ թագաւորին Սմբատայ յարդարէր զամն ողջոյն առ ի որսալ զնա, և ոչ կարէր : Եւ այս եղև յապտտամբութենէ իշխանացն որք ճեղքեցան ի մի միաբանութենէ անոտի յուսով, և ածին խաւար մեծ ինքեանց և աշխարհիս

Հայոց, զՔաղկայ ասեմ՝ Արծրունւոյ որ թագաւորեաց Վասպուրահանի . և միարանեաց խորհրդեամբ ընդ Յուսիայ դոյզն ինչ պատճառաւ, զի խնդրէր ի Սմբատայ թագաւորէն առնուլ զՆախջաւան յիշխանէն Սիւնի Սմբատայ եւ տալ նմա . զոր ոչ կամեցաւ վասն բնական հայրենեացն . սակս որոյ ապստամբեալ զնայ առ Յուսուպի . և թագ կապեալ ինքեան՝ կամէր թագաւորել ի վերայ Հայոց : Քայ ապա եւ առ Յուսուպի Աշոտ՝ եղբայր Սմբատայ արքայի, եւ հնազանդի նմա . ըմբռնէ եւ ի պատերազմի զՄուշեղ՝ որդին Սմբատայ :

Եւ այսպէս խորխտացեալ, հպարտացեալ մեծամեծ փրանօք՝ գայր ի Դավին ընդ իւր ունելով զԳրիգոր Սուխանն : Ապա վասն կասկածանաց ինչ յայտնի ոչ կարէր նենգել մեծ իշխանին Սիւնեաց . եւ հանապազ զմահ խոկայր՝ վասն որոյ դեղ մահու զանխլարար մատուցանէ նմա . և ողողեալ որովայնի նորա՝ մեծաւ տազնապաւ արձակէր զոգին : Զոր սգացեալ Քաղկայ թագաւորի եւ Աշոտոյ Բագրատունւոյ ընդ մօր նորա Մարիամայ եւ ընդ եղբարցն Սահակայ և Վասակայ՝ բարձեալ տարան և եղին ի տապանի յիւրումն ձեռակերտ սրբարանին ի սուրբն Եփննեաց : Սապէս և Մուշեղայ ևս արբոյց զնոյն դեղ մահու . զոր տարան ի Տարօնս եւ եղին ընդ նախնիս իւր . նմանապէս եւ զՍմբատ՝ եղբորորդի

Թագաւորին Սմբատայ, սպանին : Իսկ գեղողէչ պատանին մանուկն Վասակ՝ եղբայր Սմբատայ, Սիւնեայ տեառն, որ վասն ոչ հպատակելոյ չար կամաց անիծելոյն Յուսիայ եղեալ էր ի բանտի աւելի քան զամ մի, յաւուր միում ի նսեմանալ երեկոյին կոչեալ յօղնութիւն զվերինն կամս եւ կնքեալ զինքն ասէ « օգնեցէ՛ք ինձ Սիւնեայ եկեղեցիք » . և առեալ զսուրն պողովատիկ և ի գործ ածեալ՝ զպահապանսն դիաթաւալ կացոյց . եւ ինքն վազեալ հարուստ մի՛ գնաց և կախեալ ընդ պարիսպն իջաւ . և զի ունէին ծառայք նորա ճի պատրաստական՝ ել յերկվարն եւ փախեաւ :

Ապա մինչ ճիճ պահապանացն և ճայն հրոսակացն զկնի զօրացեալ լինէր, մինչ այս մինչ այն՝ նա ի փողոցս այգեստանւոյն անկեալ՝ ընդ այլ եւ այլ ճանապարհս անց, գնաց յամուրս աշխարհին իւրոյ : Յայսմ վայրի ապա և հայկաղուն իշխանքն Սիւնեայ՝ եղբարք Գրիգորոյ, որ Սուխան յորջյորջէր, Սահակ և Վասակ հանդերձ մարբն իւրեանց երանելի տիկնաւն Մարիամաւ, զկեանս անձանց հնարեալ եւ փոյթսնդոս թեան յանձինս բերեալ՝ կամեցան ելանել ի ձեռաց անօրինին եւ փախչել, անկանիլ յամուրս աշխարհին իւրեանց, և ոչ տարաշխարհիկ լինել մինչև անցցէ բարկութիւն Տեառն : Ապա գնացեալ սրավար նաւակօք ամրացան ի Սեան կղզին : Զոր լուեալ

Յուստիայ՝ զորս ղկնի արձակէ . որք եկեալ նստան ընդդէմ կղզւոցն . իսկ նոցա երկուցեալ մի գուցէ եւ ի հնարել չարացն ի մէջ անգնդապտոյտ զընտանին ըմբռնիցին, ելեալ անտի ևս ի գիշերի բազում նաւակօք անցին յայն կողմն, և գնացին յամուր գաւառն

16. 126

Միախորոյ : Իմացեալ և ղայն զօրացն՝ զկնի պնդէին . բայց նախ մտեալ ի կղզին կողոպուտ առնէին զամենայն : Տեսեալ ապա իշխանացն զեկեալ, հասեալ հրոսական՝ դարձան, և մեծապէս քաջութեամբ զբազումն սատակէին եւ զայլն փախտապահան առնէին . և ինքեանք անցեալ գնացին յամուր աշխարհն Գարդմանայ և Արձախայ . և մնային անդէն վերին այցելութեանն ակնկալեալ : Որ եւ անդէն իսկ ի թափառական պանդխտութեանն հասանէր վախճան երանելի տիկնոջն Մարիամայ՝ մօրն իւրեանց, զոր խընկեալ և զմասեալ եղին ի փայտեայ տասպանի և պահեցին մինչև յօրն այցելութեան և դարձի իւրեանց ի հայրենի իշխանութիւնն, հանգոյն ոսկերացն Յովսեփայ որ յԵգիպտոս ընդ Խարայէլացիան, զոր բերին յերկիրն Աւետեայ : Ապա ի ժամ դարձին բերեալ չքեղագոյն պատուով զմայրն իւրեանց, և աշխարհածողով հանդիսիւ եղին ի հանգստի մերձ առ ձեռակերտ եկեղեցւոյն իւր որ ի Շոգուազայ :

Իսկ անիծեալն Յուսուսի ելեալ ի Դմնայ յետ սակաւ մի ուուրց, կրկին անգամ սկսաւ որսալ զար-

քայն Սմբատ . և նա ամրացեալ էր ի ձորն Աշորնեաց յամուրն Կապոյտ կոչեցեալ . հնարիւք եւ երդմամբ հանէ զնա Յուսուփ . և առեալ գայ ի Ռվին և արկանէ ի չար կապանս երկաթիս բարձեալ բնաւին զբող պատրուակի չարութեան իւրոյ : Եւ առեալ զնա գայ ի մարտ ընդ անառիկ ամրոցին Երնջակու, յորում կային պատուական տիկնայքն Սիւնեաց Շուշան եւ Սոփի և այլ բազում ազատ կանայք և ազատ որեաք : Եւ մարտ սաստիկ յորինէ ընդդէմ բերդին բազում առուքս . եւ որ առուր զանազան հնարիւք խստացուցանէր զմարտն, եւ ոչ ինչ օգտէր : Յորմէ զչարեալ տայր բերել զթագաւորն հանդէպ բերդին . և զանազան կտտանօք չարչարէր, եւ հրամայէր . « ասա՛ զէտայցեն ի դուքս զբերդն » : Եւ նորա իմացեալ զանգերծանելի զչարն՝ ոչ ինչ խօսէր . զոր եւ անդէն սարսափելի չարչարանօք ի վեր քան զբնութիւն մարդկան կատարեցին զսուրբ թագաւորն Սմբատ . և հրամայեցին տանել ի Ռվին և զչիայտէ կախել զմեռեալ մարմինն : Ար և ճաճանջաւոր նշուպիւք վկայեցաւ ի բարձանց . և բժշկութիւնք մեծ լինէին . և բազումք հաւատացին ի Քրիստոս : Եւ եղև այս ի Թըուականին Հայոց 362 :

Ահա զայսպիսի մեծ և ղյանդուզն ոճիրս գործեալ անիծելոյն՝ ոչ յագեցաւ չարեօքն . այլ եւ անդէն կամէր թիւնաթափ լինէր ի գազթականան որ ի բեր-

դին . վասն որոյ ոչ հեռացաւ ի տեղւոյն մինչև ի գիւ-  
շերի գողութեամբ էառ զբերզն անձաւամուտ եւ  
քարազնաց արամբբ, որք երկաթի ճանկօք ընդ ժայռս  
դժուար վախից արուեստակեալ ընթանան : Բայց  
թէպէտ եւ էառ, ո՛չ ի մարդկան հնարից . այլ Տէր  
եղծանելով եղծանել կամէր, և մատնեաց : Ապա բա-  
ցեալ զզուրս բերդին՝ հանին զփառաւորեալ տիկնայսն  
բազում մթերեալ գանձիւքն . և զքնակիչս բերդին ի  
սուր սուսերի մաշեցին : Իսկ զմեծ բարեպաշտուհի  
տիկինն Շուշան՝ կին Աշտոյ եւ մայր Սմբատայ եւ  
այլոցն, եւ զՍոփի՝ կինն Սմբատայ՝ քոյր Գազկայ  
թագաւորի, միով տղայիւ, եւ զկինն Սահակայ այլ  
ազատ կանամբբ էառ, խաղացոյց գերութեամբ եւ  
գնաց ի Գվին . եւ եղ ի նեղ յորջի խաւարչտին  
բանտի : Եւ անդ էր տեսանել զաղիողորմ տեսակ  
փափուկ և արքայազուն կանանցն, որք ջուր անգամ  
և աշտուճ հաց ոչ գտանէին յագ . նա և ոչ խոտեղէն  
անկողնոց խշտի փոխանակ փետրալի հեշտոցացն եւ  
ոսկեթել գահոյիցն :

Լուեալ զանհնարին գոյժս զայս Սմբատայ որ ի  
Վասպուրական, և Սահակայ որ ի Գուգարս, թէպէտ  
գուն գործեալ բազումս ջանացին գերեթափ լինել .  
ոչ կարացին : Ապա անդանօր ամենաբարեպաշտ  
եւ մեծահաւատ իմաստուն տիկինն Շուշան բազում  
գոհութեամբ վախճանի ողորմատեսակ մահուամբ ի

բանտի անդ, ընդ նմին եւ փոքրիկ դիեցիկ մանկիկն Սոփիոյ և Սմբատայ : Եւ հանեալ է բանտէն պահապանացն ընկեցին արտաքս. զոր առեալ քահանայիցն և Ժողովրդականացն իբր զպանդխտի ուրուք տարեալ հանգուցին ի դրան սուրբ եկեղեցւոյն զոր ի քաղաքին յանուն Սերգեայ վկային կանդնեաց Ներսէս շինող : Իսկ զերկոսին կանայսն Սմբատայ և Սահակայ առեալ տարան ի Պարսս, յԱտրպատական և եղին ի դիպահոջ յամուրս իւրեանց : Յետ այսքան անցից էր յասպարապետութեան Աշոտ՝ եղբօրորդի Սմբատայ . և որդին Սմբատայ Աշոտ կայր ի փախստի առ կայսրն Յունաց : Որու՛մ թագ կապեալ Ռոմանոսի կայսեր՝ յուղարկէ ի Հայս . ընդ որ զչարեալ ասպարապետն Աշոտ կամէին պատերազմել ընդ միմեանս սաստիւ . զոր համոզեալ մեծ կաթողիկոսն՝ Յովհաննէս եւ խաղաղացոյց . եւ սակաւ մի կազդուրէր աշխարհս ի հինիցն Յուսիպ :

Յայնմ ժամանակի եկն ի Վասպուրականէ մեծ աշխանն Սիւնի Սմբատ առ արքայորդին Աշոտ թագաւոր, զոր մեծաւ պատուով ընդունէր . եւ ազգի ազգի փառօք չքեղացուցանէր : Եկն և Վասակ՝ եղբայր Գրիգորոյ Սուխանայ, զնա ևս ընկալաւ խնդութեամբ Աշոտ եւ վիճակեցոյց իւրոյ տէրութեանն : Յետ սակաւուց եկին եւ փախստականքն Սահակ՝ Սիւնեաց տէր, և Բարգէն և Վասակ՝ եղբարք Սըմ-



բատայ, ի բնիկ աշխարհս իւրեանց ի Սիւնիս : Առեալ ապա զայն Սմբատայ՝ հրաման առնու յարքայէ եւ դառնայ յԱրագած լեռնէ, եւ զայ, գտանէ զեղբարս իւր . և խնդութիւն ոչ փոքր ինչ լինէր ի մէջ նոցա . տեսանէին նոքա քակեալ զարքունական ապարանսն իւրեանց, աւերեալ զեկեղեցիս եւ անբնակ անապատացեալ զմեծամեծ աւանսն, և զգեղեցիկ դաստակերտսն, ունայնացեալ զամբարս ցորենոյ եւ խորտակեալ զգուրս գինւոյ : Ոչ փոքր ինչ սուգ եւ տրտմութիւն եւ թորումն արտասուաց լինէր ի մէջ նոցա . ևս առաւել վասն զերեալ տիկնացն : Ապա մինչ յայս վարանեալ կային՝ գան եւ կանայք նոցա ազատեալք աստուածային խնամօքն ի դառն զերութենէն Յուսիայ : Ասան որոյ մեծապէս խրախացեալք գոհութիւն մեծ մատուցանէին Աստուծոյ պարգևողին զնոսա . և այնուհետև փոխանակ ողբոցն և աշխարանացն ցնծութիւն մեծ լինէր ի մէջ նոցա : Եւ աւերն ամենայն փութապէս յառաջին լրութիւն շինութեան հասեալ լինէր յապարանս նոցա : Բայց եկն և Սահակ՝ եղբայր Գրիգորոյ և Ասասկայ, ի հայրենի ժառանգութիւն իւր ի Քեղամ . և սակաւ ինչ կեցեալ վախճանի և զնի ի քնարանի յիւրում ձեռակերտին առ զբան մեծ եկեղեցւոյն, որ ի Նորատուս :

Իսկ Ասասկ՝ եղբայր սորին, յետ աւուրց ինչ երկեսու յերկփեղկ թագաւորութենէն Հայոց, զոր երկու

Աշոտքն ունէին եւ միշտ գրգռէին ընդ միմեանս ի պատերազմ. և կամկածեալ յարքայորդւոյն Աշոտոյ՝ ոչ զնայր առ նա . մի՛ զի սիրէր զսա միւս Աշոտն՝ որդին Եապհոյ, եւ մի՛ զի փեսայ էր Գուրգենայ՝ Վրաց բղեշխի . և Գուրգէն ընդ հակառակս բերիւր Աշոտոյ : Ապա ի մէջ ձգեալ զկաթողիկոսն Յովհաննէս՝ հայցէր կտակ ուխտի եւ երդման զի համարձակ լիցի առաջի նորա եւ անկասկած . զոր եւ տուեալ Աշոտոյ Թագաւորի՝ հաստատէ զկամս նորա առ ինքն : Առեալ զայն յետկար Վասակ ի ձեռաց կաթողիկոսին՝ զնայ առ Աշոտ . և միամիտ մտերմարար ընդունի ի նմանէ որպէս համամիտ սիրելի : Իսկ զկնի ապա հրապուրեալ յոմանց Աշոտ, որք ասէին եթէ թուղթ առ նա գրեալ գտեալ եղև ի միւս Թագաւորէն Աշոտոյ եւ ի Գուրգենայ՝ աներոյ իւրոյ, ի ձեռն սուրհանդակի միում, լի ամենայն չար խորամանկութեամբ վասն քո : Սակս այսր կալեալ զՎասակ եւ երկաթի կապանօք զնէ յամուր բերդին Կայենոյ . եւ թէպէտ կաթողիկոսն յողով հարիւր ջանայր առ Թագաւորն ազատել զնա, ոչ լսէր պատճառելով պատճառս ինչ : Ապա յետ աւուրց ինչ ազատեալ եղև բռնութեամբ յիշխանէն Զորոյգետին եւ Գարդմանայ ի Սահակայ, եւ առաքեալ ի տուն իւր ի Գեղաքունի գաւառ . զի այն իսկ էր մասն ժառանգութեան սոցոս ի Սիսակիան աշխարհիս :

Յետ այսց բանից ուրեմն ապա եւ մեծ իշխանին Միսակայ Սմբատայ երիւք ևս եղբարբքն հանդերձ ցասմնական իմն սրտիւ գժդմնեալ ընդ ամիրային Գողթան, որ յայնժամ զգաւառն Գողթան բռնակալեալ ունէր. խնդրէին ի բաց զսեպհական հայրենիան իւրեանց զամուրն Երնջակայ եւ զչրջակայ գաւառան, զորս Յուսուփ ի նա հաւատացեալ էր, զոր ամիրայն Գողթան ոչ կամէր տալ. այլ ասէր յարքունուստ ինձ իսկ պարգևեալ է : Եւ եալ ապա զայն Սմբատ, եւ զոր գումարեալ ի պատերազմ ահագին իմն սաստկութեամբ, ընդ իւր բերեալ և զՍկիւթացի Թուրքն որք խորանօք բնակեալ էին յաշխարհի նորա : Եւ անէ ընդ առաջ և ամիրայն. և ի խառնիլն ընդ միմեանս՝ յաղթահարեալ լինէր Հագարացին : Անդ ապա զօրն Թուրքաց որ ի ձախ կողմանն յետուստ թիկանցն Վասակայ կային, խորհուրդ իմն դիւարախ ի մէջ առեալ, եւ միարան ի վերայ Վասակայ յարուցեալ՝ դիաթաւալ յերկիր ընկենուին. եւ ինքեանք դէմ եղեալ փախչէին զկողմամբքն Նախջաւանու : Իսկ զգիակ զեղեցիկ երիտասարդին բարձեալ եղբարցն ի տեղւոջէ ճակատուն անբաւ ողորովք եւ բարձրակառաջ աղազակաւ՝ տարեալ եղին ընդ հօրն իւրում Աշոտոյ արարեալ կոծ մեծ ի վերայ նորա :

Բայց ասացից այժմ և վասն Յուսիփայ. յետ զայս

ամենայն ոճիրս անցուցանելոյ նորա ընդ աշխարհս  
Հայոց գնաց յԱտրպատական . և սկսաւ ապստամբել  
յամիրապետէն : Եւ նորա իմացեալ զխորամանկու-  
թիւնն Յուսիայ՝ զօր բազում գումարէ ի ձեռն հա-  
ւատարմի ուրումն եւ առաքէ առ Յուսուփ : որք  
ըմբռնեալ՝ չարաչար կապանօք ածին առաջի ամի-  
րապետին . և նորա բազումս գանեալ՝ կապանօք ետ  
արկանել ի մթին, նեղ եւ նուրբ եւ տղմուտ բանտ :  
Եւ անգ կացեալ ամս ինչ, ապա ի սաղրելոյ ուրումն  
յիւրեանց չար օրինացն գլխաւորի արձակեալ եղև ի  
կապանաց . եւ վերստին ի նոյն գահ իշխանութեան  
յուզարկեալ՝ յանձնեալ նմա ղհարկս Հայոց . որ եւ  
եկեալ ի Վասպուրական՝ գնաց յԱտրպատական .  
եւ կսոցոյց ի վերայ Հայոց ոստիկան մի յիւրոց ծա-  
ռայիցն Նարանուն որ և Սրբբքի կոչէին : Եկեալանի-  
ծեալն և կրկին չարն և շնաբարոյն քան զՅուսուփ՝  
բնակէ աւուրս ինչ ի Նախջաւան . եւ զի հարթ եւ  
հաւասար վայելչութեամբ կային իշխանքն Սիւնեաց  
Սմբատ և Սահակ, և բաժանեալ էին զհայրենի ժա-  
ռանգութիւնս աշխարհին, աւագն Սմբատ զաւագա-  
գոյն մասն Սիւնեաց ընդ արևմուտս կողմն եւ զըր-  
ւոր Վայոց ձոր ունէր ի բաժնի . իսկ Սահակ՝ ընդ  
արևելս մինչ ի Հակարի (42). բայց փոքրիկն Բարգէն  
սակաւ ինչ ունէր մասն ի բաժնի : Սակս որոյ խան-  
դացեալ ի չարէն՝ զրկութիւն իւր համարի ի Սահա-  
Հատ. Ա. :

կայ զմեծ տէրութիւնն՝ կարծիք իմն անտտի յուսոց ի միտս իւր բերեալ, եւ ի չար մարգկանէ յորդորեալ՝ երանէ և գնայ ի Նախջաւան առ Նարն այն, և ուխտ ընդ դժոխոց կուեալ դաշինս դնէ նմա, եւ ցուցանէ զգրկութիւն իւր ի Սահակայ :

Իսկ նա չար եւ խորամանկ մտօք առ ժամայն ընկալեալ զնա՝ խոստանայր կատարել զինդիրն, ակն ունէր և եղբօրն գալոյ . ապա խնդրակս հանեալ կոչէ զՍահակ սիրոյ ազագաւ : Լուեալ զայն Սահակայ՝ եւ ցնորեալ եւ նա ի խելաց հաւատալով նմա խնդութեամբ զնայ ի կոչն որպէս յարբունիս, բազում և մեծամեծ ընծայիւք : Եւ հանդիպեալ նորա ի Նախջաւանի՝ խնդութեամբ զնա ևս ընդունի, հեշտացեալ խորհրդովքն ընդ զիւրադաւ գիւտ մեծի որսոցն . և առ ժամայն Սահակայ ևս զաշինս կուեալ ընդ նմա վասն հաւատարմութեան, ասէ Նարն երթիւ ցուք մեք ի Դավին . եւ անդ ապահով լեալ խորհես, ցուք զմիմեանց օգուտ : Եւ առեալ զՍահակ եւ զԲարգէն՝ զնայր ի Դավին . և իբրև եմուտ ի քաղաքն եւ հանգեաւ յապարանսն որ ի բանտին, երաց զքօզ չարութեանն . եւ կալեալ զՍահակ եւ զԲարգէն երկաթի կապանօք եղ ի բանտի զթմրեալսն ի խելաց և զանզգայացեալսն ի մտաց, որք իւրովի կամօք անձնատուր եւ անձնամատն եղեն :

Զայս արարեալ շնաբարոյն Նար՝ ինքն յետ սակաւ

աւուրց ելեալ եւ սփռեալ զգօրսն ընդ ամենայն երկիր՝ ասպատակ եղեալ իսպառ ջնջեաց զամենայն աշխարհս Հայոց ևս եւ զԱրարատեան երեք գաւառսն . եւ յցեալ աւարօքն եւ գերեօքն բնակէր ի Դալին : Ապա հրաման հասանէր ի Յուսիպ առ Նարն գնալ յԱտրպատական : Եւ առ Ժամայն կացուցեալ զմի ոք ի հաւատարիմ ծառայիցն Բշր անուն ի վերայ կապելոցն ի Դալին Սիսական իշխանացն . եւ ինքն անց, գնաց ի Պարսս յԱտրպատական : Եւ անդ հոգացեալ զամենայն հոգս արքունի . եւ յետ բազում աւուրց դառնայ այսրէն մեծ սպայակոյտ զօրու . եւ խորհի ի միտս իւր գնալ զՍիսական կողմամբք և յաւարի առնուլ զաշխարհն . և թէ հնար գտցէ՝ ըմբռնեսցէ և զմեծ գահերէց իշխանն

• Սինեայ զՍմբատ կամ յանկարծօրէն աւազակաբար . եւ կամ մարտօրէն առաթուր հարուլ, գերել եւ աւերել զտուն նորա, և զինքն տանել առ եղբարսն ի Դալին : Իսկ մեծ եւ ամենիմաստն Սմբատ ի սեպհական գաւառին իւրում դաքեալ, դադարեալ նստէր ի Վայոց ձոր : Լուեալ ապա զհամբաւ գալոյ նորա, եւ ամրացուցեալ զտուն իւր եւ զամենայն գաւառն յամուրն Վայոց ձորոյ . եւ ինքն հորդան սուեալ զօրացն ամբոխս բազումս սպայակոյտ զօրու շուրջ գիւրեաւ կացուցանէր յիւրում արքունական յապարանսն որ ի գիւղաբաղաքն յԵ-

զեզիս : Եկեալ ապա Նարն. եւ տեսեալ զնա այն,  
պէս պատրաստութեամբ եւ անվանելի զօրութեամբ  
զգուշացեալ՝ ոչ ինչ կարաց յայտնել յիւրայոց  
անտի. այլ ի խաղաղութիւն խօսեցեալ ընդ նմա.  
եւ բազում պատգամաւորօք՝ ուխտ հաշտութեան  
եւ խաղաղութեան ընդ նմա հաստատէր. խնդրէ  
եւ Սմբատ զեղբարսն իւր որք կային ի Գլին.  
ի կապանս. և նա զայնս ևս խոստանայ արծա-  
կել : Եւ ապա եկեալ առ միմեանս՝ խնդութիւն  
մեծ առնէին եւ բազում օժիտս եւ պարգևս ընկա-  
լեալ Նարն ի Սմբատայ՝ չուէ և երթայ, մտանէ ի  
Գլին. եւ իսկ եւ իսկ առեալ զտարապարտ սակ  
զնոց անձինն ի Բարգենէ՝ արձակէ զնա. բայց զՍա-  
հակ արգել անդէն զի ոչ ռնէր զծանր սակ դահե-  
կանին զոր գերեզին խնդրէին :

Ապա յետ սակաւուց ինչ եւ նա զիւրն վճարեալ  
տուգանս բազում կշիռս ոսկւոյ եւ ազատեալ՝ ել ի  
կապանացն եւ եկն ի սեպհական տէրութիւն իւր, եւ  
խնդութիւն բազում լինէր ի մէջ եղբարցն եւ աշ-  
խարհին : Եւ կային միաբան խաղաղութեամբ պա-  
րապեալ շինութեանց եւ գովելի գործոց : Պայծա-  
ռանայր եւ յայն աւուրս համաղգի սոցին իշխա-  
նացս ի Սիսական տոհմէ Չագիկ՝ մեծ իշխանն, ամե-  
նայն բարեպաշտութեամբ. որ ունէր ի բաժնի զԲա-  
ղայ գաւառն եւ զՎապան քաղաք. որ և յետ բազում

բարեկարգութեանց վախճանի . եւ դնի ընդ հարս  
իւր . եւ թողու ժառանգ գբաջազօրն Ջեւանշէր եւ  
զՎահան : Որ եւ պայաղատէր զտէրութիւն նորա  
Ջեւանշէր բազում ժամանակօք : Իսկ եղբայր նորին  
Վահան յանկարծակի ի չար դիւէ բախեալ եղեւ եւ  
բլկեալ . եւ վասն այնր հրաժարեցաւ յաշխարհական  
կարգէ և զգեցաւ զձեւ կրօնաւորական . եւ բազում  
ժամանակօք ճգնեալ ի սուրբ առաքինարանին Տան-  
ձափարախու, եւ ի խստակրօն, մեծաւհոյսակ մշտն-  
ջենաւորանոցին ի Շատանեայ վանքն . եւ սրբեալ ի  
պիղծ ոգւոյն կամեցաւ շինել վանս յիւր անուն, եւ  
կայուցանել ի նմա բազմութիւն կրօնաւորաց զոր յե-  
տոյ ասացից : Իսկ երջանիկ և փառաւորեալ իշխանն  
Սմբատ յետ բազում աստուածավայելուչ բարե-  
պաշտութեանց փոխի յաստեայս և դնի ընդ հօր իւրոյ  
Աշոտոյ . եւ թողու զսուակ ժառանգութեան իւրոյ  
զարի եւ զհանճարեղ իշխանն Վասակ :



**ԼԹ.** — Վասն եպիսկոպոսարանին Տարեոյ . և փասն  
սուրբ իսաիկն և այլ սրբոց . և փասն ժառանգութեան  
հայրապետացն :

Եւ սրբ յետ զկարգ իշխանոցոյ ըրբերոյ եւ եր-  
ջատ. Ա. :



կայն բանիւ զնոցա ճառելոյ դարձցուք անդրէն. եւ զոր ինչ, վասն եպիսկոպոսայն են բանք եւ գործ եւ շինութիւն սրբոյ եպիսկոպոսարանին Տաթևոյ եւ հոգեցատուրք իշխանայն, ճառեցից սակաւուք: Աւրդ՝ նախ եւ յառաջն էր սահման եպիսկոպոսաց բնակիլ ի քաղաքս և ի շինամէջս. զի հովուին պարտ է ի մէջ հօտին լինել եւ ոչ յանկեան ուրեք կայանալ. եւ հանապազ ներքին ականքն վերահայեցիկ լինել ի վերայ հօտին զի մի խորամանկ խարոզն մտեալ անդր՝ գողասցի զողի անմեղացն և ի բաց տարեազ օձտեսցէ ի հօտէն : Իսկ յետոյ ըստ նպերտ բարուց ոմանց, որպէս թէ ճգնազգեացք եւ անապատասէրք գողով, կուտութիւն աչաց եւ ականջաց խոկացեալ՝ պատշաճ համարեցան բնակել ի վանս, եւ ի պատշաճաւոր ժամու ելանել առ հօտն և խրատել, որպէս եւ մերոյ աշխարհիս եպիսկոպոսք Սիսականս գրոհի, որք յառաջ ժամանակօք շրջէին ի մէջ գաւառաց եւ ի տունս իշխանաց՝ միշտ և անդադար ուսուցանելով զբանն կենաց. եւ գահ արկեալ էր նոցա ի Սիւնիս : Իսկ յետոյ ըստ առաքինի եւ պարկեշտ բարուց իւրեանց ոչ ժուժեցին վասն ամբոխի եւ հրտպարակաց հանապազ կալ եւ դեզերիլ ի թէատրոնս. այլ գտեալ զայս տեղի յոյժ պատշաճաւոր եւ ի ճահ, եւ գրեալ թէ վերին ազգմամբն առաջնորդեալք՝ եկին և բնակեցան աստէն ի դեղեցկավայր տեղւոջ որ իբր

բարձր դիտանոց հայի ընդ արեւելք ի բազում դաւառս հանդէպ ըրանցն Դիդափայտու, ուր բազմութիւնք սուրբ վկայիցն հանգուցեալ կան, յոյժ առողջասուն, և վայրն հարթայատակ, շրջապատեալ բարձր եւ սուր ըրամբք իբր կարակնակերտ կիսաթղոր :

Առաջոյ վանիցն ձորք եւ խոխովք խորագոյն, յոյժ ընդարձակագոյն եւ գեղեցիկ. ընդ որ անցանէ ահագին դրնչմամբ գետն Որոտան, եւ ձորն այն լի այգեստանեօք, եւ դրախտացեալ զանազան բուրաստանօք : Եւ էր ի տեղին՝ ի վերայ բարձրագոյն քարին եկեղեցի խրթին անտաշ վիմօք կրաշաղախ ձուլեալ՝ յոյժ ի հին ժամանակաց՝ յաւուրց անտի սրբոցն Ներսիսի և Սահակայ. և սակաւ կրօնաւորք մշտաջան ձգնութեամբ բնակէին ի նմա. եւ էր տեղին հեռի յամենայն հինից թշնամեաց. դի միջոց էր աշխարհին յանբոյթ եւ ի զառանց տեղի եւ ամրացեալ ի մէջ երկուց արքունական գահոյիցն Սիւնեաց եւ Բաղաց : Եւ արդ խնդրեալ յիշխանացն եպիսկոպոսացն Սիւնեաց զտեղիս զայս՝ եկին եւ բնակեցան ի սմա. բերին և զաստուածամուկս սուրբ նշանն որ էր ի կենարար փայտէն, բերեալ ի յունական աշխարհէն եւ ընձեռեալ եպիսկոպոսացն Սիւնեաց ի պահպանութիւն վիճակելոցս սոցա առաջին իշխանացն. եւ հանգուցին ի սուրբ եկեղեցւոյս :

եղին աստ և զաստուածընկալ խաչն Բարզենեան որ ի Վասակայ՝ որդւոյ Բարկայ, որդւոյ Անդոկայ, կազմեալ էր յարծաթոյ ի չափ հասակի առն միոյ. եւ ունէր յինքեան մասն ի փրկական փայտէն : Բէրին զնշխարս առաքելականս եւ հայրապետականս և մարտիրոսականս ի գլխաւոր և յերեւելի սրբոյն, զորս հաւաքեալ էին անթիւ բազմութեամբ իշխանաքն Սինեաց, որք ընդ սրբոյն Գրիգորի և ընդ սրբոյն Ներսիսի գնացին ի Կեսարիա եւ ի մեծն Հռոմ, եւ յայլ եւ այլ ժամանակս որք բազում փառփառանք ժողովեալ էին : Ընդ որս էր եւ նշխար մեծին Յովհաննու եւ Ստեփաննոսի նախավկային եւ մետասան առաքելոյն եւ սրբոյն Գրիգորի եւ աջ սրբոյն Հռիփսիմեայ նոյն մարմնովն, եւ այլ բազումք որոց ոչ գոյր թիւ. ևս եւ զերազանցն մարդկային բնութեանս հերք սրբուհւոյ Աստուածածնին :

Զայս ամենայն բերեալ հանգուցին ի սուրբ եկեղեցւոջս եւ կազմեցին զսա փարթամ գանձարան Աստուածութեանն. բայց զերբն եւ զառաջին եպիսկոպոսն որ աստ եկն ո՛չ ծանեայ. միայն ի Տէր Քէորգեսոյ եւ այսր գտայ նշան եւ կացի ծանօթ ամենայն որպիսութեանց նոցա. սյլ զառաջիննն ո՛չ գիտեմ զի ոչ գոյր յիշատակ ինչ, բայց գիտեմ զի բազում ժամանակօք բնակեալ էին անդ : Եւ սրգ՝ կայեալ զինի Տեառն Քէորգեսոյ՝ եպիսկոպո-

սին Սիւնեայ, երանելի այրն Աստուծոյ Դաւիթ . և էր սա յառուրս Գրիգորոյ՝ Սիւնեայ գահերէց իշխանի, և միւս Գրիգորոյ՝ որդւոյ Սահակայ, որ Սուփան յորջորջիւր, որ զԳեղաքունի ունէր, առաջին Սուփանն, եւ աստուածապահ Տեառն Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, նահապետի բոլոր ազգին Ահաւանու : Եւ էր հայր մեծ իշխանացն Վասակայ որ իշխանիկ կոչիւր, եւ Աշոտոյ՝ հօր Սմբատայ՝ Սիւնեայ մեծ եւ գահազլուխ իշխանացն :

Եւ վասն զի յոյժ նեղ եւ անձուկ էր սահման վանիցն Տաթևոյ, և ոչ էր բաւական պիտոյից աթոռոյն. ապա հայցեալ Տեառն Դաւթի յաստուածապահ Տեառնէ Փիլիպպէէ՝ իշխանէն Սիւնեայ, ընդ գնոյ տալ զմերձակայ ազարական . զոր և լուեալ կատարէ զխնդիրն . եւ առեալ 10,000 դրամ որ լինի ի մէն մի 6 դանկ . եւ տայ ի ձեռս նորա զԱրծիւ գիւղ եւ զԲերդկաներէջ որ ի վերոյ վանիցն, բոլորն ընդ ջրթափովն՝ ազատ յամենայն աշխարհական հարկաց և ի նեպակաց : Եւ գրեցին կտակ յախտենական և կնքեցին իւրեանց մատանեալ, որ ունէր օրինակ զայս « ես Տէր Դաւիթ՝ շնորհօքն Աստուծոյ Սիւնեայ եսխակոպոս, ի 288 թուականիս Հայոց զնեցի զԱրծիւ ի տէր Փիլիպպէէ՝ Վասակայ որդւոյ, Սիւնեայ տեառնէ, իւր սահմանօք, լերամբ եւ դաշտիւ, զոստին եւ զջրարբին եւ զարօտ երկիր, զարտ եւ

զմարդ : Եւ այս են սահմանք . յարեւելից կողմանէ ուղեկիցքդ, որ ի Հարժեաց եւ ի Բերդկաներէջոյ ի գետդ հատանի, և անտի ի բլուրդ որ ի շինազլտիդ . և անտի ջրթափաւն յՍտերջաց դաւակ, և բնասեռիւդ ի Վարդանայ մարգի խոռն, եւ անտի յԱրծիւակա տար . և յարեւմտից կողմանէ Լորաձորդ բնասարաւդ . և ի հարաւոյ կողմանէ Հարժիք, որ ի ճանապարհէդ ի խուրդ (44) ելանէ ձորովդ ի վայր ի Սեւջուրդ և ի վեր ի սարն՝ Վանայ ձորոյ սեռիւդ : Ես տէր Փիլիպպէ առի զգանձս ի Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ, 10,000 դրամ, եւ ապսուարեցի զգիւղդ ի սուրբ խաչդ այդ սահմանովդ որ ի վճիռս գրեալ է . վկայութեամբ Ատրներսէհի՝ Սիւնեաց տեառն, Վասակայ որդւոյ, և տեառն Հրահատայ՝ տեառն Սահակայ որդւոյ, և տեառն Ատրներսէհի՝ տեառն Վարդանայ որդւոյ, Արշակայ՝ Վահանայ որդւոյ, Ռարբէի՝ Սարգսի որդւոյ, հօր Սարգսի եւ հօր Գէորգայ եւ Մարկոսի՝ աւագ երիցու ։ Ետու ես տէր Փիլիպպէ զԲերդկաներէջոյ զկէսդ Սառնաբարին փոխան, եւ զկէսդ սուրբ եկեղեցւոյդ . և չիչխէ ոք հեռացնել՝ ո՛չ եղբայր եւ ո՛չ քրդի եւ ո՛չ յիմ խոստակդարաց : Եւ թէ՛ ոք պայքարի այդ սահմանացդ՝ դատաւարտեալ լիցի յԱստուծոյ . եւ զիմ մեզս Աստուած ի նմանէ խնդրեսցէ՛ . և դատին մի յաղթեսցէ :

Եւ այս է սահմանն՝ Ծիրանահողովդ ի վայր ի

գետոյ . և ի վերի կատարն գետոյդ ի սենեակդ, սե-  
նեկաւդ ի ձոր . եւ աստի ի Գաւակ : Եւ կնքեցաք  
զվճիւս Տէր Դաւիթ եւ տէր Փիլիպպէ մեր մատա-  
նեօք » : Եւ այս է ձեռագիր նորին « եւ Փիլիպպէ՝ որդի  
Վասակայ, Սիւնեաց տեառն, կամեցայ իմ ձեռա-  
գրովս հաստատել զայս վճիւս » : Դարձեալ յետ հինգ  
ամաց այս Փիլիպպէ, ըստ իւրում մեծահաւատ եւ  
մեծախորհուրդ բարեպաշտութեանն, կամէր փար-  
թամացուցանել զվանս Տաթևոյ . և կենսացուցանէր  
զամենայն արտաքին գոյսն իւր յիմանալին և յանեղծն .  
միաբանեալ սուրբ եկեղեցւոյն և յանձնեալ զոգի իւր  
ի սուրբ խաչն և ի Տէր Դաւիթ՝ ընծայէ զմեծագոյնն  
պարգեւ՝ զսեպհական գիւղն իւր զՏաթև և ի սուրբ  
եկեղեցին հաստատուն և անխախտ պայմանաւ մինչ  
ի գալուստն Քրիստոսի . եւ է այսպէս դիր վճռին :  
« Յերկերիւր և իննսուն երեք թուականութեանս  
Հայոց որպէս կամ եղև ինձ Փիլիպպէի՝ որդւոյ Վա-  
սակայ, Սիւնեաց տեառն, ետու զՏաթև վանս իմ  
հոգեացս ի ձեզ ի Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս .  
յիմ հօրէն յիս հրիտակ հասեալ էր . անխուէջբարէ  
ամենայն սահմանօք, ըրամբ և դաշտիւ, այգօք և ըն-  
կոյզեօք, մարգագետնովք և ջաղացանով և որ ինչ  
համօրէն սահմանք են . եւ՝ մի՛ ոք իշխեսցէ յետ իմ  
անցման, իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակ-  
դարք հեռացուցանել զայդ գիւղդ յայդ եկեղեցւոյդ

և ի սուրբ խաչէդ . եթէ ոչ՝ նղովեալ լիցի յԱստու-  
ծոյ եւ ի սուրբ եկեղեցւոյդ եւ ի սուրբ խաչէդ . եւ ի  
հոգևոր Տեառնէդ անէծս կրեսցէ : Ես ետու ամենայն  
սրտի մտօք ի ձեզ ի Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկո-  
պոս, վայելել խաղաղական կենդանութեամբ, և որ  
յետ ձեր այլք նստին յաթոռդ վայելեցէ՛ք մինչեւ  
յղալուստն Քրիստոսի . եթէ կան՝ այդպէս եղիցին .  
ասլա թէ գնան, զգիւղդ սահմանաւդ յեկեղեցւոյդ  
մի իշխեսցեն հեռացուցանել, մի վաճառել, մի փո-  
խել, մի գրաւական դնել . այլ որ եկեղեցւոյն սպա-  
սաւորքն լինին, իշխան լիցին սակենայն սահմանացն :  
Եւ վկայք լիցին աստուածապահ տէր Գրիգոր՝ Սիւ-  
նեաց տէր, տէր Ատրներսէ՛՝ Վասակայ որդի, Սիւ-  
նեաց տեառն, տէր Գրիգոր՝ Սահակայ որդի, տէր  
Հրահատ եւ տէր Արուսան՝ Սահակայ որդիք . տէր  
Հրահատ և տէր Գազիկ՝ Գրիգորոյ՝ Սիւնեաց տեառն  
որդիք, տէր Վահան՝ Վարդանայ որդի . նոյնպէս և  
յիմ ազատաց Հուռ, Քուրդոյ, Խոսարով՝ Եապուհոյ  
որդիք, Զեանչէր՝ Թէոդորոսի որդի, Աշնակ՝ Վահա-  
նայ որդի, Զազիկ՝ Վահանայ որդի, Վարդան՝ Զա-  
նազայ որդի, Սահակ՝ Վասակայ որդի, Մհրաճ՝  
Թուրքայ որդի, Յովհանն՝ Ներսէհի որդի, Մուշեղ՝  
տէր Տիրոցի որդի, Հասան՝ Եապուհոյ որդի, Վահան՝  
Մխիթարայ որդի, տէր Մուշեղ՝ Սմբատայ որդի,  
տէր Վահան՝ Բարգենի որդի, տէր Բարգէն և տէր

Վասակ եւ տէր Աշոտ՝ իմ Փիղիպպէի որդիք . եւ ի կրօնաւորաց Ահարոն՝ Երիցու վանական, և Գրիգոր քահանայ, Ստեփաննոս՝ Մաքենոցաց վանական, Յակոբ՝ Ուշծաց աւագերէց, Մանկիկ՝ Ծղկաց քորեպիսկոպոս, Ստեփաննոս՝ Ծիծառնոյ վանահան, Գրիգոր՝ դրան երէց, Սիմէոն՝ Շաղաաոյ վանահան, Գրիգոր՝ Սիւնեաց վարդապետ : Եւ վասն առաւել հաստատութեան զիմ սովորական մատանիս ի վերայ եղի և զիմ որդեաց և զայլ ազատաց :

Եւ ահա գրեալ զայս եւ կնքեալ իւրեանց մատանեալ՝ եղին ի սուրբ եկեղեցւոջս . և մատանեալն որ կայր ի վերայ մագաղաթի, ունէր վեց կնիք զմեծամեծ իշխանացն վասն առաւել հաստատութեան : Ապա տեսեալ և զայս մեծ իշխանին Հրահատոյ՝ Սահակոյ որդւոյ, և Գրիգորի՝ Արուստանայ եղբոր, հայկազնի՝ ի նոյն Սիսական տոհմէ, որ ունէր ի բաժնի ժառանգութեան զԿովտաւրան գաւառ եւ զՔաշունիք, մուլեալ զբարիոք մոլութիւն . և եկեալ առ Տէր Գառիթ եւ յիւրոց հայրենեացն սեպհական ընծայէ զգլխին Նորաշինիկ ի Կովսական գաւառի . եւ գրէ նամակ վճիռ անխախտ պայմանաւ որ է այսպէս . « ի յերկերիւր իննսուն եւ երեք թ ուսկանիս Հայոց, ի ժամանակս աստուածապատիւ և հոգւոր Տեառն Գառիթ՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ես Հրահատ բազմամեկ՝ երանելի տեառն Սահակայ որդի . վասն իմ չար եւ  
Հատ. Ա :



անիրաւ զնայից որ որսացեալ էի ի սատանայէ բազում և ազգի ազգի յանցանօք, և լցեալ իբրև զծով անթիւ չարօք ոչ ունելով ակնկալութիւն փրկութեան յահեղ աւուր դատաստանին, զմտաւ ածեալ զանգաւակութիւնս իմ, և զի ոչ գոյր յոյս ապաւինի հոգալոյ զփրկումն հոգւոյս իմոյ, և գիտելով զի մահ կանայու է ազգ մարդկան, զաստուածընկալ սուրբ խաչդ ապաւէն ինձ արարի եւ փոխանակ որդեաց : Եւ գեօղ մի ի Արմասկան գաւառի Նորաշինիկ անուն, որ ոչ ի յախշտակութենէ եւ ոչ ի զրկանաց ուրուք եւ ոչ յայլ ինչ անիրաւութեանց . այլ միայն յարդար վաստակոց ստացեալ զնոց արծաթոյ, վասն իմ հոգեացս ի սուրբ խաչդ ապսպուարեցի իւր բոլոր սահմանօք, լերամբ եւ դաշտաւ, ջերմաւ և ցրտով, ծառով եւ տնկով՝ որոյ սահմանքն են այսօրիկ . յարեւելից կողմանէ Տորուանոտ սահման, եւ ի հիւսիսոյ՝ Ծոբի, և յարեւմտից՝ Տրի և Արտաւազուց . ի հարաւոյ՝ Աերեն եւ Բերքնի . եւ յայսմհետէ իջ խան ևս դու Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս, և որք յետ քո այլ հայրապետք յայդ յաթողդ յաջորդին մի ըստ միօջէ, զայդ շէնդ ուտել եւ վայելել, պահել եւ ունել, զնոյ տալ եւ գրաւական դնել եւ զինչ կամք են՝ առնել մինչև յաւիտեանս ժամանակաց : Եւ այսուհետեւ ոչ ևս Հրահատ եւ ոչ իմ եղբարք կամ իւրեանց որդիք չունիմք իշխանութիւն

բանս եւ պայքար առնել. եւ եթէ որ յանդգնիցի եւ զսուրբ խաչիդ պաշտօնեայսդ ընդ աշխատ որ ածէ՝ յԱստուծոյ նզովեալ եղիցի եւ ի սուրբ խաչէդ դատապարտեալ. եւ հողն օրհնութեան նմա մի բաւեսցէ, եւ ինքն դատին մի յաղթեսցի : Եւ ետու զայս հաստատ նամակս ես տէր Հրահատ՝ տեառն Սահակայ որդի, քեզ Տեառն Դաւթի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, վկայութեամբ հօր Յակոբայ՝ Վառիոյ վանականի, եւ Յովհաննայ եւ Սմբատայ՝ Ներսէհի որդեաց, եւ Յովհաննայ՝ Բարկայ որդւոյ, եւ Ստեփաննոսի և Մուշեղի՝ տեառն Տիրոցի որդեաց, և Վիժանայ՝ Վարազտիրոցի որդւոյ, և Ըռանձարայ՝ Գրիգորի որդւոյ, եւ Խոռդաւիայ՝ Յովհաննի որդւոյ, և Համազասպայ՝ Սահակայ որդւոյ, և Բարսղի՝ Մառաքատայ երիցու, և Սաղոբայ՝ Մխիթարայ որդւոյ, Ըղուերծոյ երիցու, Հմայելի՝ Վանանդայ երիցու, և Սահակայ և Ահարոնի՝ Նորեաց քահանայից, և Մաթոսաղայի՝ Յակոբայ որդւոյ, Ալծայ աւագ երիցու : Եւ կնքեցի զայս վճիռս ես տէր Հրահատ իմ սովորական մատանեաւ. և վասն առաւել հաստատութեան գրոյս զաստուածապահ տեառն Գրիգորոյ՝ Սիւնեաց տեառն, մատանին ի վերայ եղի. տացէ՛ Աստուած վայելել յաւիտեանս ժամանակաց » :

Բայց երանելի եւ փառաւոր իշխանն Փիլիպպէ շինէ եկեղեցի մի գեղեցկաչէն մերձ հին եկեղեցւոյն

ի հարաւոյ կողմանէ, յանուն սուրբ լուսաւորչին  
Գրիգորի . և ինքն վախճանեալ ղնի անդէն ի դրան .  
որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի . եւ անունն  
գրեալ ի դպրութեան կենաց : Եւ այս լինելը յ297  
թուականին Հայոց : Իսկ եպիսկոպոսն Դաւիթ կա-  
մեցաւ մեծապէս կարգել յիշատակ մեծի երախ-  
տեաց նորա ամ յամէ . եւ արձանացոյց գրով զոր և  
մեք հարկ ի վերայ ունիւք զնոյն գրել : Թէպէտ և  
բազում ժամանակօք քայքայեալ և այլայլեալ են  
և ապականեալ ամենայն տուրք նոցա և կարգ և  
գրպիտութիւնք եպիսկոպոսարանիս , միայն զի մի  
Ջնջեացի մեծ յիշատակ նոցա . և այժմ ևս նորոգա-  
պէս ըստ կարի յիշեացուք . և է գրեալն այս ինչ :

« Այսպիսի ինչ կամ եզև ինձ Դաւթի՝ Սիւնեաց  
եպիսկոպոսի, յաղագս աստուածապահ տեառն Փի-  
լիպպէի հոգեացն փրկութեան և լուսաւորութեան,  
և մշտնջենաւօր և անմահական կենացն արժանի  
լինելոյ . վասն զի նա զիս ա՛ռ նոյն կատարեալ մտօք  
ապաւէն, և օգնական իւր արար առ Աստուած վասն  
հանդերձեալ կենդանութեանն : Եւ թէպէտ եւ  
ամենայն ազգ մարդկան ընդ մեզօք փակեալ է ի  
կամս իւր, ըստ իմաստնոյն բանի թէ՛ չիք մարդ որ  
ոչ մեղանչէ . քանզի ոչ ոք ի հողածնեցելոցս կարաց  
հասանել ճշմարտապէս սրբութեան և կատարեալ  
արգարութեան, թէպէտ և բազումս գործեցին զա-

ուաքինութիւնս . թողում ասել զայնոսիկ որք ի կամակատար հեշտութիւնսն են հանապազորդեալ վայելչութեամբ . սակայն նորա մասն ինչ հրամանա կատար եղեալ իմում բանի՝ բազում ինչ բարե պաշտութիւնս գործեաց . յազազս որոյ ակն ունէի կատարեալ իսկ թողութեան հասանել ի Տեառնէ . իսկ հառարակացն ժամանեալ վախճան կենացս այսոսրիկ՝ ոչ ետ ժամանել, բոլորովիմբ մաքրութիւնս գործել ի ձեռն զզմամբ ապաշուանաց և այլ ինչ պէսպէս հոգևոր շինողութեան . այլ ամենայնցն խառնանումն գործեցաւ սկզմանցն բարեաց : Եւ մեծապէս տարակուսանք նեղասրտութեան չրջապատեաց զիս յազազս այսորիկ : Իսկ ասլա աստուածային իմն ազգեցութեամբ, մանաւանդ զի արժանի իսկ էր, ըստ իւրում կատարելապէս երախտագործութեանցն առ սուրբ եկեղեցիս, սահմանօք և ընչիւք և այլ բազում պայծառութեամբք . հաստատեցի ի սուրբ տեղիս յայսոսիկ բարույ յիշատակ զկնի նորին հատուցումն փոխարինի բարեացն , զի յամենայն տարուջ դուք որ ի սուրբ եկեղեցուջս էք բնակեալ ի Տաթեույ վանս, զմին քառասունս հարկաւորաբար կատարիցէ՛ք վասն նորա հոգեացն փրկութեան, եւ զԵրանի ում թողութիւն եզև մեզաց սազմոսգ յորում տեղուջ կարգեալդ եմ՝ յամենայն աւուր անխափան ասասջիք, և Տէր՝ ողորմեա՛հ

Հատ. Ա. :

60 ի վերայ : Եւ զօր մահուան նորա հանգուցելոց պաշտամամբք յիշատակ առնելով որ է ի քաղոց հնգե-  
տասանին, թերևս սպրեցցի յահագին պատուհա-  
սիցն : Եւ որք կատարիչք լինին հրամանիս մերում  
և մտերմաբար սիրով հատուցանեն զհոգևոր վաս-  
տակսն, ի ձեռն նոցունց սուրբ և աստուածահանոյա-  
կան ազօթիցն զաստուածապահ տեառնն զհոգին  
արժանի արասցէ Քրիստոս մշտնջենաւոր և ան-  
վախճան ուրախութեանցն թողութիւն գտանելով  
յահաւոր ատենին : Եւ զկատարողսն ասացելոցս առ  
ի մէնջ Քրիստոս օրհնեացէ՛, և անեցուացէ՛ զամենայն  
վաստակս առաքինութեան ի հոգևոր անդատանի  
ձերոց. և ամենայն կատարեալ բարեպաշտութեամբ  
յայսմ աշխարհիս կեցեալ՝ անձառ եւ անապական  
հանդերձեալ բարութեանցն Աստուած արասցէ՛ հա-  
ղորդս ընդ ամենայն սիրեցեալ կամակատարս իւր  
հանդերձ անթառամ պսակօքն ի լուսեղէն խորանսն  
բնակելով : Իսկ որք հակառակօզ լինին բարեպատ-  
ճառ հրամանիս մերում, և իբրև զոչ ինչ իմն ի թե-  
թևս բերելով՝ առ ոտն հարկանեն քամահելով, և ոչ  
հատուցանեն զպարտս ասացելոցս առ ի մէնջ .  
ամենայն ծանրութիւնք բեռանց նորա, զօր ունէր ի  
մեղանշականութենէ մարմնականացս, ի նոցանէ  
խնդրեացէ՛ Քրիստոս . և զազօթս նոցա ի մեղս հա-  
մարեացէ ըստ գրեցելումն . և փոխանակ բարի հա-

տուցման ակն ունեւոյ յահաւոր եւ յանպախաղաց  
գաղտեան Բանին Աստուծոյ, հակառակ նորին,  
զանեւանելի և զանվախճան պատուհանն ընկալցի :  
Եւ կնքեցի զայս գիր յիշատակի առ ձեզ սրբաւէր  
քահանայք եւ ճգնազգեաց կրօնաւորք՝ վասն առ  
յապագայիցն հաստատութեան իմով սովորական  
մատանեաւ յ297 թուականին Հայոց » : Ահա յետ  
այսպէս փարթամացուցանելոյ զաթոռս եւ գեղեցիկ  
կարգաւ սահմանելոյ վախճանի Տէր Գաւիթ . եւ  
նստի ի տեղին Տէր Յովհաննէս . և յետ նորա՝ Տէր  
Սաղօմոն :



Խ. — Վասն Տեառն Սաղօմոնի . եւ որ ինչ ետփա  
նառն ի սուրբ եկեղեցին Ժառանգութիւն :

Եւ արդ երանելիս այս Սաղօմոն անցեալ էր առա  
քինութեամբ ընդ ամենայն հոյս ճգնաւորաց . և (էր)  
հալածիչ զիւսաց և ողջացուցիչ ամենայն ակտաժե  
տաց : Վասն որոյ կացուցանեն յաթոռ եպիսկոպոսու  
թեանս Սիւնեաց ձեռնադրեալ ի Տէր Զաքարիայէ՝  
Հայոց կաթողիկոսէ . որ եւ մեծաջան ճգնութեամբ  
զարդարեաց զսուրբ աթոռս զանազան կարգօք : Եւ  
էր հանդիպեալ սմա մասն ինչ յաստուածարարձ  
խաչէն որ ունէր յինքեան նիչ ներկուածի արեամբն

Յիսուսի, յորմէ ահագին և մեծամեծ նշանք լինէին : Տայ կազմել խաչ յոսկոյ ի մեծարհեստ ճարտարաց . և զարդարէ մեծագին ակամբք և մարգարտով . եւ դնէ ի նմա զփայսան . եւ գրէ ի վերայ զիւրն անուն . և ընծայէ ի սուրբ եկեղեցին : Եւ գնէ այլ ևս ստացուած . և տայ ի սուրբ խաչն . և գրէ ինքեան յիշատակ կտակաւ այսպէս :

« Ենորհին Աստուծոյ այս իմ ձեռին գիր է Տեառն Սաղօմոնի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, որ յառաջ ժամանակաց զԽոտոյ կոռաւարն (44) Տեառն Գէորգեայ սուրբ նշանին հոգեցատուր էր արարեալ, զինչ պատճառօք և էր՝ այլ յափշտակեալ էին : Յորժամ յաջորդեցայ ի սուրբ յաթոռս, ստացայ ինձ զբաստուած ընկալ սուրբ նշանս յաղագս տառապեալ հոգւոցս իմոց փրկութեան . և առի զՌարատափ ի Հրահատայ՝ Սիւնեաց տեառն, ի Գրիգորոյ որդւոյն, յիշխանաց իշխանէ, ի հալալ վաստակոց իմոց, ո՛չ հոգեցատուր եւ ո՛չ յերախայրեաց . այլ գնեցի ընդ հազար և երկերիւր դրամի . և սուրբ նշանիս հայրենիք արարի : Արդ որք յաջորդիք ի սուրբ մայրաքաղաքս՝ զիս Սաղօմոն ի սուրբ յաղօթս յիշեցէ՛ք, և Աստուած վայելէ՛լ տացէ : Սահմանք Ռարատափոյ այս են որ յիւր ձեռնագրիդ գրած են . եւ Աղբնոյն շինին առաջ և էր 3 դուր երկիր . և արդ Խոտոյ տէրըս Գրիգոր՝ վասակայ որդի, վկայ եմ . ես վարդիկ՝

Թաղոսի որդի վկայ եմ. ես Աբաս՝ Շէրանկին որդի, վկայ եմ. ես Գրիգոր երէց ի Տաշուայ վկայ եմ. և Վարդ զէհմէթար վկայ եմ, Աբխաազոմ ի Բերդկա, ներեչոյ եւ Սարգիս յԱրխտայ եւ Պետրոս երէց վկայ եմք. Ղազար ի Տաթևոյ և Մրջմնիկ ի Վաւրատնեայ վկայ եմք, Սմբատ ի Յուրայ գետոյ, Տէրունականին Պօղոս երէց, Տիրանուն երէց, Ահարոն երէց Աստուծոյ միջնորդութեամբ վերողրեալ անուանքս վկայ են այս վճռիս : Արդ՝ որ այս հաստատուն վճռիս Դարատափոյ և Աղբնոյն հակառակ ելանէ՝ ի յԱստուծոյ և ի սուրբ նշանէդ դատապարտեալ եղիցի. զիւր կեանքն եւ զժառանգութիւնն մի վայելեսցէ, և ընդ Յուդայի աստուածավաճառին եղիցի. իսկ հաստատիչքն օրհնեալ են յԱստուծոյ և ի մէնջ. յ330 թուիս է » :

Յայսմ ժամանակի իշխան մի Սիսական Զևանչեր անուն՝ որդի Սահակայ՝ Սիւնեաց տեառն, գայ առ Տէր Սաղոմօն . և խնդրէ ի նմանէ զգիւղն Բելի որ ի Կովսական գաւառի, որ էր սեպհական ժառանգութիւն սուրբ խաչին և եպիսկոպոսացն ի հին ժամանակաց . և փոխանակէ զիւր սեպհական գիւղն Արուքս որ ի Բաղք գաւառի. որ հաւանեալ եպիսկոպոսին՝ տայ զԲելի եւ առնու զԱրուքս գիւղ. եւ գրեն զվճիռ պայմանին այսպէս . « յ320 թուակա նախեանս Հայոց, ի ժամանակս աստուածապատիւ



և հոգևոր Տեառն Սաղօմօնի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, կամ եղև ինձ Զուանչէրի՝ աստուածապաշտեառն Սահակայ Սիւնեաց տեառն, որդւոյ, զիմ զէն մի որ ի Բաղք գաւառի Արուքս անուն, որ յիմ հօրէն և յեղբարց յիս Հրիտակ հասեալ. և իմ հայրենի ժառանգութիւն էր անհամիմաղ տեղի, փոխանակել ընդ Բեխոյ շինոյն որ ի Արուսական գաւառի էր. և շէնն բնական սուրբ խաչին և հոգևոր Տէրանցն Սիւնեաց եպիսկոպոսացն ժառանգութիւն էր լեալ. միմեանց կամաւ եւ յօժարութեամբ փոխանակեցաք ես և Տէր Սաղօմօն : Ասան

• զի մեր երկոցունցս մէշառք էր փոխանակեցաք. և զայս հաստատութեան զիր կանգնեցաք : Արդ իշխան էք դուք Տէր Սաղօմօն՝ ուտել և ժառանգել զայդ շէնդ զԱրուքսդ իւր սահմանօքն բոլորովմբ, ծառօք և այգեօք, գետով և ցամաքով, արտավարօք և մարգօք, ջրաղացովք և պարտիզովք, եկեղեցեալ և այլ շինուածովք, դու հոգևոր Տէր Սաղօմօն՝ և ով ոք յաջորդի ի տեղիդ ձեր ի յաթոռդ և սուրբ խաչիդ պաշտօնեայքդ մինչև յաւիտեանս ժամանակաց : Եւ յայսմհետէ մի ոք իշխեսցէ հակառակել այսմ անխախտ վճռիս կամ ի մէնջ և կամ յօտարաց. ապա թէ ոք յանդգնի՝ դատին մի յաղթեսցէ. և յերկոց սուրբ ժողովոցն նդովեալ եղիցի, մասն Պուղային առցէ և մեր մեղացն պարտական եղի.

ցի . և թէ տանձիկ աւագ լինի և յախշտակել ջանայ .  
յիւր Մահմետէն ապիզաւր լիցի եւ յիւր օրինացն  
հազար հազար նարաք նորա վերայ եղիցի, և ինքն  
դենակորոյս և սևերես լիցի յիւր Աշտուծոյն :

Եւ սահմանքն այս է Արուքսայ . յարեւելից կողմանէ  
Կշմատուք է սահմանակից . և յարեւմտից կողմանէ  
հինն դրախտ է նոյն սուրբ խաչիդ սահման . և ի  
հարաւոյ կողմանէ հին ջրագնացովդ է մինչև ի  
Բեխոյ սահմանն, եւ ընդ հիւսիսոյ կողմանէ Կաւարսոյ  
սահմանովն է : Առաք զԲեխ իւր սահմանովն և  
արքունի նեպակովն եւ տուաք զԱրուքս իւր սահմանովն  
եւ արքունի նեպակովն որ էր 12 դրամ . եւ է վկայք  
վճռիս Վասակ՝ Սիւնեաց տէր, եւ իմ եղբայրն  
Արուսան, եւ իմ որդի Տիգրան, եւ այլ Բազայ  
տանուտէրք եւ սուրբ խաչին պաշտօնեայք .  
կնքեցաք մերով մատանեալ » : Գայ եւ Քուպղի  
գուխտ առ Տէր Սաղօմօն, անորդի գոլով, որ էր  
գուտոր Վասակայ՝ Սիւնեաց տեառն, եւ քոյր Փիլիպպէի  
եւ կին Հրահատայ իշխանի . եւ զիւր հոգեման  
բաժիճն ընծայէ ի սուրբ խաչն եւ ի Տէր Սաղօմօն .  
եւ գրէ պայման վճռի զայս օրինակ :

« Ես Քուպղիդուխտ՝ գուտոր Վասակայ՝ Սիւնեաց  
տեառն, մերձեցայ ի ժամանակս ծերութեան, զմտաւ  
ածելով զերկրաւոր կենաց ոչնչութիւնն ցանկացայ  
յաւիտենական կենացն . և վասն զի ի մարմնաւոր կե-

նայս զրկեալ էի ի զաւակէ մասանց, զսուրբ խաչք եւ զաստուածապատիւ եւ զհոգեւոր Տէր Սաղօմօն՝ Արևեակայ եպիսկոպոս, ինձ հոգեակ զաւակ ստացայ . եւ յոյս եւ ասլաւէն մեղույեալ ոգւոյս իմոյ . եւ շէն մի Մաճ անուն ի Բաղայ զաւառի, որ նախ տեառն Ատրնեբակէի՝ Սիւնեակ տեառն և իմ եղբոր, ինձ էր տուեալ, եւ յետ այնորիկ Հրահատայ՝ իմ տեառնն, գնեալ էր յիմ եղբորէն, եւ ինձ վաճառեալ և հոգեցատուր սրարեալ : Ետու ես Քաւաղիդուխտ զայդ շէնդ լերամբք եւ դաշտով, մարգով եւ արտով, գետով, ջրով եւ ցամաքով, ծառովք եւ տնկովք ի սուրբ խաչք եւ ի Տէր Սաղօմօն՝ Արևեակայ եպիսկոպոս : Ես զիմ հոգիս ի քեզ յանձն արարի . արդ իշխան ես դու Տէր Սաղօմօն՝ և որ յետ քո այլ յաջորդի ոք ի սրբութեանց յաթողգ Սիւնեակ, եպիսկոպոսունք, ուտել եւ վայելել զայդ շէնդ բոլորովիմբ իւր սահմանօքդ մինչև յաւիտեանս ժամանակաց : Եւ մի ես եւ մի իմ եղբորորդիք եւ այլ խոստակդարք պայքարել եւ համմազ կալ մի իշխեսցեն . ապա եթէ յանդգնի ոք բանս առնել յիմ արարածիդ եւ կամեսցի խախտել զիմ զտուրսդ՝ յԱստուծոյ եւ ի սուրբ խաչէդ դատապարտեալ եղիցի . եւ ի հոգւոր տէրանցն նզովեալ . եւ զիմ եւ զիմ ծնողաց եւ զտեառն Հրահատայ, որ իմ կենաց կցորդն էր, զամենայն զմեղս եւ զյանցանս Աստ.

ուած ի նմանէ տուժեացէ՛ . եւ ընդ սատանայի եւ  
ընդ հրեշտակաց նորա յանշէջ հուրն տանջեացի ։  
Եւ գրեցի յ316 Թուականութեանս Հայոց վկայու-  
թեամբ իմ եղբորորդեացս՝ տեառն Ասասկայ, և  
տեառն Աշոտի եւ տեառն Գրիգորոյ եւ տեառն  
Սահակայ եւ իւրեանց աղատաց և ամենայն Շնհէ-  
րէցեաց ։ Եւ վասն առաւել հաստատութեան գրոյս  
զաստուածապատիւ եւ զհոգևոր Տեառն Սաղոմոնի՝  
Սիւնեաց եպիսկոպոսի, զվաւերական մատանին ի  
վերայ եղի ։ Եւ եթէ տաճիկ աւագութիւն փոխի  
եւ յախշտակել ջանայ, հազարէն հազար նաչար ի  
վերայ նորա գայ . եւ յիւր փեղանքարէն սպիգար  
լինի » ։

Եւ սպա յետ բազում եւ մեծամեծ վաստակոց  
ընու զկէտ կենաց իւրոց սուրբ եւ երանելի եպիսկո-  
պոսն Տէր Սաղոմոն փոխեալ յաստեացս . և յաջորդէ  
ի տեղին հոգևոր և աստուածապատիւ, արքայաշնորհ  
եպիսկոպոսն Տէր Յովհաննէս, զորոյ գովութիւն և  
զանհամեմատ գործս գովութեանցն ցուցից ձեզ ։



**ԽԱ.** — Վասն Տեառն Յովհաննէիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի . և վասն շինութեան մեծ կարողիքն եկեղեցւոյն որ յեպիսկոպոսարանիս անդ ի Տարե եւ վասն այլ շինութեան :

Երիցս երանեալ եւ բազմերջանիկ հայրապետս այս Տէր Յովհաննէս, որ երկրորդ զկնի Տեառն Սաղոմոնի կարգեցաւ յաթոռ մետրապօլտութեան տանս Սիւնեաց : Ասի զամանէ որդի գոլ առն միոյ այրոյ եւ մուրացիկ աղքատի ի Նորեաց շինոյն . եւ առեալ էր յետոյ կին մի անզգամ որ պահէր զերամս ընտանի թռչնոց տեառն գեղջն . և վարէր խորթութեամբ, ոխաբար ընդ որդւոյն իւրոյ փոքր պատանեկին Յովհաննու . եւ հանապազ գանալից եւ սովամահ առնէր զնա : Եւ յաւուր միում կորուսեալ մանկանն բազում ձագս ի թռչնոցն՝ ոչ իշխեաց մտանել ի տուն անդր, այլ փախտական գայ Հոգւոյն առաջնորդութեամբ ի վանս Տաթեւոյ . և բնակեալ առ կրօնաւորի մի՝ զարգանայ ուսմամբ եւ հասակաւ . քանզի էր լի աստուածեղէն շնորհիւ, հարուստ խոհականաւ եւ փարթամ յիշողականաւ . եւ արժանաւորեալ աստուածային օժմանն առնու ձեռնադրութիւն քահանայութեան ի Տէր Դաւթէ՝ եպիսկոպոսէ Սիւնեաց . և վարժեալ աստուածային

գրովք հասանէ ի կատարեալ չափ գիտնականին եւ գործնականին : Եւ յաւուրս Տեառն Սաղօմօնի առնու զփակակալութիւն եկեղեցւոյն . և լինի զլուխ ամենայն կղերիկոսաց տանն, եւ աւագ եկեղեցւոյ պանայն :

Ապա հասեալ վախճան առաքինւոյն Սաղօմօնի եւ ժողովեալ տէրանցն Սիւնեաց եւ ամենայն ազատաց նոցա, եւ վանաց երիցունք աշխարհիս, նա և աւագ տանուտեարք ըստ գաւառաց գաւառաց, և ամիտփեալ զսուրբ մարմինն եպիսկոպոսին՝ առնեն ընտրութիւն նորոգ հայրապետի : Եւ ամենայն ժողովոյն զաղաղակ հարեալ՝ զՅովհաննէս փակակալն խնդրէին ինքեանց առաջնորդ . ընդ որ հաճեալ ասմենայն բազմութեանն յուղարիէն զնա մեծապատիւ փառօք առ կաթողիկոսն Հայոց Տէր Պէորգ . եւ ձեռնադրեալ դառնայ մեծաշուք պատուով եւ նստի յաթոռ մետրապօլտութեան տանս Սիսական : Տեսանէր ապա երանելիս այս զեկեղեցիին նեղ եւ խորթիւն եւ հնացեալ ի բազում ժամանակաց, նա եւ ի շարժմանէ իսկ խարխալեալ . եւ զի անպատշաճ էր այնպիսի մեծի մայրաքաղաքի եւ աշխարհագումար ժողովարանի սուրբ հայրապետանոցին առանց մեծ կաթողիկէ եկեղեցւոյ լինել, վասն որոց հանապազմատախտհ լինէր ի սրտին եւ ոչ ինչ զտանէր հնաբոս, մի՛ զի ոչ իշխէր քակել զառաջին սրբոցն հիմնար-

կեալ տաճարն . եւ մի՛ զի անձեռնհաս թուէր յան-  
հուն ծախս պիտոյիցն : Ապա ի տեսեան հրաման  
առնու ի հրեշտակէ զհինն ի բաց դնել եւ նոր առնել  
սկիզբն շինուածոյ եկեղեցւոյն, եւ այն ինչ երկրոր-  
դէր և երրորդէր տեսիլն, մինչ բնաւին հաւաստեցու-  
ցանէր հրեշտակն զիրն . զի մի երևոյթ երազական  
ինչ կարծիցի . և խրով մականաւ ծրագրէր զտեղին  
և հրամայէր շինել յանուն սուրբ և զլիաւոր առա-  
քելոցն՝ միսին Պետրոսի եւ առաքելոյն Պօղոսի . եւ  
քաջալերէր ի գործն ասելով . ոչ ի մարդոց կատարի  
դա . այլ Տէր կամի կանգնել զդա տուն փառաց  
խրոց :

Զարհուրեալ եպիսկոպոսին, ապա և զարթուցեալ  
ի քնոյն՝ յօլով ժամն ամիշեալ լինէր : Յարուցեալ  
եկն ի տեղին և ցուցանէր եղբայրութեանն ղծրեալն  
ի հրեշտակէն . աղղէ եւ զայս մեծի եւ գահերէց իշ-  
խանին Սիւնեաց Աշոտոյ՝ եղբոր Ասսակայ, որդւոյ  
Փիլիսպէի եւ հօր Սմբատայ եւ Սահակայ եւ Բար-  
գենի, եւ ամուսնոյ նորա երանելի եւ մեծահաւատ  
տիկնոջն Շուշանայ, եւ միւս իշխանին որ ի Գեղամ  
գաւառի լինէր, Գրիգորի՝ Սուխանայ որդւոյ՝ Գա-  
բուռայ եւ Սահակայ, եւ միւս իշխանին որ ի Բաղս՝  
Զագիկ կոչեցելոյ՝ հօր Զևանչէրի . որք մեծապէս  
խախապեալ՝ աստուածային իմն տեսչութեամբ  
անդր փութապէս բերեալք լինէին . եւ հիացեալք

ընդ սքանչելի տեսիլն՝ միաբան, միախորհուրդ ձեռն  
ի գործ արկանէին և ջանային փութապէս կատարել ։  
Բացեալ լինէին այնուհետև դանձարանք նոցա, եւ  
առատապէս ծախեալ ի գործօնեայս շինուածոյն .  
բայց գլխովին իսկ մեծ իշխանն Աշոտ եւ եպիսկո-  
պոսն Տէր Յովհաննէս մեծամեծ ծախիւք և աշխա-  
տութեամբ կային ի վերայ գործոյն . եւ աստուա-  
ծային կամակցութեամբն սկիզբն առնեն շինուա-  
ծոյն, եւ արկանեն հիմն յՅԷԷ թուականին Հայոց, ի  
թագաւորութեանն Սմբատայ Բագրատունոյ խոս-  
տովանոցի՝ որդւոյ Աշոտոյ թագաւորի, յիշխանու-  
թեան Սիւնեայ Աշոտոյ՝ որդւոյ Փիլիպպէի, ի կա-  
թողիկոսութեանն Հայոց Տեառն Գէորգեայ Գառ-  
նեցւոյ, հրամանաւ եւ կամօք Աշոտոյ, ձեռամբ  
Տեառն Յովհաննիսի, զոր եւ իւր իսկ գրեալ էր ի  
վերայ եկեղեցւոյն այսպէս . « Յամին յորում թուա-  
կանն Հայոց ՅԷԷ էր, եւ զատիկն ի նաւասարդի ի Է,  
ես Տէր Յովհաննէս որ երկրորդ կարգեցայ եպիսկո-  
պոս Սիւնեայ զկնի Տեառն Սաղոմօնի, արարի  
սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս » ։

Եւ այսպէս կատարեալ ղեկեղեցին կամար երկ-  
նանման զմբէթայարկ, ձեմարան իմն հրեշտակաց և  
քաւարան մարդկան, ի տաշածոյ վիմաց և ի քերա-  
ծոյ քարանց, դաղատոսաչէն իմն յարմարեալ ակնա-  
խտիղ տեսողաց ի 100 կանգնոյ բարձրութիւն նորա



և ի 48 կանգնոյ երկայնութիւն նորա և ի 24 կանգնոյ լայնութիւն նորա . ունելով յինքեան չորս խորանս բաց յաւազ խորանէն (45) : Եւ ըստ Սաղօմոնեան յարկին և կամ Զօրաբարէլեանին կառուցեալ ի մէջ տանն երկուս սիւնս հրաշակերտս՝ զբոյս և զյաբում, որք հաստահեղոյս խարսխօք և զեղեցկադիր և բարձրաբերձ թակաղաղօք պարաբարձեալ ունին զահագին թանձրութիւն երկնածեղուն քարակարկառ յարկին . և այս ի խորհուրդ երկուց զլիսաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, յորոյ նշխարացս եղան ի ներքոյ սեանցս, և բաղմութիւնք սրբոց նշխարաց անդ զամարելոց առաքելոց, հայրապետաց, մարտիրոսաց եղան ի հիմունս եւ յանկիւնս եկեղեցւոյն : Ահա զայս իսկ աւարտեալ զամս մետասան՝ կանգնէ և մերձ եկեղեցւոյն հանդէպ դրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ Եղբորդութեանն ի մանր քարանց պատուածեալ ի չափ 30 կանգնոյ . պարսպէ և զեկեղեցին սրբաբարսվ . և ապա զվանսն՝ կոփածոյ քարամբք . և զի էր նիստ տեղւոյն անյարմար՝ հարթէ զթանձրութիւն գետնոյն, և զխորութեան վայրսն բարձրացուցանէ կրաշաղախ որմովք . շինէ և զաղտանոցս գետնափորս ի ներքոյ վանիցն ծածուկ երկրաւ՝ բազում տունս և դարանս ի պէտս եկեղեցւոյն . և հարթեալ հաւասարեալ զվայրն՝ շինէ և սրբաշէն տրապէզս և գործատը .

ներս, համբարանոցս և սրբատունս և գրատունս . և ի դրան եկեղեցւոյն տուն արթից և տեղի դամբանի իշխանաց և եպիսկոպոսաց Սիւնեաց :

Ահա զայս ամենայն կազմուած յօրինուածի մեծի տանն հայրապետութեան հոգացեալ և աւարտեալ՝ արար ցանկալի հեռաւորաց և մերձաւորաց բոլոր Հայաստանս (46) աշխարհիս . և ջահաւորեալ իբրև զարեգակն ի մէջ աստեղաց՝ երևեցի էր ի մէջ ամենայնի ոչ միայն շինուածովք . այլ և պայծառանայր քահանայական և կրօնաւորական դասուք ի չափ 300 եղբարց . լի էր և ծովամատոց փիլիսոփայիք երաժշտական երգոց, ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբն . նա և արհեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք : Ասան որոյ յայսպիսի համաւոյ հրաշացեալ թագաւորք և իշխանք և եպիսկոպոսունք գային ի տեսութիւն և ընծայարերք լինէին սուրբ և երկնահանգէտ աթոռոյն : Բայց յորժամ աւարտէր զշինուածն եկեղեցւոյն և այլ ձեռակերտացն եպիսկոպոսն Տէր Յովհաննէս . ապա ի խնդիր լինէր աշխարհախուժբ հանդիսի առ ի կատարել զնաւակատիս մեծի եւ աստուածահրաշ տաճարին . կոչեն զթագաւորն Սմբատ Հայոց այլովք իշխանօքն և զկաթողիկոսն Տէր Յովհաննէս որ զկնի Մաշտոցի ի Սեան կղզւոյն յաջորդեցաւ, այլովք եպիսկոպոսօք Հայոց . գաց և

Գագիկ Ասապուրականի որ և Թադաւորեացն իսկ, իւրով եպիսկոպոսօք եւ իշխանօք եւ ազատօք : Գայ և Աղլանից կաթողիկոսն Տէր Սիմէոն իւրոյ աշխարհին եպիսկոպոսօք և մեծամեծ իշխանօք . Ժողովին և համազգի հայկազուն իշխանքն Սիւնեաց զորս յիշեցար . և այլ վանականք և աշխարհականք Սիսական աշխարհիս . յորոյ միջի արդարեւ էր տեսանել ըստ իւրումն անսուտ հրամանին զՔրիստոս Հարբ և ամենասուրբ Հոգւովն և ամենայն երկնային զօրօքն . նա և առաքելական և մարգարէական գնդիւք . և հայրապետախումբ և մարգարէական և մարտիրոսաջոկ երամօքն, զորս և տեսանէր ի ցայգապաշտաման սուրբ եպիսկոպոսն Յովհաննէս զՊետրոս, և ի ձեռին բանալի երկաթի, և զՊօղոս, և ի գիրկն իւր առաքելական դիրքն, որ մտեալ յեկեղեցին պարաստէին աթոռ երկնաւոր Թագաւորին . և տային զբանալին և զգիրքն ցեպիսկոպոսն եւ ասէն . Հաճեցաւ Տէր բնակել ի սմա . և մեք պատրաստեմք տեղի հանգստեան նմա . և մեզ իսկ հրամայեցաւ աստէն մնալ մինչ ի միւսանգամ գալուստն Թագաւորին մեր . այդ բանալի արքայութեանն է, կացցէ՛ յեկեղեցւոյս . զի աստ բանալոց է դուռն դրախտին ամենայն մեղուցելոց հաւատով դիմելոցն ի սա . և այս գիրք կացցէ՛ ի սմին, զի աստի բղխելոց է շնորհ վարդապետական և ողջամիտ բարոզութիւն սուրբ

գրեկեսացս աստ մնալոց է անապակ եւ անխառնուրդ :

Զայս տեսեալ, և զարթուցեալ՝ մեծաւ գոհութեամբ փառս ի վեր առաքէր . և ոչ ինչ յայտնէր ումեք : Ապա ընդ լուսանալ առաւօտուն զգեստաւորեալ սուրբ հայրապետացն և ամենայն եպիսկոպոսացն ելին ի բեմն . և կատարեալ զհոգևորական օրհնութիւնն օծանէին աստուածազործ իւղովն . և ի յասեըն « օրհնեսցի, օծցի » ամենայն բազմութիւնն այնքան հնչեցուցանէին զամէնն . մինչ թուէր ըտղացն ահագին որոտմունք և ճայթմունք յամպոց հրեղինաց եկեալ . և դղրդէր երկիրն, և շարժէր վայրն . որ և այսպէս կարծեցեալ թուի ինձ եթէ անմարմին ձայնք խառն լինէին նոցա, որ այնպէս ահարկու թուէր, և ո՛չ միայն սոսկ մարդոց : Եւ այսպէս կատարեալ զօրհնութիւնն՝ ութն օր նաւակատիս առնեն ի փառս Աստուծոյ : Եւ իւրաքանչիւր ոք դառնայ ի տեղի իւր . բայց թագաւորն և իշխանքն Սիւնեաց տեսեալ զայնպիսի հանդէս և զայնքան չքնաղաղոյն յօրինուած՝ առաւելապէս սիրեն եւ պատուեն զտեղին . և մեծ տրօք փարթամացուցանեն . և յոյժ ընդարձակեն զսահման տեղոյն զոր և ասելի իսկ է :



ԽԲ. — Վասն ժառանգութեան եկեղեցւոյն եւ հայրապետացն, զորս ետուն քաղաւորքն եւ իշխանքն . եւ տահման փանիցն զոր գտաք գրեալ ի վերայ մագաղարի եւ կեքեալ արքունական մատանեաւ :

Ընծայէ Թագաւորն ի սուրբ եկեղեցիին զմեծ աւանն Կարճառան յԱրեփ գաւառի, ի Մեղրաձորի ընդ գնոյ ստացեալ, գնէ և ՂՀարժիս ի տէրանցն Սիւնեաց և Ղայն ևս ընծայէ ազատ յամենայն հարկաց, տայ և ի Գեղաքունի, ի Սողից գաւառի զԾորասանկիրակ. և ի Գառնոյ ձորի զԳոտող վանս : Տայ և Աշտ՝ գաւերէց իշխանն Սիւնեաց, զՅողունի գիւղ ի Հարանդ գաւառի և զԲնունիք ի Սիւնիս, ի Մշուկք գաւառի, շնորհէ և զՅուր բերդովն և ազաբակօքն և զգետն Յուրայ և զվանքն, զՏանձատափ և զԳեղձաձորն . տան և Բաղացիքն զՏաշու փոխեալ ընդ այլ գեղոյ յԱշտոոյ . տան և զԵղէգս գեօղ ի Բաղք գաւառի . տան եւ Սուխանեանք զԱրիտ գեօղ սահմանակից Հարժէից և Տամալեկուց . տան և յետոյ ի Գեղաքունի զԿտկոյս գիւղ ազատ յամենայն հարկաց . շնորհէ եւ մեծ բարեպաշտուհի տիկինն Սիւնեաց զՄածարդ և զԲարասնիս : Եւ գրեն այսմ ամենայնի կտակ առաջի մեծ ժողովոցն և կաթողիկոսին, և ահագին նզովիք փակեն սոս.

կալի և սարսափելի դաշամբք . և կնքեն զթուղթն վարազագիր մատանեալ թագաւորին և կաթողիկոսին և իշխանացն . և աւանդեցին ի ձեռն Տեառն Յովհաննիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի :

Զոր և տեսեալ մեր զայս ամենայն նամակ վճռի՝ ձեռագիր իւրեանց իսկ շնորհողացն հնացեալ եւ ծայրատեալ, զոր ի բազմացն զսակաւն կարացաք ընթեռնուլ . եւ վասն երկարութեանն տաղտկութիւն համարեցաք լսողացդ (եւ ոչ) եղաք (47) ի մտտենիս : Բայց զմեծագոյն սիգէնն որ զըջակայ սահմանն ցուցանէ, գրեցից աստ : Դարձեալ և կին մի բարեպաշտօն Համասարուհի անուն՝ դուստր Բարզենի իշխանի, տայ նախ զայգին մեծ որ ի Հալիսից գետաօին և յետոյ՝ զգիւղն իսկ զՀալիս իւր ամենայն սահմանօքն . և գրէ կտակ հաստատութեան մեծամեծ դաշամբք զի մի իշխեսցեն խախտել : Բայց թէպէտ զայս ամենայն տուրս արարին, զքնակիչս բերդին Յուրայ ոչ կարացին հանել ի տեղւոյն . զի հին հայրենի տէրք էին և բարբարոսք և պիղծ մարդիկ . այսպէս և ոչ զՏամալէկս որ մերձ վանիցն էր ի հանդէպն, կարացին սեպհականել . զի և նորա նոյնպիսիք էին : Էր և աւազականոց մի Բերդ անուն հանդէպ վանիցն, յայնկոյս մեծի գետոյն յափն քաբոյն որ Առաւելադաշտն կոչեն ի ներքին Ուսակին . և զայն ևս ոչ հալածեցին . յորոց վտանգ ոչ սակաւ

Հասանէր եղբայրութեանն : Յետոյ թէպէտ յայլ և յայլ ժամանակս և զայնս ևս սեպհականեցին Հայրապետքն . բայց յետոյ ի խանգարել Հայրապետանոցին և յաւերիլ տանն քակեցան այս Հոգեցատուր ժառանգութիւնք . և ի բառնալ Հակառակութեանն դարձեալ մի մի վերստին անդրէն Հաստատեցին :



**ԽԳ. — Գիր վճռի շրջակայ տահմանին Տարևոյ :**

Ի ժամանակս աստուածազօր թագաւորին մերոյ Սմբատայ, և աստուածազգեաց կաթողիկոսին մերոյ Տեառն Յովհաննիսի, և աստուածապատիւ և հոգևոր Տէր Յովհաննիսի՝ եպիսկոպոսի Ալւնեաց, մեք նուաստ ծառայքս Աստուծոյ Հայկազնի իշխանքս Ալւնեաց՝ տէր Աշոտ՝ որդի Փիլիպպէի, և որդիք իմ Սմբատ, Սահակ և Բարգէն, և տէր Գրիգոր Սուխան և եղբարք իւր Սահակ և Վասակ, և տէր Զազիկ և որդի իւր Զևանչէր, և այլ ազատք և համազգիք մեր, առաջի աստուածապահ թագաւորիս և սուրբ կաթողիկոսիս եւ Աղվանից Հայրապետիս և իշխանացս, եւ տեառն Գազկայ և Գուրգենայ՝ Վասպուրականի իշխանացս, եւ այլ եպիսկոպոսաց եւ քահանայից եւ ազատաց եւ տանու-

տերաց արարաբ զայս գիր պայմանի հաստատուն և անխախտ վճռի վասն շրջակայ սահմանի մեծի, սուրբ եւ առաքելական աթոռոյն Սիւնեաց՝ մայրաքաղաքին Տաթեւոյ, յաւուր յորում ժողովեցաք ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյս . եւ առատաձեռն պարգևօք փարթամացուցաք զտունս, զոր մեք յայսմ աւուր եւ զոր ի հին ժամանակաց նախնիքն՝ մեր՝ առաջին իշխանքն Սիւնեաց :

Եւ ընթերցաք զհին նամակն զոր մեր հորցն եւ հաւուց գրեալ էին . եւ ծանեաք զժառանգութիւն սուրբ խաչիս եւ հոգեւոր տէրանցս որ ի մերում իշխանութեանս, եւ զսահման տեղւոյս զոր եւ մեք վերստին հաստատեցաք եւ ընդարձակեցաք աստուածընկալ սուրբ խաչիւս, եւ ամեն ժողովով գնացաք ոտիւք մերով, կտրեցաք զսահմանս շրջակայ որք են այսպէս : Յարեւմտից կողմանէդ սկսեալ ի մեծ դիտաւոր սարէդ Գազրոյլայ ջրաթափովն մինչ ի խոռին ճանապարհն որ Ղորաձորին սահմանն է : Եւ ի հիւսիսոյ դեհաց բնասեռովն ի վայր ի գետն հանդէպ Խոտայ, եւ գետովն ի Խոտանան եւ անցեալ ընդ գետն՝ փոքր ձորակովն որ ելանէ յԱւաղեաց խոռ ի խոզաց բլուրկովն, նորին բարակ ճանապարհովն բացահորինն, նուրբ, անջուր ձորակովն ի վայր ի Դեղնաձորն և ի կարմունջն, եւ ի կարմնջէն ի Քարաձորն . և Քարաձորին մեծ բնասեռովն ի սարն և



ի բուն ճանապարհն որ գայ սարունն ի Հարանավաղն,  
եւ Հարանավաղին ձորակոնն զառ ի կողմն յեկեղե-  
ցին որ ի պառակոջ ճանապարհին, և սպքարունն հա-  
տեալ զմեծ ձորունն ի միաւոր քարն որ կայ հանդէպ  
ի յայն կողմն մեծ ձորոցն . եւ հատանելով զմեծ  
տափն ի յերկայն խաչն եւ ջրաթափունն ի մեծ  
խոռն եւ ի ճանապարհն որ գայ ի Բաղայ ձորոյ, եւ  
անտի ի նոյն լեռանն Գազրոյ :

Ահա այս իսկ են սահմանք զոր մեք ոտիւք մերովք  
կոխեալ եւ աջօք մերովք տեսեալ եւ ձեռօք մերովք  
նշանեալ, առանց զրկութեան և յախշտակելոյ գրե-  
ցաք եւ կնքեցաք մատանեալ մերոյ արքայիս եւ կա-  
թողիկոսիս և մեր իսկ : Եւ յայսմհետէ մինչև յաւի-  
տեան այս լիցի սահման Տաթևոյ սուրբ ուխտիս . և մի  
ոք իշխեսցէ այսմ հակառակել մի Բաղայիք եւ մի  
Որոտնեցիք և մի Աղանդացիք (48), մի Ենհէրացիք  
և մի Նորեցիք : Եթէ ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց  
կամ յօտարաց, յաւազաց կամ ի ձեռնաւորաց եւ ի  
խոստակդարաց կամ ի տանուտէրաց, ի սուրբ Երրոր-  
դութենէն որոշեալ լիցի, եւ յերկոց սուրբ ժողովոցն  
նշովեալ եղիցի : Ընդ Յուդայի և խաչահանուացն և  
այլ չարագործացն պատժեալ դատեսցի : Եւ թէ ի  
Տաճկաց աւագութիւն փոխի, եւ կարեն լինել իշխե-  
ցող . և յախշտակել ջանան՝ յիւրեանց հաւատոյն ապի-  
գար և դենակորոյս լիցին, և ի փեղաճրարէն հերքեալ

եղիցին, զէն աշահն եւ մարայիք տրահոյն ուրացեալ  
եղիցին, և զնատիփնապին անարգեալ լիցին . հարպն  
հարամ եղիցի . և մինչ ի 1000 ամն եաշարեառայն ի վե-  
րայ նորա մնասցէ . երկինք նորա մի ցողեսցէ . և երկիրս  
նորա մի դալարեսցէ » : Ես Յովհաննէս՝ շնորհիւն  
Աստուծոյ կաթողիկոս Հայոց, վկայ եմ այսմ ան-  
խախտ եւ անխաստիան վճռոյս որ աւանդեցաւ ի մեծ  
իշխանացս Սիւնեաց . եւ կնքեցի իմով սովորական  
մատանեաւս : Ես Սմբատ Բագրատունի՝ Թագաւոր  
Հայոց, հաստատեցի իմով ձեռամբս զայս վճիռս եւ  
եղի ի վերայ զիմ Թագաւորական մատանին խտո-  
րեւ : Ես Գագիկ՝ Վասպուրականի եւ Արծրունեաց  
տէր, որդի Գրիգորոյ Դերենկի, վկայ եմ այս ըն-  
ծայից և սահմանադրութեանց ակտոյս Սիւնեաց :  
Ես նուաստ ծառայ Աստուծոյ եւ Աղվանից արքե-  
պիսկոպոս Տէր Սիմէոն, վկայ եմ այսմ վճռիս . եւ  
իմով մատանեաւ կնքեցի զսա : Ես Գրիգոր Սու-  
փան՝ Սիւնեաց իշխան, վկայ եմ և հաստատիչ այսմ  
վճռի զոր մեր եղեւ սահմանեալ : Մեք Գրիգոր եւ  
Եսայի և Ատրնեքսեհ՝ Աղվանից իշխանք, վկայ եմք  
այսմ վճռի : Մեք Ջագիկ եւ Հրահատ Սիւնի վկայ  
եմք այսմ վճռի : Մեք Սահակ Գարդմանայ տէր,  
եւ Աշոտ եւ Վասակ Գնթունի վկայ եմք այսմ : Ես  
Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, հաստատեցի  
զվճիռս իմով ձեռամբս և կնքեցի իմով մատանեաւս .

Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ խաչիս և սուրբ  
Եկեղեցւոյս եւ աստուածարեալ Հայրապետացս որ  
աստ նստին : Եղև այս ի Թուականութեանս Հա-  
յոց 355 :



ԽԹ. — Վասն Խոտակերաց վանիցն որ կոչեցաւ Քար-  
կոփ, կորժանեանն ի շարժէ . եւ վերստին շինելոյն ի  
Շուշանայ տիկերոյէ և ի Տէր Յովնանեխէ :

Յառաջ քան զայս՝ ի բազում ժամանակաց բնա-  
կեալ էին խոտաճարակ և խարազնազդեստ մարդիկ  
յստորոտն Վայոց ձորոյ, ի սահմանին Հրասեկայ  
բերդոյ մերձ Սրաստամոխ գետը, որ իբր դիտանոց  
բարձր Հայէր ի վերայ դաշտին Շարրոյ . եւ էին յոյժ  
բազմութիւնք Հեռացեալք՝ ի հանդերձից եւ ի մարմ-  
նատր կերակրոց, և ցրուեալք ընդ քորածայոս և  
ընդ խորածորս վայրիցն՝ մշտնջենաւոր ազօթից  
պարապէին . և ի կիւրակէիցն առ միմեանս ժողովէին  
եւ երկնաւոր զենմանն (Հաղորդէին) . եւ այն լինէր  
նոցա վայելումն ի հաց եւ ի զինի : Զայլ աւուրան  
բնակէին ոմանք ի ծերպս, ոմանք՝ ի նեղսագոյն խղի,  
ոմանք՝ բացօթեայք, լուռք և անմուռնչք, և սակաւ  
ոգեպահովն ի հնդոյ կամ ի բանջարոյ շատանային .  
ոմանք շինէին մատուռն ի նեղ ձորակի մի առ քաղց .

րահամ աղբերն եւ անդ բնակէին . որ այժմ Ուոոյ  
քար անուանի, յորում կան գերեզմանք նոցին . եւ  
մեծամեծ բժշկութիւնք լինին . ոմանք ի միւս արձակ  
ձորին շինեցին խորան, եւ անդ բնակէին, զոր հին  
վանքն կոչեն . եւ այլքն աստ եւ անդ ցան եւ ցիր, եւ  
բուն տունն իւրեանց եւ եկեղեցին էր մերձ ՅԱրտա-  
պամուխ գետոյ, ի պատշաճաւոր տեղի յորում բնա-  
կեցուցեալ էին զահարկու և զաստուածահրաշ սուրբ  
նշանն որ խոտակերաց խաչ կոչեն : Եւ յաւերմանէ  
աշխարհիս ցրուեցան կրօնաւորքն այն . եւ տեղին  
աւերակ եւ անբնակ մնաց մինչև յաւուրս տեառն  
Աշոտոյ՝ Սիւնեաց իշխանի : Ապա զգացուցանէ նմա  
գիրն մեծ եպիսկոպոսն Սիւնեաց Տէր Յովհաննէս . և  
նա հրամայէ վերստին շինել զեկեղեցին և զվանքն և  
ժողովել զկրօնաւորսն, եւ տայ զգեօղն Արտասա-  
մուխ ի ժառանգութիւն եկեղեցւոյն . որ եղևն իսկ :

Եւ ապա վախճանի բարեպաշտ և արքայաշուք իշ-  
խանն այն Աշոտ . և ի աստիկ շարժմանէ տապալին  
եկեղեցիքն եւ ամենայն շինուածք վանիցն . զոր եւ  
վերստին ծանուցանէ եպիսկոպոսն երանելի տիկնոջն  
Շուշանայ . եւ նա առաւել աստուածասէր գորով եւ  
բարեպաշտօն՝ հայցէ յեպիսկոպոսէն փութապէս  
ձեռն ի գործ ածել եւ շինել զեկեղեցին եւ զտեղին  
պայծառ քան զառաջինն, զի մի կորիցէ, ասէ, յիշա-  
տակ տեառն իմոյ Աշոտոյ . զոր և անյապաղ փութով

Հատ. Ա :

● 17

կատարեաց երջանիկ եպիսկոպոսն Տէր Յովհաննէս :  
Եւ կոչեն ի նաւակատիս զմեծ կաթողիկոսն Հայոց  
զՏէր Յովհաննէս . եւ պայծառապէս զարդարեցին  
զվանքն առաւել քան զառաւել , եւ գրեն արձան յի-  
շատակի ի վերայ եկեղեցւոյն Աշոտոյ և Շուշանայ .  
որում էր օրինակ զայս . « Նախ և առաջին իսկ լեալ  
էր վանքն Խոտակերաց . եւ վասն զի աւերեալ էր  
կրօնաւորանոց ուխտս եւ քաւարանս որ ի սմա ի  
վաղնջուց հետէ իսկ . ապա տէրն իմ երանելին  
Աշոտ աշխատո : Թեպմբ շինեալ էր զսուրբ եկեղե-  
ցիքն՝ միանդամայն իսկ նորոգապէս զարդարեալ  
զամենայն շինուածն կրօնաւորական դասիւք : Իսկ  
եւ իսկ եղև Տեառն իմոյ Աշոտի ելանել ի մարմնոյ  
աստի փոխելով առ հարսն իւր . սահմանեցին որ-  
դեակքն մեր զգեօղս Արտասամուխ ի սուրբ ուխտս  
սահմանօքն իւրեանց (զոր) հարքն կերեալ էին , վասն  
երանելի իշխանին Աշոտի և ինձ Շուշանայ՝ Սիւնեաց  
աիկնոջ , հոգեաց արձան եւ յիշատակ մեզ եւ յարև-  
շատութիւն որդեկաց մերոց : Եւ եղև զի հիմնաշարժ  
լինելով աւերեցան եկեղեցիքս . եւ իմ տեառն իմոյ  
Աշոտի կենաց հաղորդ կամելով լինել , (առ ի) նորո-  
գել զյիշատակ նորա փոխելոյն առ Քրիստոս , նոր  
շինեցի զսուրբ եկեղեցիս կրօնաւորանոց շինուածովք  
յանուն սրբուհոյ եւ միշտ կուսին Մարիամու Աստ-  
ուածածնին . եւ վասն փրկութեան երանելի տեառն



Իմոյ Աշոտի՝ Սիւնեաց իշխանի, եւ իմոյ մեղուցեալ  
ոգւոյ եւ որդւոյ մերոյ Սմբատայ եւ այլոցն երկա-  
րածիգ կենաց եւ յաջողման իրրեւ զնոյն գիւղն  
Արտասամուխ ամենայն սահմանօքն նորա զոր կե-  
րեալ էին մինչև ցայսօր ժամանակի, ի ձեռս վանացս  
առաջնորդիս հաստատեցի անխախտապայմանաւ ի  
սուրբ Աստուածածինս, ի վանս Խոտակերաց մինչև  
յաւիտեանս ժամանակաց՝ կամակցութեամբ որդե-  
կաց իմոյ :

Եւ զայս պայման հաստատեցի ի սուրբ կրօնաւո-  
րանոցի աստ, ի հինգ եկեղեցիսդ այդ զոր ես շինեցի-  
մին եկեղեցիդ որ է Աստուածածինդ՝ տեառն իմոյ  
Աշոտի և յիմ անուն լիցի՝ ի տարին երեք քառասունք  
կատարեն մեղուցեալ հոգւոյ մերոյ, թերևս զտոյութե  
ողորմութիւն յազեղ ատենին Քրիստոսի . այլ եւս  
չորս եկեղեցիքդ լիցին որդեկաց մերոյ յարեւատու-  
թիւն եւ հոգեացն վրկութիւն եւ ի պէտս վանացս :  
Արդ մի ոք իշխեսցէ այսմ անսուտ վճռիս եւ պայ-  
մանիս ընդդիմակաց լինիլ եւ խափանող . ապա թէ  
ոչ՝ այնպիսին Յուդայի մատնչին մասնակից լիցի . և  
մեղաց մերոյ համարս տացէ յառուր ահեղ ատենին  
Քրիստոսի » : Եւ մեք Տէր Յովհաննէս՝ Հայոց կաթո-  
ղիկոս, մերովք եպիսկոպոսօք և կղերիկոսօք, և Տէր  
Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, վկայ եմք այսմ  
գրոյ եւ վճռի : Գրեցաւ յիշատակ կտակիս այս յ359

Թուականիս Հայոց ի կամս ամենակապին Աստուծոյ,  
որ է օրհնեալ յախտեանս . ամէն :



ԽԵ. — Անուարտն Յովնանեա վանիցն ի Վանանայ՝  
որդոյ Չագկայ :

Որպէս ի վերագոյնն ստացաք, Վահան ոմն՝ որդի  
Չագիկ իշխանի, եղբայր Չւանջէրի, վասն դիւարախ  
մոլեգնելոյն եղև կրօնաւոր, և կամեցաւ շինել վանս  
ևւ հաստատել կրօնաւորական դասս մշտապաշտօն  
քահանայից : Եւ յետ բազում եւ մեծամեծ ճգնու  
թեանց եկեալ ի ստորոտ բարձր լերինն յորում անա  
սիկ ամրոցն կայ Բաղաբերդու՝ հանդէպ Աճանանու .  
և գտեալ տեղի մի հարթ և յոյժ ի ճահ՝ նախ խնդրէ  
աղօթիւք ի Տեառնէ յաջողել զգործս ձեռաց իւրոց .  
և ապա հրաւիրէ ղեղբարան իւր ի նոյն գործ . և  
սկիզբն առնէ շինուածոյ եկեղեցւոյն և կանգնէ տուն  
փառացն Աստուծոյ՝ յոյժ գեղեցիկ յօրինուածովք,  
զմբէթայարկ և եռախորան, հաստահեղոյս և տաշա  
ծոյ վիմօք . և կարգէ զնա տուն կրօնաւորաց :

Եւ մեծամեծ եւ թագաւորական սպասուք զար  
դարէ զնա . եւ ժողովէ եղբարս սրբակրօնս աւելի  
քան զ100 . ևւ հաստատեն մասն ժառանգութեան

եկեղեցւոյն, որ յանուն սուրբ լուսաւորչին Գրիգորի, զձորն գետովն յայս դէհս եւ յայն յանդաստանս եւ յայդեստանս վանիցն, և զլեռնակողմն մինչ ի վեր ի ծայր բարձրաւանդակին ուր հօրանք հօտիցն լինէին . եւ բնակետղ խաչանց . եւ ի քաղաքին կողմանէ մինչ ի սլաստուար պարսպի արտաքին որմոյն որ ի լեռնէն սկսանի . եւ ի Տանձափարախոյ կողմանէն մեծ բնաձորն որ ի լեռնէն սկսանի և իջանէ ի գետն, և զգեղանն որ ի հանդէպ վանացն՝ զԱչաղու և զԱչաղուայ, զԳետարավայր եւ զՇէկք եւ այլ բազում տուրս եւ ժառանգութիւնս եկեղեցւոյն հաստատեն անխախտ վճռաւ : Կոչէ Վահան զվանսն յիւր (անուն) Վահանու վանք . եւ այնուհետեւ եւ օր ըստ օրէ հանդիսանայր նա իբրև քաղաք բազմաժողով : Եւ ինքն իսկ Վահան յետ բազում ճգանց և աշխատութեանց վախճանի, եւ զնի ի դրան սուրբ քաւարանին : Եղև շինութիւն սուրբ ու խտին 360 Թուականին Հացոց, ի Թագաւորութեանն Սմբատայ Բագրատունւոյ, յԵխանութեան Սիւնեաց գահերէց իշխանին Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ, ի Բաղայ Զևանչէրի, յեպիսկոպոսութեան Սիւնեաց՝ Տեառն Յովհաննիսի :

Բաց յետոյ միւս Վահան՝ եղբորորդի սորա, այսինքն Զևանչէրի որդի, սնեալ եւ ուսեալ ի մանկութենէ, վարժեալ աստուածային խմաստիւքն ի սոյն տան, քահանայացու եւ եղև. առաջնորդ սուրբ  
Հատ. Ա. :



ուխտին : Սա յաւել բազում շինութիւնս եւ զար-  
դարեաց զվանսն հանդիսական կարգօք, շինէ զմեծ  
աղօթարանն ի դրան եկեղեցւոյն վիմարդեան մահ-  
արձանօք, յորում հանգուցեալ քան ի շիրմի բազում  
թագաւորք եւ թագուհիք Աղլանից եւ Բաղայ, եւ  
բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս :  
Շինէ և գեղեցիկ յորինուածով զգաւիթ եկեղեցւոյն  
մեծամեծ քերածոյ վիմօք 30 կանգնոց չափ, կանգնէ  
կամար ի դրան վանիցն եւ ի վերայ՝ երկու խորան  
յանուն Պետրոսի եւ Պօղոսի առջք առաքելոցն :  
Շինէ եւ ի ձուլեալ կրօշաղախ քարանց տրապէզ մի  
մեծ, և բերէ փողովք զջուրն ի դռնն նորա . այսպէս  
գեղեցկացուցեալ զնա զանազան յորինուածօք : Եւ  
ինքն յետոյ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց  
որ զինի Տեառն Յակոբայ . եւ անտի յեւս ի ծայրա-  
գոյն փառս՝ ի կաթողիկոսութիւն Հայոց, որ զինի  
Տեառն Անանիայի Մոկացւոյն : Եւ կացեալ ի կա-  
թողիկոսութեան ամս 5, վախճանի ի Վասպուրա-  
կան աշխարհի ի Տոսպ գաւառի, ի Զորոյվանքն որ է  
մերձ Բերկրոյ . եւ դնի ի դրան քաւարանին : Բայց  
յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի՝ թա-  
գաւորի Բաղայ, ի Շահանդիստոյ թագուհոյն եւ ի  
Կայտայէ եւ ի Սենեքերիմայ թագաւորէ բազում եւ  
գեղեցիկ շինուածովք առաւել գեղեցկացուցին ըզ-  
վանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծամեծս, և ի

վերայ՝ եկեղեցիս և սրահս բազմասիւնս բարձրաբերձ,  
հովանի և խրախարան իշխանացն . յորոց աւուրս և  
եկն երջանիկ կաթողիկոսն Աղվանից Տէր Ստեփան,  
նոս եւ անդէն բնակեալ աւուրս ինչ՝ հանգեաւ ի  
ի տեղւոջն, եւ եղաւ ի նմին սրբարանի :



ԽԶ. — Վասն Տեառն Գէորգեայ քահանայի, որ էր  
որդի իշխանին Սիւնեաց :

Յաւուրս իշխանին Սիւնեայ Վասակայ տեառն՝  
որդւոյ Փիլիպպէի, մանուկ մի ի Սիսական տոհմէ  
Գէորգ անուն՝ յոյժ գեղեցիկ տեսլեամբ եւ առոյգ  
հասակաւ, առեալ էր իւր կինն եւ հասեալ ի չափ  
երիտասարդութեան : Ապա ըստ աստուածային եր-  
կիւղին նեղէր զնա բան սուետարանին՝ այն որ ասէր .  
եթէ ոչ թողցէ այր զհայր իւր եւ զմայր կամ զկին  
կամ զորդի եւ առնու զխաչն եւ զայ զկնի իմ՝ չէ  
ինձ արժանի : Եւ երբէք ոչ հանգչէր եւ ոչ հեշտա-  
նայր ի մարմնական փառս եւ ի ցանկութիւնս . եւ զի  
կուտութեամբ եւ սրբութեամբ հասեալ էր նա յար-  
դար ամուսնութիւն, ապա օր մի յեղակարծում  
ժամու անյայտ լինէր յիւր ապարանիցն եւ յընտա-  
նեացն . եւ զնայ ի ծածուկ ի վանս ուրեք, եւ փոխէ

զհանդերձս իւր ի մաշկեղէնս եւ յայծեայս . եւ ան-  
ժանօթ կայր անհանգիստ տընութեամբ : Ապա ճիչ  
բարձեալ մօր նորա Համամուհեայ՝ մեծահաւատ  
տիկնոջն, եւ կնոջ նորա եւ եղբարց եւ ծառայից՝ եւ  
չրջէին խնդրել զՊէտրգ եւ ոչ գտանէին :

Եւ յետ սակաւուց ծանեան զտեղին . զնայեալ  
բռնութեամբ ածին յապարանսն իւր . եւ պատատեալ  
զգծուծ հանդերձն այծեայ եւ զխոշոր ցփսին՝ զգե-  
ցուցին զհայրենի հանդերձն յարգունական մեռաք-  
սէից : Եւ թէպէտ բռնութեամբ պահէին . այլ նա  
ոչ խառնէր ընդ նոսա . այլ իբր արբեալ եւ թմբբեալ  
ի սիրոյն Քրիստոսի՝ կայր անզբաղ եւ լուռ՝ միշտ  
աղօթից եւ ընթերցմանց պարապեալ . որ և յաւուր  
միւսմ դարձեալ աներեւոյթ լինէր . եւ զգեցեալ  
մազեղէն խոշոր և գլգլէնս պատառտտունս՝ զնայր ի  
մեծ առաքինարանն Երիցու վանից առ աստուածագ-  
գեաց և սրբափայլ ճգնաւորն՝ մեծ էգոնոմոսն Թէո-  
դորոս քահանայ . եւ նա յոյժ ուրախութեամբ ընկա-  
լաւ զնա : Իսկ իմացեալ մօր նորա եւ կնոջն եւ առեալ  
զհամազգի իշխանսն Սիւնի՝ դիմեցին ի վանսն Երի-  
ցու . եւ բազում եւ զանազան մաղթանօք ջանացին  
և ոչ ինչ կարացին զնա շարժել յայնմ կամաց . ապա  
իմացեալ զանխախտելի սէրն որ առ Քրիստոս՝ թո-  
ղին զնա ի կամս իւր եւ զնացին : Իսկ նա յետ բա-  
զում ճգնութեանց եւ խստամբեր կրօնից փափագէր

քահանայական կրօնից շնորհին . եւ յայնմ ժամանակի  
փայլէր ճգնութեամբ մեծ եպիսկոպոսն Սիւնեաց  
Տէր Սաղօմօն եւ երանելին Մաշտոց ի Սեւան . եւ  
զի ոմանք խոնդային ընդ Քէորզեայ եւ մախանօք  
զկծեցուցանէին զնա խիտտ բանիւք ի վարդապետաց  
եւ յաշխարհականաց . ապա առեալ զնա Թէոդորոսի  
տարաւ առ Տէր Սաղօմօն, զոր յոյժ սիրով ընդունէր  
եւ յորդորական խրատու հաստատէր զնա . եւ հրա-  
մայէր հեռանալ անտի եւ զնալ առ Մաշտոց եւ ի  
նմանէ ուսանիլ եւ կրթիլ յամենայն վարս առաքինու-  
թեան, զոր եւ արարն իսկ :

Եւ յուզի անկեալ Թէոդորոսիւ հանդերձ զնայ ի  
Սեւան . եւ քազում աւուրբք կեցեալ ընդ նմա .  
վարժեալ եւ խրատեալ ի նմանէ ամենայն բարե-  
ձեւութեամբ . եւ դառնայ անդրէն ի տեղի իւր . եւ  
գտանէ վախճանեալ զեպիսկոպոսն . եւ յաջորդէ ի  
տեղին Տէր Յովհաննէս : Քնայ յողջոյն նմա . եւ  
քազում եւս գտանէ յորդորումն մխիթարական  
խրատուց ի նմանէ . և բնակեալ յԵրիցու վանս՝ հան-  
դիսանայր ի մեծամեծ ճգունս հանդերձ Թէոդորոսիւ :  
Ապա յետ աւուրց ինչ դարձեալ զնայ առ Մաշտոց  
ի Սեւան հրամանաւ Տեառն Յովհաննիսի . եւ թա-  
խանձեցուցանէ զնա վասն իւր քահանայանալոց . զոր  
և յուզարկէ մաղթողական թղթով առ կաթողիկոսն  
Հայոց Քէորզ եւ ծանուցանէ նմա զամենայն որպի-

սութիւն նորա և հայրագիր եղեալ Պէտրոզեայ երաշխաւոր լինի նմա : Տեսեալ ապա կաթողիկոսին զՊէտրոզ եւ ընթերցեալ զթուղթն՝ ընդունի զնա յոյժ պատուով եւ հրամայէ ձեռնադրել զնա քահանայ . եւ յուզարկեն անդրէն ի տեղի իւր . եւ լինէր խնդութիւն բազմաց . բայց Մաշտոց վասն երաշխաւորութեանն անդադար յորդորական թղթով եւ հոգևոր խրատու զգուշացուցանէր զնա : Իսկ ի կաթողիկոսութեանն Մաշտոցի հանապազ ընդ նմա լինէր Պէտրոզ մինչ ի վախճան իրա : Եւ յետ վախճանին Մաշտոցի գայր եւ բերէր զչուրջառն եւ զկնկուղն խոյրակերպ եւ զպարեգօտ երանելոյն նշան յանուն Սիւնեայ . և ինքն բնակէր յԵրիցու վանս ընդ Թէոդորոսի հրեշտակակրօն վարուք . և անդէն վախճանեալ՝ եղաւ սրբասնեալ մարմին նորա ընդ երիցս երանեալ սուրբ հօրն Երիցակայ, ի նմին սրբարանի . որոց բարեխօսութեամբ խնայեսցէ՛ Քրիստոս ի տունս յայս եւ յաթոռս եւ ի հաւատացեալ հօտ սորին :



ԽԷ. — Վասն շինութեան Ետրափանից որ ի գաւառին Բղնոյ :

Երանելի սուրբ հօրն Պէտրոզեայ էր հարազատ մանկիկ մի ի նոյն Սիսական տոհմէ Ստեփաննոս

անունն, զոր հատեալ յստենէ ծնողացն նուիրեցին Աստուծոյ . և ետուն յուսումն մանկութեան առ ոտս աստուածարեալ ծերոց . որ եւ սնեալ զարգայաւ ամենայն կատարելութեամբ ներքին մարդովն եւ արտաքին, գիտնականաւ և գործնականաւ . և կոչեցաւ յաստիճան քահանայութեան ի Տէր Յովհաննիսէ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ : Ապա ցանկացեալ այնուհետև աստուածային իմն գործոյ՝ կամեցաւ շինել եկեղեցի եւ հաստատել ի նմա տուն կրօնաւորաց և դասս պաշտօնէից . զի որ զառաջնորդութի ն ստասցի, զնասցէ նա ի զօրութենէ ի զօրութիւն եւ երևեսցի Աստուծոյ և հրեշտակաց ի Սիոն : Գնացեալ ապա ի թիկանց կուսէ Աատարոյ վանից . եւ գտեալ տեղի մի յոյժ գեղեցիկ եւ վայելուչ՝ ի մէջ երկու ձորոց ի վերայ հարթ ոստոյ միոյ, սկսանի շինել եկեղեցի օժանդակութեամբ Հրահատայ իշխանի . և կատարէ զնա, և այլ ևս գաւիթս և սրահս եկեղեցւոյն և բնակութիւն կրօնաւորաց :

Եւ կոչեալ ի նաւակատիս զՏէր Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, սահմանեն զնա եղբայրանոց, և զվայրն ամենայն չրջակայ՝ ի ժառանգութիւն եկեղեցւոյն, և դնեն գողետունս հանդէս վանիցն . եւ ժողովեալ ուրուկս բազումս անդ դարմանէին . և այսպէս պայծառացուցեալ ամենայն սպասուք եւ կարգաւք զվանսն յ385 թուականին Հայոց . ինքն երանելին

եւ անհատեմատն ի մարդկանէ Ստեփաննոս կեցեալ  
բազում ամա առաքիլնաջան վարուք եւ հրեշտակա-  
կէան առաքիլնութեամբ զանմարմնոցն ի մարմնի բե-  
րելով զկեանս, մեռեալ մարմնով և կենդանի հոգւով,  
փոխի յիմանալի կայանս ի կարգս հրեշտակաց . այրն  
երկնաքաղաքացի գնայ առ քաղաքապետն իւր  
Քրիստոս ի 419 Թուականին Հայոց, ի նառասարդի  
ամսոյ ի 17, յաւուր հինգշաբաթով, ի սուրբ պէն-  
տեկոստէին . եւ դնի ի քնարանի առ սուրբ եկեղե-  
ցոյն : Եւ յաջորդէ զառաջնորդութիւն ուխտին  
Նորավանից հայր Հրահատ, և յետ նորա եղբօրորդի  
նորին Ստեփաննոսի Քրիստափոր՝ աշակերտ սուրբ  
հօրն, յամենայնի նմանեալ վարդապետին իւրոյ :

Բայց յետ սակաւուց եւ շինեցաւ եկեղեցի յոյժ  
գեղեցիկ յօրինուածօք, և ի դրանն կամարք զարմա-  
նալիք ի սքանչելի ճարտարաց յարմարեալք մեծա-  
մեծ վիմօք և խարսխաւոր սեամբք ի հայր Գէորգեաց  
և ի Յովհաննիսէ քահանայէ :



ԽԸ. — Վասն Յուրայ բերդին աւերելոյն . և եզովիցն  
որ այլ ոչ շինի :

Ի ժամանակս Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ, Սիւ-  
նեաց քահանայի իշխանի, եւ յեպիսկոպոսութեանն

Տեառն Յովհաննիսի շինողի սուրբ եկեղեցւոյն, բազում եւ մեծամեծ միջոս հասուցանէին սուրբ ուխտին Տաթեւոյ բնակիչք Յուրայ բերդին, որք էին անաստուածք, ժպիրհք եւ ելուզակք : Եւ յաւուր միում եկեալ ի գիշերի յեղակարծ ժամու, սկսան կողոպտել զեկեղեցին եւ զգործատներն և զյարկան կրօնաւորաց . եւ խնդրէին զեպիսկոպոսն զի սպանցեն, եւ ոչ գտին . ապա զմանա ի ծերոցն սրով հարին եւ զայլն փախստական արարին . զոր ինչ գտին ինքեանք՝ առեալ գնացին ի բերդն (Յուրայ) . տարան եւ արծաթի սափորով զմեռոնն եւ վայթեցին ընդ քարն : Իսկ ընդ լուսանայն եկեալ եպիսկոպոսին և տեսեալ զայն ամենայն վնասն, ի վեր առին զսուրբ խաչն եւ զայլ սրբութիւնսն եւ նզովեցին ահագին նզովիւք զբերդն եւ զբնակիչս նորա . եւ առ ժամայն շարժեալ գետնոյն, քարն յերկուս ճեղքեալ եւ ամենայն շինուածքն փլեալ . եւ բազումք ի բնակչացն անյայտ կորեան : Իսկ եպիսկոպոսն ոչ իշխեաց բնակիլ ի տեղ ոջն . այլ առեալ գխաչն եւ ամենայն պաշտօնէիքն եւ և գնաց յօտար աշխարհ :

Ազդ լինի ապա այս փառաւորեալ իշխանին Սմբատայ, եւ յարուցեալ այլովք ազատօքն գնաց զկնի եպիսկոպոսին եւ սուրբ խաչին . եւ բազում թախանձանօք էած անգրէն ի տեղի իւր՝ ի մեծ հայրապետարանն Տաթեւ . եւ հողածական արարեալ  
Հատ . Ա :



դանիծեալ բնակիչս Յուրայ քարին, զոմանս ի մեծամեծ պատիժս եւ պատուհասս արկանէր, եւ առհասարակ ջնջեալ հեռացոյց յաշխարհէս . եւ զտեղին իւր սահմանովն ետ ի սեպհական ժառանգութիւն եկեղեցւոյն . եւ աւանդեաց ի ձեռս Տէր Յովհաննիսի . եւ հրամայեաց գրել վճիռ ահագին նզովիւք եւ կնքել եւ դնել ի սուրբ եկեղեցւոյն զի մի ոք յանդգնեսցի շինել զնա . զոր եւ գրեացն իսկ . եւ է այսպէս :

« Ես Յովհաննէս՝ շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոս Սիւնեաց, գրեցի զայս վճիռ իմով ձեռամբս հրամանաւ աստուածազօր իշխանին Սիւնեաց Սմբատայ . զի եհաս մեզ վտանգ տագնապի ի չար եւ յանաստուած երւզակացն որ բնակեալ էին ի Յուրայ բերդանուն քարին, որք յանկարծակի յարուցեալ ի վերայ յոգնաժողով եղբարցն ի գիշերի՝ կողոպտեցին դյարկս ամենայն, եւ զոմանս սպանին ի ծերոցն : Իսկ մեք տեսեալ զայնպիսի աղէտս՝ առեալ զսուրբ խաչն հալածական եղաք յայլ աշխարհ . եւ կրօնաւորքս ամէն ցան եւ ցիր եզեն : Ապա ազդ եղեալ աստուածապահ տեառն Սմբատայ, եւ եկեալ դարձոյց զմեզ այսրէն . եւ ըստ բաջ սրտին եւ մեծայոյս հաւատոյն, իբրեւ զսոված մրմռեալ ի վերայ չարացն՝ ցան եւ ցիր կացոյց զամենեսեան, գիտելով ըստ մեծի իմաստութեան իւրոյ զանօգուտ քարն

զի չէ ումեք շահ ինչ և ոչ նեղէ զոք՝ ո՛չ ի Բազա-  
ցեաց, եւ ո՛չ յայլ կողմանց բայց միայն՝ զսուրբ  
եկեղեցիս եւ զիւր իշխանութիւնս տաղնապաւ-  
վչտացուցանէ, զորս իւր և իւր հարանցն բաղմառատ  
և անչափելի ծախիւք և աշխատութեամբ սլայծա-  
ռասհրաշ վայելչացուցեալ էին և ցանկալի յորինեալ.  
և զերծուցեալ հանգոյց զսուրբ նշանս եւ զեկեղե-  
ցիքս և զմեզ. և եհան յանդորր ի դառն նեղութենէ.  
եւ աւանդեսոյ ի ձեռս մեր զտեղին, զոր հատուցէ  
սմա նախ ի մարմնի Տէր Աստուած ձիգ ժամանակօք  
եւ խաղաղական թագաւորութեամբ, զաւակօք եւ  
զարմիւք վայելել. եւ յաւիտենական կենացն եւ  
արքայութեանն լինել արժանի ընդ սուրբ թագա-  
ւորացն :

Այլ հրամանաւ նորին Սմբատայ՝ Սիւնեաց իշ-  
խանի, գրեցի իմով ձեռամբս կտակ յաւիտենական.  
եւ կնքեցի իմով սովորական մատուցեսուս, եւ եղի  
յեկեղեցւոջս զի յետ ժամանակաց մի՞ ոք յանդըզ-  
նեսցի զնոյն ոճիրս գործել : Արդ՝ եթէ ոք հրամա-  
նիս մերոյ հակառակի. և առնու զՅուր ի սուրբ եկե-  
ղեցւոյս . և կամ կամի զսուտ քարդ բերդ անուանել  
եւ շինութիւն խորհիլ, եւ կրկին հալածումն յարու-  
ցանել սուրբ եկեղեցւոյս, այնպիսին նզովեալ եզիցի  
յԱստուծոյ ամենակալէ եւ յամենայն սրբոց եւ ի  
մէնջ. եւ մի՛ հասցէ ողորմութեան. այլ եկեսցեն ի

վերայ նորա անէծք ցաւադինք, եւ եղիցին որդիք նորա ի սատակումն, և յազգէ ջնջեացի անուն նորա. եւ յետ այս ինքն ջնջեալ լիցի ի դպրութենէն կենաց. եւ մասն ընդ սատանայի առջէ՛ յանչէջ հուրն : Իսկ ժամանակին աւագն որ հաստատուն կայ այս պայմանիս, որպէս Սմբատ աստուածասէր իշխանս, զնորին օրհնութիւն և զվարձս ժառանգեացէ՛, ապա թէ մոռացեալ անիոյթ արասցէ՛ զիւրն մի վայելեացէ. եւ ամենայն նզովից որ ի գրիս է պարտապան եղիցի » : Եղև այս ի թուականիս Հայոց 364 . ահա այսպէս եղև :

Բայց յետ բազում ժամանակաց մինչ խանգարեալ էր հայրապետանոցն . եւ ցրուեալ ժառանգութիւնք եկեղեցւոյն, զայս տեղիս առին ոմանք եւ վերստին շինեցին. և յարուցին մեծամեծ հալածումն եկեղեցւոյն յաւուրս Աստակայ Թագաւորեցելոյն և Սևադայի եւ Եազանդիտոյ՝ մօր նոցա . և կրկին աւերեցին զվանսն . և եպիսկոպոսն Տէր Յակոբ երթեալ էր ի Բաղս . և դարձեալ զայր անտի, իսկ շնաբարոյքն գաղտ պահեալ զճանապարհն որ անցանէ ընդ խոռն Յուրայ, յարեան ի վերայ և ոպանին զեպիսկոպոսն, որ և թաղեցաւ ի յիշատակ չար դործոյն . եւ մինչև ցայսօր բժշկութիւնք լինին ի տեղւոջն ի բորոտս, ի պիսակս եւ յայլ ակտաժէտս : Արա յետ նորա յաջորգի ի տեղին Տէր Գրիգոր որ

եւ հայցեալ ի Թագաւորէն Ասսակայ զտեղին, ցուցանէ և զառաջին Թուղթ անիծիցն որ գրեալ էր ձեռամբ Տէր Յովհաննիսի . և նորա հրամայեալ նմա զտեղին՝ տայ պատուէր քակել և յատակել և բնաւին ի բայ ջնջել զտեղի բերդոյն . զոր և արար իսկ անյայտ զտեղին . եւ գրէ կտակ կրկին այսպէս :

« Ծնորհին Աստուծոյ կամ եղև Ասսակայ՝ աստուածասէր եւ բարեպաշտ Թագաւորի, և Սևադայթ՝ իշխանայ իշխանի, եւ մօրն իւրեանց Շահանդիստոյ, ըստ քաջահաւատ յուսոյն եւ երկիրաժ բարուցն հաստատել զվերոյգրեալ վճիռդ երանեալ Տեառն Յովհաննիսի՝ շինողի սուրբ եկեղեցւոցս, և չարաչար նզովիւք փակել յայժմոցս և ի հանգերձեալ կեանսն վասն Յուրայ քարիդ շինողի : Արդ անփոյթ եղեալ անյուսից եւ աներկիրից՝ սկսան եւ շինեցին բերդ վասն առժամանակեան օգտի . եւ ոչ ինչ շահեալ որդնալից սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան : Իսկ ի ժամանակս մեր հրամայեցին աւերեալ յատակել : Որ այլ յանդգնի շինել նզովեալ լիցի ի Հօրէ եւ Արդւոյ եւ ի սուրբ Հոգւոյն . որդիք նորա մուրիդք եղիցին եւ եցեն ի բնակութենէ իւրեանց, եւ մի հասարակեսցեն զաւուրս իւրեանց . և թէ ի տաճիկ աւագութիւն փոխի եւ յափշտակել ջանայ զՅուր եւ կամ շինել գրեւ դաքարդ՝ Աստուծոյ անիծեալ լիցի, և յիւր Աահ-

մեռէն ապիգար եղիցի, հաշարն նմա հարամ, և յիւր դուրանէն յամբ և սևերնս լիցի » : Գրեցաւ այս կտակ իմով ձեռամբս Տեառն Գրիգորի . եւ կնքեցի իմով սովորական մատանեաւս ի կամս Աստուծոյ :



**ԽԹ.** — Վախճան Տեառն Յովհաննիսի . և յաշորդեմ Տեառն Յակոբայ . եւ որ յառարս նորին եղեն յաւելուաւք Ժառանգարեան եկեղեցւոյն :

Արամնդի եւ աստուածազգեաց Հայրապետն մեծ Տէր Յովհաննէս, յետ բազում բարեկարգութեանց եւ մեծամեծ եւ երևելի գործոց, վախճանի . եւ ղնի առ սուրբ եկեղեցւոյն ի Հանգստի յՅ67 թուականին Հայոց : Բայց բազում ինչ ի բանից նորա եւ ի ժառանգութեանց որ վարթամացոյց զսուրբ ուխտն, ոչ գրեցաք զի մի՛ ի հնացեալ նամակացն ոչ կարացաք ճշդիւ վերծանել . եւ մի՛ զի տաղտկութիւն համարեցաք լսողացդ : Իսկ յետ սորա գահերէց իշխանն Սիւնեաց Սմբատ խնդրէ ի մեծ եւ յաշխարհակալ կաթողիկոսէն Հայոց ի Տէր Յովհաննիսէ եպիսկոպոս եւ առաջնորդ Սիւնեաց : Ապա էր ի տան կաթողիկոսարանին սենեկապետ եւ գործակալ կաթողիկոսին եւ աւագ ամենայն կղերիկոսացն Յակոբ

անուն, որ էր ի Դձեայ՝ որդի եղբոր նորին Տեառն Յովհաննիսի կաթողիկոսին, այր բարձրահասակ եւ գեղեցկատեսիլ, հանձարեղ եւ իմաստուն, բաղյրաբարոյ եւ հեղամիտ, լի ամենայն առաքինութեամբ . զնա պատշաճ համարեալ այնմ մեծի եւ առաքելական ակթառոյն . եւ վկայութեամբ եւ ընտրութեամբ բազմաց ձեռնադրէ եւ առաքէ զՅակոբ եղփսկոպոս Արեւոտայ . որ եկեալ բազում եւ երևելի կայիւր արայծառացոյց զսուրբ եկեղեցին, եւ փարթամացոյց առաւել բան զառաւել . եւ ամենայն բաղջր վարդապետութեամբ միշտ ուսուցանէր զլիճակեալսն եւ հոգայր վասն հօտին :

Սա յաներևոյթ իմն զորացեալ ի բանէն Աստուծոյ՝ գանձագին ասնէ զՂուրն Չագէձորոյ, որ Վարարակն կոչի, ի Տեառն Փիլիպպէէ՝ որդւոյ Վասակայ Սիւնեայ իշխանի, ընդ երկոտասան 1,000 դրամի եւ մի ըւսաւոր շաւահիրի, որում գինն եւ հանգամանքն բազմաց անգիտելի էին : Եւ բազում աշխատութեամբ եւ մեծամեծ ծախիւք ածեալ էր (Ղուր) ի լեռնէն Չագէձորոյ եւ բերեալ ի Յաքուտն որ հանդէպ վանիցն յայնկոցս գետոյն . եւ տրար զամենայն վայրն առաւար եւ փշալից վարդաւտ եւ տնկալից . տնկեաց բազում այգիս եւ որթս սորեկս, էարկ տունկս ի զանազան օրտղարերաց ձիթենիս եւ թզենիս եւ նունենիս . եւ յամենայն մրգաբերաց արար դրախտս զարմանալիս .

և զարդարեալ զբոլոր վայրն ընդարձակագոյն թանձրախիտ ծառովք եւ քաջուգէշ որթովք ի վայելումն եգրայրութեանն եւ ի պէտս ամենայն կարօտելոց և աղքատաց : Եւ ապա տեսեալ բլուր մի գեղեցիկ ի մէջ դարաստանաց, եւ հարթեալ զգլուխ նորա՝ արար պարսպավակ եւ ելից զմէջն իբր քաղցր դիտանոց որ հայէր ի վերայ ամենայն այգեստանոյն . եւ շինէ ի վերայ նորա զմթէթայարկ խորան մի յոյժ հրաշակերտ յօրինուածովք, եւ զորմ եւ զձեղուն նորա ետ զարդարել նկարչաց զանազան երանգօք, նկարել զամենայն տնօրինական եւ տէրունական պատկերս եւ զառաքելոց եւ զհայրապետաց, եւ բոլոր շուրջ գեկեղեցեան սրահակս զաւթաց, եւ գրէ ինքեան արձան յիշատակի այսպէս :

« Ես Յակոբ՝ շնորհուն Աստուծոյ Սիւնեաց եպիսկոպոս, գնեցի զԱրարակ ջուրն յաստուածապահ տեառն Փիլիպպէէ՝ Սիւնեաց տեառնէ, ընդ 12,000 դրամի եւ մի պատուական գոհարի, եւ բազում ծախիւք և մեծամեծ աշխատութեամբ վերին օգնակա, նութեամբն ածի զջուրն ի լեռնէն Ջագէճորոյ և բերի ի վարդուտս, և տնկեցի որթս սորեկս եւ այգիս վայելուչս եւ դրախտս բազմածաղիկս եւ պողպլիցս ի վայելումն սուրբ հայրապետացն որ ի սուրբ աթոռս հաստատին եւ սուրբ ժողովոյս և ամենայն հաւատացելոց Քրիստոսի : Եւ արդ Աստուած ի վայե-

լու մն արասցէ հասարակաց ամենեցուն. եւ աղերս մատուցանեմ հասարակաց անմոռաց յիշման արժանի առնել ի սրբամատոյց յաղօթս ձեր զտառապեալ հոգիս իմ : Եւ չկայ յայս ջրոյս հաշիւ ոչ Նօբեցեաց, ոչ Խոտանանեցեաց, ոչ Շնկէրացեաց կամ Հալեցեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կտրել և ոչ ի մարդ եւ ոչ պարտիզի ջուր տալ զատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ եւ անասնոյ : Եւ թէ ոք յանդգնի եւ զայս ջուրս կտրէ, այնպիսին նզովեալ վիցի Աստուծոյ եւ ի սուրբ նշանէս և յ318 հայրապետացն որ ի Նիկիայն գումարեցան, եւ յամենայն սրբոց եւ ի մէնջ. եւ բաժին նորա ընդ ուրացողս եւ կախարդս լիցի յաւուր ահեղ ատենին Քրիստոսի. եւ ընդ սատանայի և հրեշտակաց նորա ճարակ լիցի անշէջ հրոյն տանջանաց. ուր հուր նոցա ոչ չիջանի և որդն նոցա ոչ վախճանի » : 6381 Թուականիս գրեցաւ վճիռս այս իմով ձեռամբս եւ կնքեցաւ մեր սովորական մատանեաւս ի կամս Աստուծոյ :

Գտաք զայս իւրով ձեռամբն գծագրեալ ի մազազաթի, ընդ սմին և զմիւս վճիռ գին ու ծախ վաճառին գրեալ ձեռամբ նոյն իշխանին Փիլիպպէի՝ որդւոյ Ասասկայ, որ իշխանիկ կոչիւր, որդւոյ մեծ Փիլիպպէին, որ էր այսպէս : « Կամանս Աստուծոյ եւ Փիլիպպէ՝ որդի տեառն Ասասկայ, Սիւնեաց տեառըն, իմ կամաւորութեամբ վաճառեցի զԱրարական Հատ. Ա. :



Ջուրն սուրբ Պրիզորին որ իմ պապուն տէր Փիլիպպէին շինեալ էր ի սուրբ եպիսկոպոսարանն Տաթևոյ . և գնեաց Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, ընդ 12,000 դրամի եւ մին մեծագին գոհարի, եւ վճարեաց զամենայն գինն ողջամբ . եւ ես առեալ եմ զգանձս եւ զմին գոհարն ի Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ . եւ ապիգար եմ ես և իմ զաւակք և այլ ազգայինք յայդ ջրոյդ յայսմհետէ մինչև յաւիտեանս ժամանակաց . եւ չկայ Նորեցեաց կամ Խոտանանեցեաց կամ Շնկէրայ եւ Հալեցեաց յայդ ջրոյդ հաշիւ ոչ շատ եւ ոչ սակաւ, ոչ յարտ հատանել եւ ոչ ի մարդ զատել, որ մարդ եւ անասուն Ջուր ըմպեն ի մատակէդ : Եւ թէ ես կամ իմ զաւակք յայս սլայմանէս ստեմք . եւ կամ յայդ ջրէդ կտրել խորհիմք յարտ կամ ի մարդ կամ յայլ ինչ՝ յԱստուծոյ եւ ի սուրբ նշանէդ նզովեալ եղիցիմք, եւ զվերոյգրեալ անէծսդ Տեառն Յակոբայ անմահ կենօք ժառանգեսցու՛ք » : Աստուած շնորհաւոր աբասցէ սուրբ ուխտիդ եւ սուրբ և աստուածազգեաց հայրապետայդ : Այս Յակոբ ետ ածել նկարիչս եւ գառնախո որ է պատկերագործ ի հեռաւոր աշխարհէ Գռանգ ազգաւ . և զլուսաճեմ յարկս սաստուածաբշնակ տաճարիս բազում և անհուն ծախիւք ետ նկարել զբովանդակն ի վերուստ մինչեւ ի վայր . եւ զիրկչական պատկերն յոյժ ահաւոր տեսեամբ ետ

Նկարել հանդիպակշիռ աստուածազորժ սեղանոյն  
ի վերոյ՝ զբոլոր երկինն աւագ կամարին . և ի ներ-  
քոյ նորա շուրջ ղսեղանովն՝ զմարդարէական եւ  
զառաքելական եւ զհայրապետական կենդանա-  
գրութիւնս յոյժ խորհրդարար, նմանապէս և զբո-  
լորն համակ զարդարեաց անքան, զի տեսողաց տե-  
սարանքն շանային ի նայելն, եւ երբէք ոչ թուէր ի  
գեղոց եւ յերանգոց յօրինեալ . այլ համայն կենդա-  
նիք, յորոց զարհուրեալք խոսափէին տեսողքն :

Եւ արար զայս ի թուականին Հայոց 379 : Եւ  
ապա մեծածորով հանդիսիւ կոչեաց զկաթողիկոսն  
Հայոց բազում եպիսկոպոսք և զիշխանսն ի նաւա-  
կատիս օրհնութեան եւ սրբազործութեան պատ-  
կերացն ոչ ինչ ընդհատ բան զառաջին հանդէսն որ  
վասն օրհնութեան տաճարին : Ղարձեալ յայնմ  
ժամանակի աւազականոցն, որ հանդէպ վանիցն  
կայր ի վերայ ուսոյն որ Աւելտաշտն կոչեն, զոր  
վերագոյն ասացաք, լի էր ելուզակ մալուովք որք բա-  
զում ոճիրս գործէին եւ յորով նեղութիւնս հասու-  
ցանէին եղբարցն և այլ չրջակայ սահմանացն . յայն-  
ժամ խնդրէ եպիսկոպոսն յիշխանացն Սիւնեաց . և  
հրաման առեալ՝ հալածական արար զարսն . եւ քան-  
զեալ աւերեաց զապստամբանոց նոցին և հիմնախիւ  
արար . եւ ղտեղին սահմանովն սեպհականեաց եկե-  
ղեցւոյն, եւ մեծամեծ եւ ահագին նղովիւք փակեաց

զի մի՛ որ այլ իշխեսցէ անդ բնակիլ կամ շինութիւն  
առնել :



Ծ. — Շինութիւն եկեղեցեաց եւ վանորէից ի ձեռն  
Տեսան Յակոբայ եւ Մմբատայ իշխանիս որ ի վայրց  
ձոր քաւատի . եւ վասն սրբոյն Մանասայ :

Ի ժամանակս թագաւորութեանն Հայոց Աբգ-  
Աբասայ՝ որդւոյ Սմբատայ թագաւորի, եւ ի տէրու-  
թեանն Սիւնեաց Սմբատայ եւ եղբարց իւրոց եւ որ-  
դւոց, ի թուականութեանն Հայոց 378, երանելի  
եպիսկոպոսն Սիւնեաց պատահեալ ի տեղի մի յԵ-  
ղեգեաց ձորի ի վերայ ոստին գեղջն . եւ յոյժ հիա-  
ցեալ ընդ նա վասն առաւել գեղեցկութեան վայ-  
րացն եւ յոյժ զառանց եւ ապահով գոլոցն . եւ  
չարժեալ ի տեսչութենէն սկիզբն առնէ շինուածոյ  
հրամանաւ Սմբատայ իշխանի եւ Սովիայ կնոջ  
նորա, եւ Սահակայ՝ եղբոր նորին : Եւ կանգնէ ի  
նմա տուն Աստուծոյ ի բերածոյ վիմաց, եւ զանա-  
զան երանգօք զարդարէ զնա ի նկարս գեղեցիկս, եւ  
կոչէ զՍմբատ եւ զՍահակ ի նաւակատիւ տաճարին :  
Եւ սահմանեն ժառանգութիւն նմա զամենայն լեռ-  
նակողմն եւ զառ ի ներքոյն նորա ի գետ անդր բու-  
րաստանս բազումն եւ արտորայս . եւ հաստատեն  
զնա տուն կրօնաւորայ ի փառս Աստուծոյ :

Պարձեալ և յ385 թուականին աստուածազօր իշխանն Սմբատ ելեալ յաւուր միում յարքունեաց իւր, որ էր յՆղեգիս գիւղաքաղաքի. և երթայր ի գրօսանս որսոց, եւ պատահեալ խոտակերաց եւ աստուածազգեաց ճգնաւորաց ղօզեալ ի ծերացս պրճանաւ, կանգ վիմացն որ ի վերոյ Նղեգեաց ի ձորն, բարձրահայեցիկ ի վերաց գետոցն, որոց տեղիքն Քարէ վանս կոչիւր: Եւ զարմացեալ ընդ ներքեւեալ և ընդ անշքացեալ տեսիլս նոցա՝ հարցանէր ի նոցաքն զկեանս նոցա. եւ նոքա հեզիկ պատասխանեալ ասեն. « Հալածեալ փախստական եղաք յաշխարհէ թերևս կարասցուք ապրել ի դառն արեկոծութենէ սորա »: Ապա այնուհետեւ խնդիր առնէ իշխանն եպիսկոպոսին իւր Տէր Յակորայ. եւ հրամայէ ձեռն ի գործ ածել եւ փութապէս շինել եկեղեցի ի պատշաճաւոր տեղի զի անդ բնակեցուացէ զսուրբ ճգնաւորսն :

Եւ նորա եկեալ առ սուրբ հարսն հարցոյնէ զկամս նոցա. եւ նոքա ցուցանեն տեղի մի տափարակ ի ներքոյ քարոյն ուղղորդ ի վայր. յորում տեղւոջ սկիզբն առնէ կոփածոյ քարամբք եւ շինէ եկեղեցի գմբէթայարկ յանուն սրբոյն Պրիգորի. եւ բերէ զաւագագոյն ծերն որում անունն Ահերմոն, եւ զաշակերտն իւր զԱզարիս այլովք եղբարբքն եւ բնակեցուցանէ անդէն: Եւ եկեալ իշխանին օրհնէ (գուցէ

որհնել տայ) զեկեղեցին . եւ բարեպաշտ տիկինն Սոփիա զնէ զգիւղն Հաւու որ հանդէս վանիցն կայ իւր սահմանովն . եւ տայ ի ժառանգութիւն եկեղեցւոյն, եւ այլ ևս այգիս եւ ծաղկոցս յԵղեգիս : Եւ զարդարէ զնա բազում սպասուք, եւ փարթամացուցանէ ամենայն պիտոյիւք . եւ մեծամեծ նզովիւք հաստատէ զՀաւու գիւղն որ ոչ հանեն ի նմանէ : Եւ կատարեն ինքեանց յիշատակ զսոն սրբոյն Գրիգորի, և քառասուն մի պատարագ զԱրդավառին . եւ կոչեն զտեղին յանուն ծերոյն Ահերմոնի վանք :

Դարձեալ եւ յետ ամաց ինչ երանելի եւ բարեպաշտ տիկինն Սոփիա գնայ ի խորածոր վայրն որ Գնդէվանս կոչի ուխտի պատճառաւ առ միայնաւորսն որ կային անդ բնակեալ . յորում տեղուջ էին բազմութիւնք նշխարաց սրբոց վկայից ի վաղ ժամանակաց, զորս ոչ ծանեաք եթէ ոչք էին եւ կամ ուստի . և բաղում և մեծամեծ բժշկութիւնք լինէին : Տեսեալ տիկնոջն եւ յոյժ հաճեալ ընդ տեղին եւ մտախոհ լինէր շինել եկեղեցի և բնակեցուցանել ի նմա դասս կրօնաւորաց . վասն որոյ եւ ի գիշերին երևեալ վկայիցն՝ խնդրէին կատարել զնոյն խորհուրդ . ապա յարուցեալ տիկնոջն ետ ածել վաղ վաղակի արուեստաւորս ի ճարտար քարատաշաց . եւ սկիւրն առնէ շինուածոյն՝ կացուցեալ ի վերայ վանաց երէցն զհայր Սարգիս, և զործակալ Վեղիշա

երէց եւ նկարիչ . եւ յանձնէ զնա Տեառն Յակոբոսց  
մեծաւ հոգաբարձութեամբ ի կատարումն ամեկ :  
Փայլէր եւ անդ մեծամեծ ճգնութեամբ հայրն Սու-  
փան Պնդունի կոչեցեալ : Կանգնէ զտունն Աստու-  
ծոյ եւ նկարակերտ յօրինուածօք զարդարեն զս-  
ուաստաղս եւ զօրմունս նորա . եւ արարեալ նաւա-  
կատիս՝ մեծահանդէս ժողովով օրհնեն զնա եւ  
անուանեն անուանակոչութեամբ սուրբ վկայիցն . և  
կացուցանեն ի նմա դասս պաշտօնէից եւ բաղմու-  
թիւն կրօնաւորաց :

Նա եւ զճորն զամենայն ի պատշաճաւոր տեղիս  
ընուն անապատք . եւ կացուցանեն ի նոսա արս  
ճգնաւորս և խոտակրօնս, յորոց առաւել փառաւո-  
րեալ լինէր Աստուած քան ի Սինէական հարանցն :  
Եւ երանելի տիկինն անուանէ զվանսն Պնդեվանք .  
եւ շինէ զգիւղն ի վերոյ վանիցն ի գլուխ քարին . եւ  
տայ ի ժառանգութիւն եկեղեցւոյն ազատ յամե-  
նայն հարկաց . նմանապէս և ի միւս կողմանէն զԱտ-  
շար գիւղ . եւ մեծամեծ նղովիւք փակէ յետ ժամա-  
նակաց ոչ հանել ի տեղոյն : Եւ այս լինէր ի թուա-  
կանին Հայոց 385 : Իսկ զճորն ամենայն ի վեր եւ ի  
վայր մինչ ի Գորշտին քարն, հրամայէ առնել տնկա-  
խիտս ի մրգաբերաց ծառոց և յանուշաճաշակ պղտ-  
ղոց . և տնկեալ այգիս վայելուչս յոյժ բարութեամբ  
ի վայելումն առատապէս սուրբ եղբայրութեանն եւ

ամենայն կարօտերոյ : Գրէ արձան յիշատակի սա-  
կաւարան այսպէս . « ես Սոփիա տիկին՝ կին Սմբա-  
տայ աստուածապաշտեառն Սիւնեայ, եւ զուարթ  
Գրիգոր Դերեւնկի, շինեցի զեկեղեցիս ի յիշատակ  
հոգւոյ իմոյ եւ յարեւշատութիւն իշխանաց իշխանին  
Սմբատայ եւ որդեկաց մերոց, եւ զարդարեցի զսա-  
մեծածախ սպասիւք . եւ ետու զերկու գիւղս ի Ժա-  
ռանդութիւն ամա, զոր մի ոք իշխեսցէ խախտել  
կամ հանել ի սուրբ եկեղեցւոյս, ապա թէ ոչ՝ ան-  
լուծանելի նզովիւք անիծեալ լիցին յԱստուծոյ եւ  
յաստուածազումար սրբոցս . մատանի էր անակն  
Վայոյ ձոր, շինեցի զսա ե եզի ակն ի վերայ » :

Գարձեալ յետ ամաց ինչ, ի 448 թուականին  
Հայոց սուրբ Հայրն Քրիստափոր շինէ զգաւիթան  
եկեղեցւոյն . ունի եւ բազում յիշատակ ի տանն յայն  
երանելի եւ սուրբ Հայրն Գուրգէն : Բայց յետ բա-  
զում ամաց, ի կաթողիկոսութեան Հայոց Տեառն  
Սարգսի, եւ ի թագաւորութեանն Գազկայ՝ որդւոյ  
Աշոտոյ, իսկ ի Սիւնեայ եւ Բազայ նորոգ թագա-  
ւորութեանն Վասակայ, կացեալ յառաջնորդու-  
թեան տանն այն Հայր Սարգիս միւսն, եւ պարեալ  
բազում արդիւնս, եւ ածեալ զՉուրն ի լեռնէն ի  
մեծ դիտաւոր սարէն, ուր ակունքն են քաղցրահամ  
գետոյն որ Զինարած կոչեն, աներևոյթ հրեշտակի  
առաջնորդութեամբ, բազում ջանիւ եւ մեծամեծ

ծախիւք բերեալ յանդաստան վանիցն, եւ զանհոռն առապարն անջրդի արար ջրարբի եւ զամենայն լեռնակողմն. յորում ոչ գոյ ումեք հաշիւ՝ ո՛չ Պրակեցեաց եւ Կեչուտեցեաց եւ ո՛չ այլ սահմանակից գիւղօրէիցն եւ ո՛չ այլ ումեք . եւ այս ի Թուականին 457 . յեպիսկոպոսութեան Սիւնեաց Տէր Յովհաննիսի :

Եւ գրէ ինքեան արձան ի վերայ եկեղեցւոյն սեւադեղով . եւ ահագին եւ մեծամեծ նզովիւք փակէ վասն ջրոյն զի օր ոք իշխեսցէ կտրել զնա եւ կամ հարակաշ (50) գոլ եւ բաժինս առնուլ, բայց միայն թէ ըմպեն ի մատակէն մարդ եւ անասուն . եւ կարգեալ յիշատակ զօր յիշատակի մեծ զօրավարին Սարգսի ամ յամէ, եւ կատարել ութն քառասունս միանգամ . եւ թէ ծուլասցին դատաստանս մեծս մեծս ընկապին :

Դարձեալ պատմեցից աստանօր եւ սակաւուք վասն մեծ եւ յոգներանեան նահատակին սրբոյն Մամասայ, զոր հին եւ հարուստ ժամանակօք բերեալ էին յաշխարհս յայս եւ հանգուցեալ ի գաւառիս Վայոց ձորոյ, ի սահմանս անառիկ դղեկին Սուլեմայ : Ի ժամանակս Թագաւորութեանն Հայոց ցեղին Արշակունեաց, մինչ շէն էր աշխարհս այս եւ խրոխտ իշխանութեամբ ճոխ, եւ եռային ի սէրն Աստուծոյ վասն նորահաւատ գոլոյն, եւ ջերմ բոցով վառեալ լինէին ի զանազան բարեգործութիւնս՝ եւ



առաւել ի սէր վկայիցն Աստուծոյ . եւ ամենայն ոք ի խնդիր լինէին անչափ աշխատութեամբ և անհուն ծախիւք թերևս կարասցեն գտանել ի նշխարաց սրբոց և բերցեն յիւրաքանչիւր գաւառս եւ յիշխանութիւնս . զի նովաւ պարապեալ ամրասցին յամենայն հինից թշնամեաց եւ պատահմանց չարաց . եւ լիցին մշտնջենաւոր բարեխօս առ Քրիստոս :

Արպէս եւ իշխանքն Ախական որք զնացեալ էին յարածամ (թերևս՝ յործամ) ի կեսարացոց բաղաքն ընդ սրբոյն Գրիգորի եւ ընդ սրբոյն Ներսիսի եւ յայլ ժամաճոպս, որք ի խնդիր լեալ մեծածախ գանձիւք եւ անհուն աշխատութեամբ ևս առաւել բազմածամանակեայ տքնութեամբ աղօթից և պահոց պնդութեամբ սուրբ եւ աստուածազգեաց նշխարաց երանելի եւ մեծ ճգնաւորին Մամասայ որ բնակեալ էր ի լերինն մերձ կեսարիոց . զորոյ զմեծամեծ հանդէս ճգնութեանցն եւ վկայակաճ մարտն ուսուցանէ մեզ գրեալ ճառն ի մարտիրոջոցի անդ, եւ զգովութիւնն հրապարակագոյժ դրուատէ Գրիգոր Աստուածաբանն որ ի նոր կիւրակէի ներբողմանն : Եւ ըստ մեծահաւատ յուսոյն իւրեանց արժանի գտան աստուածային սարգիւսացն, և վերին տեսչութեամբ առեալ զանկռելի գանձն զկէս նշխարաց սրբոյն Մամասայ ի միջոյն ի վեր գլխոյն եւ բազկօքն հանդերձ, եւ զայն թողին յիւրում սուրբ եկեղեցւոյն ի

նմին տապանի . եւ կազմեցին կառս ի սպիտակ ջուրուց . եւ կողորս արծաթիս արարեալ՝ եղին ի նմա զնշխարս սրբոցն եւ բարձին սաղմոսիւք եւ օրհնութեամբ . եւ տաճիկ նժուզօք՝ սրավար երիվարօք իւր օղապարիկ թեւօք թոռուցեալ անցին ընդ լայնածիր ասպարէզ երկայն ուահին, եւ հասին ի բնիկ սահմանս իւրեանց տէրութեանն ի Մազազ գաւառ . եւ անցեալ ընդ Գեղամ մտին ի Վայոց ձոր . զի դէմ եղեալ էր տանել ի Սիւնիս յարքունական զահոյս իւրեանց :

Այլ կամքն վերին ոչ թողացուցին ի կամս նոցա . այլ ակնարկմամբ Հօգւոյն՝ ուր ինքն կամեցաւ կապեաց գոտս ջորուցն . և գտեղի առին կառքն ի հարթ տեղուջ մի ի ձորին Սուլեմայ, որ Բեզպանարտ կոչի : Իսկ նոցա լցեալ տրտմութեամբ ժողովեցին զգաւառն եւ մեծաջան աղօթիւք ցայգապաշտօն կատարեալ՝ խնդրեցին երթալ ի տեղոյն . և հազիւ ուրեմն յարուցեալ զկառան վարեցին իրր ձայնընկէցս երկու . եւ անդէն դարձեալ զտեղի առին ջորիքն ի սպառչածուր տեղի մի, ի սահմանս գիւղին որ Խարաչիօնք կոչի . եւ այլ ոչ ելին անտի : Աստուկոչեալ զեպիսկոպոսն Սիւնեաց, և ժողովեալ բազմութիւն հարց վանականաց՝ փոխեցին ի հանդիստ եղեալ ի քարեայ տապանի . եւ շինեցին մերձ նմին վկայարան կրաշաղախ քարամբք, եւ ետուն զվայրն

չըջակայ ի սահման անդամտանի վանիցն . և բնակեցուցին ի նմա արս կրօնաւորս սպասաւորել սրբոյն :

Իսկ ի ժամանակս յետինս յաւուրս անիշխանութեան աշխարհիս, ի բռնակալութեան Աթաբակ Իւանէի, երկու եղբարք ճգնաւորք եւ քաջակցօնք, առաջնորդք սուրբ ուխտին Սէթ եւ Պօղոս կոչեցեալք, բազում աղօթիւք եւ խնդրուածօք հանեն զտապան սրբոյն եւ շինեն խորան մի փոքր . եւ հանգուցանեն յայտ երևակի տեսողաց զկափարիչն ի Թուականին Հայոց (պակասի) : Բայց ի շարժելն ի անդոյն բանան զտապանն եւ առնուն ի նշխարացն զաջն . և մեծամեծ բժշկութիւնք լինին յայնմ աւուր . եւ մի ոմն յեղբարցն ի ծածուկ առնու առամն մի, և առ ժամայն հարեալ ի դիւէ՝ փրփրէր և գոչէր զծածուկ գողօնան, եւ հազիւ ուրեմն բժշկեցաւ : Իսկ զաջն ետուն ի սուրբ ուխտն Այրիվանից : Բայց զառաջին բերողացն ոչ գիտացաք զանուանս եւ ոչ գիթիւ ժամանակին . եւ արդ կայ եւ մնայ սա ի սարծանս եւ ի բարեխօսութիւնս այսմ աշխարհի մեծ հրաշս գործելով օր ըստ օրէ յամենայն նեղեալս եւ յախտաժէտս եւ ի պիւահարս : Արոյ բարեխօսութեամբ Քրիստոս Աստուած խնայեոցէ՛ յաշխարհս յայս եւ յեկեղեցիս եւ յիս յոգնամեղ պարտաւորս . եւ Քրիստոսի փառք յաւիտեանս . Ամէն :



## Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք :

1. Եթէ չիցէ յայս բան վրիպակ գրչի՝ զլստովին այլապիսոական թուի վարդապետութիւնս : Հրեշտակք եւ մարդիկ հաւասարապէս արարած են Անեղին, և երկոքին ևս նախակարգեալ ի պաշտօն նորին փառաց . այլ ոչ ոք ուսոյց ցարդ ի սրոց վարդապետաց եկեղեցոյ թէ հրեշտակք և մարդիկ գոյակից իցեն միմեանց . առաջնոցն գոլով հրեղէն, անմարմին եւ էակ հոգևոր, երկրորդացն՝ նիւթական, հոգեղէն եւ ոգևորեալ աստուածային փշմամբ :

2. Բնագիրքն մեր երկոքին ունէին պարութ այիկս : Բառարանն հայկական երկհատոր հրատարակեալ ի Վենետիկ գրէ պարութայ . եւ մեկնէ լինել իբր գաւազանագրութիւն կամ հաւաքումն պատմութեանց . եթէ մերն չիցէ նուազականն Հարց Միութարեանց՝ սրբագրելի է ապաքէն մին կամ միւսն : Թուի թէ իցէ այս պարոյկիս յոյն բառն, որ նշանակէ վիճակ, թէմ, չրջակայ գաւառ : Տէ՛ս պատմութիւն Քրիստոնէութեան Հ. Զեօրի . Բ. եր. 6 :

3. Եթէ ստոյգ իցէ, որպէս աւանդեն պատմիչք մեր, թէ Գեղաքունի յառաջ եկն յանուանէ Գեղամայ նահապետի . սպաքէն հարկ լինէր քերթողաց լեզուի մերոյ կազմել զայն ըստ հայկական ոճոյ . եւ կոչել Գեղամունի անկրճատ պահելով զանուն նահապետին զԳեղամ : Ապաքէն հուանական է կարծեք

**Թէ նահտպետն այն կոչէր Պեղ (յանուն որոյ և կոչեցաւ մին ի լերանց Պեղայ լեառն ի վեր քան զԱյրի-վանան), յորոյ յանուն ևս գաւառս այս անուանեցաւ Պեղաբունի: Իսկ Պեղաբունին, ըստ կազմութեան իւրոյ ոչ երևի ծագեալ յանուանէ Պեղայ կամ Պեղամայ: նա զի ևս բառս արքունի բարձեալ բերելով յինքեան զհնչումն և նշանակութիւն արք և արքունտ յոյն բառից, կասկածաւոր երևի ինձ:**

